

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ

ԽՆԴՐԱԳԻՐՔ

(ԼՈՒԾՈՒՄՆԵՐՈՎ)

(ուսումնամեթոդական ձեռնարկ)

**Երաշխավորված է տպագրության ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից**

ԵՐԵՎԱՆ

2017

ՀՏԴ 347 (076.1)
ԳՄԴ 67.404g7

Ք 162

Ք 162 Քաղաքացիական իրավունքի խնդրագիրը լուծումներով.
Եր.: Տիգրան Մեծ, 2017. - 240 էջ:

Միջազգային համագործակցության գերմանական ընկերությունը (GIZ) զարգացող երկրների հետ իրականացվող համագործակցության համար ամբողջ աշխարհում ծառայություններ մատուցող ձեռնարկություն է: Որպես Գերմանիայի Դաշնային Հանրապետության մասնավոր տնտեսական կազմակերպություն՝ GIZ-ն իր գործունեությամբ հետապնդում է Հարավի և Արևելքի երկրներում մարդկանց կենսապայմանները տևականորեն բարելավելու և կյանքի բնական հիմքերը պահպանելու՝ զարգացող երկրների աջակցությանն ուղղված քաղաքական նպատակ:

Միջազգային համագործակցության գերմանական ընկերությունը Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության հանձնարարությամբ դատաիրավական բարեփոխումներին նպաստող մի քանի ծրագրեր է իրականացնում Հարավային Կովկասի երկրներում: Այդ ծրագրերի շրջանակում այս երկրներ են գործուղվում միջազգային երկարաժամկետ և կարճաժամկետ փորձագետներ, որոնք ի թիվս այլ միջոցառումների խորհրդատվություն և որակավորման բարձրացման միջոցառումներ են իրականացնում: Բացի այդ՝ Ընկերությունը օժանդակում է նոր օրենքների կիրառման վերաբերյալ տեղացի փորձագետների աշխատանքների հրատարակմանը:

Die Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH ist ein weltweittätiges Dienstleistungsunternehmen für Entwicklungszusammenarbeit. Sie arbeitet als privatwirtschaftlich organisiertes Unternehmen der Bundesrepublik Deutschland für das entwicklungspolitische Ziel, die Lebensbedingungen der Menschen in den Ländern des Südens und Ostens nachhaltig zu verbessern und die natürlichen Lebensgrundlagen zu erhalten.

Die Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH führt im Auftrag des deutschen Bundesministeriums für wirtschaftliche Zusammenarbeit und Entwicklung (BMZ) in den Ländern des südlichen Kaukasus mehrere Projekte zur Unterstützung der Rechts- und Justizreformen durch. Im Rahmen dieser Projekte werden internationale Lang- und Kurzeitexperten eingesetzt, die unter anderem beratende Tätigkeiten ausüben und Fortbildungsveranstaltungen durchführen. Weiter werden Publikationen von lokalen Experten zur Anwendung der neuen Gesetze unterstützt.

ՀՏԴ 347 (076.1)
ԳՄԴ 67.404g7

ISBN 978-99941-0-819-0

© Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH, 2017 Hrsg.:

giz

Programm:

Rechtliche Annäherung an europäische Standards im Südkaukasus

Baghramyan Str. 4/1

0009 Jerewan, Armenien

T+374 10 540981

F +374 10 569496

E lusine.baghdasaryan@giz.de

www.giz.de



german
cooperation

DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by

giz

Deutsche Gesellschaft
für Internationale
Zusammenarbeit (GIZ) GmbH

Մասնագիտական խմբագիր՝

իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վահրամ Ավետիսյան

Համահեղինակներ՝

Ռուֆ Քնիպեր, *իրավ. գիտ. դոկտոր (Մայնի Ֆրանկֆուրտի համալսարան), Բրեմենի համալսարանի պաշտոնաթող պրոֆեսոր, Թբիլիսիի և Քիշնևի պետական համալսարանների պատվավոր դոկտոր*

Վահրամ Ավետիսյան, *իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ*

Գրիգոր Բեքմեզյան, *իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ*

Արսեն Թավադյան, *իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ*

Սիմոն Ֆարմանյան, *իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ*

ՆԱԽԱԲԱՆ

Իրավագիտության ուսումնառությունը պետք է մեծ չափով ուղղված լինի դեպի պրակտիկան, իրավաբանի գործնական աշխատանքը: Այդ նպատակով, Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) «Հարավային Կովկասում եվրոպական չափորոշիչներին իրավական համապատասխանեցում» ծրագրի նախաձեռնությամբ, հայ իրավաբան-գիտնականների խումբը՝ պրոֆեսոր Վահրամ Ավետիսյանի գլխավորությամբ, Բրեմենի համալսարանի պաշտոնաթող պրոֆեսոր Ռոլֆ Քնիպերի հետ միասին կազմել են այս ձեռնարկը:

Այն հասցեագրվում է ուսանողներին և դասախոսներին, ինչպես նաև քաղաքացիական իրավունքի ոլորտում աշխատողներին (մասնավորապես՝ դատավորներ, փաստաբաններ ու նոտարներ): Ձեռնարկում ներկայացված է 15 քաղաքացիական գործ (իրավական խնդիրներ), որոնք թեև հորինված են, բայց պատկերում են առօրյա կյանքում հաճախ հանդիպող իրավահարաբերություններ, և առաջարկվում են դրանց լուծման մոտեցումներ: Ձեռնարկում տրված է նաև իրավական խնդիրների լուծման մեթոդաբանությունը:

Ներկայացվող խնդիրներից 14-ի և դրանց լուծումների սկզբնական տարբերակների հեղինակը պրոֆ., դոկտոր Ռոլֆ Քնիպերն է: Խնդիրները մանրամասնորեն մեկնաբանել և ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանեցրել են հայ հեղինակները: Խնդիրների լուծումները կազմվել են 01.01.2017թ. դրությամբ գործող ՀՀ քաղաքացիական օրենսդրության նորմերին համապատասխան: Խնդիրներից մեկի սկզբնական տարբերակը (խնդիր 14) պետական քննության նյութ է եղել Համբուրգի (Գերմանիա) համալսարանում: Հայ հեղինակներն այն վերամշակել են:

Համահեղինակները մի քանի աշխատանքային հանդիպումների ընթացքում կարծիքներ են փոխանակել, քննարկել խնդիրները,

դրանց լուծումները և հիմնականում եկել են ընդհանուր համաձայնությամբ:

Սա ուսանելի գործընթաց էր բոլոր մասնակիցների համար, ինչի շնորհիվ զգալիորեն բարձրացավ խնդիրների լուծումների որակը: Մասնավորապես ակնհայտ դարձավ այն, որ օրենքի կիրառումը կոնկրետ խնդիրներում հանգեցնում է ոչ թե «սխալ» կամ «ճիշտ», այլ՝ ընդունելի կամ անընդունելի լուծումների: Յուրաքանչյուր դեպքում էականն այն է, որ լուծումն առաջանա փաստարկումների հիման վրա և օրենքների ճիշտ կիրառման արդյունքում:

Քննարկումների արդյունքում գրեթե բոլոր խնդիրների վերաբերյալ առաջարկվել են համընկնող լուծումներ: Միայն երկու խնդրի (6-րդ և 10-րդ խնդիրներ) լուծում առաջարկելիս համահեղինակների կարծիքներն այնքան տարբերվեցին միմյանցից, որ որոշվեց հրապարակել երկու մոտեցումներն էլ: Դրա առավելությունն այն է, որ ձեռնարկից օգտվողները կհասկանան, որ երկու կամ ավելի վիճող կողմերի վեճերի լուծման դեպքում օրենքը թույլատրում է կիրառել տարբերակներ, և որ իրավագետի «արվեստը» ոչ թե պարզելն է, թե որն է «ճիշտը», այլ՝ վեճում շոշափվող շահերը կշռադատելն ու հիմնավորված լուծում առաջարկելն է: Հեղինակները համոզված են, որ այս ձեռնարկը ոչ միայն կհարստացնի համալսարանական դասավանդումն իրավաբանի գործունեության գործնական ասպեկտներով, այլև կնպաստի իրավունքն զգուշորեն զարգացնելուն, ինչն անհրաժեշտ է պրակտիկայում առաջացող բազմատեսակ խնդիրների պատճառով, որոնց լուծման համար հնարավոր չէ մշտապես փոփոխություններ կատարել օրենքի վերացական նորմերում:

Հեղինակները շնորհակալություն են հայտնում Գերմանական միջազգային համագործակցության ընկերությանը՝ նախաձեռնության և ծրագրի ֆինանսավորման համար, Լևոն Սարգսյանին՝ խնդիրներն ու դրանց լուծումները, աշխատանքային քննարկումները

թարգմանելու համար, ինչպես նաև Գերմանական միջազգային համագործակցության ընկերության իրավաբան-փորձագետ Նորա Սարգսյանին՝ խնդրագրքի կազմման աշխատանքներին մեծապես աջակցելու համար:

Վարդան Պողոսյան

**Գերմանական միջազգային համագործակցության
ընկերության «Հարավային Կովկասում
եվրոպական չափորոշիչներին իրավական
համապատասխանեցում» ծրագրի ղեկավար Հայաստանում**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բաժին I. Իրավական խնդիրների լուծման մեթոդաբանական ցուցումներ	11
1.Ներածություն ձեռնարկի վերաբերյալ.....	11
2.Իրավական խնդիրների լուծման մեթոդաբանությունը.....	19
Բաժին II. Իրավական խնդիրներ	38
Խնդիր 1	38
Բաժնետիրական իրավունքի ընդհանուր հիմունքները. Փոխառության պայմանագիր. Հավատարմագրային կառավարման պայմանագիր. Համատեղ գործունեության պայմանագիր.....	38
Գործի փաստական հանգամանքները.	38
Առաջարկվող գրականության ցանկ.....	39
Խնդիր 2	41
Գույքի նկատմամբ գույքային իրավունքի վերաբերյալ նախնական նշում.....	41
Գործի փաստական հանգամանքները.	41
Առաջարկվող գրականության ցանկ.....	42
Խնդիր 3	44
Ուրիշի հողամասից սահմանափակ օգտվելու իրավունք. Սերվիտուտ.....	44
Գործի փաստական հանգամանքները.	44
Առաջարկվող գրականության ցանկ.....	45
Խնդիր 4	46
Ուրիշի ապօրինի տիրապետումից իր գույքը հետ պահանջելու	

իրավունքը. Վաճառողի սեփականության իրավունքի	
պահպանվելը.....	46
Գործի փաստական հանգամանքները.	46
Առաջարկվող գրականության ցանկ.....	47
Խնդիր 5	48
Երաշխավորության պայմանագիր. Հիմնական դրույթներ	
պայմանագրի վերաբերյալ. Պայմանագրի անվավերությունը	
մոլորության կամ խաբեության հիմքով	48
Գործի փաստական հանգամանքները.	48
Առաջարկվող գրականության ցանկ.....	50
Խնդիր 6	51
Հիմնական դրույթներ պայմանագրի և ներկայացուցչության	
մասին.....	51
Գործի փաստական հանգամանքները.	51
Առաջարկվող գրականության ցանկ.....	52
Խնդիր 7	54
Էլեկտրոնային առևտրային հարթակի տրամադրման	
ծառայությունների առանձնահատկությունները.....	54
Գործի փաստական հանգամանքները.	54
Առաջարկվող գրականության ցանկ.....	56
Խնդիր 8	58
Պայմանագրային իրավունքի վերաբերյալ ՀՀ քաղաքացիական	
օրենսգրքի ընդհանուր կարգավորումներ.....	58
Գործի փաստական հանգամանքները.	58
Առաջարկվող գրականության ցանկ.....	58

Խնդիր 9	60
ՕՖերտա. Ակցեպտ. Ներկայացուցչությունը քաղաքացիական իրավունքում	60
Գործի փաստական հանգամանքները	60
Առաջարկվող գրականության ցանկ.....	61
Խնդիր 10	63
Ֆինանսավորում՝ դրամական պահանջի զիջման դիմաց (ֆակտորինգ).....	63
Գործի փաստական հանգամանքները.	63
Առաջարկվող գրականության ցանկ.....	65
Խնդիր 11	67
Առանց հանձնարարության՝ ի շահ ուրիշի գործողություններ	67
Գործի փաստական հանգամանքները.	67
Առաջարկվող գրականության ցանկ.....	68
Խնդիր 12	70
Վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորություններ	70
Գործի փաստական հանգամանքները.	70
Առաջարկվող գրականության ցանկ.....	71
Խնդիր 13	72
Վնասի հատուցման համար պատասխանատվության ընդհանուր հիմքերը. Ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների թերությունների հետևանքով պատճառված վնասը հատուցելու հիմքերը.....	72
Գործի փաստական հանգամանքները.	72
Առաջարկվող գրականության ցանկ.....	73

Խնդիր 14	74
Քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը հատուցելը	74
Գործի փաստական հանգամանքները	74
Առաջարկվող գրականության ցանկ.....	76
Խնդիր 15	77
Անհիմն հարստացման հետևանքով ծագած պարտավորություններ	77
Գործի փաստական հանգամանքները	77
Առաջարկվող գրականության ցանկ.....	77
Բաժին III. Առաջարկվող լուծումներ	79
Խնդիր 1.....	79
Խնդիր 2.....	87
Խնդիր 3.....	100
Խնդիր 4.....	108
Խնդիր 5.....	120
Խնդիր 6.....	131
Խնդիր 7.....	141
Խնդիր 8.....	152
Խնդիր 9.....	156
Խնդիր 10.....	166
Խնդիր 11	179
Խնդիր 12.....	190
Խնդիր 13.....	197
Խնդիր 14.....	210
Խնդիր 15.....	225

Բաժին I. Իրավական խնդիրների լուծման մեթոդաբանական ցուցումներ

1. Ներածություն ձեռնարկի վերաբերյալ

Իրավունքի ուսումնասիրությունը բարդ և համալիր բնույթի մշտական գործընթաց է: Այս գործընթացի համալիր բնույթն արտահայտվում է նրանում, որ տարբեր մակարդակներում իրավունքը ոչ միայն պետք է փնտրել, գտնել և հասկանալ, այլև կիրառել: Հետևաբար, իրավունքի ուսումնասիրությունն անխուսափելիորեն ունի երկու կողմ, որոնցից մեկը վերաբերում է իմացության կամ ճանաչողության տեսությանը, իսկ մյուսը՝ գործնականին կամ, կարելի է ասել՝ արհեստին: Տարբեր մակարդակներ ասելով, հատկապես համակարգային կողմից կազմված իրավունք ունեցող երկրներում, ինչպիսին Հայաստանն է, *առաջին հերթին* նկատի ունեն վերացական եղանակով ձևակերպված նորմերի, իրավունքի և նորմատիվային համակարգի մակարդակը, *երկրորդ*՝ դատական ակտերում որոշակի հանրային ու անհատական վեճերի իրավական լուծումների մակարդակը և *երրորդ*՝ այդ երկու մակարդակներն ընդգրկող նյութական և դատավարական արդարադատության մակարդակը:

Այս երեք մակարդակները փոխկապակցված և միահյուսված են, սակայն ոչ թե որպես վերացական և ավելի որոշակի մատերիաների ու հարցադրումների միջև անխափան հարաբերություններ, այլ որպես լարվածությամբ և հակասություններով բնորոշվող փոխադարձ կախվածություն:

Այսպես, իրավաբանական պրակտիկայում այլևս արդիական չէ այն տեսակետը, որ դատավորն ընդամենը կոնկրետ գործի շրջանակներում «օրենքն արտաբերող բերան է» (la bouche de la loi - Մոնտեսքյո), ով պարտավոր է կիրառել օրենքը բացառապես դրա տառացի շարադրանքին համապատասխան, կամ ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Քաղ. օր.) 8 հոդվածի առաջին պարբերությունն է սահմանում՝ «քաղաքացիական իրավական նորմերը պետք է մեկնաբանվեն դրանցում պարունակվող բառերի և

արտահայտությունների տառացի նշանակությամբ»: Այս տեսակետը համահունչ չէ ժամանակակից զարգացումներին և իրականության պահանջներին, ինչը ենթադրում է, որ դատավորը և ընդհանրապես իրավաբանները իրավական նորմերը մեկնաբանելիս պետք է դուրս գան նորմի տառացի տեքստի սահմաններից:

Մի կողմից՝ հասարակական հարաբերություններն այնքան բարդ, բազմերանգ ու դինամիկ են, որ չեն կարող ամբողջությամբ կարգավորվել իրավական ակտերով, նույնիսկ համալիր բնույթի այնպիսի իրավական ակտով, ինչպիսին Քաղաքացիական օրենսգիրքն է: Մյուս կողմից՝ մարդկային լեզուն, որով շարադրվում են իրավական ակտերը, երբեք ամբողջապես միանշանակ չէ, ուստի հնարավոր չէ բացառել դրա տարաբնույթ ընկալումները: Ասվածը վերաբերում է ինչպես ընդհանուր եզրույթներին, օրինակ՝ «բարեխղճություն», «մեղք» կամ «իրավահավասարություն», այնպես էլ թվացյալ տեխնիկական եզրույթներին: Օրինակ, երբ Քաղ. օր.-ում նշվում է հայտարարության մասին, և խոսակցական լեզվում դա բառերի և հնչյունների միջոցով իրականացվող գործողություն է, ապա օրենքը կիրառողը պարտավոր է, ելնելով իրադրությունից և որոշակի վարքագծի առանձնահատկություններից և ուղղվածությունից, փորձել պարզել՝ արդյոք ոչ լեզվական հաղորդակցությունը ևս չի կարող և չպետք է օրենքի իմաստով հասկացվի որպես «հայտարարություն»:

Բացի այդ, տնտեսական, սոցիալական, հասարակական զարգացումն ու տեխնոլոգիաների առաջընթացը նույնպես հանգեցնում են մի իրավիճակի, երբ շուկայի մասնակիցները զարգացնում են գործարար գործունեության փոխգործակցության այնպիսի ձևեր, որոնք թեն օրենսդիրն ի սկզբանե չէր կարող կանխատեսել և կարգավորել, սակայն իրավական գնահատական են պահանջում: Այս խնդրագրքում ներկայացված խնդիրներից մի քանիսը ժամանակակից այդպիսի զարգացումների վառ ասպարեզ են, մասնավորապես, օրինակ՝ էլեկտրոնային առևտուրը համացանցի միջոցով: Քաղ. օր.-ի ընդունման պահին էլեկտրոնային առևտրի ինստիտուտը դեռևս զարգացած չէր: Սակայն դատավորները չեն կարող խուսափել էլեկտրոնային առևտրի ոլորտում ծագած վեճեր քննելուց և

վճիռ կայացնելուց այն հիմնավորմամբ, որ օրենքը այդ կապակցությամբ ոչինչ չի նախատեսում: Նրանք պարտավոր են լուծումներ մշակել և դրանով իսկ նպաստել իրավունքի զարգացմանը: Նույն կերպ նրանք պարտավոր են արձագանքել օրենքում սահմանված այնպիսի ձևակերպումներին, որոնք բավարար չափով չեն համապատասխանում կյանքի իրականության պահանջներին: Մեկ այլ հարց, որին անդրադարձ է կատարվել սույն խնդրագրքի երկու խնդիրներում, բխում է Քաղ. օր.-ի 318 հոդվածի ձևակերպումից, ըստ որի՝ ներկայացուցչի՝ ներկայացվողի անունից հանդես գալու լիազորությունը կարող է ակնհայտորեն բխել այն իրավիճակից, որում գործում է ներկայացուցիչը (օրինակ՝ հեռահաղորդակցության միջոցով պատվերներ ձևակերպելիս հեռախոսային օպերատորը, կամ պատվերն առաքելիս՝ առաքիչը, խանութում՝ վաճառողը, գանձապահը և այլն): Այստեղ չեն ներառվում գործնականում նույնքան կարևոր այն դեպքերը, երբ ինչ-որ մեկը գործում է առանց այլ անձի անունից գործելու լիազորության, իսկ այսպես կոչված քվազի-ներկայացվողը չի առարկում դրա դեմ: Արդարացի չէր լինի նման դեպքերում Քաղ. օր.-ի 318 հոդվածը չկիրառելը և ներկայացուցչի մոտ համապատասխան լիազորության առկայությունը ժխտելը: Այսինքն՝ փաստաբանը, ով իր վստահորդի ներկայացրած տեղեկությունների հիման վրա կիրառում է օրենքի համապատասխան նորմերը և կառուցում վերջինիս պահանջը, իսկ քաղաքացիական գործեր քննող դատավորը, ով լսում է գործի վերաբերյալ կողմերի ներկայացրած փաստերը, ուսումնասիրում նրանց պահանջի իրավական հիմքերը և վճիռ կայացնում, ոչ միայն օգտագործում են իրավական դրույթներում արտացոլված բառերն ու բառակապակցությունները, այլև մեկնաբանում դրանք՝ գնահատելով գործի փաստական հանգամանքները: Իրավական ակտերի մեկնաբանման արվեստը իրավունքի ուսումնասիրության զգալի մասն է կազմում: Այն հենվում է մեկնաբանման ենթակա իրավական նորմի տեքստի, օրենքի տառի վրա, բայց փորձում է ներառել նաև դրա իմաստը (էությունը), օրենքի ոգին: Ուստի անհրաժեշտ է, տեքստից բացի, ուսումնասիրել նաև նորմերի զարգացման պատմությունը, պատմականորեն օրենսդիրների կամ-

քը, ինչպես նաև նորմի տեղն իրավունքի համակարգում և իրավա-
կան կարգավորումների նպատակը: Օրինակ՝ խնդրագրքում ներկա-
յացված խնդիրներից մեկում խոսվում է ապրանքի թերությունների
հետևանքով պատճառված վնասի համար պատասխանատվության
մասին, որին առնչվող օրենսդրական դրույթները մեկնաբանելու
համար կարևոր է իմանալ, որ այդ ինստիտուտը զարգացել է սպա-
ռողների պաշտպանության բարելավման վերաբերյալ Եվրոպական
միությունում ծավալված իրավաքաղաքական քննարկումների արդ-
յունքում: Այսպիսով, այս խնդրագիրքը նպատակ ունի նպաստել
իրավունքի/օրենքի մեկնաբանման արվեստի զարգացմանը:

Պետք է նշել, որ այս խնդրագիրքը չի անդրադառնում իրավաբա-
նի գործունեության ողջ խորությանն ու բովանդակությանը: Խնդիր-
ներում ամրագրված փաստական հանգամանքները ներկայացվում
են որպես անվիճելի փաստեր և չպետք է փոփոխության ենթարկվեն
դրանց լուծումները փնտրելիս: Լուծումը պետք է ամբողջությամբ
կենտրոնանա իրավական խնդրի վերհանման վրա: Պրակտիկա-
յում այդպես չի լինում, քանի որ դատավորներն ու փաստաբաննե-
րը, որպես կանոն, ստիպված են լինում ավելի շատ աշխատել գործի
փաստական հանգամանքները պարզելու և կառուցելու, քան օրեն-
քի հիման վրա դրանց իրավական որակում և գնահատական տա-
լու ուղղությամբ: Ընդ որում՝ մենք միանգամայն գիտակցաբար ենք
օգտագործում «գործի փաստական հանգամանքները կառուցելու»
հասկացությունը: Բանն այն է, որ իրականում որոշակի իրավական
վեճում ոչ թե պարզապես վերարտադրվում է իրականությունը, այլ
փաստաբանը փորձում է, ելնելով իր վստահորդի մտադրությունից
և շահերից, այդ իրականությունն այնպես ձևակերպել և «կառուցել»,
որ տպավորություն ստեղծվի, թե անհրաժեշտ է կիրառել որոշա-
կի նորմեր: Հակառակ կողմի փաստաբանն էլ փորձում է ապակա-
ռուցել այդ իրականությունը, որպեսզի հիմնավորի, որ մյուս կողմի
առաջարկած նորմերը կիրառելի չեն: Ի վերջո՝ դատավորի խնդիրն
է ուսումնասիրել և հասկանալ գործում առկա ապացույցները, իսկ
դրանց բացակայության դեպքում՝ կիրառել ապացուցման բեռի մա-
սին կանոնները և վերակառուցել իրականությունն՝ օրենքի հիման

վրա՝ գործին տալով համապատասխան իրավական գնահատական: Իրավաբանի մասնագիտական գործունեության այս կարևոր բաղկացուցիչը սույն խնդրագրքի մեջ չի քննարկվում:

Նկատենք, որ օրենքների նորմերի անխուսափելի ու անհրաժեշտ մեկնաբանումը չպետք է հանգեցնի օրենքից կտրվելուն և գործերը քննելիս արդարացի լուծումների վերաբերյալ օրենքից չբխող կամ նույնիսկ դրան հակասող սուբյեկտիվ դատողություններ անելուն: Կոնկրետ գործ քննող և լուծող իրավաբանը կաշկանդված է մնում օրենքով և իրավունքով: Նա գործում է վերը հիշատակված երեք մակարդակներում: Ընդ որում՝ անձի արժեքային համակարգը, ինչպես նաև նրա սուբյեկտիվ պատկերացումներն ու ընկալումները որոշակի դեր են խաղում իրավական վեճերի քննության և լուծման ժամանակ: Յուրաքանչյուր իրավաբան, այդ թվում՝ դատավորը, կամա թե ակամա գործն ուսումնասիրում է իր մեջ ձևավորված որոշակի ընկալումների, սոցիալական և մշակութային պատկերացումների ամբողջությամբ, որոնք ազդում են գործի վերաբերյալ նրա տեսակետի և իրավական ակտի մեկնաբանման վրա: Անշուշտ, հիշյալ ազդեցությունից հնարավոր չէ խուսափել, սակայն այն կարելի է մեղմել, եթե յուրաքանչյուրը, սովյալ դեպքում նաև սույն խնդրագրքում ներառված առաջադրանքները լուծող ուսանողը գիտակցի դրանց անխուսափելիությունը և մշտապես փորձի վերահսկել դրանց ազդեցությունը:

Այս դատողություններից գալիս ենք այն եզրահանգման, որ մեկնաբանության արդյունքը հաճախ պետք է գնահատել ոչ թե որպես «սխալ» կամ «ճիշտ», այլ «ընդունելի, եթե այն հիմնավորված է», կամ «անընդունելի, եթե այն անհիմն է»: Սա չի նշանակում, սակայն, որ սխալը բացառվում է. եթե անտեսվում է օրենքի որևէ նորմ, որը կիրառելի է կոնկրետ գործի փաստական հանգամանքների նկատմամբ, բայց կիրառվում է մեկ այլ նորմ, ապա դա պետք է գնահատել որպես սխալ: Օրինակ, երբ գույքի ժամանակավոր օգտագործման պարտավորությունը փորձում են բխեցնել առքուվաճառքի պայմանագրից:

Սակայն երբ քննարկվում է, թե արդյո՞ք բժշկական սխալից ծագող

պահանջի իրավունքը բխում է միայն բժշկական ծառայություններ մատուցելու պայմանագրային պարտավորություններից, թե անհրաժեշտ է հարցը քննարկել նաև դելիկտային պարտավորությունների շրջանակում, ապա մեկնաբանություն կիրառելն, անշուշտ, սխալ չէ:

Պետք է նաև ստուգել՝ օրենքով թույլատրվում է պահանջի իրավունքի տարբեր հիմքերի միաժամանակյա կիրառություն, ինչպես, օրինակ, ֆրանսիական քաղաքացիական իրավունքում է, կամ օրենքը թույլատրում է պահանջի իրավունքների մրցակցություն, ինչպես, օրինակ, գերմանական իրավունքում է: Մեր կարծիքով, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը վսաս կրած անձի համար սկզբունքորեն չի բացառում դելիկտային և պայմանագրային պարտավորություններից բխող պահանջների միաժամանակյա ներկայացումը: Հայցվորի կողմից ներկայացված պահանջի հիմնավորվածությունը դատավորը պետք է ստուգի բոլոր այն նորմերի հիման վրա, որոնց կիրառումը կարող է հնարավոր լինել:

Ուստի խնդրի ամբողջական լուծման համար անհրաժեշտ է ստուգել, թե արդյոք գործի փաստական հանգամանքները համապատասխանում են մի քանի հիմքերով պահանջ ներկայացնելու պայմաններին: Օրինակ՝ միանգամայն հնարավոր է, որ առքուվաճառքի պայմանագրի խախտման դեպքում վաճառողը, ով արդեն հանձնել է պայմանագրի առարկան, իրավունք ունենա հետ պահանջելու ապրանքն ինչպես վիճակացիոն հայցի (Քաղ. օր.-ի 274 հոդված), այնպես էլ անհիմն հարստացումից բխող պահանջի իրավունքի (Քաղ. օր.-ի 1092 հոդված) հիման վրա: Իհարկե, անհրաժեշտ է ստուգել, թե պահանջի իրավունքի տարբեր հիմքերի միաժամանակյա առկայությունը համապատասխանում է արդյոք օրենքի նպատակին: Օրինակ՝ պայմանագրից բխող պահանջները, որպես կանոն, բացառում են անհիմն հարստացումից բխող պահանջի իրավունքը, քանի որ պայմանագիրը տալիս է միայն մեկ իրավական հիմք:

Նշենք, որ մասնավոր իրավունքի նպատակն իրավունքի միջոցով ֆիզիկական ու իրավաբանական անձանց միջև փաստացի գոյություն ունեցող և հաճախ նաև ապագայում ծագող հարաբերությունները, գործարարական գործունեությունը և նույնիսկ հնարավոր վե-

ճերը կարգավորելն է: Ընդ որում՝ մասնավոր իրավունքի առանձնահատկությունն այն է, որ սուբյեկտներն այստեղ իրավահավասար են, այսինքն՝ անձինք վերադասության կամ ստորադասության հարաբերության մեջ չեն գտնվում միմյանց նկատմամբ: Պետությունը ևս մասնավոր հարաբերություններին մասնակցում է իրավահավասարության հիման վրա՝ որպես շուկայի մասնակից, այլ ոչ թե հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ:

Արդեն նշել ենք, որ իրավաբանի մասնագիտական գործունեության կարևոր մաս են կազմում կիրառվելիք օրենքների ճշգրիտ ընտրությունն ու փաստական հանգամանքների ճիշտ ընկալումը: Մի կողմում գտնվում են դատավորներն ու դատավարությանը մասնակցող փաստաբանները, որոնց խնդիրն է հարթել և լուծել գոյություն ունեցող վեճերն ու տարաձայնությունները, մյուս կողմում նոտարներն ու խորհրդատվություն տրամադրող փաստաբաններն են, որոնց խնդիրն էլ արհեստավարժ և օրենքի պահպանմամբ բանակցությունների, խորհրդատվության և պայմանագրերի ձևակերպման միջոցով ապագայում հնարավոր վեճեր թույլ չտալն է:

Այս խնդրագրքում անդրադարձ չի կատարվում պայմանագրերի մշակման և նախագծման արվեստին, ինչպես նաև գործարքի ընդհանուր պայմանների կամ միակողմանի կամարտահայտության, ինչպիսին կտակն է, ձևակերպման և խմբագրման արվեստին: Խնդրագիրքը սահմանափակվում է արդեն իսկ ծագած վեճերի լուծման ոլորտի խնդիրներով և դրանով նախապատրաստում դատավորի ու դատավարությանը մասնակցող փաստաբանի մասնագիտացումներով աշխատելուն: Այս գործընթացը, ինչպես նշվել է սկզբում, շարունակական է, քանի որ հասարակությունը շարունակ զարգանում է: Սակայն օրենքն այդ շարունակական զարգացմանը հակադրում է հարաբերական կայունություն՝ ստեղծելով որոշակի ինստիտուցիոնալ շրջանակ, որը երաշխավորում է անվտանգություն, սահմանափակում շուկայի մասնակիցների միջև փոխգործակցությունը և, միաժամանակ, շուկայում տարբեր մակարդակի ազդեցություն ունեցող ուժերին հավասարակշռելու հնարավորություն է տալիս:

Հասարակական հարաբերությունների դինամիկ զարգացման և

օրենքի կայունություն մտցնելու միջև լարվածությունն անխուսափելիորեն ազդում է երկուսի վրա էլ. դինամիկան ուղղորդվում է, իսկ օրենքն էլ չի կարող տևականորեն հաշվի չառնել հասարակական զարգացումները և հարմարվում է դրանց: Իշխանությունների տարանջատման սկզբունքը որդեգրած հասարակություններում դա տեղի է ունենում օրենսդրի կողմից շարունակական բարեփոխումների և դատական իշխանության կողմից իրավունքը զարգացնելու միջոցով: Դատական իշխանությունը պարտավոր է գիտակցել այն պատասխանատվությունը, որն իրեն պատվիրակում են իշխանությունների տարանջատման սահմանադրական սկզբունքի կիրառության արդյունքում: Բոլոր դեպքերում դատական իշխանությունը չի կարող խուսափել իրավունքը զարգացնելու խնդրից:

Այս հարցում շատ երկրներում նկատվում է նուրբ փոխազդեցություն: Մի կողմից՝ նոր օրենքները վերացնում են հին դատական պրակտիկան, և դատարանները պարտավոր են լինում նոր մոտեցումներ ձևավորել: Մյուս կողմից՝ հազվադեպ երևույթ չէ, երբ դատարաններն են անդրադառնում որևէ խնդրի, որը պատշաճ ուշադրության չի արժանացել օրենսդրի կողմից, և լուծում են այն: Ապա՝ այդ լուծումը որոշ ժամանակ անց օրենսդրի կողմից վերածվում է օրենքի:

Ահա այս սկզբնական նկատառումներն են ընկած սույն խնդրագրքի նպատակի և դրանում ներկայացված խնդիրների մշակման մեթոդիկայի հիմքում:

2. Իրավական խնդիրների լուծման մեթոդաբանությունը

Սույն խնդրագրքի 15 խնդիրներում նկարագրված են փաստական հանգամանքներ, որոնք դիտվում են որպես անվիճելի, ինչն ունի իր հետևանքներն ու սահմանափակումները:

Նախ՝ կարող են առաջարկվել խնդրի տարբեր լուծումներ, որոնց միջև տարբերությունը, սակայն, չպետք է բխի փաստական հանգամանքների փոփոխությունից: Այսինքն՝ չպետք է փորձել փոխել խնդրի փաստական հանգամանքները, եթե նույնիսկ թվում է, թե փոփոխությունը կհեշտացնի խնդրի լուծումը:

Երկրորդ՝ անհրաժեշտ է առաջադրանքների լուծումներում քննարկել և գնահատել բացառապես նկարագրված փաստական հանգամանքները: Խնդրի լուծումը չպետք է վերաճվի դասագրքային շարադրանքի: Բացի այդ, որքան էլ ցանկալի լինի ընթերցողին ցույց տալ, թե ինչքան լավ գիտես օրենքի նորմերը կամ վճռաբեկ դատարանի որոշումները, սխալ է մեջբերել այնպիսի օրենքներ կամ որոշումներ կամ ընդհանրապես փաստարկներ, որոնք անմիջական կապ չունեն խնդրի լուծման հետ: Եթե, օրինակ, որևէ խնդրի լուծման համար անհրաժեշտ է ստուգել, թե արդյոք ներկայացուցչի լիազորությունը գործարքի մյուս կողմի հետ հարաբերությունում գործում է, խնդիրների մեծ մասը չի պահանջում անդրադառնալ նաև ներկայացուցչի և ներկայացվողի միջև հարաբերությանը: Օրենսդրության վերաբերյալ ընդհանուր դատողությունները առանց կոնկրետ գործի հետ կապելու չպետք է տեղ գտնեն գործի մշակման մեջ:

Հատկապես բարձրագույն դատական ատյանները երբեմն իրենց որոշումներում օգտագործում են որևէ իրավական խնդրի վերաբերյալ կոնկրետ գործի համար էական նշանակություն չունեցող ընդհանուր դատողություններ անելու տեխնիկան: Եթե նրանք դա անում են դատական որոշումների իմաստը պարզաբանելու նպատակով, ապա նման դեպքերում դատարանները, որպես կանոն, այդ դատողությունները նշում են որպես *obiter dictum*՝ այդ հանգամանքը ընդգծելու համար: Համալսարանական դասավանդման ժամանակ խնդիրների լուծումներում այդպիսի *obiter dictum*-ներից պետք է խուսափել:

Ասվածից հետևում է, որ գործի փաստական հանգամանքները պետք է շատ ուշադիր ուսումնասիրվեն: Համալիր բնույթի փաստական հանգամանքների դեպքում, հատկապես երբ վեճի մեկ կամ երկու կողմում էլ ներգրավված է մի քանի անձ, հարկավոր է հստակ ուրվագծել նրանցից յուրաքանչյուրի դերը:

Իրավաբանի կողմից գործի մշակման համար կարևորագույն խնդիրներից մեկը գործի փաստական հանգամանքները հասկանալն է: Ավելորդ չէ կրկնել, որ գործի փաստական հանգամանքները չպետք է առիթ դառնան գործող օրենքի և դատական պրակտիկայի վերաբերյալ ընդհանուր, դասագրքային դատողություններ անելու համար: Հարցն այստեղ այն է, թե արդյո՞ք փաստական հանգամանքներում նշված անձանցից մեկը կամ մի քանիսը խնդրում նշված մեկ այլ անձի կամ մի քանիսի նկատմամբ ունեն մեկ կամ մի քանի պահանջներ: Ընդ որում՝ այս հարցը նույնն է՝ անկախ այն բանից, թե ինչ հարցադրում է արվում խնդրում. «Արդյո՞ք Ա-ն կարող է պահանջել Բ-ից, որ մատակարարի ապրանքը, կամ Վճարի գումարը, հատուցի փաստը և այլն...», թե ասենք՝ «Վերլուծեք իրավական դրությունը»: Պահանջի իրավունքի առկայությունը ենթադրում է, որ օրենքը պետք է պարունակի նորմ, որով սահմանվի մեկ անձի պահանջի իրավունքը մեկ այլ անձի նկատմամբ, և միաժամանակ նշվեն այն նախապայմանները, որոնց առկայությունն անհրաժեշտ է այդպիսի պահանջ ներկայացնելու համար:

Այսպիսով, գործի փաստական հանգամանքները ճշգրիտ ըմբռնելուն զուգահեռ, քաղաքացիական իրավունքի որևէ ինստիտուտի վերաբերյալ խնդիր մշակելիս սկզբում անհրաժեշտ է գտնել պահանջի իրավունքի մեկ կամ մի քանի հիմք, որոնցով կհիմնավորվեն մեկ կամ մի քանի անձանց՝ գործի փաստական հանգամանքներից բխող պահանջները մեկ այլ անձի կամ մի քանիսի նկատմամբ:

Յուրաքանչյուր խնդիր կազմողի համար կողմնորոշող հարցերը պետք է լինեն՝ **ո՞վ, ումի՞ց, ի՞նչ է պահանջում և ի՞նչ իրավական հիմքով**, և սրանց հաշվառմամբ պետք է շարադրել գործի փաստական հանգամանքները: Ընդ որում՝ կարևորը ոչ թե կյանքի որևէ իրադրություն նկարագրելն է, այլ այնպիսի իրադրություն ներկա-

յացնելը, որտեղ անձը մեկ ուրիշից ինչ-որ բան է պահանջում, և կան փաստեր, որոնք կարող են արդարացնել այդ պահանջը: «Ինչ-որ բանը», որպես կանոն, խնդրում կոնկրետ սահմանվում է՝ ապրանքի մատակարարում, որոշակի գումարի վճարում կամ էլ վթարի հետևանքով պատճառված վնասի հատուցում: Բացի այդ, այն խրախուսում է օրենքում փնտրել հատկապես այնպիսի նորմեր, որոնք կարող են հիմնավորել կոնկրետ պահանջի իրավունքը որոշակի փաստերի առկայության դեպքում:

Գործի փաստական հանգամանքները հասկանալիս և պահանջի հնարավոր հիմքերը փնտրելիս տեղի ունեցող կողմնորոշման գործընթացը հաճախ նկարագրում են որպես մշակողի «հայացքի այս ու այն կողմ թափառում»՝ գործի փաստական հանգամանքների և պահանջի իրավունքի հիմքերի միջև: Ներկայացված փաստերի նկատմամբ նորմերի կիրառման փորձը կրկնվում է այնքան ժամանակ, մինչև գտնվեն այն նորմերը, որոնք կարող են հիմնավորել պահանջի իրավունքը:

Քաղ. օր.-ում պահանջի իրավունքի հիմքերի վերաբերյալ դրույթները սահմանում են, որ անձն իրավունք ունի մեկ այլ անձից պահանջելու կամ մեկ այլ անձի համար կատարելու ինչ-որ բան («Վաճառողը պարտավոր է գնորդին հանձնել առքուվաճառքի պայմանագրով նախատեսված ապրանքը», Քաղ. օր.-ի 472 հ.): Այդ հիմքերը կարող են լինել որոշակի գույք հանձնելու կամ այլ գործողություն կատարելու պահանջի իրավունքներ, վնասի և ծախսերի հատուցման պահանջի իրավունքներ: Դրանք կարող են ունենալ իրային կամ պարտավորական բնույթ, բխել պայմանագրային կամ օրենքով սահմանված հարաբերությունից: Դրանք կարող են լինել առաջնային պահանջի իրավունքներ, վերաբերել, օրինակ, ինչ-որ բան կատարելու նախնական պարտավորությանը, կամ երկրորդային, երբ խոսքը ինչ-որ բան կատարելու նախնական պարտավորությունը չկատարելու համար վնասի հատուցման մասին է: Որոշակի գույք հանձնելու պահանջի իրավունքը կարող է վերաբերել գույքը վերջնականորեն հանձնելուն, ինչպես առքուվաճառքի պայմանագրի դեպքում է, կամ ժամանակավորապես հանձնելուն՝ վարձակալության պայմանագրի դեպքում:

Նորմերի ձևակերպումից է բխում՝ գործ ունենք պահանջի իրավունքի հիմքի հետ, թե՛ ոչ. նորմը սահմանում է արդյոք որևէ գործողություն կատարելու կամ որևէ գործողության կատարումից ձեռնպահ մնալու պահանջի իրավունք: Իսկ թե նորմն, ընդհանուր առմամբ, կարևոր է, թե ոչ, որոնման ժամանակ չափանիշ չէ: Օրինակ՝ սեփականության իրավունքի սահմանումը Քաղ. օր.-ի 163 հոդվածում կամ պայմանագրի հասկացությունը Քաղ. օր.-ի 436 հոդվածում, անկասկած, քաղաքացիական իրավունքի կենտրոնական նորմերի թվին են պատկանում: Չնայած դրան՝ այս երկու նորմերը պահանջի իրավունքի հիմք չեն, քանի որ չեն սահմանում, որ անձը կարող է մեկ այլ անձից որևէ բան պահանջել:

Պայմանագրային իրավունքի ոլորտում պահանջի իրավունքի հիմք են Քաղ. օր.-ի 470 և 472 հոդվածները, իսկ սեփականատիրոջ համար պահանջի իրավունքի կենտրոնական հիմքը Քաղ. օր.-ի 274 հոդվածն է, որը սեփականատիրոջն իրավունք է տալիս պահանջելու իր սեփականության իրավունքի օբյեկտն ապօրինի տիրապետողից: Քաղաքացիական օրենսգրքի 274 հոդվածը լրացվում է 277 հոդվածով սահմանված՝ տիրապետումից զրկելու հետ չկապված խախտումներից պաշտպանելու պահանջի իրավունքով, և Քաղ. օր.-ի 278 հոդվածի միջոցով այն տարածվում է սեփականատեր չհամարվող տիրապետողի վրա:

Որպես օրինակ ներկայացնենք պահանջի իրավունքի տարբեր կատեգորիաների ևս մի քանի հիմք, իհարկե, ոչ սպառիչ ցանկով:

- Առքուվաճառքի ինստիտուտը կարգավորող նորմերից հետևում է, որ վաճառողը, («ով») կարող է գնորդից («ումից») պահանջել («պահանջում է») պայմանագրի գնի վճարում («ինչ-որ բանե») Քաղ. օր.-ի 471/501 հոդվածների հիման վրա («ինչ իրավական հիմքով»): Առաջնային պահանջի իրավունքի կողքին առաջանում է գնորդի տարբեր երկրորդային պահանջների իրավունքը՝ 477, 482 ու 491 հոդվածների հիման վրա:

- Վարձակալության ինստիտուտը կարգավորող նորմերից հետևում է, որ առաջնային պահանջի իրավունքի հիմքերը Քաղաքացիական օրենսգրքի 606 ու 616 հոդվածներն են՝ վարձակալության

օբյեկտի հանձնման և վարձակալության գնի վճարման վերաբերյալ:

- Հանձնարարության ինստիտուտի բնագավառում Քաղաքացիական օրենսգրքի 783 հոդվածից բխում է հանձնարարողից վարձատրություն պահանջելու հանձնակատարի իրավունքը, իսկ 786 հոդվածից վերջինիս՝ ծախսերի հատուցում պահանջելու իրավունքը:

- Ծախսերի հատուցման պարտավորության մեկ այլ օրինակում հիմքը Քաղաքացիական օրենսգրքի 413 հոդվածն է:

- Պարտավորական իրավունքի ընդհանուր մասում պահանջի իրավունքի հիմք նախատեսված է Քաղաքացիական օրենսգրքի 411 հոդվածում, որտեղ նշված են այն նախապայմանները, որոնց առկայության դեպքում պարտատերը կարող է պարտապանից պահանջել վճարել տոկոսներ, եթե տոկոսների հաշվարկման և վճարման կարգ սահմանված չէ պայմանագրային հարաբերությունների կողմերի միջև գործող պայմանագրով:

- Համատեղ գործունեության պայմանագրերի դեպքում Քաղաքացիական օրենսգրքի 1026, 1029, 1033 հոդվածներում և 1035 հոդվածի 2-րդ մասում սահմանված են մասնակիցների փոխադարձ պահանջի իրավունքի հիմքերը, իսկ 1031 հոդվածը սահմանում է մասնակիցների նկատմամբ երրորդ անձանց պահանջի իրավունքի հիմքը:

- Քաղաքացիական օրենսգրքի 1058 հոդվածը սահմանում է դելիկտներից բխող պահանջի իրավունքի հիմքը (**«ինչ իրավական հիմքով»**), որն իրավունք է տալիս վնաս կրած անձին (**«ում»**) վնաս պատճառողից (**«ումից»**) պահանջելու (**«պահանջում է»**) պատճառած վնասի հատուցում (**«ինչ-որ բան»**): ՀՀ քաղ. օր.-ի առանձնահատկություններից է այն, որ դելիկտային իրավունքի պահանջներից մի քանիսը զետեղված են օրենսգրքի Ընդհանուր դրույթներում (17-19 հոդվածներ)՝ դրանով իսկ որոշ չափով կրկնվելով: Բայց, քանի որ այս դրույթներն ամբողջովին չեն համընկնում, դատական պրակտիկայում պետք է որոշվի դրանց միջև հարաբերակցությունը:

- Քաղաքացիական օրենսգրքի 1092 հոդվածն անհիմն հարստացման հետևանքով կրած վնասի հատուցման պահանջի իրավունքի հիմնական հիմքն է:

- Քաղաքացիական օրենսգրքի 1110, 1136, 1137, 1155, 1165, 1178 ու 1183 հոդվածները հիմնավորում են պահանջի իրավունքը մտավոր սեփականության ու հեղինակային իրավունքի ոլորտներում:

- Քաղաքացիական օրենսգրքի 1244 հոդվածը հիմնավորում է ժառանգման իրավունքում ժառանգների նկատմամբ պահանջի իրավունքները, որոնց նախապայմանները նշված են Քաղաքացիական օրենսգրքի 1242 և 1243 հոդվածներում:

Օրինակների այս թվարկումից հետևում է, որ պահանջի իրավունքի հիմքեր կարելի է գտնել Քաղ. օր.-ի բոլոր բաժիններում:

Գործի փաստական հանգամանքները ճշգրիտ ըմբռնելուց և պահանջի իրավունքի հնարավոր հիմքերը պարզելուց հետո խնդիր կազմողի կամ լուծողի հաջորդ քայլը նկարագրված փաստերն իրավական նորմերի հետ կապելն է, այսինքն՝ պահանջի իրավունքը հիմնավորող նախապայմանների առկայությունը պարզելը: Եթե պահանջի իրավունք ունեցող անձինք մի քանիսն են, օրինակ՝ որպես համապարտ պարտապաններ կամ համապարտ պարտատերեր, հարկավոր է ստուգել նրանցից յուրաքանչյուրի պահանջի իրավունքի հիմքերը: Այդ ստուգումը հարկավոր է կատարել ուղղորդող հետևյալ հարցերի միջոցով. «Ա-ն («**ուվ**») Բ-ից («**ումից**») պահանջում է («**պահանջում է**») X մականիշի նոր ավտոմեքենան («**ինչ-որ բան**»): Պահանջի իրավունքը հիմնավորված կլինի, եթե առկա լինեն Քաղ. օր.-ի 470/472 հոդվածի պայմանները («**ինչ իրավական հիմքով**»): Այս կերպ հնարավոր է խուսափել խնդրում նկարագրված իրավիճակին առնչվող օրենսդրության վերաբերյալ ընդհանուր դատողություններից:

Պահանջի իրավունքի նախապայմանները մասամբ նշված են հենց պահանջի իրավունքի հիմքերում, մասամբ էլ բխում են օրենքի այլ դրույթներից: Ընդ որում՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքն ունի եվրոպական մայրցամաքային իրավունքի ավանդույթին համապատասխան կառուցվածք: Դրանում ընդհանուր ու վերացական սկզբունքներից անցում է կատարվում ավելի որոշակի նորմերի: Ուստի Քաղ. օր.-ի 7-րդ բաժնում սահմանված որևէ պահանջի իրավունքի

առանձին տարրերն ուսումնասիրելու համար հարկ է նկատի ունենալ նաև դրան նախորդող բաժինների դրույթները: Օրինակ՝ առքուվաճառքի պայմանագրի դեպքում վերացականությունը կամարտահայտության գաղափարից և քաղաքացիական իրավունքների սկզբունքներից տեղափոխվում է դեպի ավելի որոշակի՝ պայմանագրի տարրեր հանդիսացող օֆերտան ու ակցեպտը: Այս առումով պետք է ստուգել, թե արդյոք ընդհանուր նորմերը, որոնք կարող են հանգեցնել պահանջի իրավունքի, չեն մղվում հետին պլան հատուկ նորմերի պատճառով:

Այդ խնդիրը ստորև ներկայացվում է թերություններով ապրանքի առքուվաճառքի պայմանագրի օրինակով: Ըստ առքուվաճառքի ինստիտուտը կարգավորող դրույթների՝ վաճառողը պարտավոր է մատակարարել առանց թերությունների ապրանք, հակառակ դեպքում Քաղաքացիական օրենսգրքի 491 հոդվածն ընձեռում է պահանջ ներկայացնելու որոշակի հնարավորություններ: Սակայն գնորդը կարող է նաև հիմնավորել, որ առքուվաճառքի պայմանագիրը կնքելիս մոլորության մեջ է գտնվել, ուստի ցանկանում է վիճարկել պայմանագիրը՝ Քաղաքացիական օրենսգրքի 312 հոդվածի դրույթների համաձայն: Քաղաքացիական օրենսգրքի 304 հոդվածի հիման վրա կարող են ներկայացվել այլ պահանջներ, քան Քաղաքացիական օրենսգրքի 491 հոդվածում սահմանվածներն են: Նման հնարավորությունը գործնականում կիմաստագրվեր ապրանքի թերությունների համար երաշխիքի վերաբերյալ օրենսդրության հատուկ դրույթները, քանի որ յուրաքանչյուր թերության դեպքում միաժամանակ հնարավոր կլիներ հետ կանգնել պայմանագրից: Պետք է հարգել օրենսդրի մտադրությունն առ այն, որ գնված ապրանքի թերությունների դեպքում նախատեսված հատուկ դրույթները հետ են մղում պայմանագրի վիճարկման իրավունքները: Խնդիր մշակողը պարտավոր է զարգացնել այս միտքը և սահմանել, որ գնորդը չի կարող Քաղաքացիական օրենսգրքի 491 հոդվածից բխող պահանջների հետ մեկտեղ ներկայացնել Քաղաքացիական օրենսգրքի 304 հոդվածից բխող պահանջներ: Այս նուրբ առնչությունները երևում են Սարյանի կտավի վաճառքի վերաբերյալ սույն խնդրագրքում տեղ

գտած խնդրում: Այնտեղ վաճառողն ունի պայմանագրի վիճարկման իրավունք, քանի որ որևէ կտավի պատճենը չի համարվում թերություններով բնանկար, ուստի այդ դեպքում չեն կարող կիրառվել ապրանքի թերություններից բխող պահանջի իրավունքները:

Հարկավոր է ուսումնասիրել պահանջի իրավունքի յուրաքանչյուր առանձին տարր: Անդրադառնանք հետևյալ նախադասության յուրաքանչյուր տարրին. **«Ո՛վ է ումից ինչ-որ բան պահանջում և ինչ իրավական հիմքով»:**

1. **«Ո՛վ»:** Պահանջ ներկայացնելու իրավունք ունեցող անձը՝ պարտատերը: Այս հարցին շատ արագ կարելի է պատասխանել, եթե գործի փաստական հանգամանքներում միայն երկու անձ է ներգրավված: Նրանք կարող են լինել պայմանագրային հարաբերության երկու կողմ, կամ տուժողն ու վնաս պատճառողը, կամ անհիմն հարստացածն ու դրանից տուժածը: Այս բոլոր դեպքերում հեշտ է եզրակացնել, թե ում է պատկանում պահանջի իրավունքը: Քանի որ բոլոր ֆիզիկական ու իրավաբանական անձինք հայկական իրավունքում իրավամբ իրավունակ են, այդ մասին դատողություններ անելն ավելորդ է: Իսկ գործունակության հարցը վերաբերում է իրավական հիմքի վավերությանը և այն այստեղ քննարկելու անհրաժեշտություն չկա:

Հարցերը բարդանում են և պահանջում մանրամասն պատասխաններ, երբ գործի փաստական հանգամանքներում ներկայացվում է մի քանի անձ, ովքեր զուցե պահանջի իրավունք ունեն: Ընդ որում՝ խնդիրը համեմատաբար հեշտանում է, երբ մի քանի պարտատեր համիրավ պարտատերեր են: Այստեղ Քաղաքացիական օրենսգրքի 365 հոդվածը սահմանում է, որ պահանջների համիրավության դեպքում համիրավ պարտատերերից յուրաքանչյուրն իրավունք ունի լրիվ ծավալով պահանջ ներկայացնելու պարտապանին: Այս դրույթն անհրաժեշտ է հիշատակել պահանջի իրավունքի տիրույթը պարզելու դեպքում:

Մեկ այլ խնդիր է ծագում, երբ գործի հանգամանքներից հետևում է, որ պարտատերը փոխվել է: Այդ դեպքում պետք է պարզել, թե արդյո՞ք պահանջ ներկայացնող անձը փաստացի պարտատերն է,

թե պահանջի իրավունքը վերջինիս անցել է Քաղ. օր.-ի 397 ու դրան հաջորդող հոդվածների դրույթների համաձայն, կամ գուցե պարտապանը պարտավորությունը կատարել է սկզբնական պարտատիրոջ հանդեպ, ինչը կարող է պարտապանին պարտավորության կատարումից ազատելու հիմք հանդիսանալ (Քաղ. օր.-ի 397 հոդվածի 3-րդ մաս): Ինդրի պատասխանը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. «Ա-ի պահանջի իրավունքի նախապայմանն այն է, որ ինքը հանդիսանա պարտավոր/պահանջատեր: Պահանջի իրավունքը նրան կարող է փոխանցված լինել Քաղաքացիական օրենսգրքի 397 հոդվածի համաձայն: Այդպիսի փոխանցման համար նախապայման է ...»:

Քաղաքացիաիրավական հարաբերություններում կարևոր է ներկայացուցչության ինստիտուտը, որի դրույթներին անդրադարձ է կատարվում սույն խնդրագրքի երկու խնդիրներում: Եթե ներկայացվողը պահանջ է ներկայացնում, ապա պետք է պարզել՝ արդյո՞ք վերջինիս ներկայացուցչի գործողությունները և կամարտահայտությունը անմիջականորեն հանդես են եկել ի շահ կամ ի վնաս ներկայացվողի (Քաղ. օր.-ի 318 հոդված), կամ արդյո՞ք առկա է եղել վավեր լիազորագիր, կամ, իրավաբանական անձանց դեպքում՝ արդյո՞ք ներկայացուցիչները գործել են վերջինիս կանոնադրությամբ սահմանված կարգով տրված լիազորությունների սահմաններում: Հետևաբար՝ որոշելու համար, թե արդյո՞ք ներկայացվողի և երրորդ անձանց միջև կնքվել է վավեր պայմանագիր, անհրաժեշտ է պարզել՝ ներկայացուցիչն ունեցել է ներկայացվողի անունից գործելու լիազորություն, կամ գործել է այդ լիազորությունների սահմաններում, կամ լիազորությունն ակնհայտորեն բխել է այն իրավիճակից, որում գործել է ներկայացուցիչը: Ինդրում ուղղակի նշված դեպքերում հարկավոր է պարզել՝ արդյո՞ք գործի տվյալ հանգամանքներում առանց լիազորության գործած անձն ինքն է դարձել պարտատեր/պահանջատեր (Քաղաքացիական օրենսգրքի 319 հոդված):

2. «Պահանջում է»: Պարտատերը պահանջում է պարտապանից: Այս հարցին, որպես կանոն, հեշտ է պատասխանելը: Ինդրագրքի մեջ ներկայացված խնդրում, որոնք ուսումնական նպա-

տակներով են քննվում համալսարաններում, գործի փաստական հանգամանքների վերաբերյալ գրեթե երբեք վեճ չի լինում. երկու անձ վիճում են պարտականություն կատարելու մասին, և մեկը մյուսից ինչ-որ բան է պահանջում: Անգամ երբ խնդրի հարցադրումը պահանջում է գնահատել ստեղծված իրադրությունը՝ «Ինչպիսին է իրավական իրադրությունը», այն չպետք է հանգեցնի դասագրքային շարադրանք ներկայացնելուն: Խնդրագրքի խնդիրները մշակելիս կարևորն այն է, թե արդյոք անձն իրավունք ունի մեկ այլ անձից որևէ բան պահանջելու: Նրանք երկուսն էլ շահագրգռված են ստանալու այս հարցի պատասխանը և ոչ թե լսելու ընդհանուր իրավական դատողություններ սեփականության իրավունքի, պայմանագրի կամ դելիկտի վերաբերյալ:

3. «Ինչ-որ բան»: Գույք հանձնել կամ որոշակի այլ գործողություն կատարել կամ որոշակի գործողության կատարումից ձեռնպահ մնալ: Խնդիրներ կազմողը պարտավոր է հատուկ ուշադրություն դարձնել, թե կոնկրետ ինչ է պահանջում հնարավոր պարտատերը: Դա կարող է լինել որևէ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի կամ ժամանակավոր օգտագործման իրավունքի փոխանցում: Կարող է լինել որևէ գույքի հանձնում կամ առաջացած վնասի համար դրամական փոխհատուցման տրամադրում: Կարող է պահանջվել վճարել մայր գումարը կամ լրացուցիչ տոկոսները: Կարող է պահանջվել վարձատրության վճարում կամ ծախսերի հատուցում:

Միայն այն դեպքում, երբ պահանջը՝ «ինչ-որ բանը», որոշակիորեն սահմանված է, խնդիր լուծողը կարող է գտնել պահանջի իրավունքի համապատասխան հիմքը: Եթե պարտատերը/պահանջատերը, օրինակ, որոշակի գումար է պահանջում, սխալ է որպես այդ պահանջի հիմք Քաղաքացիական օրենսգրքի 470/472 հոդվածները կամ 606 հոդվածը մեջբերելը: Նույն կերպ սխալ է տոկոսներ պահանջելու իրավունքի առաջացման նախապայմանների առկայությունը ստուգելը, եթե խնդրում տոկոսների վերաբերյալ հարց չի տրվում: Այսինքն՝ շատ կարևոր է գործի փաստական հագմանքների և պահանջի իրավունքի հիմքերի միջև կապի առկայության հարցում կողմնորոշվելը:

4. «Ումի՛ց»։ Պարտատերը պահանջում է պարտապանից։

Ինչպես արդեն նշվել է, որպես կանոն, դժվար չէ բացահայտել պարտատիրոջը և պարտապանին, եթե խոսքը երկու անձանց միջև առկա կամ ենթադրվող հարաբերությունների մասին է։ Իրադրությունը բարդանում է, երբ միևնույն կողմում հանդես է գալիս մի քանի անձ։ Ստորև ներկայացնենք մի քանի իրադրություն։

Եթե գործի փաստական հանգամանքներից հետևում է, որ պահանջ կարող է ներկայացվել մի քանի անձանց, ապա անհրաժեշտ է ստուգել՝ արդյո՞ք այդ անձինք համարվում են համապարտ պարտապաններ։ Օրինակ, ըստ Քաղաքացիական օրենսգրքի 1073 հոդվածի՝ վնասը համատեղ պատճառած անձինք տուժողի առջև կրում են համապարտ պատասխանատվություն։ Բացի այդ, անհրաժեշտ է ստուգել՝ արդյո՞ք որևէ պարտապանի պարտքից ազատող հիմքերը կարող են պարտատիրոջը ներկայացվել նաև մյուս պարտապանների կողմից։ Այս նպատակով, մասնավորապես, պետք է անդրադառնալ Քաղաքացիական օրենսգրքի 346 հոդվածին։ Խնդիրներ լուծողը պետք է առանձին-առանձին նկարագրի մասնակիցներից յուրաքանչյուրի դերը և ներկայացվող պահանջները։ Հարցադրումը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ (երբ Ա-ն պահանջ է ներկայացնում Ս1-ի և Ս2-ի նկատմամբ). *«Ս1-ի նկատմամբ Ա-ի պահանջների ստուգման արդյունքում պարզվել է, որ դրանք անհիմն են, քանի որ պահանջի իրավունքը վերացել է վաղեմության ինստիտուտի կիրառման լույսի ներքո։ Այժմ պետք է ստուգել՝ արդյո՞ք Ա-ն կարող է պահանջ ներկայացնել Ս2-ի նկատմամբ»։*

5. «Ինչ իրավական հիմքով»։ Օրենսդրության դրույթը, որով հիմնավորվում է պարտատիրոջ կողմից պարտապանին պահանջ ներկայացնելու իրավունքը։ Արդեն գործի փաստական հանգամանքները հասկանալու փուլում խնդիր լուծողը մտքում պետք է ունենա պահանջի իրավունքի հիմքերը։ Հիմնականում հնարավոր են մի քանի հիմքեր, որոնք ուսանողը պետք է քննարկի և թողնի դրանցից մեկը։ Կարելի է նաև խնդրում ներկայացնել այնպիսի հիմքեր, որոնք չեն կիրառվելու, ուստի և պետք է մերժվեն։ Դրա օրինակը պայմանագրերի տեսակների վերաբերյալ առաջադրանքն է, որի

լուծման համար հարկավոր է ստուգել պայմանագրերի տարբեր տեսակներից բխող պահանջի իրավունքի մի քանի հիմք: Արդյունքում միայն մեկն է հիմնավորում պահանջի իրավունքը:

Ներկայացնենք այս մոտեցման գործնական պատճառները:

Հայցվորի փաստաբանը որոշակի ռազմավարություն պետք է մշակի, որպեսզի տպավորություն ստեղծի, որ իր վստահորդի պահանջի իրավունքը հիմնավոր է: Եթե նա նշի նաև պահանջի սխալ հիմքեր, օրինակ՝ պահանջի իրավունքը բխեցնի անհիմն հարստացումից վավեր պայմանագրի առկայության դեպքում, ապա նրա հիմնավորումները լուրջ չեն ընդունվի: Մյուս կողմից, սակայն, եթե նա նշի պահանջի իրավունքի միայն մեկ հիմք, ապա հնարավոր է, որ ապացույցների ուսումնասիրությունից պարզվի, որ այդ պահանջի իրավունքի նախապայմաններն առկա չեն, այլ առկա են մեկ ուրիշ պահանջի իրավունքի նախապայմաններ: Եթե նա դրանց չի անդրադարձել իր հիմնավորումներում, ապա հնարավոր է՝ գործը տանուլ տա: Հետևաբար՝ նա պետք է ներկայացնի պահանջի իրավունքի բոլոր այն հիմքերը, որոնք, գործի փաստական հանգամանքներից ելնելով, լրջորեն կարող են կիրառելի համարվել պահանջի իրավունքը հիմնավորելու համար:

Խնդրի լուծման մեջ պետք է ներկայացվի պահանջի իրավունքի իրավական հիմք հանդիսացող նորմը՝ հետևյալ ձևակերպմամբ. *«Ա-ն, թերևս, կարող է Բ-ի նկատմամբ ունենալ պահանջի իրավունք Քաղ. օր.-ի 470/501 հոդվածների հիման վրա»*: Դրանից հետո անհրաժեշտ է ստուգել՝ գործի փաստական հանգամանքները համապատասխանում են այդ նորմի դրույթներին, և դրանց տարրերը կարող են կիրառելի համարվել տվյալ հանգամանքներում:

Երբեմն, մի քանի տարրերի կիրառելիությունը միանգամայն միանշանակ կարող է լինել, այնպես որ ավելորդ են երկար վերացական դատողությունները: Օրինակ, երբ գործի փաստական հանգամանքներում նկարագրվում է, որ երկու անձինք գրավոր պայմանավորվել են, որ նրանցից մեկը մյուսին սեփականության իրավունքով որևէ գույք է փոխանցելու որոշակի գումար վճարելու դիմաց, պետք չէ երկար դատողություններ անել այն մասին, որ կարող է առկա լինել առքուվաճառքի պայմանագիր:

Հարցը բարդանում է, երբ պայմանագրի գինն արտահայտվում է ոչ թե Հայաստանի Հանրապետության դրամով, այլ ցարական ժամանակների արծաթե ռուբլիներով: Այդ իրավիճակում խնդիր լուծողը պետք է մտածի այն մասին (ու համապատասխան մտքերն արտացոլի իր եզրակացությունում), որ Քաղաքացիական օրենսգրքի 470 հոդվածը պայմանագրի գինը սահմանում է որպես «որոշակի գումար» և Քաղաքացիական օրենսգրքի 356 հոդվածի ուժով այն պետք է արտահայտված լինի Հայաստանի Հանրապետության դրամով, իսկ ցարական ռուբլին, Քաղաքացիական օրենսգրքի 470 հոդվածի 2-րդ մասի համաձայն, արժույթ չէ: Այդ դեպքում թերևս պետք է անդրադառնալ Քաղաքացիական օրենսգրքի 589 հոդվածի դրույթին, քանի որ այս գործարքի դեպքում իրականում գործ ունենք փոխանակության պայմանագրի հետ: Խնդիրներ կազմողը պետք է մեջբերի Քաղաքացիական օրենսգրքի 589 հոդվածի 2-րդ մասը, որը հղում է կատարում առքուվաճառքի պայմանագրի վերաբերյալ դրույթներին՝ Քաղաքացիական օրենսգրքի 31-րդ գլխին, այդ թվում՝ ապրանքի գնի հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող 501 հոդվածին: Այս ամբողջ ստուգումը պետք է տեղի ունենա վերևում տրված այն հարցի շրջանակում, թե արդյո՞ք Ա-ն կարող է Բ-ին պահանջ ներկայացնել Քաղաքացիական օրենսգրքի 470/501 հոդվածների հիման վրա: Այս հարցին պետք է պատասխանել երկու քայլով: Առաջին՝ պետք է հարցնել՝ արդյո՞ք առկա է առքուվաճառքի պայմանագիր, որին պետք է տալ ժխտական պատասխան: Երկրորդ՝ պետք է հարցնել՝ թեև առքուվաճառքի պայմանագիր առկա չէ, այնուամենայնիվ, արդյո՞ք Քաղաքացիական օրենսգրքի 501 հոդվածից կարելի է բխեցնել այդ պահանջի իրավունքը: Այս հարցին Քաղաքացիական օրենսգրքի 589 հոդվածի դրույթների զարգացման ճանապարհով պետք է տրվի դրական պատասխան:

Պահանջի իրավունքի հիմնավորման համար նորմում նշված յուրաքանչյուր նախապայմանի վերաբերյալ հարկավոր է ներկայացնել մասնագիտական եզրակացություն: Այն կարող է շատ կարճ լինել, եթե գործի փաստական հանգամանքները բոլորովին խնդրահարույց չեն, բայց եզրակացությունից չի կարելի ամբողջովին հրաժար-

վել: Դրանում պետք է նշվեն հիմքերն ու փաստարկները, եթե գործի փաստական հանգամանքներին առնչվող որոշ հարցեր հնարավոր չի լինում պարզել: Խնդիր լուծողը վերը նշված օրինակի դեպքում, Քաղաքացիական օրենսգրքի 470/501 հոդվածներում սահմանված պահանջի իրավունքի հիմքերը նշելուց հետո, պետք է հարցնի՝ արդյո՞ք գործ ունենք առքուվաճառքի, այսինքն՝ վճարի դիմաց սեփականության իրավունքը փոխանցելու պարտավորության հետ: Այդ հարցին ժխտական պատասխան տալու դեպքում անհրաժեշտ կլինի ստուգել փոխանակության և առքուվաճառքի պայմանագրերից բխող իրավունքի մասին դրույթներին հղում անելու չափանիշները:

Եթե այդ տարրին անդրադարձ է կատարվել եզրակացությունում և դրա մասին դրական որոշում է կայացվել, ապա հաջորդ մասնագիտական եզրակացությունը պետք է վերաբերի այն հարցին, թե արդյո՞ք Ա-ի ու Բ-ի միջև կնքվել է վավեր պայմանագիր: Այստեղ խնդիր կազմողը պետք է ուշադրություն դարձնի պայմանագրի վավերության պայմաններին: Խոսքը օֆերտայի, ակցեպտի, պայմանագրի ձևին վերաբերող պահանջների, գործունակության, պայմանագրի առոչնչության և վիճարկելիության վերաբերյալ դրույթների (և դրանց վերաբերյալ դատարանների որոշումների), օրենքի խախտումների, կողմերի մտադրության բացակայության հետևանքների վերաբերյալ դրույթների մասին է: Ընդ որում՝ բոլոր այս դրույթները հարկավոր չէ ներառել եզրակացության մեջ, եթե դրանք գործի ելքի համար որևէ դեր չեն խաղում: Եթե, օրինակ, գործի փաստական հանգամանքներում ոչինչ նշված չէ գործարքի մասնակիցների տարիքի, գործունակության այլ բաղադրիչների մասին, ապա կարելի է հանգիստ եզրակացնել, որ խոսքը գործունակ անձանց մասին է: Բայց եթե գործի փաստական հանգամանքները մանրամասն ուսումնասիրելիս կգտնվեն այնպիսի փաստեր, որոնք կարող են հանգեցնել պայմանագրի անվավերությանը, եթե դրանց նկատմամբ կիրառվեն նշված դրույթները, ապա անհրաժեշտ է մանրամասն ստուգել և հիմնավորել՝ արդյոք պետք չէ կիրառել պայմանագրի անվավերության այս կամ այն հիմքը:

Գործնականում առանձին խնդիր է պահանջի իրավունքի վաղե-

մության ժամկետների հարցը: Քաղ. օր.-ի մոտեցումն այն է, որ վաղեմությունը չի վերացնում պահանջի իրավունքը (Քաղաքացիական օրենսգրքի 335 հոդված): Ըստ Քաղաքացիական օրենսգրքի 335 հոդվածի 2-րդ մասի՝ դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումի հիման վրա, որը պետք է տրվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը: Սակայն հարկավոր է ստուգել վաղեմության կիրառման նախապայմանների առկայությունը, եթե գործի փաստական հանգամանքներում այնպիսի ժամկետներ են նշված, որոնք տրամաբանական են դարձնում այդպիսի ստուգումը: Միաժամանակ պետք է ուղղակիորեն հղում կատարել Քաղաքացիական օրենսգրքի 335 հոդվածի 2-րդ մասին, եթե գործի փաստական հանգամանքներից չի բխում, որ պարտապանն արդեն այն վկայակոչել է:

Այստեղ ներկայացված ստուգման քայլերը համապատասխանաբար գործում են առքուվաճառքի պայմանագրի օրինակի պահանջի իրավունքի բոլոր հիմքերի համար: Յուրաքանչյուր անգամ պետք է ստուգվի յուրաքանչյուր առանձին նախապայմանը, որի առկայությունը պարտադիր է, որպեսզի պահանջի իրավունքը հիմնավորված լինի: Դա ցույց է տրված սույն ձեռնարկում ներկայացված խնդիրներում:

Խնդրի փաստական հանգամանքների մշակումը կարող է իսկապես հանգեցնել այն բանին, որ ներկայացված փաստերի նկատմամբ հնարավոր լինի կիրառել պահանջի իրավունքի մի քանի հիմք: Եթե այդպես է, ապա պարտադիր պետք է ստուգվեն այդ բոլոր հիմքերը: Ինչպես արդեն ասվել է, հայկական քաղաքացիական իրավունքում որևէ նշում չկա պահանջի իրավունքի կումուլացիայի արգելքի մասին: Բնականաբար, դա չպետք է հանգեցնի պահանջների կրկնապատկմանը, այլ պետք է հանդես գալ միայն որպես միևնույն պահանջի համար մի քանի հիմքի ներկայացում:

Եթե, օրինակ, առոչինչ կամ վիճարկելի գործարքի հիման վրա կտավի սեփականատերն այն փոխանցել է մեկ այլ անձի, սակայն սեփականության իրավունքը չի ծագել համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 176 հոդվածի՝ պայմանագրի բացակայության պատճա-

ռով, ապա սեփականության իրավունքի փոխանցողը, որը դեռևս կտավի սեփականատերն է, կարող է կտավը հետ պահանջել Քաղաքացիական օրենսգրքի 274 հոդվածի դրույթների համաձայն: Միաժամանակ, նա կարող է հետ պահանջել կտավը Քաղաքացիական օրենսգրքի 1092 հոդվածի հիման վրա, քանի որ նոր տիրապետողն անհիմն հարստացել է: Նույն կերպով անձը կարող է պահանջ ներկայացնել վնաս պատճառողին Քաղաքացիական օրենսգրքի 1058 հոդվածի հիման վրա, այսինքն՝ դելիկտային իրավունքի հիմունքներով, և զուգահեռաբար նաև՝ Քաղաքացիական օրենսգրքի 1088 հոդվածի հիման վրա՝ ապրանքի թերությունների հետևանքով պատճառված վնասի համար պատասխանատվության շրջանակում: Կրակմարիչ սարքի վերաբերյալ խնդրում ներկայացվել է այդպիսի իրավիճակ: Արդեն նշվել է բժշկական սխալի օրինակի մասին, ինչը կարող է հանգեցնել բժշկական ծառայությունների մատուցման պայմանագրից և միաժամանակ դելիկտից բխող պահանջի իրավունքի, եթե առկա են Քաղաքացիական օրենսգրքի 777 և հաջորդող հոդվածներում սահմանված նախապայմանները՝ Քաղաքացիական օրենսգրքի 408 և հաջորդող հոդվածների հետ կապի մեջ, ու եթե միաժամանակ առկա են նաև Քաղաքացիական օրենսգրքի 1058 և հաջորդող հոդվածների նախապայմանները:

6. Պահանջի իրավունքի հիմքերի ստուգման հերթականությունը: Արդեն նշվել է, որ պահանջի իրավունքի հիմքեր կարելի է գտնել Քաղ. օր.-ի բոլոր բաժիններում: Քանի որ կա կումուլացիայի հնարավորություն, բայց նաև հաշվի առնելով, որ ներկայացվում է բոլոր խնդիրները կազմելու ընդհանուր կառուցվածք, նպատակահարմար է կանոններ սահմանել այն մասին, թե պահանջի իրավունքի ստուգումն ինչ հերթականությամբ պետք է կատարվի ու ներկայացվի: Գերմանիայի համալսարաններում և դատարաններում ձևավորվել է հետևյալ պրակտիկան:

Նախ՝ ստուգվում է պայմանագրից բխող առաջնային ու երկրորդային պահանջների իրավունքը: Սա այնքանով է «տրամաբանական», որ պայմանագրից բխող պահանջների իրավունքը բացառում է օրենքով սահմանված պահանջների իրավունքի մեծ

մասի առկայությունը, մասնավորապես նկատի է առնվում առանց հանձնարարության գործողություններ կատարելուց և անհիմն հարստացումից բխող պահանջների իրավունքի առկայությունը: Բացի այդ, գույքային պահանջների իրավունքի գոյության վրա մեծ ազդեցություն ունեն պայմանագրային հարաբերությունները: Այսպես, վինդիկացիոն պահանջի իրավունքը Քաղաքացիական օրենսգրքի 274 հոդվածը կիրառելիս բացառվում է, եթե կա տիրապետման իրավունք, որը, որպես կանոն, հիմնված է պայմանագրային հարաբերության, օրինակ՝ վարձակալության պայմանագրի վրա:

Երկրորդ՝ ստուգվում է պայմանագրային պահանջներին նման պահանջների իրավունքը, մասնավորապես՝ առանց հանձնարարության ի շահ ուրիշի գործելը (Քաղ. օր.-ի 1048 ու դրան հաջորդող հոդվածներ): Սրանք, թեև բխում են օրենքով սահմանված պարտավորական հարաբերությունից, քանի որ պայմանագիր չկա, սակայն շատ մոտ են պայմանագրային պարտավորական հարաբերություններին և հղում են կատարում դրանց, ինչը հանգեցնում է այն բանին, որ վերանում է հակաիրավականության չափանիշը, որը կարևորագույն է դելիկտների համար: Նույն կերպով վերանում է նաև իրավական հիմքի բացակայության չափանիշը, որն անհրաժեշտ է անհիմն հարստացման համար:

Երրորդ՝ ստուգվում է գույքային պահանջների իրավունքը: Իրային իրավունքների բացարձակ բնույթի պատճառով դրանք գործում են բոլորի նկատմամբ և դրանով իսկ ավելի ուժեղ են, քան պահանջների իրավունքի մնացած վերջին խումբը:

Այս վերջին խումբը կազմում է օրենքով սահմանված դելիկտներից և անհիմն հարստացումից բխող պահանջների իրավունքը: Իհարկե, պահանջների այս իրավունքը ստուգման ենթակա հիմքերի հերթականությունում «վերջին» խումբն է, սակայն դա չի նշանակում, որ դրանք ավելի թույլ կամ պակաս կարևոր են, քան մյուս խմբերը: Այստեղ կարևոր է սոսկ հերթականությունը որոշելը, իսկ պրակտիկան ցույց է տալիս, որ դրանց նախապայմանները հաճախ առկա չեն, երբ պահանջների իրավունքը բխում է այլ հիմքերից:

7. Եզրակացություն կազմելը և դրա ձևը: Եթե որևէ գործի քննությունն ավարտվել է, դրա արդյունքը պետք է ներկայացվի: Դատավորները և փաստաբանները սկզբում ներկայացնում են իրենց քննության արդյունքը, ապա՝ հիմնավորում այդ արդյունքը: Այս մեթոդը, կարծես, որոշակիություն և ազդեցիկություն է հաղորդում վճռին և փաստաբանների ընտրած մարտավարությանը: Ըստ այդմ՝ հիմնավորումը սկսվում է այսպես. *«Ա-ն պահանջի իրավունք ունի Բ-ի նկատմամբ, որովհետև...»*, իսկ հետո քայլ առ քայլ ներկայացվում է պահանջի իրավունքի հիմքի պայմանների առկայությունը: Այսպիսով, հիմնավորումը հաջորդում է որևէ հարցի վերաբերյալ որոշմանը/իրավական գնահատականին: Այդուհանդերձ, Գերմանիայում այս մեթոդը գործնականում նույն խստությամբ չի կիրառվում, ինչպես, օրինակ՝ Ֆրանսիայում կայացվող վճիռների դեպքում:

Համալսարաններում գործերի մշակումը տարբերվում է ներկայացված «վճռի ոճից»: Խնդիրների լուծումները տարբերվում են դատական վճիռներից կամ փաստաբանների գրություններից: Այստեղ կարևորը ոչ թե վճիռը կայացնողի հեղինակությունն է, այլ խնդրի լուծման ճիշտ և գիտականորեն հիմնավորված պատասխանը գրելը: Հիմնավորված պատասխան ասելով նկատի է առնվում այն հարցին հիմնավոր պատասխանելը, թե արդյո՞ք կարող է անձը իրավական նորմերի հիման վրա մեկ ուրիշին որոշակի գործողություն կատարելու կամ դրանից ձեռնպահ մնալու պահանջ ներկայացնել: Համալսարանական ոճի հարցադրման վրա հիմնված այս մոտեցմանն էլ համապատասխանում է այն գործելակերպը, երբ խնդրի լուծման մեջ սկզբում նշվում է պահանջը (*«Ա-ն Բ-ից պահանջում է վստահ հատուցում»*), ապա նշվում է, որ Ա-ն կարող է նման պահանջ ներկայացնել, եթե առկա են X հոդվածի (պահանջի իրավունքի հիմքի) նախապայմանները: Այդ նախապայմանները հաջորդաբար վերացականորեն նշվում են և կիրառվում գործի փաստական հանգամանքների նկատմամբ. *«Վնասի հատուցում պահանջելու Ա-ի իրավունքի առաջին նախապայմանն, ըստ Քաղ. օր.-ի 1058 հոդվածի, այն է, որ Բ-ն նրան վնաս է պատճառել: Բ-ն իր ավերումը բենայով նրան վրաերթի է ենթարկել և մարմնական վնասվածք հասցրել և վնասել նրա*

հագուստը: Սրանք վնասներ են: Այսպիսով՝ Բ-ն Ա-ին վնաս է հասցրել: Երկրորդ նախապայմանն այն է, որ գործողությունը կատարվել է հակահրավական եղանակով... Բ-ն... Այսպիսով... Երրորդ նախապայմանն այն է, որ Բ-ի գործողությունը վնասի առաջացման պատճառն է եղել... Բ-ն... Այսպիսով... »: Նշված հարցերի ստուգման այս շղթայի վերջում բխեցվում է արդյունքը՝ պատասխանը, ոչ թե որպես «վճիռ», այլ որպես մտածողության գործընթացի ավարտ: Վերը նշված երեք քայլերից բաղկացած այս կառուցվածքը՝ (1) պահանջի իրավունքի հիմքի վրա պահանջի ձևակերպում, (2) պահանջի իրավունքի տարրերի կիրառումը գործի փաստական հանգամանքների նկատմամբ և (3) արդյունքի ձևակերպումը, այսինքն՝ խնդրի պատասխանը, ստացվում է «եզրակացության ոճի», այլ ոչ թե «վճռի ոճի», ինչը հեշտացնում է խնդրի համակարգված լուծման գործընթացը¹: Մյուս կողմից, սակայն, այս ոճը կարող է հանգեցնել որոշակի դանդաղության, երբ գործի փաստական հանգամանքները և նորմը բացարձակապես խնդրահարույց չեն: Այդպիսի դեպքերում միանգամայն արդարացված է օգտվել «վճռի ոճից» և «եզրակացության ոճի» անցնել միայն դժվար հարցերի դեպքում, օրինակ. «Վարձակալության պայմանագիրն առկա է, որովհետև կողմերը կնքել են հարուցելի պայմանագիր իրը ժամանակավորապես փոխանցելու մասին: Բայց հարց է, թե արդյո՞ք կատարված են նաև այդ պայմանագրին ներկայացվող ձևական պահանջները...»: Այն, թե երբ է նպատակահարմար այս կամ այն մեթոդը կիրառելը, պետք է որոշել դրսևորելով ճկունություն:

Այս հարցում, ինչպես և առհասարակ, ճիշտ է թվում հին ասացվածքը. «Առանց վարժության չկա հմտություն»: Խնդիրների այս խնդրագիրքը հետապնդում է այդպիսի վարժությունը դյուրացնելու նպատակ:

¹ Անգլոսաքսոնական համալսարաններում գործերի մշակման լուծման դասավանդումը անվանվում է IRAC, ինչը նշանակում է Issue-Rule-Analysis-Conclusion կամ Issue-Rule-Application-Conclusion.

Բաժին II. Իրավական խնդիրներ

Խնդիր 1

Բաժնետիրական իրավունքի ընդհանուր հիմունքներ. Փոխառության պայմանագիր. Հավատարմագրային կառավարման պայմանագիր. Համատեղ գործունեության պայմանագիր

1. Գործի փաստական հանգամանքները

Ա-ն ու Բ-ն 1980-ական թվականներին միասին սովորել են Երևանի պետական համալսարանում: Համալսարանն ավարտելուց հետո նրանց ճանապարհները բաժանվել են: Ա-ն Ռուսաստանում գործարարությամբ է զբաղվում և հարստանում, Բ-ն կարիերա է անում Հայաստանի պետական մարմիններում, մասնավորապես՝ պետական ձեռնարկությունների կառավարման ոլորտում: Երբ Ա-ն ու Բ-ն նորից հանդիպում են 25 տարի անց, որոշում են միավորել իրենց ունակությունները: Նրանք պայմանավորվում են, որ Հայաստանում պետությանը պատկանող փակ բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերը մասնավորեցվելիս Ա-ն կարող է գումար տրամադրել բաժնետոմսեր գնելու համար, իսկ Բ-ն կարող է արդիականացնել մասնավորեցված փակ բաժնետիրական ընկերությունը և կառավարել այն՝ դառնալով այդ ընկերության տնօրեն: Իրենց հանդիպման հաջորդ օրը Ա-ն Բ-ին էլեկտրոնային նամակ է ուղարկում հետևյալ բովանդակությամբ. «Հրաշալի է, որ այդքան տարիներ անց նորից հանդիպեցինք, և հրաշալի է, որ համատեղ մի բան պետք է անենք»: Բ-ն պատասխանում է. «Այո՛, բարեկամս, իրոք հրաշալի է»:

Ա-ն հիմնականում ապրում է Լոնդոնում: Իրենց հանդիպումից մեկ տարի անց նա Բ-ից լուր է ստանում, որ գուլպաներ արտադրող Y փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերը մասնավորեցվելու են: Բ-ն խնդրում է, որ Ա-ն 2 միլիոն ԱՄՆ դոլար տրամադրի, իսկ ինքը պարտավորվում է ձեռք բերել համապատասխան

բաժնետոմսերը և ընկերությունը դարձնել շահութաբեր: Ա-ն համաձայնվում է առաջարկին և մեկ շաբաթ անց տրամադրում պահանջված գումարը: Բ-ն հաստատում է էլեկտրոնային նամակով, որ գումարը ստացել է՝ գրելով. «Հաստատում եմ, որ ստացել եմ 2 միլիոն ԱՄՆ դոլար և այդ գումարը, ինչպես և պայմանավորվել ենք, կօգտագործեմ մեր ծրագիրն իրականացնելու՝ Y փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերը գնելու համար»: Բաժնետոմսերը ձեռք են բերվում: Ա-ն նամակով արտահայտում է իր գոհունակությունը: Բ-ն դառնում է ընկերության տնօրեն:

18 ամիս անց Բ-ն Ա-ից նորից պահանջում է գումար, այս անգամ 3 միլիոն ԱՄՆ դոլար՝ մասնավորեցման ենթակա կոշիկ արտադրող X փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերը գնելու համար: Ա-ն այդ պահին հիվանդ էր և հրաժարվում է տրամադրել գումարը: Բաժնետոմսերը գնում է մեկ այլ ձեռներեց, որը փակ բաժնետիրական ընկերությունն արդիականացնում է և 2 տարի անց վերավաճառում 6 միլիոն ԱՄՆ դոլարով:

Երբ երեք տարի անց Ա-ն վերադառնում է Երևան, Բ-ից հետ է պահանջում իր փողն ու Բ-ի ստացած շահույթի իր բաժինը: Պարզվում է, որ Բ-ն Y փակ բաժնետիրական ընկերության 100 % բաժնետոմսերը, ինչպես նաև կուտակված շահույթը նվիրել է իր հորեղբորը: Ի պատասխան՝ Բ-ն Ա-ից պահանջում է հատուցել այն վնասը, որը պատճառվել է իրեն այն բանի հետևանքով, որ Ա-ն, հակառակ իրենց պայմանավորվածության, հրաժարվել է գումար տրամադրել այժմ շահավետ դարձած կոշիկի գործարանը ձեռք բերելու համար:

Արդյո՞ք արդարացված են Ա-ի ու Բ-ի պահանջները միմյանց հանդեպ:

2. Առաջարկվող գրականության ցանկ

1. Բարսեղյան Տ.Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, մաս առաջին, 3-րդ հրատ., ԵՊՀ հրատ., - Եր., 2006:

2. Ավետիսյան Վ.Դ., Մեղրյան Ա.Գ., Քաղաքացիական իրա-

վունք (գործնական պարապմունքների ձեռնարկ), մաս առաջին, ԵՊՀ հրատ., - Եր., 2006:

3. Բեքմեզյան Գ., Սերոբյան Դ. և մյուսներ, Քաղաքացիական իրավունք (գործնական պարապմունքների ձեռնարկ), երկրորդ մաս, ԵՊՀ հրատ., - Եր., 2007:

4. Ավետիսյան Վ.Դ., Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով), ԵՊՀ հրատ., - Եր., 2013:

5. Брагинский М.И., Витрянский В.В. Договорное право. Книга вторая: Договоры о передаче имущества. М., 2007.

6. Брагинский М.И., Витрянский В.В. Договорное право. Книга пятая. Том 1. Договоры о займе, банковском кредите и факторинге. Договоры, направленные на создание коллективных образований. М.: Статут, 2000 - 2006.

7. Витрянский В.В. Договор купли-продажи и его отдельные виды. М., 1999.

8. Гражданское право. Учебник. Под ред. А.П. Сергеева. Т. 1. Проспект (ТК Велби), 2015.

9. Гражданское право. Учебник. Под ред. А.П. Сергеева, Ю.К. Толстого. Т. 2. М., 2011.

10. Гражданское право. Учебник. Под ред. Е.А. Суханова. Волтерс Клувер. М., 2009.

Խնդիր 2

Գույքի նկատմամբ գույքային իրավունքի վերաբերյալ նախնական նշում²

1. Գործի փաստական հանգամանքները.

X սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (ՍՊԸ) Երևանի հարավային ծայրամասում գտնվող խոշոր հողամասի սեփականատեր է: Հողամասը հեշտությամբ վաճառելու համար

² Նախնական նշումը Հայաստանում բոլորովին նոր իրավական ինստիտուտ է, որը ՀՀ քաղաքացիական օրենսգրքը է ներմուծվել 2015 թվականին: 135.1 հոդվածը սահմանում է, որ նախնական նշումով ապահովվում է պետական ռեզիստորում գույքային իրավունքի գրանցման պահանջի իրավունքը: Ապահովման այս միջոցի վերաբերյալ պայմանավորվում են գործարքի կողմերը, և գործարքը վավերացնող նոտարը դիմում է գրանցող մարմնին այն գրանցելու պահանջով: Այսպիսով, նախնական նշումն ինքնին գույքային իրավունք չէ, այլ յուրատեսակ ապահովման միջոց է: Այն ապահովում է իրային իրավունքի փոփոխություն կատարելու պարտավորական պահանջի իրավունքը: Այսպես է այն սահմանել Գերմանիայի Գերագույն դատարանը 1975 թվականին ընդունած իր որոշմամբ (տե՛ս Գերմանական Նոտարական ամսագրի 1975թ., էջ 414): Այս ապահովման միջոցը գործում է ակցետորային կարգով. այսինքն՝ կախված է ապահովված պահանջի իրավունքի գոյությունից: Այս իսկ պատճառով ճիշտ է նախնական նշման նկատմամբ համապատասխանաբար կիրառել այն նորմերը, որոնք կիրառվում են ապահովված պահանջի իրավունքի և այն գույքային իրավունքի նկատմամբ, որին վերաբերում է այդ պահանջի իրավունքը, այսինքն, օրինակ, կիրառման ենթակա է Քաղաքացիական օրենսգրքի 275 հոդվածը:

Քանի որ նախնական նշման ինստիտուտը հեռանկարում գործնական մեծ տնտեսական նշանակություն ունի, և ցանկալի է, որ իրավաբանները և մասնավորապես, նոտարները հնարավորինս շուտ ծանոթանան դրան, այս խնդրագրքի հեղինակային խումբը որոշել է այստեղ զետեղել նաև մի խնդիր, որն արտացոլում է այս իրավական ինստիտուտի համալիր բնույթը: Այս խնդիրը կազմել է Ռոլֆ Քնիփերը՝ հենվելով գերմանական դատական պրակտիկայի վրա: Այդ դատական պրակտիկան ներկայացված է Քլաուս-Վիլիելմ Կանարիսի հոդվածում (Claus-Wilhelm Canaris, Das parzellerte Grundstück, in: Juristische Schulung 1969, Seiten 80-87): Խնդրի լուծումն էլ տրվել է՝ ելնելով գերմանական փորձից՝ հաշվի առնելով հայ իրականության մեջ դեռևս նմանատիպ խնդիրների քացակայությունը:

ՍՊԸ-ն այն բաժանում է երկու մասի, որոնք կադաստրում գրանցվում են որպես իրարից անկախ հողամաս 1 և հողամաս 2: ՍՊԸ-ն որպես իր ներկայացուցիչ հանդես եկող գործադիր տնօրեն Գ-ի միջոցով վաճառում է երկու հողամասերն էլ իր միակ մասնակից Ա-ին: X ՍՊԸ-ն Ա-ի համար գրանցել է տալիս նախնական նշում հողամաս 2-ի նկատմամբ: Ա-ն կարճ ժամանակ անց հողամաս 2-ը վաճառում է Բ-ին և զիջում է նրան X ՍՊԸ-ի հանդեպ կադաստրում սեփականության իրավունքը գրանցել թույլատրելու պահանջի իրավունքը և նախնական նշման կատարումը: Բայց քանի որ Բ-ին իր պլաններն իրականացնելու համար հարկավոր է նաև հողամաս 1-ը, ուստի Բ-ն գնում է Ա-ից այդ հողամասը ևս: Ա-ն նորից զիջում է նրան X ՍՊԸ-ի հանդեպ կադաստրում սեփականության իրավունքը գրանցել թույլատրելու պահանջի իրավունքը: X ՍՊԸ-ի դիմումի հիման վրա հողամաս 1-ի վերաբերյալ Բ-ի օգտին ևս գրանցվում է նախնական նշում:

Այնուհետև պարզվում է, որ նախքան հողամասի բաժանումը գրանցված սեփականության իրավունքի հիման վրա, այսինքն՝ նաև բաժանումից հետո առանձնացված երկու մասերի (հողամաս 1 և հողամաս 2) իրական սեփականատերը ոչ թե X ՍՊԸ-ն է, այլ գործարար ԳԾ-ն: Այդ մասին տեղյակ են լինում նաև կադաստրի աշխատակիցները: Սակայն կադաստրում ուղղում չի կատարվում, և ԳԾ-ին չեն գրանցում որպես իսկական սեփականատիրոջ:

Արդյո՞ք Բ-ն կարող է դառնալ հողամասերի սեփականատեր և ինչ պետք է ձեռնարկի, որպեսզի կարողանա հասնել այդ նպատակին: Որևէ դեր խաղում է այն հանգամանքը՝ գիտե՞ր նա, թե՞ ոչ, որ Ա-ն X ՍՊԸ-ի միակ մասնակիցն է:

(Ենթադրվում է, որ այստեղ նշված բոլոր գործարքները կատարվել են ձևին վերաբերող բոլոր պահանջներին համապատասխան: Հնարավոր հանրային իրավական առանձնահատկությունները պետք չէ հաշվի առնել):

2. Առաջարկվող գրականության ցանկ

1. Բարսեղյան Տ.Կ., Հայաստանի Հանրապետության քաղա-

քաղցիական իրավունք, մաս առաջին, 3-րդ հրատ., ԵՊՀ հրատ., - Եր., 2006:

2. Брагинский М.И., Витрянский В.В. Договорное право. Книга вторая: Договоры о передаче имущества. М., 2007.

3. Гражданское право. Учебник. Под ред. А.П. Сергеева. Т. 1. Проспект (ТК Велби), 2015.

4. Гражданское право. Учебник. Под ред. Е.А. Суханова. Волтерс Клувер. М., 2009.

Խնդիր 3

Ուրիշի հողամասից սահմանափակ օգտվելու իրավունք. Սերվիտուտ

1. Գործի փաստական հանգամանքները.

Ա-ին սեփականության իրավունքով պատկանում է Երևանում գտնվող կառուցապատված հողամաս (հողամաս 1): Այդ հողամասի հարևանությամբ գտնվում է երկու հողամաս՝ «հողամաս 2-ը» և «հողամաս 3-ը», որոնք սեփականության իրավունքով պատկանում են Բ-ին: Հողամաս 2-ը և հողամաս 3-ը անշարժ գույքի առանձին միավորներ են և կադաստրում գրանցված են որպես երկու իրարից անջատ հողամասեր: Այս երկու հողամասերը փակում են հողամաս 1-ի ելքը դեպի միակ հանրային նշանակության ճանապարհ: Բ-ն հասկանում է Ա-ի խնդիրը և պատրաստ է հողամաս 2-ում հողամաս 1-ի օգտին սերվիտուտ սահմանել, ըստ որի հողամասի սեփականատերը պետք է իրավունք ունենա ոտքով կամ ավտոմեքենայով տեղաշարժվելու երեք մետր լայնությամբ հատվածով: Դրա դիմաց տարեկան պետք է վճարվի 2000 ՀՀ դրամ: Այդ մասին պայմանագիրը վավերացվում է նոտարի կողմից: Սխալմամբ այդ իրավունքը գրանցվում է հողամաս 3-ի նկատմամբ: Քանի որ հողամասերը կողք կողքի են գտնվում, ո՛չ Ա-ն, ո՛չ էլ Բ-ն չեն նկատում կադաստրում սերվիտուտի գրանցման կապակցությամբ կատարված սխալը: Կադաստրում կատարված գրանցման հիման վրա սերվիտուտով նախատեսված ճանապարհն անցկացվում է հողամաս 3-ով:

Հետագայում Ա-ն հողամաս 1-ը վաճառում և սեփականության իրավունքով փոխանցում է Գ-ին, իսկ Բ-ն հողամաս 3-ը վաճառում և սեփականության իրավունքով փոխանցում է Դ-ին:

Երբ Գ-ն արտասահմանյան ուղևորությունից վերադառնալուց հետո ցանկանում է ավտոմեքենայով անցնել դեպի իր հողամասը տանող ճանապարհով, պարզում է, որ Դ-ն այդ ճանապարհը մեկ

մետրով նեղացրել է այնպես, որ ավտոմեքենայով հագիվ է կարողանում անցնել:

Երբ Գ-ն Դ-ից պահանջում է վերականգնել նախնական լայնությունը, բացահայտվում է տեղի ունեցած մոլորությունը, և Դ-ն պահանջում է ամբողջությամբ վերացնել սերվիտուտը, քանի որ Ա-ն ու Բ-ն պայմանավորված են եղել, որ սերվիտուտը պետք է հաստատվի ոչ թե հիմա նրան պատկանող հողամաս 3-ում, այլ հողամաս 2-ում:

Արդյո՞ք Դ-ն իրավունք ունի պահանջելու վերացնել սերվիտուտը:

Գ-ն վրդովված է և Դ-ից պահանջում է հողամաս 3-ում վերականգնել նախնական վիճակը (3 մետր լայնությամբ ճանապարհը): Արդյո՞ք վերջինս ունի դրա իրավունքը:

2. Առաջարկվող գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-29 գործով 2010թ. հունվարի 29-ի որոշում:

2. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՇԴ/1609/02/11 գործով 2014թ. մայիսի 8-ի որոշում:

3. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԿԴ3/0450/02/13 գործով 2014թ. նոյեմբերի 28-ի որոշում:

4. Բարսեղյան Տ.Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, մաս առաջին, 3-րդ հրատ., ԵՊՀ հրատ., - Եր., 2006:

5. Брагинский М.И., Витрянский В.В. Договорное право. Книга вторая: Договоры о передаче имущества. М., 2007.

6. Гражданское право. Учебник. Под ред. А.П. Сергеева. Т. 1. Проспект (ТК Велби), 2015.

7. Гражданское право. Учебник. Под ред. Е.А. Суханова. Волтерс Клувер. М., 2009.

Խնդիր 4

Ուրիշի ապօրինի տիրապետումից իր գույքը հետ պահանջելու իրավունքը. Վաճառողի սեփականության իրավունքի պահպանվելը

1. Գործի փաստական հանգամանքները.

«Ա» ՍՊԸ-ն արդյունաբերական եղանակով արտադրում է գյուղատնտեսական ա պրանքներ: Ամեն տարի ծիրանի բերքի մի զգալի մասը մատակարարել է մեծածախ առևտրով զբաղվող «Գե ՍՊԸ-ին: Մատակարարման պայմանների համաձայն, որոնք առաջադրել է Ա-ն և ընդունել է Գ-ն, ծիրանը պետք է մնա Ա-ի սեփականությունը, քանի դեռ գինն ամբողջությամբ չի վճարվել: Բայց ստացողը, այսինքն՝ Գ-ն, պետք է իրավունք ունենա սովորական գործարարության եղանակով տնօրինելու ապրանքը: Եթե ստացողն օտարի ապրանքը, ապա ըստ մատակարարման պայմանների, դրանից բխող գնման գնի պահանջները պետք է զիջվեն Ա-ին: Այդուհանդերձ, Գ-ն՝ որպես Ա-ի ներկայացուցիչ, պետք է պահպանի պահանջները ներկայացնելու իրավունքը: Պայմանագրի գրավոր ձևը պահպանված է:

Գ-ն իր հերթին ծիրանի մի մասը մատակարարել է մանրածախ առևտրով զբաղվող անհատ ձեռնարկատեր Է-ին: Ընդ որում՝ նա վերջինիս թույլատրել է վճարման կարճատև հետաձգում: Բացի դրանից, Գ-ն ու Է-ն գրավոր պայմանավորվել են, որ գնման գնի Գ-ի պահանջը Է-ի հանդեպ չի կարող զիջվել:

Է-ն սահմանված ժամկետում վճարել է գնման պայմանավորված գինը և գնված ծիրանը վաճառել այլ անձանց:

Կարճ ժամանակ անց Գ-ն սննկացել է: Ա-ն ուզում է պահանջներ ներկայացնել Է-ին: Արդյո՞ք վերջինս ունի նման իրավունք:

2. Առաջարկվող գրականության ցանկ

1. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԲԴ/2452/02/12 գործով 2015թ. հուլիսի 17-ի որոշում:
2. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԷԴ/540/02/12 գործով 2015թ. հուլիսի 17-ի որոշում:
3. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԴԴ/0134/02/13 գործով 2015թ. ապրիլի 30-ի որոշում:
4. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՍԴ3/0118/02/10 գործով 2011թ. հոկտեմբերի 14-ի որոշում:
5. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵՇԴ/0473/02/10 գործով 2011թ. մայիսի 27-ի որոշում:
6. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՀԲԴ2/0043/02/08 գործով 2010թ. մարտի 12-ի որոշում:
7. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԲԴ/0455/02/09 գործով 2009թ. փետրվարի 13-ի որոշում:
8. Բարսեղյան Տ.Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, մաս առաջին, 3-րդ հրատ., ԵՊՀ հրատ., - Եր., 2006:
9. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Տ.Կ. Բարսեղյանի և Գ.Հ. Ղարախանյանի խմբ., երկրորդ մաս, ԵՊՀ հրատ., - Եր., 2008:
10. Брагинский М.И., Витрянский В.В. Договорное право. Книга вторая: Договоры о передаче имущества. М., 2007.
11. Гражданское право. Учебник. Под ред. А.П. Сергеева. Т. 1. Проспект (ТК Велби), М., 2015.
12. Гражданское право. Учебник. Под ред. Е.А. Суханова. Волтерс Клувер. М., 2009.
13. Гражданское право. Учебник. Под ред. А.П. Сергеева, Ю.К. Толстого. Т. 2. М., 1997.
14. Гражданское право. Учебник. Под ред. Е.А. Суханова. Том II, полутом 2. М., 2000.
15. Новак Д.В. Неосновательное обогащение в гражданском праве. Монография. - М.: Статут, 2010.

Խնդիր 5

Երաշխավորության պայմանագիր. Հիմնական դրույթներ պայմանագրի վերաբերյալ. Պայմանագրի անվավերությունը մոլորության կամ խաբեության հիմքով

1. Գործի փաստական հանգամանքները.

2011թ. հունիսի 10-ին կնքված պայմանագրով շինարարություն իրականացնող ձեռնարկատեր ՇՁ-ն շինարարական մեքենաներ վաճառող ՇՄ-ից գնել է շինարարական կռունկ 50.000.000 դրամով: Քանի որ ՇՁ-ն չի կարողացել անմիջապես վճարել պայմանագրով սահմանված գինը, կնքվել է տարաժամկետ վճարման պայմանով պայմանագիր, որի համաձայն պայմանագրի գինն ամբողջությամբ պետք է վճարվեր մինչև 2011թ. հոկտեմբերի 10-ը: ՇՁ-ն պարտավորվել է ի ապահովումն պայմանագրի գնի վճարման՝ իր ստանձնած պարտավորության կատարման երաշխավոր ներգրավել: Նրան հաջողվել է համոզել իր ատամնաբույժ ԱԲ-ին ստանձնել համապատասխան պայմանագրի կատարման երաշխավորությունը՝ դրա դիմաց խոստանալով շահավետ գին ԱԲ-ի ատամնաբուժարանի նոր շենքի կառուցման համար: Ընդ որում՝ ՇՁ-ն ԱԲ-ին խաբեությամբ համոզել է, որ դեռ դեբիտորական մեծ պարտքեր ունի և մինչև համապատասխան պայմանագրի գնի վճարման ժամկետը լրանալը ակնկալում է բավականին խոշոր դրամային ներհոսք, որով և կկատարի կռունկի գնման պայմանագրով ստանձնած վճարային պարտավորությունները:

2011թ. հունիսի 14-ին ԱԲ-ն ու ՇՄ-ն հանդիպում են ԱԲ-ի ատամնաբուժարանում՝ խոսելու երաշխավորության մասին: Նրանք փաստաթուղթ են կազմում, որում գրված է. «ԱԲ-ն պարտավորվում է կրել համապարտ պատասխանատվություն շինարարական կռունկի առքուվաճառքի պայմանագրով ՇՄ-ի առջև ՇՁ-ի ստանձնած 50.000.000 դրամ վճարելու պարտավորությունը լրիվ կամ մասնակի չկատարելու համար»:

ԱԲ-ն անմիջապես տեղում ստորագրում է երաշխավորության պայմանագիրը, բայց, նախքան կկարողանար հանձնել երաշխավորությունը ՇՄ-ին, նրան շտապ կանչում են ցավեր ունեցող հիվանդի մոտ: ՇՄ-ն հոգնում է սպասելուց, վերցնում է ԱԲ-ի ստորագրած փաստաթուղթը և հեռանում ատամնաբուժարանից՝ առանց մտածելու այն մասին, որ ինքն էլ պետք է այն ստորագրի: Տուն հասնելով՝ նա ԱԲ-ին նամակ է գրում, որով շնորհակալություն է հայտնում պայմանագիրը կնքելու համար: ԱԲ-ն թեև զայրացած էր ՇՄ-ի վարքագծից, սակայն ոչինչ չի ձեռնարկում այն բանից հետո, երբ ՇՁ-ն նրան մեկ անգամ ևս հավաստիացնում է, որ իր շինարարության համար շահավետ գին է պահանջելու:

ՇՄ-ն դրանից հետո հիվանդանում է և մահանում 2013թ. ապրիլի 19-ին: Նրա ունեցվածքը ժառանգում է այրին՝ ՇՄԱ-ն: Այրին միայն 2013թ. նոյեմբերի 20-ին ժառանգության իրավունքի վկայագիրն ստանալուց հետո է պարզում, որ շինարարական կոունկի գինը դեռ վճարված չէ: ՇՄԱ-ն անմիջապես նամակ է գրում ՇՁ-ին և պահանջում վճարել: Պարզվում է, որ ՇՁ-ն կուտակել է մեծաքանակ պարտքեր և տեղափոխվել Մոսկվա: Ապա նաև պարզվում է, որ շինարարական կոունկը դեռևս 2012-ի փետրվարին շուռ է եկել և դարձել շահագործման համար միանգամայն անպիտան՝ կորցնելով իր արժեքը: Իսկ շուռ էր եկել այն պատճառով, որ եռակցման կարերը ինչպես հարկն է պաշտպանված չէին կոռուզիայից, ամբողջովին ժանգոտել և շուռ գալու պատճառ էին դարձել:

2014թ. դեկտեմբերին ՇՄԱ-ն գտնում է ԱԲ-ի երաշխավորությունը: Դրա վրա տեսնում է ՇՄ-ի կողմից ստորագրված նշում այն մասին, որ այդ երաշխավորությունը պահում է և կօգտագործի սոսկ այն դեպքում, եթե վճարելու պահանջները չկատարվեն ավելի քան մեկ տարի շարունակ:

ՇՄԱ-ն դիմում է փաստաբանի, ով ԱԲ-ին 2014թ. դեկտեմբերի 20-ին նամակ է գրում, պահանջելով, որ նա վճարի 50.000.000 դրամ: ԱԲ-ն առարկում է՝ նշելով, որ ՇՄ-ն ժամանակին իրավունք չունեք տանելու իր կողմից ստորագրված փաստաթուղթը: Նաև ասում է, որ ՇՁ-ն իրեն խաբել է: Վերջինս իրականում ոչ մի դեբիտորական

պարտք չի ունեցել և ատամնաբուժարանն էլ չի կառուցել իր նշած շահավետ գնով: Բացի դրանից, ԱԲ-ի խոսքերով, շինարարական կոունկը որակի թերություններ է ունեցել: ԱԲ-ն նաև հավելում է, որ հնարավոր պահանջի իրավունքի ներկայացման վաղեմության ժամկետն արդեն անցել է:

Արդյո՞ք ՇՄԱ-ն կարող է ԱԲ-ից պահանջել շինարարական կոունկի դիմաց վճարումը:

2. Առաջարկվող գրականության ցանկ

1. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԲԴ/0724/02/08 քաղաքացիական գործով 18.09.2009 թվականի որոշումը:

1. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/1013/02/13 քաղաքացիական գործով 17.07.2015 թվականի որոշումը:

2. Բարսեղյան Տ.Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, մաս առաջին, 3-րդ հրատ., ԵՊՀ հրատ., - Եր., 2006:

3. Ավետիսյան Վ.Դ., Մեղրյան Ա.Գ., Քաղաքացիական իրավունք (գործնական պարապմունքների ձեռնարկ), մաս առաջին, ԵՊՀ հրատ., - Եր., 2006:

4. Բեքմեզյան Գ., Սերոբյան Դ. և մյուսներ, Քաղաքացիական իրավունք (գործնական պարապմունքների ձեռնարկ), երկրորդ մաս, ԵՊՀ հրատ., - Եր., 2007:

5. Брагинский М.И., Витрянский В.В. Договорное право. Книга вторая: Договоры о передаче имущества. М., 2007.

6. Витрянский В.В. Договор купли-продажи и его отдельные виды. М., 1999.

7. Гражданское право. Учебник. Под ред. А.П. Сергеева. Т. 1. М. 2015.

8. Гражданское право. Учебник. Под ред. А.П. Сергеева, Ю.К. Толстого. Т. 2. М., 2011.

9. Гражданское право. Учебник. Под ред. Е.А. Суханова. Волтерс Клувер. М., 2009.

Խնդիր 6

Հիմնական դրույթներ պայմանագրի և ներկայացուցչության մասին

1. Գործի փաստական հանգամանքները.

Կ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը Երևանի մի քանի խանութներում հայկական արվեստի գործեր է վաճառում: Հարմար օբյեկտներ որոնելու և գնելու համար հանձնարարություն է տալիս չորս անձանց, որոնցից յուրաքանչյուրին մի շրջան է հատկացվում: Տարածքի բաժանումը չորս շրջանների կատարվում է փոխհամաձայնությամբ: Այդ չորս անձանցից յուրաքանչյուրին տրվում է երեք տարի ժամկետով լիազորագիր, որի մեջ նշված է համապատասխան շրջանը: Բացի դրանից, նրանց տրվում են պայմանագրերի ձևաթերթեր, որոնք պետք է օգտագործեն արվեստի օբյեկտները գնելիս և որոնցում որպես գնորդ նշված է Կ-ն՝ իր հասցեով:

Այդ անձանցից մեկը տիկին Ա-ն է: Նա առանձնակի ջանասիրություն է դրսևորում, ինչի շնորհիվ մատակարարների մի կայուն խումբ է ստեղծում, որոնցից մեկը՝ նկարիչ Բ-ն, Ա-ին հատկացված շրջանից դուրս է գտնվում: Երկու տարի անց Ա-ն իր քեռի Ք-ի հետ որոշում է օգտագործել հայկական ժողովրդական արվեստի գործերի՝ Սինգապուրում պատրաստված նմանակներ: Ք-ն իբրև հայկական ժողովրդական արվեստի գործեր մատակարարում է Սինգապուրում պատրաստված կենդանիների փայտե 50 քանդակ: Մեկ ամիս անց Կ-ն տեղեկանում է Ա-ի և Ք-ի պայմանավորվածության մասին և անմիջապես զրկում Ա-ին նախկինում տրված լիազորությունից՝ նրանից հետ վերցնելով լիազորագիրը:

Սակայն Ա-ի մոտ մնում է առջուվաճառքի պայմանագրի համար նախատեսված մի քանի ձևաթերթ: Նա շարունակում է օգտագործել այդ ձևաթերթերը և ուրիշ մատակարարներից դարձյալ արվեստի

գործեր է ձեռք բերում: Մասնավորապես, լիազորագրի դադարման պահին Ա-ն բանակցություններ էր վարում Բ-ի հետ, որպեսզի վերջինս իրեն կտաձներ տրամադրի: Իսկ լիազորագրի դադարումից հետո կնքում է համապատասխան պայմանագիր: Բացի դրանից, Ա-ն վարպետ Գ-ի հետ կնքում է 15 ծաղկամանի գնման պայմանագիր, ըստ որի ծաղկամանները պետք է մատակարարվեն մաս-մաս: Լիազորագրի դադարումից անտեղյակ է մնում Կ-ի գնումների բաժնի պետը, և մեկ ամիս շարունակ ընդունում է Ա-ից արվեստի գործեր, այդ թվում նաև վարպետ Գ-ի պատրաստած 10 ծաղկաման: Երբ այդ ամիսն ավարտվելուց հետո բաժնի պետն իմանում է Ա-ի լիազորության դադարեցման մասին, հրաժարվում է ընդունել հաջորդ 5 ծաղկամանները: Կ-ն Բ-ին նույնպես հայտնում է, որ կտաձները չի վերցնի:

Գ-ն պահանջում է Կ-ից, որ վերցնի 5 ծաղկամանները և վճարի բոլոր 15 ծաղկամանների համար: Արդյո՞ք վերջինս դրա իրավունքն ունի:

Բ-ն պահանջում է Կ-ից, որ վերցնի կտաձները և վճարի դրանց համար: Արդյո՞ք նա դրա իրավունքն ունի:

Ք-ն պահանջում է Կ-ից, որ վճարի մատակարարված կենդանական քանդակների համար: Արդյո՞ք դրա իրավունքն ունի:

2. Առաջարկվող գրականության ցանկ

1. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-1412(ՏԴ) քաղաքացիական գործով 10 հոկտեմբերի 2007թ. որոշում՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 319 հոդվածի վերաբերյալ:
2. Բարսեղյան Տ.Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, մաս առաջին, 3-րդ հրատ., ԵՊՀ հրատ., - Եր., 2006:
3. Ավետիսյան Վ.Դ., Մեղրյան Ս.Գ., Քաղաքացիական իրավունք (գործնական պարապմունքների ձեռնարկ), մաս առաջին, ԵՊՀ

իրատ., - Եր., 2006:

4. Բեքմեզյան Գ., Սերոբյան Դ. և մյուսներ, Քաղաքացիական իրավունք (գործնական պարապմունքների ձեռնարկ), Երկրորդ մաս, ԵՊՀ իրատ., - Եր., 2007:

5. Брагинский М.И., Витрянский В.В. Договорное право. Книга вторая: Договоры о передаче имущества. М., 2007.

6. Витрянский В.В. Договор купли-продажи и его отдельные виды. М., 1999.

7. Гражданское право. Учебник. Под ред. А.П. Сергеева. Т. 1. Проспект (ТК Велби), М., 2015.

8. Гражданское право. Учебник. Под ред. А.П. Сергеева, Ю.К. Толстого. Т. 2. М., 2011.

9. Гражданское право. Учебник. Под ред. Е.А. Суханова. Волтерс Клувер. М., 2009.

Խնդիր 7

Էլեկտրոնային առևտրային հարթակի տրամադրման ծառայությունների առանձնահատկությունները

1. Գործի փաստական հանգամանքները.

«AuktioNET» առցանց հարթակը մասնավոր անձանց հնարավորություն է ընձեռում աճուրդի ձևաչափով վաճառելու ու գնելու ապրանքներ: Պայմանները սահմանված են «AuktioNET»-ի գործարք կնքելու ընդհանուր պայմաններում: Մասնակիցները պարտավոր են համացանցում անցկացվող սակարկությանը մասնակցելուց առաջ համաձայնել այդ պայմաններին: Նշյալ պայմաններից մեջբերենք մեր գործի համար մի կարևոր հատված.

«5. Եթե որևէ առաջարկող «AuktioNET»-ի կայքում «Auktion» ձևաչափով տեղադրում է որևէ ապրանք, ապա նա դրանով այդ ապրանքի վերաբերյալ պայմանագիր կնքելուն պարտավորեցնող օֆերտա է անում: Ընդ որում՝ առաջարկողը սահմանում է մեկնարկային գին և ժամկետ (օֆերտայի ժամկետ), որի ընթացքում օֆերտան կարող է ընդունվել առաջարկված գնով: Աճուրդի մասնակիցն ընդունում է օֆերտան՝ որոշակի գին առաջարկելով: Այդ գինը մարվում է, եթե մեկ ուրիշ մասնակից օֆերտայի ժամկետում ավելի բարձր գին է առաջարկում: Վաճառքի ընթացքում ապրանք առաջարկողների և գին առաջարկողների կողմից հայտարարություններ անելիս «AuktioNET»-ը յուրաքանչյուր դեպքում հանդես է գալիս որպես մյուս մասնակցի համար հայտարարություն ստանալու լիազոր ներկայացուցիչ:

«6. Աճուրդի ժամկետը լրանալու կամ օֆերտայի վաղաժամ ավարտի դեպքում ապրանք առաջարկողի և ամենաբարձր գումար առաջարկողի միջև կնքվում է ապրանքի ձեռք բերման մասին պայմանագիր, բացառությամբ այն դեպքերի, երբ ապրանք առաջար-

կողն իրավունք է ունեցել հետ կանչելու օֆերտան և հանելու առկա առաջարկված գումարները: Ենթադրվում է, որ նման իրավունք գոյություն ունի, եթե ապրանքն առանց վաճառողի մեղավորության կորել է, վնասվել է կամ որևէ այլ պատճառով այլևս չի վաճառվում կամ, եթե վաճառողը, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 303 ու դրան հաջորդող հոդվածների համաձայն, իրավասու է վիճարկելու իր հայտարարությունը»:

Վաճառքին մասնակցելու համար ապրանք առաջարկողները և այն գնել ցանկացող անձինք պետք է «AuktioNET» կայքում գաղտնաբառով պաշտպանված մասնակցի հաշիվ բացեն: Էլեկտրոնային հաշիվ բացելու համար նրանք պարտավոր են նշել իրենց անձնական կոնտակտային տվյալները (անուն, ազգանուն, հասցե) և իրենց համար ընտրել մասնակցի անուն, որով և հանդես կգան հարթակում մյուս մասնակիցների համար:

Ուսանողուհի B-ն գրանցված է «stud.iur2002» անվամբ: Քանի որ մոռացկոտ է, գաղտնաբառն ու մասնակցի անունը գրել է մի թերթիկի վրա, որը բոլորի համար տեսանելի փակցված է իր անհատական համակարգչի վրա, որից այլ անձինք օգտվել չէին կարող:

B-ն ապրում է ուսանող A-ի հետ միասին վարձակալած ընդհանուր բնակարանում: Թեև A-ն էլ է հետաքրքրվում առցանց գնումներով և երբեմն նաև այցելում է համապատասխան հարթակը, բայց չի ցանկանում բացել մասնակցի սեփական հաշիվ, քանի որ չի ուզում վտանգել իր անձնական տվյալները: Մի օր A-ն տեսնում է, որ նշված հարթակում դաշնամուր է վաճառվում: Դաշնամուր առաջարկողը, որի անունն իրականում V է, ընտրել է «musfreund001» անունը: Նա գործիքն առաջարկում է մեկնարկային 10.000 ՀՀ դրամով, աճուրդն էլ պետք է տևի 10 օր: Դաշնամուրի շուկայական գինը մոտ 8.000.000 ՀՀ դրամ է:

A-ն արդեն բավական ժամանակ է, ինչ երազում է ունենալ սեփական դաշնամուր: Օգտագործելով B-ի տվյալները՝ նա «stud.iur2002»-ի կողմից առաջարկում է վճարել 1.000.000 դրամ: Շատ ոգևորված լինելով՝ մոռանում է B-ին տեղեկացնել իր ծրագրած գնման մասին:

Աճուրդի ժամկետը լրանալուց մեկ օր առաջ V-ին զանգահարում է նրա հարևան Z-ն: Վերջինս պատահաբար երրորդ անձանցից լսել է աճուրդի մասին և ուզում է իր քրոջ դստեր համար մի լավ դաշնամուր գնել: Z-ն առաջարկում է V-ին վճարել կանխիկ դրամով 8.000.000 դրամ: V-ին հիասթափեցրել էր աճուրդի ընթացքը: Աճուրդի ավարտից ընդամենը մեկ օր առաջ բարձրագույն գինն առաջարկել էր «stud.iur2002»-ը: V-ն ընդհատում է աճուրդը, հանում բոլոր գների առաջարկները, ընդունում Z-ի առաջարկը և խոստանում նրան մեկ շաբաթից առաքել դաշնամուրը:

A-ն սարսափելի հիասթափված է և B-ին պատմում է ամբողջ պատմությունը: A-ի ընկճվածությունը տեսնելով՝ B-ն նրանից չի նեղանում և ուզում է ամեն կերպ օգնել, որ A-ն ձեռք բերի դաշնամուրը, ուստի վերջինիս հետ միասին այցելում է համացանցային կայքում նշված հասցե: Ապա երկուսով պահանջում են իրենց հանձնել դաշնամուրը: V-ն հրաժարվում է: Նա ասում է, որ ընդ A-ի և ընդ B-ի հետ պայմանագիր չի կնքվել, իսկ եթե անգամ կնքվել է, ապա այն առոչինչ է դաշնամուրի արժեքի և A-ի կողմից առաջարկված գնի միջև եղած ահռելի տարբերության պատճառով:

Ստուգման ենթակա են մասնակիցների բոլոր պահանջների իրավական հիմքերը:

2. Առաջարկվող գրականության ցանկ

1. Բարսեղյան Տ.Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, մաս առաջին, 3-րդ հրատ., ԵՊՀ հրատ., - Եր., 2006:
2. Ավետիսյան Վ.Դ., Մեղոյան Ս.Գ., Քաղաքացիական իրավունք (գործնական պարապմունքների ձեռնարկ), մաս առաջին, ԵՊՀ հրատ., - Եր., 2006:
3. Բերմեզյան Գ., Սերոբյան Դ.և մյուսներ, Քաղաքացիական իրավունք (գործնական պարապմունքների ձեռնարկ), երկրորդ մաս, ԵՊՀ հրատ., - Եր., 2007:
4. Брагинский М.И., Витрянский В.В. Договорное право. Книга

вторая: Договоры о передаче имущества. М., 2007.

5. Витрянский В.В. Договор купли-продажи и его отдельные виды. М., 1999.

6. Гражданское право. Учебник. Под ред. А.П. Сергеева. Т. 1. Проспект (ТК Велби), М., 2015.

7. Гражданское право. Учебник. Под ред. А.П. Сергеева, Ю.К. Толстого. Т. 2. М., 2011.

8. Гражданское право. Учебник. Под ред. Е.А. Суханова. Волтерс Клувер. М., 2009.

Խնդիր 8

Պայմանագրային իրավունքի վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ընդհանուր կարգավորումներ

1. Գործի փաստական հանգամանքները.

Ա-ն Մարտիրոս Սարյանի վրձնի կտավի սեփականատեր է: Ա-ն կարծում է, որ կտավը լավ կատարված պատճեն է: Քանի որ Ա-ն հավաքում է միայն բնօրինակներ, վաճառում է կտավը Բ-ին, որը նույնպես կարծում է, որ պատճեն է գնում: Ա-ն և Բ-ն պայմանավորվում են, որ կտավի գինը 5.000 դրամ է: Բ-ն վճարում է, իսկ Ա-ն Բ-ին է հանձնում է նկարը: Բ-ի՝ արվեստի գործերի առքուվաճառքով զբաղվող ծանոթը մի օր այցելում է նրան և ուսումնասիրելով նկարը՝ եզրակացնում, որ Բ-ն իրոք Սարյանի կտավն է գնել, և որի արժեքը շատ ավելի բարձր է: Երբ Ա-ն իմանում է այդ մասին, ցանկանում է կտավը հետ ստանալ Բ-ից: Վերջինս, բնականաբար, չի ուզում այն վերադարձնել:

Լուծեք կողմերի միջև ծագած վեճը:

2. Առաջարկվող գրականության ցանկ

1. Բարսեղյան Տ. Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, չորրորդ հրատարակություն, - Եր, 2011:
2. Բեքմեզյան Գ., Արտապայմանագրային պարտավորություններ, - Եր., 2009:
3. Александр Шевченко, Галина Шевченко, Деликтные обязательства в российском гражданском праве, Издательство Статут, - М., 2013.
4. Гражданское право: Учебник. В 2 т. Том. I. [Текст] / Отв. ред. Суханов Е.А. Волтерс Клувер. - М., 2008.

5. А. И. Загоруйко, Обязательства по возмещению вреда. Харьков, 1996 г.
6. Красавчиков О.А. Возмещение вреда, причиненного источником повышенной опасности. Юрид. Лит., - М., 1966.
7. Cane Peter “The Anatomy of Tort Law” Hart Publishing, Oxford 1997.
8. Markesinis B.S. and Deakin S.F. “Tort Law” 4th Edition, Clarendon Press, Oxford 1999.
9. Steven Shavell “Economic Analysis of Accident law”, John M. Olin Center for Law, Economics, and Business, Harvard, 2002.

Խնդիր 9

Օֆերտա. Ակցեայտ. Ներկայացուցչությունը քաղաքացիական իրավունքում

1. Գործի փաստական հանգամանքները.

13-ամյա ԱՄ-ն իր հոր՝ ծնողական իրավունքով օժտված ՎՄ-ի և առողջ ու եռանդուն տատիկի՝ ԳՄ-ի հետ միասին ապրում է Դիլիջանում գտնվող առանձնատանը: 2015թ. փետրվարի 2-ին օրվա երկրորդ կեսին ԱՄ-ն սովորականի նման իր տատիկի հետ գնում է ԼՍ-ի էլեկտրական սարքերի խանութ: Բանն այն է, որ ԱՄ-ն արդեն վաղուց ուզում է ունենալ «Super-Cool» ականջակալների նորագույն մոդելը, որը ցուցադրված է ԼՍ-ի խանութի ցուցափեղկում 35.000 ՀՀ դրամ վաճառքի գնով: Սա ընդունված շուկայական գինն է:

Ամեն ամիս իր հորից՝ ՎՄ-ից, գրպանի ծախսի փող ստանալով, նա հավաքել է 25000 ՀՀ դրամ: Բացի դրանից, հայրը փետրվար ամսվա համար գրպանի ծախսի փողը տալիս ասել է. «Ամեն ինչ արա, որ սրանով կարողանաս ականջակալները ձեռք բերել»: Բայց ԱՄ-ն ցավով տեղեկանում է, որ ԼՍ-ն, ցուցափեղկի ցուցանակի համաձայն, ականջակալների համար 35000 ՀՀ դրամ է պահանջում:

ԱՄ-ն, այնուամենայնիվ, առաջարկում է ԼՍ-ին ցուցափեղկում ցուցադրված ականջակալներն իրեն վաճառել 25000 ՀՀ դրամով՝ անպայման ցանկանալով ունենալ այդ ականջակալները: ԱՄ-ն ԼՍ-ին խնդրում է, որ մինչև ուրբաթ՝ 2015 թ. փետրվարի 6-ը, մտածի իր առաջարկի մասին: Որպես ապացույց, որ իր առաջարկն իրական է, ԱՄ-ն իր մոտ եղած 25000 ՀՀ դրամն ուղղակի թողնում է ԼՍ-ի մոտ՝ խանութում: ԼՍ-ն, տեսնելով ԱՄ-ի տխրությունը, խոստանում է կրկին մտածել առաջարկի մասին:

Ընթրիքի ժամանակ ԼՍ-ն այս ամենը պատմում է իր 15-ամյա որդուն՝ ՆՍ-ին: Վերջինս աշխատում է հոր խանութում, քանի որ օրենքով նախատեսված կարգով ունի աշխատելու իրավունք: Միաժա-

մանակ ՆՍ-ն լավ ճանաչում է ԱՄ-ին: ՆՍ-ն կարծում է, որ 25000 ՀՀ դրամը լավ գին է ականջակալների համար, բայց սխալմամբ ենթադրում է, որ ցուցափեղկում ցուցադրված ականջակալները հին մոդելի են, որի շուկայական գինն այդ պահին կազմում է 17500 ՀՀ դրամ:

2015թ. փետրվարի 3-ին ԼՍ-ն ՆՍ-ի հետ վեճի է բռնվում՝ ասելով, որ որդին անհուսալի է: Թեժ վեճից հետո ԼՍ-ն որդուն զրկում է ներկայացուցչի լիազորությունից և խանութում աշխատելու իրավունքից: Չնայած դրան՝ ՆՍ-ն, 2015թ. փետրվարի 6-ի առավոտյան քաղաքի կենտրոնում հանդիպելով ԳՄ-ին, ասում է նրան, որ ԱՄ-ն կարող է ստանալ ականջակալները 25000 ՀՀ դրամով:

Մի քանի օր անց իմանալով այդ մասին ԼՍ-ն չափազանց զայրանում է, սակայն արդարացիորեն հույս է տածում, որ ԳՄ-ն մոռացած կլինի այդ լուրը հաղորդել ԱՄ-ին: Արդեն այդ պատճառով նա կասկածում է գործարքի վավերությանը: Իրեն ապահովագրելու համար նա ցանկանում է հարցին վերջնական լուծում տալ և օրվա երկրորդ կեսին գնում է այն տուն, որտեղ ապրում են ԱՄ-ն, ՎՄ-ն ու ԳՄ-ն: Այնտեղ հանդիպում է ԳՄ-ին և ասում նրան, որ իր կարծիքով գործարքն անվավեր է, քանի որ մոդելի վերաբերյալ մոլորություն է եղել, իսկ նախապես վճարված գումարը վերադարձնում է ԳՄ-ին:

Երբ ԱՄ-ն մեկ ժամ անց տուն է գալիս, և ԳՄ-ն նրան ամեն ինչ պատմում է, նա ԼՍ-ից պահանջում է, որ ականջակալները տա իրեն 25000 ՀՀ դրամով:

Արդյո՞ք ԱՄ-ն ԼՍ-ին նման պահանջ առաջադրելու իրավունք ունի:

2. Առաջարկվող գրականության ցանկ

1. Բարսեղյան Տ. Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, չորրորդ հրատարակություն, - Եր., 2011:
2. Բեքմեզյան Գ., Արտապայմանագրային պարտավորություններ, - Եր., 2009:
3. Александр Шевченко, Галина Шевченко, Деликтные

обязательства в российском гражданском праве, Издательство Статут, -М., 2013.

4. Гражданское право: Учебник. В 2 т. Том. I. [Текст] / Отв. ред. Суханов Е.А. Волтерс Клувер. -М., 2008.

5. А. И. Загоруйко, Обязательства по возмещению вреда. Харьков, 1996 г.

6. Красавчиков О.А. Возмещение вреда, причиненного источником повышенной опасности. Юрид. Лит., -М., 1966.

7. Cane Peter, The Anatomy of Tort Law, Hart Publishing, Oxford 1997.

8. Markesinis B.S. and Deakin S.F. Tort Law, 4th Edition, Clarendon Press, Oxford 1999.

9. Steven Shavell, Economic Analysis of Accident law”, John M. Olin Center for Law, Economics, and Business, Harvard, 2002.

Խնդիր 10

Ֆինանսավորում՝ դրամական պահանջի զիջման դիմաց (Ֆակտորինգ)

1. Գործի փաստական հանգամանքները.

Ա-ն ունի էլեկտրական սարքերի խանութ: Նրա հաճախորդները սպառողներ և մի շարք միջին ձեռնարկատերեր են: Իր արտադրական ծախսերը նվազեցնելու և ֆինանսավորում ապահովելու նպատակով նա Բ բանկի հետ գրավոր պայմանագիր է կնքում: Ըստ այդմ՝ կողմերը պայմանավորվում են, որ Ա-ն բանկին է հանձնում բոլոր ներկա ու ապագա դրամական պահանջները, որոնք առաջանում են իր հաճախորդների հետ կնքած առքուվաճառքի պայմանագրերից: Բանկը պարտավորվում է ընդունել այդ պահանջները: Ընդ որում՝ որոշվում է, որ իրավաբանական անձանց հետ կնքած պայմանագրերից բխող պահանջները զիջելիս բանկն իրավունք ունի ստուգելու իրավաբանական անձի վճարունակությունը և իրավունք ունի այդ ստուգումից հետո առանց հիմքերը նշելու մերժել պահանջը ստանձնելը: Ինչ վերաբերում է սպառողների պահանջներին, ապա Ա-ն երաշխավորում է բանկի առաջ նրանց վճարունակությունը: Բանկը պարտավորվում է կատարել պարտապանների հաշվապահությունը՝ հաշիվը ներկայացնելուց մինչև պարտքի վճարման մասին հիշեցնելը և պահանջը բռնագանձելը: Բացի դրանից, այն պարտավորվում է ապագա պահանջների հանձնման պահին Ա-ին փոխանցել հաշվի գումարի 80%-ը: Գումարի մնացորդը նա կպահի մինչև պարտապանի կողմից վճարումը կատարելը: Բանկը 1,5%-ի վարձավճար է հաշվարկում և լրացուցիչ 1,5% էլ որպես «վճարունակության վարձ» իրավաբանական անձանց նկատմամբ պահանջների համար:

Ա-ն ու բանկը Ա-ի հայտնի հաճախորդներին տեղեկացնում են այս պայմանավորվածության մասին:

Երևան տեղափոխված Գ-ն այստեղ ռեստորան է բացում և Ա-ից

գնում գինիների սառնարան 10.000.000 ՀՀ դրամով, իսկ երկու շաբաթ անց էլ՝ ամաններ լվանալու մեծ մեքենա 8.000.000 ՀՀ դրամով: Ա-ն, ինչպես և պայմանավորվել էին, այս երկու պահանջները զիջում է բանկին: Ո՛չ նա և ո՛չ էլ բանկը Գ-ին չեն տեղեկացնում այդ զիջման մասին: Բ-ն ստուգում է Գ-ի վճարունակությունը, դրա դրական ավարտից հետո ստանձնում պահանջները և Ա-ին յուրաքանչյուր պահանջի համար 80%-ով վարկավորում, այսինքն՝ 8.000.000 դրամ մեկ պահանջի և 6.400.000 դրամ՝ մյուսի համար: Բայց այս ընթացքում Գ-ն հայտարարում է Ա-ին, որ գինիների սառնարանի մատակարարման համար պահանջը հաշվանցում է մի պահանջով, որն ունեցել է նրա հանդեպ մեկ ուրիշ գործարքի հիման վրա: Այդ գումարը կազմում էր 10.000.000 դրամ: Ա-ն չի վիճարկում այդ պահանջի գոյությունը:

Երբ բանկը Գ-ից պահանջում է 10.000.000 դրամ վճարել, նա հրաժարվում է վճարելուց՝ ասելով, որ այլևս պարտք չունի:

Արդյոք բանկը կարող է Գ-ից պահանջել, որ վճարի:

Երեք ամիս անց պարզվում է, որ Գ-ն ռեստորանի բացման ծախսերի առնչությամբ սխալ հաշվարկ է արել: Նա անվճարունակ է դառնում և այլևս չի կարողանում փակել ամաններ լվանալու մեքենայի հաշիվը:

Անվճարունակ է դառնում նաև մասնավոր հաճախորդ են, ով սեփական սպառման համար 800.000 դրամով սառնարան էր գնել: Այստեղ ևս բանկը Ա-ին 640.000 դրամով վարկավորել էր:

Բանկը պահանջում է Ա-ից վճարել իրեն 10.000.000 դրամ, ինչպես նաև Գ-ի հետ գինիների սառնարանի վերաբերյալ կնքած գործարքից երկուական 1,5% և 6.400.000 դրամի վերադարձ՝ Գ-ի հետ ամաններ լվանալու մեքենայի վերաբերյալ կնքած գործարքից: Բացի այդ, նա պահանջում է 640.000 դրամի վերադարձը Ե-ի հետ կնքած պայմանագրից:

Արդյո՞ք բանկն ունի դրա իրավունքը:

Ինչպես Ա-ն, այնպես էլ բանկը հիասթափված են իրենց գործարար հարաբերություններից, և նրանք հետագայի համար լուծում են իրենց միջև կնքված պայմանագիրը:

Բանկի գործադիր տնօրեն ԳՏ-ն, որին մեծ հատուցմամբ ազատել են աշխատանքից, ուզում է ավելի շատ փող վաստակել: Ա-ի մասին բարձր կարծիք ունենալով՝ ԳՏ-ն հանդիպում է նրան և առաջարկում ապագայի համար պայմանագիր կնքել, որը նման է բանկի հետ կնքած պայմանագրին: Գրավոր պայմանագրով նրանք հիմնականում նույն պայմաններն են սահմանում, բայց չեն ընդգրկում հաշվապահությունը վարելու և վճարունակության վարձավճարի վճարման պարտավորությունը. ԳՏ-ն հրաժարվում է և՛ դրանից, և՛ վճարունակությունն ստուգելուց, որն անել պարզապես ի վիճակի չէ: Նա վստահում է Ա-ին:

Արդեն առաջին պահանջը, որը Ա-ն հանձնում է ԳՏ-ին, չի վճարվում: Ա-ն էլեկտրական փոփ մատակարարման մասին պայմանագիր էր կնքել ձեռնարկատեր Ձ-ի հետ, և այս առաջին պահանջը այդ պայմանագրից բխող գնման գինն է: ԳՏ-ն Ա-ին փոխանցել էր 2.000.000 ՀՀ դրամ գնման գնի 80%-ը, այսինքն՝ 1.600.000 ՀՀ դրամ: Ձ-ն պայմանագիրը կնքելուց հետո դարձել էր անվճարունակ:

ԳՏ-ն Ա-ից պահանջում է վերադարձնել 1.600.000 ՀՀ դրամը: Արդյո՞ք վերջինս նման պահանջի իրավունք ունի:

2. Առաջարկվող գրականության ցանկ

1. Բարսեղյան Տ.Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Մաս առաջին, 3-րդ հրատ., ԵՊՀ հրատ., - Եր., 2006:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, մաս երկրորդ, 4-րդ հրատ, ԵՊՀ հրատ., - Եր., 2011:

3. Բեքմեզյան Գ., Սերոբյան Դ. և մյուսներ, Քաղաքացիական իրավունք (գործնական պարապմունքների ձեռնարկ), երկրորդ

иши, бѣсѣ ирши., - бр., 2007:

4. Брагинский М.И., Витрянский В.В. Договорное право. Книга вторая: Договоры о передаче имущества. М., 2007.

5. Брагинский М.И., Витрянский В.В. Договорное право. Книга пятая. Том 1. Договоры о займе, банковском кредите и факторинге. Договоры, направленные на создание коллективных образований.

6. Витрянский В.В. Договор купли-продажи и его отдельные виды. М., 1999.

7. Гражданское право. Учебник. Под ред. А.П. Сергеева. Т. 1. М., 2015.

8. Гражданское право. Учебник. Под ред. А.П. Сергеева, Ю.К. Толстого. Т. 2. М., 2011.

9. Гражданское право. Учебник. Под ред. Е.А. Суханова. Волтерс Клувер. М., 2009.

Խնդիր 11

Առանց հանձնարարության՝ ի շահ ուրիշի գործողություններ

1. Գործի փաստական հանգամանքները.

Բազմաբնակարան շենքում A-ն բնակարանի սեփականատեր է: Այդ բնակարանի անմիջապես վերևում գտնվող բնակարանի սեփականատերն է B-ն, որն այնտեղ ապրում է իր մոր հետ: B-ն փոքրինչ տարօրինակ մարդ է ու չի շփվում հարևանների հետ: Մի օր A-ն նկատում է, որ սենյակի առաստաղից ջուր է կաթում: Վազում է B-ի բնակարան ու դռան զանգը տալիս: Երբ ոչ ոք դուռը չի բացում, և մեկ ուրիշ հարևան A-ին հաղորդում է, որ մի քանի շաբաթ է չի տեսել ո՛չ B-ին և ո՛չ էլ նրա մորը, A-ն որոշում է ջարդել դուռը, քանի որ իրավամբ ենթադրում է, որ ջրի խողովակ է պայթել: Մտնելով բնակարան՝ նա ահավոր բան է տեսնում. տեսնում է հարևանի մոր դիակը: Բացի դրանից, նրա աչքին է ընկնում հարկային մարմնի կողմից ուղարկված մի նամակ: Բացում է նամակն ու կարդում, որ հարկային մարմինը բռնագանձման սպառնալիքով B-ից պահանջում է որոշակի ժամկետում վճարել հարկերը:

A-ն կանգնեցնում է ջրի հոսքը և զանգահարում ջրմուղկոյուղին շահագործող կազմակերպությանը, որը և վերանորոգում է խողովակը A-ից ստացած կանխավճարի դիմաց: Իսկ հատակի վնասվածքը, որն առաջացել էր խոնավությունից, մասնագիտությամբ որմնադիր A-ն ինքն է վերացնում: Նա վերացնում է նաև իր բնակարանի առաստաղին առաջացած վնասվածքը: Բարի մարդ լինելով՝ նաև զանգահարում է թաղման բյուրո, որը և հարևանի մորը թաղում է համեստ, բայց արժանավայել ձևով: Բայց թաղման բյուրոն պահանջում է անմիջապես փակել հաշիվը, և A-ն համաձայնում է կատարել այդ վճարումը: Բացի դրանից, նա ցանկանում է փրկել B-ին հարկային մարմնի հետ տհաճ խնդիրներից և վճարում է համապատասխան

հարկերը: Իհարկե B-ի բնակարանը տուժել էր, և A-ն վճարում է իրեն ծանոթ վերանորոգող կազմակերպությանը բնակարանի պատերը ներկելու համար:

A-ին չի հաջողվում պարզել, թե B-ն որտեղ է գտնվում: Ոչ ոք չգիտի, թե նա որտեղ է: Երբ B-ն երկու շաբաթ անց տուն է վերադառնում, A-ն պահանջում է, որ նա հատուցի իրեն այն գումարները, որոնք վճարել է ջրմուղ-կոյուղուն, թաղման բյուրոյին և վերանորոգող կազմակերպությանը՝ վերջիններիս կողմից մատուցված ծառայությունների դիմաց: Ապա նաև պահանջում է հատուցել հարկային վճարումներն ու որոշակի վարձատրություն իր կատարած աշխատանքների համար: Ի դեպ, դուռը ջարդելիս, նա վնասվել էր՝ պատռելով նաև իր վերնաշապիկը: Նա B-ից պահանջում է բուժման ծախսերի հատուցում և նոր սվիտեր:

Ի պատասխան B-ն ասում է, որ ինքը հեռացել է բնակարանից ու տեղափոխվել արտասահման, որովհետև վերջնականապես գժտվել է մոր հետ և ցանկացել է խուսափել հարկային պարտավորությունները կատարելուց: Ընդ որում, նրա պնդմամբ, դա հայտնի է եղել բոլոր հարևաններին: Բնակարանի ճակատագիրը, նրա խոսքով, իրեն բոլորովին չի հետաքրքրում, քանի որ առանց այդ էլ դրա գինը վճարված չէ, և այն ծանրաբեռնված է հիփոթեքով: Այս անգամ եկել է Հայաստան ժառանգությունն ընդունելու համար, ինչը և արել է ու շուտով հեռանալու է: Նա A-ին մեղադրում է այդ բոլոր ծախսերն անելու համար: Եվ ասում է, որ վերջինս պարզապես գործել է իր բնակարանը վնասից փրկելու նպատակով: B-ն ասում է, որ մտադիր չէ ինչ-որ բան վճարել A-ին:

A-ն ուզում է իմանալ՝ իրավունք ունի պահանջելու B-ից հատուցելու բոլոր նշված վճարումները:

2. Առաջարկվող գրականության ցանկ

1. Բարսեղյան Տ.Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, մաս առաջին, 3-րդ հրատ., ԵՊՀ հրատ., - Եր., 2006:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, մաս երկրորդ, 4-րդ հրատ, ԵՊՀ հրատ., - Եր., 2011:
3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, մաս երրորդ, 4-րդ հրատ, ԵՊՀ հրատ., - Եր., 2011:
4. Բեքմեզյան Գ., Սերոբյան Դ. և մյուսներ, Քաղաքացիական իրավունք (գործնական պարապմունքների ձեռնարկ), երկրորդ մաս, ԵՊՀ հրատ., - Եր., 2007:
5. Брагинский М.И., Витрянский В.В. Договорное право. Книга вторая: Договоры о передаче имущества. М., 2007.
6. Гражданское право. Учебник. Под ред. А.П. Сергеева. Т. 1. Проспект (ТК Велби), М., 2015.
7. Гражданское право. Учебник. Под ред. А.П. Сергеева, Ю.К. Толстого. Т. 2. М., 2011.
8. Гражданское право. Учебник. Под ред. А.П. Сергеева, Ю.К. Толстого. Т. 3. М., 2011.
9. Гражданское право. Учебник. Под ред. Е.А. Суханова. Волтерс Клувер. М., 2009.

Խնդիր 12

Վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորություններ

1. Գործի փաստական հանգամանքները³.

Առևտրային ներկայացուցիչ Հ-ն իր ավտոմեքենան առավոտյան ժամը 9:00-ին սահմանված կարգով կանգնեցնում է փողոցի՝ կայանման համար հատկացված հատվածում: Երբ ժամը 10:00-ին վերջինս վերադառնում է ավտոմեքենայի մոտ, պարզում է, որ մեկ ուրիշ ավտոմեքենա իր ճանապարհը փակել է: Այդ երկրորդ ավտոմեքենան սահմանված կարգի խախտմամբ կանգնած էր փողոցի երկրորդ շարքում. այն ապրանքներ տեղափոխող ավտոմեքենա էր, որով Լ ՍՊԸ-ի առաքող ծառայության աշխատող Ա-ն ապրանք էր առաքում: Ապրանքը դատարկելուց հետո Ա-ն սրճարանում հանդիպել էր ընկերներին և որոշել նրանց հետ նախաճաշել: Հ-ին ոչ մի կերպ չի հաջողվում դուրս գալ կայանատեղից: Անհաջողությամբ են պսակվում նաև վարորդին գտնելու կամ քարշակման (բուքսիրային) ծառայության հետ կապվելու նրա փորձերը: Հ-ն միայն ժամը 11:00-ին է կարողանում վերջապես մեկնել, որովհետև Ա-ն ավելի շուտ չի վերադառնում իր ավտոմեքենայի մոտ:

Սրա հետևանքով Հ-ն չի կարողանում նախատեսվածի համաձայն ժամը 11:45-ին լինել 70 կմ հեռավորության վրա գտնվող վայրում, որտեղ նույնպես ապրանք պետք է առաքեր: Հաստատվում է, որ ուշանալու պատճառով նրան հասցվել է 500000 ՀՀ դրամի վնաս:

Իմանալով, որ Ա-ն վնասի հատուցման համար միջոց չունի, նա այդ գումարը պահանջում է Լ ՍՊԸ-ից: Արդյո՞ք վերջինս նման պահանջ ներկայացնելու իրավունք ունի:

³ Այս գործի մի մասը պրոֆ. Ռ. Քնիպերը վերցրել է Էքերտ/Հաթենհաուերի «75 քննական աշխատանքներ Քաղաքացիական օրենսգրքի վերաբերյալ» ժողովածուից (Eckert/Hattenhauer, 75 Klausuren aus dem BGB, 12. Auflage 2008, Fall 60):

Լ ՍՊԸ-ն էլ պնդում է, որ Ա-ն պետք է շտապ դեղամիջոցներ առաքեր, որ նա միշտ շատ պարտաճանաչ է աշխատել և որ Հ-ն ի վերջո կարող էր օգտվել տաքսուց:

2. Առաջարկվող գրականության ցանկ

1. Բարսեղյան Տ. Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, չորրորդ հրատարակություն, - Եր., 2011:

2. Գ. Բեքմեզյան, Արտապայմանագրային պարտավորություններ, - Եր., 2009:

3. Александр Шевченко, Галина Шевченко, Деликтные обязательства в российском гражданском праве, Издательство Статут, -М., 2013.

4. Гражданское право: Учебник. В 2 т. Том. I. [Текст] / Отв. ред. Суханов Е.А. ВолтерсКлувер. -М., 2008.

5. А. И. Загорулько, Обязательства по возмещению вреда. Харьков, 1996.

6. Красавчиков О.А. Возмещение вреда, причиненного источником повышенной опасности. Юрид. Лит., -М., 1966.

7. Cane Peter “The Anatomy of Tort Law” Hart Publishing, Oxford 1997.

8. Markesinis B.S. and Deakin S.F. “Tort Law” 4th Edition, Clarendon Press, Oxford 1999.

9. Steven Shavell “Economic Analysis of Accident law”, John M. Olin Center for Law, Economics, and Business, Harvard, 2002.

Խնդիր 13

Վնասի հատուցման համար պատասխանատվության ընդհանուր հիմքերը. Ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների թերությունների հետևանքով պատճառված վնասը հատուցելու հիմքերը

1. Գործի փաստական հանգամանքները.

«Հակահրդեհային պաշտպանություն» ՍՊԸ-ն (ՀՊ) Երևանում արտադրում է կրակմարիչ սարքեր, որոնք վաճառում է մասնագիտացված խանութներում՝ օգտագործելով իր ֆիրմային անվանումը և նշելով սարքի տիպը: Երբեմն, երբ չի կարողանում սեփական արտադրանքով ապահովել պահանջարկը, պարբերաբար նմանատիպ սարքեր է գնում Դիլիջանի «Կրակմարիչ սարքեր» ՍՊԸ-ից (ԿՍ) և վաճառում դրանք որպես իր արտադրանք: ՀՊ-ի միակ մասնակից Վ-ն ընկերության ղեկավարությունը դրել է գործադիր տնօրեն ԳՏ-ի վրա:

2010 թվականի հունիսին ՀՊ-ն կրակմարիչ սարքեր է մատակարարում Օ շինանյութերի սուպերմարկետին: 2010 թվականի հուլիսին ՊՊ-ն գնում է մի կրակմարիչ: ՊՊ-ն իր բնակելի տան առաջին հարկում փոքր արհեստանոց է աշխատեցնում և կրակմարիչը տեղադրում է այնտեղ:

2012 թվականի հոկտեմբերին անհայտ պատճառներով արհեստանոցում, թեև պահեստավորման պայմանները պահպանվում էին ինչպես հարկն է, հրդեհ է բռնկվում: ՊՊ-ն փորձում է կրակմարիչով հանգցնել կրակը: Դա նրան չի հաջողվում, որովհետև կրակմարիչում բացակայում է ճնշումը: Փորձագետը հետազայում պարզում է, որ կրակմարիչում փական է տեղադրվել, որը ճնշման առաջացման համար անհրաժեշտ շոգեգոյացուցիչ միջոցը բաց է թողնում:

ՊՊ-ն ստանում է այրվածքներ, վնասվում է նրա հագուստը: Բացի դրանից, այրվում է նաև արհեստանոցը, ինչպես նաև արհեստանո-

ցում դրված հեծանիվը, որը նա օգտագործում էր ազատ ժամանակ: Կրակն առանց խնդրի հնարավոր կլիներ մարել, եթե կրակմարիչը սարքին լիներ:

ՊՊ-ն ցանկանում է պահանջ ներկայացնել շինանյութերի սուպերմարկետ Օ-ի դեմ, ինչպես նաև արտադրողի կամ արտադրողների դեմ: ՀՊ-ն ուսումնասիրում է կրակմարիչը և պարզում, որ կրակմարիչն արտադրել է ԿՍ-ն, իսկ ինքը պարզապես վաճառել է իր ֆիրմայի անվան տակ:

ՊՊ-ն ուզում է պարզել՝ կարո՞ղ է ներկայացնել համապատասխան պահանջներ և ո՞ւմ դեմ:

2. Առաջարկվող գրականության ցանկ

1. Բարսեղյան Տ. Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, չորրորդ հրատարակություն, - Եր., 2011:

1. Գ. Բեքմեզյան, Արտապայմանագրային պարտավորություններ, Եր., 2009:

2. Александр Шевченко, Галина Шевченко, Деликтные обязательства в российском гражданском праве, Издательство Статут, -М., 2013.

3. Гражданское право: Учебник. В 2 т. Том. I. [Текст] / Отв. ред. Суханов Е.А. Волтерс Клувер. -М., 2008.

4. А. И. Загорулько, Обязательства по возмещению вреда. Харьков, 1996.

5. Красавчиков О.А. Возмещение вреда, причиненного источником повышенной опасности. Юрид. Лит., -М., 1966.

6. Cane Peter “The Anatomy of Tort Law” Hart Publishing, Oxford 1997.

7. Markesinis B.S. and Deakin S.F. “Tort Law” 4th Edition, Clarendon Press, Oxford 1999.

8. Steven Shavell “Economic Analysis of Accident law”, John M. Olin Center for Law, Economics, and Business, Harvard, 2002.

Խնդիր 14

Քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը հատուցելը⁴

1. Գործի փաստական հանգամանքները⁵.

Տարբերակ 1

Ջանեթ Ֆերրարան (ՋՖ) 2005թ. սկզբին տուժեց մի ծանր վթարից: ՋՖ-ն այն ժամանակ երկվորյակներով հղիության հինգերորդ ամսում էր: Նա ցանկացել էր վաղ առավոտյան իր բնակարանի մոտակայքում անցումով հատել փողոցն այն պահին, երբ Սիլվիո Էրստլինգը (Ս1) և Սիբիլե Ցվեչգեն (Ս2) մրցավազքի էին դուրս եկել իրենց մոտոցիկլներով: Այս երկուսն էլ գրեթե ուշադրություն չէին դարձնում երթևեկության կանոններին: Երկուսն էլ նախորդ երեկո ու գիշեր մասնակցել էին խնջույքի և ալկոհոլի մեծ մնացորդներ ունեին արյան մեջ: Այնուամենայնիվ, Ս1-ը նկատեց ՋՖ-ին և փորձեց խուսափել բախումից, բայց սկզբում բախվեց Ս2-ին, որը չկարողացավ կառավարել իր մոտոցիկլը և բախվեց ՋՖ-ին՝ նրան մի քանի մետր քարշ տալով իր հետևից:

Ինքը՝ ՋՖ-ն, ասես հրաշքով այդ վթարի ժամանակ մարմնական վնասվածք գրեթե չստացավ: Բայց երկվորյակներից մեկը (Ե1) այդ վթարի հետևանքով մահացավ մոր մարմնում: Երկրորդ երեխայի՝ Ե2-ի ուղեղը ծանր վնասվածքներ ստացավ, և նա ծնվեց յոթ ամսական՝ ծանր հաշմոթյամբ: Ե2-ն ամբողջ կյանքում ուրիշի օգնության կարիք է ունենալու և չի կարողանալու ինքնուրույն հոգալ իր ապրուստը: Ե1-ին որոշ ժամանակ անց թաղեցին որպես մեռելաձնի:

Այս դժբախտությունը ծանր ցնցում էր ՋՖ-ի, ինչպես նաև նրա ամուսնու՝ Գյունթեր Մաթիասի (ԳՄ) համար: Այս շոկի հետևանքով

⁴ Այս խնդիրը կազմվել է Համբուրգի համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քննական խնդրի հիման վրա („Hamburger Examenskurs“ Juristische Fakultät, Universität Hamburg):

⁵ Սույն խնդրի շրջանակներում գործի հանգամանքները և համապատասխանաբար խնդրի լուծումները ներկայացված են երկու տարբերակներով:

ԳՄ-ն ու ՋՖ-ն, որոնք երկուսն էլ աշխատում էին, երկար ամիսներ անաշխատունակ դարձան: Այդ պատճառով երկուսն էլ ստիպված էին բուժվել բժշկի մոտ: ԳՄ-ն մինչև այսօր էլ գիշերները հաճախ զարթնում է քրտնքի մեջ կորած: Նրա արյան ճնշումը ամիսներ շարունակ բարձր էր: ՋՖ-ն նախքան ծննդաբերությունը և դրանից հետո էլ մշտապես մտահոգված էր իր Ե2 երեխայի վիճակով, ինչին ավելացել էր մեռած պտուղը (Ե1) մինչև ծննդաբերությունը կրելու բեռը:

ԳՄ-ն վթարին ներկա չէր եղել: Բայց նրան անմիջապես զանգահարել էր շտապ օգնության բժիշկը, և նա շտապել էր վթարի վայր: Ընդ որում՝ սկզբում ինքն էլ մի փոքր պատահար էր ունեցել: Բանն այն է, որ հուզմունքի պատճառով այնքան արագ էր վազել աստիճաններով, որ հողախախտել էր ոտքի կոճը: Ուստի ստիպված դիմել էր բժշկի օգնությանը: Կարճ ժամանակ անց հասել էր վթարի վայր: Այնտեղ տեսել էր գույնը գցած և դողացող կնոջը՝ շտապ օգնության մեքենայում, հագուստն ամբողջովին պատռտված և կեղտոտված: Կնոջ ճակատին ԳՄ-ն տեսել էր քերծվածք, որը նրան վտանգավոր էր թվացել, քանի որ կինը դեռ արյունահոսում էր, բացի այդ, գանգատվում էր որովայնի ուժգին կծկումներից: Այս տեսարանից ԳՄ-ն ուշագնաց էր եղել:

Վթարից հետո սկզբում հնարավոր էր եղել պարզել միայն U2-ի ինքնությունը: Ս1-ը փախուստի էր դիմել վթարի վայրից:

Ինչ պահանջներ կարող են ներկայացնել U2-ին ՋՖ-ն, ԳՄ-ն ու Ե2-ը:

Տարբերակ 2

U2-ի դեմ վճարման հայց չներկայացվեց, քանի որ նա ոչ միայն ապահովագրված չէր, այլև ակնհայտորեն անվճարունակ էր: Միայն երեք տարի անց հնարավոր եղավ պատահաբար պարզել Ս1-ի ինքնությունը: 2009թ. սկզբին Ե2-ը, ում ներկայացնում էին նրա ծնողները, վերջապես հայց ներկայացրեց Ս1-ի դեմ: Ս1-ն ասաց, որ պատրաստ է ստանձնել վնասի կեսի հատուցումը, քանի որ մեղավոր է

մոտավորապես 50%-ով: Մնացածը, նրա ասելով, պետք է վճարի Ս2-ը և Ե2-ի խնդիրն է, որ ավելի շուտ չի դիմել իրեն: Այնուամենայնիվ, ըստ նրա, Ե2-ը չպետք է տուժի այն բանից, որ բոլոր պահանջի իրավունքները Ս2-ի նկատմամբ դադարել են վաղեմության պատճառով: Ե2-ը բոլորովին այլ կարծիքի է: Նրա փաստաբանն ասում է, որ, մի կողմից, Ս1-ի ներքին պահանջի իրավունքները բոլորովին էլ չեն դադարել վաղեմության պատճառով, մյուս կողմից՝ դա որևէ էական նշանակություն չունի:

Արդյո՞ք Ս1-ը պարտավոր է վճարել ամբողջ գումարը:

2. Առաջարկվող գրականության ցանկ

1. Նատալյա Հակոբյանն ընդդեմ Վարդան Հայրապետյանի՝ թիվ ՀՔԴ3/0016/02/08 գործով ՀՀ վճարել դատարանի 13.02.2009 թվականի որոշումը:

2. Տիգրան Քոչարյանն ընդդեմ Աշոտ և Արթուր Քոչարյանների՝ թիվ ԵԱԲԴ/0610/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճարել դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 14-ի որոշումը:

3. «Բի Լայն» ՍՊԸ-ն ընդդեմ Արտակ Զաքարյանի՝ թիվ ԵԿԴ/2128/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճարել դատարանի կողմից 2015 թվականի ապրիլ 30-ի որոշումը:

4. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք (առաջին մաս), դասագիրք բուհերի համար, խմբագիր՝ Ս.Կ. Բարսեղյան, 3-րդ հրատարակություն (լրացումներով և փոփոխություններով), առաջին մաս, ԵՊՀ հրատ., - Եր., 2009, 560 էջ:

5. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, երրորդ մաս, դասագիրք բուհերի համար, խմբագիրներ՝ Ս.Կ. Բարսեղյան, Գ.Հ. Ղարախանյան, 4-րդ հրատարակություն (լրացումներով և փոփոխություններով), երրորդ մաս, ԵՊՀ հրատ., -Եր., 2011, 504 էջ:

Խնդիր 15

Անհիմն հարստացման հետևանքով ծագած պարտավորություններ

1. Գործի փաստական հանգամանքները.

Տան սպասուհի Հ-ն 20 տարի է, ինչ առանց իրավական հիմքի և իր ծառայությունների համար վարձատրվելու օգնում է անզավակ Վ-ին, որն իր ծնողների ու կնոջ մահվանից հետո մեծակ է ապրում: Հ-ին միայն կացարան է տրամադրվել, սնունդ և գրպանի ծախսերի համար չնչին գումար: Ծառայությունները Հ-ն մատուցում է՝ ակնկալելով (ընդ որում՝ Վ-ն գիտի այդ մասին և համաձայն է), որ Վ-ն Հ-ին կկտակի իր ժառանգությունը կամ էլ որևէ այլ եղանակով նրան վարձահատույց կլինի: Մահվանից կարճ ժամանակ առաջ Վ-ն փոխում է իր կտակն այն բանից հետո, երբ մի օր առանց լուրջ պատճառի զայրանում է սպասուհու վրա, և միակ ժառանգ է նշանակում իր եղբորորդուն՝ Ն-ին: Հ-ին ոչինչ չի հասնում:

Հ-ն պահանջում է Ն-ից, որ Վ-ին մատուցած ծառայությունների համար իրեն պատշաճ ձևով վարձատրի: Արդյո՞ք նա դրա իրավունքն ունի:

Ինչպե՞ս կգնահատվեր այս գործը, եթե Վ-ն պայմանագրով խոստացած լիներ Հ-ին, որ նրան է կտակելու իր ամբողջ գույքը:

2. Առաջարկվող գրականության ցանկ

1. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԲԴ/2452/02/12 գործով 2015թ. հուլիսի 17-ի որոշումը:
2. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԷԴ/540/02/12 գործով 2015թ. հուլիսի 17-ի որոշումը:
3. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԴԴ/0134/02/13 գործով

2015թ. ապրիլի 30-ի որոշումը:

4. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՍԴ3/0118/02/10 գործով 2011թ. հոկտեմբերի 14-ի որոշումը:

5. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵՇԴ/0473/02/10 գործով 2011թ. մայիսի 27-ի որոշումը:

6. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՀՔԴ2/0043/02/08 գործով 2010թ. մարտի 12-ի որոշումը:

7. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱՔԴ/0455/02/09 գործով 2009թ. փետրվարի 13-ի որոշում:

8. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Ս. Կ. Բարսեղյանի և Գ. Հ. Ղարախանյանի խմբ., երկրորդ մաս, ԵՊՀ հրատ., - Եր., 2008:

9. Гражданское право. Под ред. А.П. Сергеева, Ю.К. Толстого. Т. 2. - М., 1997.

10. Гражданское право. Учебник. Под ред. Е.А. Суханова. Том II, полутом 2. - М., 2000.

11. Новак Д.В. Неосновательное обогащение в гражданском праве. Монография. Статут, - М.: 2010.

II. Առաջարկվող լուծումներ

Խնդիր 1

1. Ա-ի պահանջները Բ-ի հանդեպ.

Բոլոր դեպքերում, երբ ստուգվում է մի կողմի պահանջների հիմնավորվածությունը, անհրաժեշտ է փնտրել այդ պահանջների իրավունքի օրենքով սահմանված հիմքը: Այստեղ նկարագրված իրադրությունում դա այնքան էլ հեշտ չէ, որովհետև գործի փաստական բոլոր հանգամանքները չէ, որ ներկայացված են: Կողմերն իրավաբաններ չեն, նրանք գրավոր հստակ ձևակերպված պայմանագիր չեն կնքել, այլ միայն պայմանավորվել են, որ կհամագործակցեն և մասնավորապես պայմանավորվել են, որ Ա-ն Բ-ին փող կտրամադրի, որպեսզի վերջինս այդ գումարով գույպաներ արտադրող փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսեր ձեռք բերի:

Այս համաձայնության ճշգրիտ բովանդակությունը պարզելու համար նախ անհրաժեշտ է ելնել պայմանագրի տառացի տեքստից (Քաղաքացիական օրենսգրքի 447 հոդված): Դա մեզ այստեղ առանձնապես չի օգնի, որովհետև համաձայնությունը չունի հստակ ձևակերպված տեքստ: Ուստի անհրաժեշտ է պարզել դրա էությունը և կողմերի իրական կամքը, նաև հաշվի առնել կոնկրետ հանգամանքները:

Քննարկվող գործում Բ-ն Ա-ից գումար է խնդրել փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսեր գնելու համար: Ա-ն հետ է ուզում իր փողը և ցանկանում է մասնակից լինել հնարավոր շահույթին:

ա) Արդյո՞ք պահանջի իրավունքը ծագում է փոխառության կամ վարկի մասին պայմանագրի հիման վրա:

Քաղաքացիական օրենսգրքի 887 հոդվածով նախատեսված՝ վարկային պայմանագրից բխող պահանջի իրավունքը բացառված է հենց սկզբից, քանի որ Ա-ն բանկ չէ:

Բայց պահանջների իրավունքի հիմք կարող են լինել Քաղաքացիական օրենսգրքի 877 ու 879 հոդվածները, եթե գումարի փոխան-

ցումը որակենք որպես փոխառության պայմանագիր:

Քաղաքացիական օրենսգրքի 877 հոդվածի համաձայն՝ փոխատուն պարտավոր է փոխառուին հանձնել դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք: Այս նորմով նկարագրված պայմաններն այստեղ ձևականորեն առկա են: Ա-ն խոստացել է Բ-ին վերջինիս խնդրանքով ուղարկել 2 միլիոն ԱՄՆ դոլար և այդ գումարը նաև փաստացի փոխանցել է: Խնդրանքն ու խոստումը պետք է որակվեն որպես առաջարկ և առաջարկի ընդունում՝ Քաղաքացիական օրենսգրքի 448 հոդվածի 2-րդ մասի իմաստով: Բացի դրանից, Ա-ն համապատասխան գումարը փոխանցել է, այնպես որ առկա է նաև Քաղաքացիական օրենսգրքի 877 հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության նախապայմանը, որի համաձայն փոխառության պայմանագիրը կնքված է համարվում հանձնման պահից (ռեալ պայմանագիր՝ ի տարբերություն սովորական կոնսենսուալ պայմանագրի):

Եթե Ա-ից կողմից Բ-ին գումարի հանձնումը որակենք որպես փոխառության պայմանագիր, ապա Ա-ն իրավունք կունենա պահանջելու գումարի վերադարձը, թերևս նաև՝ օրենքով սահմանված տոկոսների վճարումը:

Այդուհանդերձ, եթե դիտարկում ենք պայմանագրի մնացած հանգամանքները և պարզում կամարտահայտությունների իմաստը, ապա այս պայմանագրային հարաբերությունների որակումը որպես փոխառության պայմանագիր համոզիչ չէ: Ըստ Քաղաքացիական օրենսգրքի 877 հոդվածի՝ կողմերի իրավունքներն ու պարտականությունները միայն այն են, որ կողմերից մեկը դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք է հանձնում, իսկ մյուս կողմը որոշ ժամանակ անց այդ գումարը վերադարձնում է: Թե ինչպես կօգտագործվի փոխատուի կողմից տրամադրված գումարը, վերջինիս չի վերաբերում: Նա չի մասնակցում փոխառության գումարի շահավետ օգտագործման ռիսկին:

Մինչդեռ քննարկվող գործում կողմերը պայմանավորվել էին, որ Բ-ն կկառավարի Ա-ի փոխանցած գումարը, այն է՝ կզնի փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսեր: Համաձայնության այս

մասը դուրս է գալիս փոխառության պայմանագրի բովանդակության և էության շրջանակներից: Այսպիսով, Քաղաքացիական օրենսգրքի 877 հոդվածի նախապայմանները պահպանված չեն:

Հետևաբար՝ Ա-ն չի կարող Քաղաքացիական օրենսգրքի 877 և 879 հոդվածների հիման վրա պահանջ ներկայացնել Բ-ին, որովհետև նրանց միջև կնքված համաձայնության բովանդակությունը հնարավոր չէ որակել որպես փոխառության պայմանագիր:

բ) Արդյո՞ք պահանջի իրավունքը ծագում է գույքի հավատարմագրային կառավարման մասին պայմանագրի հիման վրա:

Ա-ի պահանջի իրավունքը Բ-ի հանդեպ կարող էր բխել թերևս Քաղաքացիական օրենսգրքի 966 հոդվածի 3-րդ մասից, եթե նրանց միջև կնքված լիներ գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիր, և այդ պայմանագիրն Ա-ի նախաձեռնությամբ դադարեցված լիներ:

Քաղաքացիական օրենսգրքի 954 հոդվածի համաձայն՝ գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրի գոյության նախապայմանն այն է, որ (1) կառավարման հիմնադիրը որոշակի ժամանակով գույք է հանձնում հավատարմագրային կառավարչին, և (2) հավատարմագրային կառավարիչը պարտավորված է այդ գույքը կառավարել ի շահ կառավարման հիմնադրի:

Տվյալ խնդրում Ա-ն Բ-ին հանձնել է 2 միլիոն դրամ: Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 955 հոդվածի 2-րդ կետի՝ դրամը չի կարող լինել հավատարմագրային կառավարման ինքնուրույն օբյեկտ՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Ուստի տվյալ իրավիճակում չի կարելի խոսել հավատարմագրային կառավարման մասին:

գ) Արդյո՞ք պահանջի իրավունքը ծագում է համատեղ գործունեության մասին պայմանագրի հիման վրա:

Ա-ն կարող էր պահանջի իրավունք ունենալ Բ-ի հանդեպ Քաղաքացիական օրենսգրքի 1033 ու 1035 հոդվածների հիման վրա:

Խնդրում նշված նամակագրությունից ակնհայտ է, որ կողմերը

պայմանավորվել են միավորել իրենց ավանդները՝ Ա-ն՝ գումարը, Բ-ն՝ կապերը՝ որոշակի նպատակի հասնելու համար:

Այդ նպատակը, այսինքն՝ պայմանագրի առարկան պարզելու համար պետք է ուսումնասիրել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447 հոդվածով սահմանված կարգավորումները: Քանի որ առկա չէ գրավոր պայմանագիր (հստակ գրավոր նամակագրություն), որը հստակորեն կարտահայտեր կողմերի կամքը, պետք է կիրառել համապատասխան հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն՝ *«Եթե սույն հոդվածի 1-ին կետում պարունակվող կանոնները հնարավորություն չեն տալիս որոշել պայմանագրի բովանդակությունը, ապա պետք է պարզվի կողմերի իրական ընդհանուր կամքը՝ հաշվի առնելով պայմանագրի նպատակը: Ընդ որում՝ նկատի են առնվում բոլոր համապատասխան հանգամանքները՝ ներառյալ պայմանագրին նախորդող բանակցությունները և թղթակցությունը, կողմերի փոխադարձ հարաբերություններում հաստատված գործելակերպը, գործարար շրջանառության սովորույթները, կողմերի հետագա վարքը»:*

Բ-ն, ինչպես նշված է խնդրում, կարիերա էր անում Հայաստանի պետական մարմիններում, մասնավորապես՝ պետական ձեռնարկությունների կառավարման ոլորտում և առաջարկում է ըստ էության համատեղ մասնակցել փակ բաժնետիրական ընկերություններում պետությանը պատկանող բաժնետոմսերի մասնավորեցմանը:

Այն համաձայնությունները, որոնք կայացնում են կողմերը որոշակի բաժնետիրական ընկերության բաժնետոմսերը ձեռք բերելու վերաբերյալ, պետք է դիտարկել որպես համատեղ գործունեության պայմանագրի տարատեսակ, քանի որ կողմերը համատեղ պայմանավորվում են հասնել որոշակի նպատակի՝ ձեռք բերել բաժնետոմսեր:

Տվյալ պարագայում, քանի որ Բ-ն պետական ձեռնարկությունների ոլորտում պաշտոն զբաղեցնող պաշտոնյա է, ակնհայտ է, որ նրա ավանդը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1027 հոդվածի 1-ին կետի իմաստով, այն կապերն են, որ վերջինս կարող է օգտագործել բաժնետոմսերը ձեռք բերելու նպատակով, և առանց որոնց Ա-ին ակնհայտորեն ավելի բարդ կլիներ ձեռք բերել այդ բաժնետոմսերը:

Արդյունքում ակնհայտ է դառնում, որ Ա-ի և Բ-ի միջև կնքված պայմանագիրը համատեղ գործունեության պայմանագիր էր պետությանը պատկանող Կ փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերը ձեռք բերելու վերաբերյալ:

Այն պահից, երբ Բ-ն ձեռք է բերում բաժնետոմսերը, համատեղ գործունեության պայմանագրի նպատակը համարվում է իրականացած:

Խնդրի հետագա շարադրանքում նշվում է, որ Բ-ն շահույթն ու բաժնետոմսերը նվիրել է իր հորեղբորը: Այստեղից ակնհայտ է, որ Բ-ն բաժնետոմսերն ամբողջությամբ ձևակերպել է իր անվամբ:

Այնուամենայնիվ, Ա-ի սեփականության իրավունքը Կ ձեռնարկության 50% բաժնետոմսերի նկատմամբ ծագել է օրենքի ուժով, վերջինս էլ իրավունք ունի ներկայացնելու սեփականության իրավունքի ճանաչման հայց այդ բաժնետոմսերի նկատմամբ: Այս պահանջի հիմքը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1027 հոդվածի 2-րդ կետի և 1033 հոդվածի 1-ին կետի կարգավորումներն են, որոնց հիման վրա ենթադրվում է, որ Ա-ի և Բ-ի ձեռք բերած գույքը հավասար է, այդ թվում՝ հավասար են նաև Կ փակ բաժնետիրական ընկերության ձեռք բերած բաժնետոմսերը:

2. Բաժնետոմսերի փոխանցման վերաբերյալ

Կ ձեռնարկության 50% բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման հայցին զուգահեռ Ա-ն կարող է պահանջ ներկայացնել այդ բաժնետոմսերն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու մասին:

Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275 հոդվածի 2-րդ կետի՝ *«Եթե գույքն անհատույց է ձեռք բերվել այն օտարելու իրավունք չունեցող անձից, ապա սեփականատերերը բոլոր դեպքերում իրավունք ունի հետ պահանջել այդ գույքը»:*

Տվյալ դեպքում Բ-ն բաժնետոմսերը նվիրել է իր հորեղբորը, հետևաբար այստեղ գործում է անսահմանափակ վիճակացիայի իրավունք և, անկախ այն հանգամանքից՝ հորեղբայրը բարեխիղճ է, թե ոչ, Ա-ն իրավունք ունի պահանջ ներկայացնել համապատաս-

խան բաժնետոմսերն ուրիշի ապօրինի տիրապետումից ազատելու մասին:

Բաժնետոմսերի նվիրատվության գործարքը և բաժնետոմսերի մնացած 50 տոկոսի փոխանցումը վերլուծելիս պետք է հղում կատարել գործարքների և նախապատվության իրավունքի կարգավորումներին:

Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304 հոդվածի 2-րդ կետի՝ «Գործարքի անվավերության դեպքում կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը, իսկ ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում (ներառյալ, երբ ստացածն արտահայտվում է գույքից օգտվելու, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության մեջ)՝ հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ նախատեսված չեն օրենքով»:

Ըստ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 8 հոդվածի 2-րդ մասի՝ «Փակ Ընկերության բաժնետերերն ունի այդ Ընկերության այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք»:

Եթե Բ-ն բաժնետոմսերը վաճառած լիներ հորեղբորը, այդ գործարքը կլիներ օրենքին հակասող և անվավեր, և Ա-ն իրավունք կունենար պահանջներ ներկայացնելու նաև բաժնետոմսերի մնացած 50 տոկոսի նկատմամբ, քանի որ բաժնետոմսերի առքուվաճառքի համապատասխան պայմանագիրը կնքված կլիներ օրենքի խախտմամբ: Սակայն, քանի որ տեղի է ունեցել բաժնետոմսերի նվիրատվություն, իսկ նախապատվության իրավունքը չի գործում նվիրատվության դեպքում, ապա այդ գործարքի անվավերության մասին չի կարող խոսք լինել:

3. Ա-ի փոխհատուցման պահանջների վերաբերյալ

Բ-ն հորեղբորն է փոխանցել նաև Y փակ բաժնետիրական ընկերության շահույթը:

Ըստ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 90 հոդվածի 1-ին մասի՝ «Խորհրդի անդամները, Ընկերության տնօրենը (գլխավոր տնօրենը), վարչության ու տնօրինության անդամները, ինչ-

պես նաև կառավարիչ-կազմակերպությունը և կառավարիչն իրենց պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործեն՝ ելնելով Ընկերության շահերից, իրականացնեն իրենց իրավունքները և Ընկերության նկատմամբ իրենց պարտականությունները կատարեն բարեխիղճ ու ողջամիտ կերպով, խուսափեն անձնական և Ընկերության շահերի միջև իրական և հնարավոր բախումներից»:

Ըստ նույն հոդվածի 5-րդ մասի՝ «Ընկերությունը կամ Ընկերության այն բաժնետերերը (բաժնետերերը), որը (որոնք համապետ) տնօրինում է (են) Ընկերության տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի մեկ և ավելի տոկոսին, իրավունք ունի (ունեն) խորհրդի անդամների, տնօրենի (գլխավոր տնօրենի), վարչության ու տնօրինության անդամների, ինչպես նաև կառավարիչ-կազմակերպության և կառավարչի դեմ հայցով դիմել դատարան՝ Ընկերությանը պատճառված վնասների փոխհատուցման պահանջով»:

Այդ շահույթը, որը փոխանցվել է հորեղբորը, դուրս է եկել Y փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող գույքից, նշյալ շահույթի փոխանցմամբ կրճատվել են ընկերությանը պատկանող ակտիվները: Այդ հիմքով Ա-ն իրավունք ունի հայց ներկայացնելու Բ-ի դեմ, որպեսզի վերջինս փոխհատուցի ընկերությանը պատճառված վնասը, եթե հիմնավորի, որ Բ-ն գործել է անբարեխիղճ:

4. Բ-ի փոխհատուցման պահանջի վերաբերյալ

Բ-ն չի կարող պահանջել վնասներ X փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերը գնելու համար անհրաժեշտ դրամական միջոցները չփոխանցելու դիմաց: Այդ բաժնետոմսերը գնելու վերաբերյալ համաձայնություն չի եղել, հետևաբար որևէ պարտավորություն կողմերի միջև չի ծագել:

Վնասի հատուցման պահանջի համար նախապայման պետք է լիներ այն, որ նրանց միջև կնքված լիներ X փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերը ձեռք բերելու նպատակով համատեղ գործունեության պայմանագիր:

Քննարկվող գործում Ա-ն ու Բ-ն իրար հավաստիացրել են, որ այն դեպքերում, երբ ի հայտ կգա արժանի օբյեկտ, նրանք համատեղ ավանդներ կներդնեն՝ ընդհանուր նպատակ իրականացնելու համար: Այդ

գրույցի պահին ու նաև գրավոր հաստատման պահին սկզբունքորեն պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ Ա-ն գումար կտրամադրի, իսկ Բ-ն՝ կառավարման հնարավորություններ, եթե առիթ առաջանա: Հարմար օբյեկտներ չեն եղել, ինչպես նաև պարզ չի եղել, թե ինչը կարող է լինել ընդհանուր նպատակ: Սահմանված չի եղել նաև ավանդների չափը: Տեղի է ունեցել տիպիկ նախնական գրույց, որից դեռ հնարավոր չէ ի հայտ բերել պարտավորվելու՝ այս կամ այն կողմի կամքը: Այսպիսով, այդ առաջին գրույցը չի կարող բնութագրվել որպես համատեղ գործունեության մասին պայմանագիր:

Անհրաժեշտ է ստուգել՝ արդյո՞ք այստեղ գործ ունենք նախնական պայմանագրի հետ Քաղաքացիական օրենսգրքի 445 հոդվածի իմաստով, որից կարող է առաջանալ հետագայում հիմնական պայմանագրեր կնքելու պարտականություն: Այսպիսի բնութագրման համար նույնպես այդ գրույցը բավարար չափով պարտավորեցնող չէ: Բացակայում է Քաղաքացիական օրենսգրքի 445 հոդվածի 3-րդ մասով ամրագրված անհրաժեշտ այն պայմանների սահմանումը, որը կթույլատրեր որոշել հետագա հիմնական պայմանագրի առարկան:

Այսպիսով, առաջին գրույցը և դրա բարեկամական գրավոր հաստատումը պետք է որակվեն որպես հետագայում հնարավոր համագործակցության զոնդաժ (պայմանագրով կոնտրագենտի կամ գործարքի կողմի դիրքորոշման նախնական բացահայտում, պարզում), որը պարտադիր բնույթ չի կրում, և ոչ թե որպես իրավունքներ ու պարտականություններ ստեղծող ակտ: Ըստ ձևի ու նկարագրված բովանդակության՝ երկու գործընկերներից և ոչ մեկը չէր էլ կարող ակնկալել, որ մյուսը իր վրա իրավական առումով պարտավորություն է վերցնում:

Այսպիսով, Բ-ն չի կարող Ա-ից պահանջել պայմանագրային կամ նախապայմանագրային պարտականությունների խախտման հետևանքով պատճառված վնասի հատուցում:

Խնդիր 2

Սեփականատեր դառնալու համար Բ-ն պետք է կադաստրում իր իրավունքի գրանցում կատարելու մասին դիմում ներկայացնի, որի հիման վրա էլ գրանցումը կկատարվի: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ստուգել, արդյո՞ք Բ-ն ունի այդպիսի իրավունք: Այդպիսի իրավական հիմքեր կարող են լինել X ՍՊԸ-ի հանդեպ գրանցում թույլատրելու պահանջի իրավունքը և նախնական նշումը:

1. Բ-ի իրավական դիրքը հողամաս 1-ի առնչությամբ

ա) X ՍՊԸ-ի հանդեպ կադաստրում սեփականության իրավունքը գրանցել թույլատրելու պահանջի իրավունքի ձեռքբերումը:

Բ-ն, թերևս, կարող է X ՍՊԸ-ի հանդեպ կադաստրում սեփականության իրավունքը գրանցել թույլատրելու պահանջի իրավունք ձեռք բերած լինել ըստ Քաղաքացիական օրենսգրքի 397 հոդվածի: Դրա նախապայմանն այն է, որ Ա-ն եղել է այդ պահանջի իրավունքի տերը, այսինքն՝ նրա և X ՍՊԸ-ի միջև կնքվել է առքուվաճառքի վավեր պայմանագիր հողամաս 1-ի վերաբերյալ:

Այն, որ Ա-ն եղել է X ՍՊԸ-ի միակ մասնակիցը, չի խոչընդոտում ՍՊԸ-ի և Ա-ի միջև առքուվաճառքի պայմանագիր կնքելը՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 95 հոդվածի 1-ին մասի և 318 հոդվածի 3-րդ մասի:

Բացի դրանից, առքուվաճառքի պայմանագրի վավերության համար կարևոր չէ այն հանգամանքը, որ X ՍՊԸ-ն նյութաիրավական տեսանկյունից չի եղել պարտավորական պայմանագրի առարկայի իրավատերը: Այնուամենայնիվ, վաճառողը գուցե և չկարողանա կատարել իր պայմանագրային պարտականությունը: Բայց դա չի հանգեցնում պայմանագրի անվավերությանը, այլ դրանից կարող են առաջանալ գնորդի պահանջի իրավունքներ՝ պայմանագիրը չկատարելու հետևանքով:

Ըստ այդմ՝ Ա-ի և X ՍՊԸ-ի միջև գոյություն է ունեցել առքուվաճառքի վավեր պայմանագիր, որի հիման վրա և առաջացել է X ՍՊԸ-ի հանդեպ կադաստրում սեփականության իրավունքը գրան-

ցել թույլատրելու Ա-ի պահանջի իրավունքը Բ-ն ձեռք է բերել Ա-ից:

բ) Նախնական նշան ձեռքբերում:

Բ-ի օգտին կադաստրում նախնական նշում գրանցել է տվել ոչ թե ԳԾ-ն՝ հողամասի իրական սեփականատերը, այլ դրա իրավունքը չունեցող X-ՍՊԸ-ն: Սա նշանակում է, որ իրավունք ունեցողից ձեռքբերումը բացառվում է:

Այսպիսով, խոսք կարող է լինել միայն իրավունք չունեցողից գույքը ձեռք բերելու մասին: Այդպիսի ձեռքբերումը հնարավոր է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275 հոդվածի նախապայմանների առկայության դեպքում:

Ըստ քաղաքացիական օրենսգրքի 275 հոդվածի՝ ձեռքբերման առաջին նախապայմանը ձեռքբերողի բարեխղճությունն է: Առկա գործում X ՍՊԸ-ն գրանցված է եղել կադաստրում որպես համապատասխան գույքի սեփականատեր: Կադաստրի գրանցամատյանում կատարված գրառումը համարվում է ճիշտ, քանի դեռ ձեռքբերողին հայտնի չի եղել անճշտությունը: Չկա որևէ հիմք ենթադրելու, որ Բ-ն ձեռքբերման պահին իմացել է, որ գույքը ձեռք է բերում այն օտարելու իրավունք չունեցող անձից: Միայն հետագայում է պայմանագրի մասնակիցներին հայտնի դարձել, որ իրական սեփականատերը եղել է ԳԾ-ն: Այսպիսով, պետք է ենթադրել, որ Բ-ն բարեխիղճ է եղել:

Մյուս նախապայմանն այն է, որ ձեռքբերողը որևէ գույք ձեռք է բերել՝ դրա դիմաց վճարելով: Կողմերը կնքել են առքուվաճառքի պայմանագիր: Այսպիսով, առկա է հատուցելի պայմանագիր:

Այդուհանդերձ, դեռ հարց է՝ արդյո՞ք նախնական նշումը գույք է հանդիսանում: Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135.1 հոդվածի՝ նախնական նշումը բնութագրվում է այն բանով, որ ապահովում է որևէ գույքային իրավունքը կադաստրում գրանցելու պահանջի իրավունք: Սա նշանակում է, որ նախնական նշումն ինքնըստինքյան դեռ հողամասի նկատմամբ այդպիսի իրավունք չէ, քանի որ ոչ թե արդեն առաջացնում է իրավունք, այլ սոսկ նախապատրաստում է դրա առաջացումը: Այն ապահովման միջոց է և ոչ թե գույքային իրա-

վունք: Այդ իսկ պատճառով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275 հոդվածի անմիջական կիրառումը բացառված է:

Այդուհանդերձ, նման ձևական մոտեցումը հաշվի չի առնում ո՛չ նախնական նշման բովանդակությունը և նպատակը և ո՛չ էլ գործարքի մասնակիցների շահերը: Բանն այն է, որ թեև նախնական նշում կատարելու թույլտվությունը և դրա գրանցումը չեն հանգեցնում հողամասի նկատմամբ որևէ իրային իրավունքի տրամադրման, բայց արդեն շատ են մոտենում այդպիսի տրամադրմանը: Այն դրա շահառուին շնորհում է մի դիրք, որն իր էական կետերով նմանվում է իրային իրավունք ունեցողի դիրքին: Դա արտահայտվում է հատկապես այն բանով, որ նախնական նշման գրանցումից հետո կայացվող որոշումներն անվավեր են նախնական նշմամբ պաշտպանված ապագա ձեռքբերողի համար:

Քանի որ այն անձը, որի օգտին գրանցվել է նախնական նշումը, վստահելով կադաստրի գրանցումներին, ձեռք է բերում իրային իրավունքին մեծ չափով մոտեցած դիրք, ապա արդարացված է գույքի հասկացությանը 275 հոդվածում տալ այնպիսի մեկնաբանություն, ըստ որի այն ընդգրկում է նախնական նշմամբ ապահովված անձի դիրքը: Այսինքն՝ հողամասի նկատմամբ գրանցման ենթակա գույքային իրավունքի իրային ապահովումը պետք է հավասարեցվի գույքային իրավունքին: Այսպիսով, նախնական նշման բարեխիղճ ձեռքբերումը սկզբունքորեն թույլատրելի է:

Այդուհանդերձ, առկա գործում կարող է կասկած առաջանալ Բ-ի կողմից նախնական նշումը բարեխիղճորեն ձեռք բերելու վերաբերյալ այն պատճառով, որ նախնական նշումը վերաբերում է սկզբնական հողամասի միայն մի մասին, և որ հողամասը բաժանել է X ՍՊԸ-ն, որը դրա իրավունքը չուներ, քանի որ սեփականատերը չէր:

Հողամասի բաժանումից առաջացել է երկու նոր հողամաս: Այսինքն՝ դա զուտ ձևական ակտ չէ, այլ նյութաիրավական ներգործություն ունեցող որոշում, որը կարող է կայացնել միայն անշարժ գույքի սեփականատերը: Հետևաբար՝ հողամասի բաժանումը X ՍՊԸ-ի կողմից անվավեր է:

Այստեղ գործում են նաև բարեխիղճության պաշտպանության մա-

սին դրույթները: X ՍՊԸ-ն գրանցված էր որպես բաժանումից առաջացած երկու հողամասերի սեփականատեր և համաձայնվել էր Բ-ի օգտին նախնական նշում գրանցելուն, իսկ Բ-ն իր հերթին հավատացել է X ՍՊԸ-ի սեփականության իրավունքին և գրանցման իրավաչափությանը: Այսպես պաշտպանվում է նաև Բ-ի բարեխիղճ վստահությունը (իրավաչափ ակնկալիքը) հողամասի բաժանման վավերության նկատմամբ:

Այսպիսով՝ արդյունքում Բ-ն դարձել է X ՍՊԸ-ի հանդեպ կադաստրում սեփականության իրավունքը գրանցել թույլատրելու պահանջի իրավունքի և նախնական նշման տերը:

գ) Սեփականության իրավունքի ձեռքբերում:

Հետևաբար պետք է ստուգել, թե Բ-ն ինչ պետք է անի, որպեսզի կարողանա գրանցել իր սեփականության իրավունքը:

Նախ պետք է պարզել՝ արդյոք հնարավոր է կադաստրում դեռևս որպես սեփականատեր գրանցված X ՍՊԸ-ի կողմից դիմում ներկայացնելը, որպեսզի Բ-ին տրվի հողամաս 1-ի նկատմամբ սեփականության իրավունք: Դրան հակառակ է այն, որ X ՍՊԸ-ն ոչ միայն իսկական սեփականատերը չէ, այլև այն, որ տվյալ պահին, երբ ՍՊԸ-ն կարող էր նշված դիմումը ներկայացնել, համապատասխան փաստը հայտնի է եղել ինչպես նրան (ՍՊԸ-ին), այնպես էլ Բ-ին: Այսինքն՝ երկուսն էլ՝ Ա Բ-ն, և X ՍՊԸ-ն, անբարեխիղճ են տվյալ կոնկրետ պարագայում: Այսպիսով, բարեխիղճ ձեռքբերում այս ճանապարհով չի կարող առաջանալ:

Ուստի անհրաժեշտ է նաև ստուգել՝ արդյո՞ք կարող է Բ-ն նախնական նշման բարեխիղճ ձեռքբերմամբ ձեռք բերել նաև հողամաս 1-ի նկատմամբ սեփականության իրավունքը, թեև ինքն այս ընթացքում դարձել է անբարեխիղճ:

Ձեռքբերման նման հնարավորությանը հակառակ կարող է լինել թերևս այն, որ, ըստ Քաղաքացիական օրենսգրքի 172 - 176 հոդվածների, սեփականության իրավունքի փոխանցումը տեղի է ունենում այն եղանակով, որ նախկին սեփականատերը վավեր պայմանագրի հիման վրա պայմանագրի առարկան հանձնում է ձեռքբերողին կամ,

ինչպես և մեր գործում հողամասի ձեռքբերման դեպքում, գրանցում կատարող մարմնին դիմում է ներկայացնում ձեռքբերողի սեփականության իրավունքը պետական գրանցման ենթարկելու մասին, իսկ գրանցող մարմինն էլ կատարում է պահանջվող գրանցումը: Բայց քննարկվող գործում սեփականատերը ոչ թե կադաստրում գրանցված X ՍՊԸ-ն է, այլ ԳԾ-ն, որը կիրառարվի Բ-ին որպես նոր սեփականատիրոջ գրանցելու մասին դիմում ներկայացնելուց:

Բացի այս, նախնական նշման գրանցումից և դրա բարեխիղճ ձեռքբերումից հետո Բ-ին հայտնի է դարձել, որ հողամասի սեփականատերը ոչ թե X ՍՊԸ-ն է, այլ ԳԾ-ն, այնպես որ նա դարձել է անբարեխիղճ ձեռքբերող: Այդ ընթացքում սեփականության վերաբերյալ իրական իրադրությունը հայտնի է դարձել նաև գրանցող մարմնին: Բայց սկզբունքորեն օտարողի սեփականության իրավունքի հանդեպ ձեռքբերողի բարեխիղճ վստահությունը պաշտպանվում է միայն այն դեպքում, եթե այն գոյություն ունի իրավունքի մասին որոշում կայացնելու պահին:

Եթե հետևենք այս փաստարկմանը, ապա նախնական նշման ինստիտուտը կզրկվի իր էական բովանդակությունից: Չէ՛ որ դրա նպատակն է ապահովել կադաստրում որևէ իրավունքի գրանցման պահանջի իրավունքը, որն առաջացել է վավեր պայմանագրի հիման վրա: Ինչպես արդեն ներկայացվել է, նախնական նշումը, ճիշտ է՝ դեռ իրային իրավունք չէ, բայց իր ազդեցությամբ շատ է մոտենում այդպիսի իրավունքին այն իմաստով, որ նախնական նշման տերը պաշտպանված է կադաստրում մեկ այլ անձի իրավունքի գրանցումից, որով կխաթարվեր իր իրավունքի նախնական նշմամբ պաշտպանված իրականացումը:

Այդքանով արդարացված է նախնական նշման հավասարեցումը 275 հոդվածում նշված գույքին և դրա բարեխիղճ ձեռքբերումը թույլատրելը: Բայց այդ ներգործությունն էլ ի չիք կդառնար, եթե նախնական նշմամբ բարեխիղճորեն ապահովված անձը չունենար նախնական նշմամբ նախապատրաստված իրային իրավունքի, այսինքն՝ սեփականության իրավունքի գրանցումն իրականացնելու հնարավորություն: Որևէ այլ լուծում զգալիորեն կկրճատեր նախնական

նշման ինստիտուտի գործնական նշանակությունը: Նախնական նշման գրանցմամբ ձեռք բերվող ապահովությունն առաջացնում է որոշակի իրային գույքային դիրք, որը պահպանում է իր գործողությունը նաև իրականում իրավունք ունեցողի առաջ:

Նախնական նշման այս բովանդակությունից բխում է այն հետևանքը, որ բարեխղճության առկայության համար վճռորոշը բացառության կարգով վերջնական որոշման պահը չէ, այսինքն՝ կադաստրում գրանցման պահը, այլ այն, որ բարեխղճությունը պետք է առկա լիներ նախնական նշումը կատարելիս: Այն, որ ձեռքբերողն ավելի ուշ է իմանում իրական իրավական դրության մասին, նրան չի վնասում:

Քանի որ Բ-ն Ա-ի հետ առքուվաճառքի պայմանագրի կնքման և նախնական նշման գրանցման պահին իրավունք ուներ հավատալու, որ գրանցումը թույլատրող X ՍՊԸ-ն է սեփականատերը, նա հնարավորություն է ստացել գրանցելու իր սեփականության իրավունքը, որն ապահովված է նախնական նշմամբ, նաև այն դեպքում, երբ բարեխղճ ձեռքբերման նախապայմաններն այլևս առկա չեն, և ինքն էլ տեղեկացվել է իրական իրավական դրության մասին: Այդ իրականացման իրավունքը պահպանվում է նաև իրականում իրավունք ունեցողի առջև:

Գրանցումը կադաստրում ենթադրում է, որ այն անձը, որի իրավունքները շոշափվում են այդ գրանցմամբ, համաձայն է գրանցմանը: Սա նախ X ՍՊԸ-ն է, որը, ճիշտ է՝ սեփականատերը չէ, բայց, որպես այդպիսին, գրանցված է կադաստրում: Բ-ն իրավունք ունի պահանջելու նրանից, որ համաձայնվի կադաստրում փոփոխություն կատարելուն:

Այդուհանդերձ, իսկական սեփականատերը ԳԾ-ն է, թեև կադաստրում գրանցված չէ: Սակայն նա այլևս չի կարող իր սեփականության իրավունքը Բ-ի առջև իրականացնել և այն գրանցել տալ, քանի որ Բ-ն բարեխղճորեն է ձեռք բերել նախնական նշումը, իսկ դրանով ապահովված իրավունքն առաջնություն ունի սեփականության իրավունքի նկատմամբ:

Այդ նախնական նշումը Բ-ին իրավունք է տալիս պահանջելու յու-

րաքանչյուրից չհակառակվել ապահովված իրավունքի իրականացմանը և կատարել սեփականության իրավունքը գրանցելու համար ձևական առումով անհրաժեշտ գործողությունները: Այս իրային իրավունքը գոյություն ունի նաև իրականում իրավունք ունեցողի առջև: Այսպիսով, վերջինս էլ է պարտավոր տալ իր համաձայնությունը, որ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը վերագրանցվի Բ-ի օգտին:

Եթե ԳԾ-ն հրաժարվի տալ իր համաձայնությունը, ապա Բ-ն կարող է պահանջել, ըստ Քաղաքացիական օրենսգրքի 302 հոդվածի, սեփականատիրոջ մասին նշումը փոխարինել դատարանի կարգով: Ճիշտ է՝ Քաղաքացիական օրենսգրքի 302 հոդվածը, եթե նայենք տեքստին, վերաբերում է որևէ գործարքի կողմերի միջև հարաբերություններին, սակայն այստեղ առկա այն հազվագյուտ դեպքի համար, երբ իրային իրավունքը ԳԾ-ինն է, իսկ ըստ կադաստրում կատարված գրանցման ստացվում է, որ այդ իրային իրավունքը X ՍՊԸ-ինն է, կարգավորում գոյություն չունի, և այս բացը պետք է լրացվի անալոգիայի միջոցով: Տարբեր շահերը հաշվի առած կլինենք, եթե նախնական նշմամբ բարեխղճորեն ապահովված Բ-ին հակադրենք ԳԾ-ին և X ՍՊԸ-ին՝ որպես մի միասնություն, որպեսզի այդ եղանակով չեզոքացնենք այն հանգամանքը, որ իրային իրավունք ունեցողն ու կադաստրում գրանցվածը տարբեր անձինք են, քանի որ սա կարող է խափանել Բ-ի այն իրավունքների իրականացումը, որոնք իրավաչափորեն առաջացել են գործարքի հետևանքով ու ապահովված են նախնական նշմամբ:

Այսպիսով, Բ-ն իրավունք ունի պահանջելու X ՍՊԸ-ից և ԳԾ-ից, որ նպաստեն հողամաս 1-ի նկատմամբ իր սեփականության իրավունքի գրանցմանը: Եթե հրաժարվեն դա անելուց, ապա Բ-ն կարող է ըստ Քաղաքացիական օրենսգրքի 302 հոդվածի նրանց համաձայնությունը ստանալ դատական կարգով:

2. Բ-ի իրավական դիրքորոշումը հողամաս 2-ի առնչությամբ

ա) X ՍՊԸ-ի հանդեպ կադաստրում սեփականության իրավունքը գրանցել թույլատրելու պահանջի իրավունքի ձեռքբերում:

Ինչ վերաբերում է Բ-ի կողմից X ՍՊԸ-ի հանդեպ կադաստրում սեփականության իրավունքը գրանցել թույլատրելու Ա-ի պահանջի իրավունքի ձեռքբերմանը, ապա այստեղ գործում է վերևում նշվածը՝ Բ-ն ձեռք է բերել այդ պահանջի իրավունքը:

բ) Նախնական նշման ձեռքբերումը:

Նախնական նշման ձեռքբերման առնչությամբ գործի փաստական հանգամանքներն այլ են այն պատճառով, որ Ա-ն X ՍՊԸ-ի կողմից թույլտվություն ստանալուց հետո գրանցվել է որպես նախնական նշման տեր: Այսպիսով, Բ-ն կարող էր այն ձեռք բերած լինել Ա-ից:

Այդպիսի ձեռքբերումը ստուգելու համար անպայման անհրաժեշտ է ճիշտ պատկերացնել, թե ինչ է նախնական նշման ինստիտուտը: Ինչպես արդեն ասել ենք, այն չի բովանդակում սեփական իրային իրավունք, այլ ապահովում է նախնական նշման տիրոջ իրավունքը: Թեև դա իրավունք չէ, բայց այդ ապահովումն այնպիսի դիրք է շնորհում, որը շատ է նմանվում իրավունքի: Մյուս կողմից՝ դրա գոյությունը կախված է այն իրավունքից, որի հետագա գրանցումը կադաստրում ապահովվում է: Այն սկզբնորային (լրացուցիչ) է սեփականության իրավունքի փոխանցում պահանջելու իրավունքի նկատմամբ:

Այստեղից հետևում է, որ նախնական նշումը չի կարող մեկուսացված ու ինքնուրույնաբար փոխանցվել, այլ փոխանցվում է միայն ապահովված պահանջի հետ միասին: Այն սկզբունքը, ըստ որի որևէ պահանջի ապահովման միջոցները պահանջի հետ միասին փոխանցվում են նոր պարտատիրոջը, սահմանված է Քաղաքացիական օրենսգրքի 399 հոդվածում: Ճիշտ է՝ նախնական նշումն այնտեղ ուղղակիորեն չի հիշատակվում, բայց այն պատկանում է պահանջն ապահովող գործիքների թվին, ուստի և ընդգրկվում է նշված դրույթով:

Այսպիսով, եթե Ա-ն դարձած լիներ այն նախնական նշման տերը, որը X ՍՊԸ-ի պահանջով կադաստրում գրանցվել է իր օգտին, ապա այդ նախնական նշումը գրանցելու պահանջի իրավունքն Ա-ից Բ-ին՝ որպես նոր սեփականատիրոջ անցնելու հետ միաժամանակ կփոխանցվեր Բ-ին, և Բ-ն կկարողանար հասնել կադաստրում գրանցման համապատասխան ուղղմանը:

Երբ Ա-ն գնում էր հողամասը, և նախնական նշումն էլ գրանցվել է, ո՛չ նա և ո՛չ էլ X ՍՊԸ-ն տեղյակ չէին, որ սեփականատերը ԳԾ-ն է: X ՍՊԸ-ն գրանցված էր կադաստրում որպես սեփականատեր, և գործի փաստական հանգամանքներից որևէ կերպով չի բխում, որ նա հիմքեր ուներ կասկածելու դրան: Նա կարող էր ճիշտ այնպես, ինչպես և Ա-ն, վստահել կադաստրում կատարված գրանցմանը: Այսպիսով, ըստ վերը շարադրվածի, Ա-ն կարող էր բարեխղճորեն ձեռք բերած լինել նախնական նշումը: Դրա հետևանքն այն կլիներ, որ Բ-ն պահանջի հետ միասին այդ նախնական նշումը ձեռք բերած կլիներ իրավունք ունեցողից և նախնական նշման այս երկրորդ ձեռքբերման դեպքում բարեխղճության պաշտպանության հարց չէր ծագի:

Այդ արդյունքի նկատմամբ կասկածներ կարող են առաջանալ այն պատճառով, որ Ա-ն հողամասը գնել է X ՍՊԸ-ից, որի միակ մասնակիցը հենց ինքն է եղել: Աշխարհի բազմաթիվ երկրներում բարեխիղճ ձեռքբերման ինստիտուտը ներմուծվել է, որպեսզի իրավական շրջանառությունն ավելի դյուրին դառնա շնորհիվ այն բանի, որ ձեռքբերողը կարողանա հենվել որոշակի փաստական հանգամանքների վրա և ստիպված չլինի կատարել մեծ ծախսեր պահանջող հետազոտություններ: Անշարժ իրերի դեպքում վստահություն ստեղծող հանգամանք է գրանցումը կադաստրում, որն առկա է այստեղ:

Քանի որ բարեխղճության պաշտպանության նպատակն է շուկայի տարբեր մասնակիցների միջև գործարար շրջանառության պաշտպանությունը, հարց է ծագում՝ արդյո՞ք որևէ ՍՊԸ-ի ու նրա միակ մասնակցի միջև գործարքները համապատասխանում են իսկական շրջանառության գործարքի չափանիշներին:

Եթե այս հարցին դրական պատասխան տանք, ապա Ա-ն իսկապես բարեխղճորեն է ձեռք բերել նախնական նշումը և գրանց-

ման հետևանքով ինքն էլ դարձել է իրավունք ունեցող: Այդ դեպքում Բ-ն ձեռք բերած կլիներ X ՍՊԸ-ից սեփականատեր գրանցվելու թույլտվություն պահանջելու իրավունք, և իրավունք ունեցողը ձեռք բերած կլիներ նախնական նշումը: Այսպիսի արդյունքն ընդունելի կլիներ ու «սխալ» չէր լինի, քանի որ դրանով կատարվում է օրենքի պահանջը, ըստ որի՝ մեկ անձից բաղկացած ՍՊԸ-ն պետք է իրավաբանորեն անկախ լինի իր միակ մասնակցից:

Իսկ եթե այս հարցին ժխտական պատասխան տանք և փաստարկներ բերենք այն գործարար շրջանառության տեսանկյունից, որը ենթադրում է երկու տնտեսապես անկախ անձ, ապա Բ-ն նախնական նշումը ձեռք բերած կլինի իրավունք չունեցողից: Ուրեմն այսպիսի փաստարկման դեպքում հնարավոր կլիներ միայն Բ-ի կողմից նախնական նշման բարեխիղճ ձեռքբերում:

Արդեն ասվել է, որ նախնական նշման բարեխիղճ ձեռքբերումն ընդգրկված է Քաղաքացիական օրենսգրքի 275 հոդվածում: Պաշտպանվում է բարեխիղճ ձեռքբերողի վստահությունն այն բանի նկատմամբ, որ օտարողն իրավունք ունի որոշում կայացնելու: Քննարկվող գործում իրավիճակը փոքր-ինչ այլ է, քանի որ պետք է պաշտպանվի ոչ թե բարեխիղճ ձեռքբերողի վստահությունն այն բանի նկատմամբ, որ X ՍՊԸ-ն իրավունք ունի որոշում կայացնելու, այլ բարեխիղճ ձեռքբերողի վստահությունն այն բանի նկատմամբ, որ նախնական նշում գոյություն ունի, որն իրականում արվել է ոչ իրավաչափորեն, եթե ընդունում ենք, որ X ՍՊԸ-ի ու Ա-ի միջև տեղի չի ունեցել իսկական գործարար շրջանառություն:

Թերևս կասկածելի է՝ արդյո՞ք պաշտպանության արժանի է այս բարեխիղճությունը, քանի որ ձեռքբերողը նախնական նշումը ձեռք է բերում ոչ թե անմիջականորեն ինչ-որ գործարարի միջոցով, այլ այն առաջանում է ապահովման ենթակա պահանջի իրավունքի հետ միասին օրենքի ուժով՝ ըստ Քաղաքացիական օրենսգրքի 399 հոդվածի: Այս հարցը շատ վիճելի է⁶:

⁶ Գերմանական իրավունքի վերաբերյալ տե՛ս Wacke in: Münchner Kommentar zum Bürgerlichen Gesetzbuch, 3. Auflage 1997, Anmerkungen 64 ff. zu § 883; Jan Wilhelm, Sachenrecht, 1993, S. 693 ff.

Լավ հիմնավորված է այն կարծիքը, որ ձեռքբերողը, այս դեպքում՝ Բ-ն, նման երկրորդ ձեռքբերման դեպքում (*այսինքն՝ երբ արդեն գրանցված նախնական նշումը փոխանցվում է ուրիշին*) պակաս արժանի չէ պաշտպանության, քան առաջին ձեռքբերման դեպքում, որին անդրադարձել ենք վերևում: Եթե հետևենք այս կարծիքին, ապա Բ-ն բարեխղճորեն է ձեռք բերել նախնական նշումը: Նման լուծումն առանց վերապահումների ընդունելի կլիներ և «սխալ» չէր լինի:

Իսկ եթե այս կարծիքը չկիսենք այն հիմնավորմամբ, որ պահանջի բարեխիղճ ձեռքբերում ևս հնարավոր չէ, և որ նախնական նշումը ինքնին պահանջի ակցեսորային ապահովում է⁷, ապա Բ-ն չի կարող Ա-ի նախնական նշումը բարեխղճորեն ձեռք բերած լինել, քանի որ ընդհանրապես հնարավոր չէ երկրորդ բարեխիղճ ձեռքբերում:

Այդուհանդերձ, մեր գործի հատուկ հանգամանքների պատճառով ստուգումը սրանով չի ավարտվում նաև այս կարծիքի կողմնակիցների համար:

Բանն այն է, որ անհրաժեշտ է նաև պարզել, թե արդյոք չպետք է հաշվի առնվի այն հանգամանքը, որ թեև X ՍՊԸ-ն ու Ա-ն իրարից անջատ իրավունքի սուբյեկտներ են, սակայն տնտեսապես մեկ միավոր են կազմում: Գուցե և ճիշտ է այն պնդումը, որ այստեղ առկա չի եղել իսկական շրջանառության գործարք շուկայի երկու անկախ մասնակիցների միջև, երբ X ՍՊԸ-ն հողամասը վաճառել է Ա-ին և դիմել է նախնական նշում գրանցելու խնդրանքով: Մյուս կողմից՝ Բ-ն հողամասը (եթե տնտեսապես դատենք) ձեռք է բերել X ՍՊԸ-ից, բայց իրավաբանական զարտուղի ճանապարհով՝ Ա-ի միջոցով: Բ-ն գիտեր, որ Ա-ն X ՍՊԸ-ի միակ մասնակիցն է, և որ ինքը տնտեսական առումով գործ ունի մեկ միավորի հետ: Եթե դիտենք այս ամբողջ գործընթացը, ապա կարելի է ասել, որ Բ-ն թեև իրավաբանորեն գործ է ունեցել իրավունքի երկու սուբյեկտի հետ՝ X ՍՊԸ-ի՝ որպես կադաստրում գրանցված իրավունք չունեցողի, որը պետք է փոխանցեր սեփականության իրավունքը, և Ա-ի՝ որպես առքուվա-

⁷ Գերմանական իրավունքի վերաբերյալ տե՛ս Claus-Wilhelm Canaris, Bürgerliches Recht: Das parzellierte Grundstück, in: Juristische Schulung, 1969, S. 80 ff.

ճառքի կողմի և նախնական նշման երևութականության տիրոջ, սակայն այս երկուսը տնտեսական առումով մեկ միավոր են կազմել: Նման տնտեսական դիտարկման դեպքում գուցե և այնպես է, որ X ՍՊԸ-ի ու Ա-ի միջև կնքված չի եղել անկախ գործարք, բայց այդպիսին, անշուշտ, կնքված է եղել, մի կողմից՝ Բ-ի և, մյուս կողմից՝ տնտեսապես միասնություն կազմող Ա-ի ու X ՍՊԸ-ի միջև: Բ-ն տեղյակ է եղել այդ իրավիճակին, ուրեմն նրան պետք է վերաբերվել այնպես, ասես նա ձեռք է բերել նախնական նշումն անմիջականորեն ապահովելու համար X ՍՊԸ-ի նկատմամբ իր պահանջի իրավունքը և ոչ թե դա Ա-ի կողմից պահանջի զիջման հետևանք է: Այսպիսով, տնտեսական առումով սա այն նախնական նշման առաջին ձեռքբերումն է, որն ապահովում է X ՍՊԸ-ից սեփականության իրավունքի փոխանցումը պահանջելու իրավունքը: Իսկ այս առաջին ձեռքբերման (նախնական նշման առաջին գրանցման) նկատմամբ բարեխիղճ ձեռքբերողի վստահությունն, ըստ միասնական և ճիշտ կարծիքի, պաշտպանված է, այնպես որ Բ-ն արդյունքում նախնական նշումը ձեռք է բերել բարեխղճորեն:

Այսպիսով, արդյունքում բոլոր փաստարկումների դեպքում էլ հանգում ենք նույն լուծմանը, եթե ձեռքբերողին հայտնի է եղել, որ ինքը գործ ունի մեկ անձից բաղկացած ՍՊԸ-ի ու դրա միակ մասնակցի հետ: Ըստ առաջին լուծման, որի հիմքում դրված է մեկ անձից բաղկացած ՍՊԸ-ի իրավաբանական ինքնուրույնությունը, Ա-ն իր բարեխղճության պատճառով դարձած կլինի նախնական նշման իրավաչափ տեր և տեր լինելը փոխանցած կլինի Բ-ին՝ համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 399 հոդվածի: Ըստ երկրորդ լուծման՝ բարեխիղճ ձեռքբերման սկզբունքները հնարավոր է կիրառել նաև նախնական նշման երկրորդ ձեռքբերման նկատմամբ, և նախնական նշման նկատմամբ բարեխիղճ ձեռքբերողի վստահությունը պաշտպանված կլինի, այնպես որ Բ-ն այն ձեռք բերած կլինի բարեխղճորեն: Ըստ երրորդ կարծիքի՝ Բ-ն նախնական նշումը ձեռք բերած կլինի բարեխղճորեն, թեև նախնական նշման բարեխիղճ երկրորդ ձեռքբերումը սկզբունքորեն համարվում է անհնար, որովհետև, մի կողմից՝ Բ-ի և, մյուս կողմից՝ X ՍՊԸ-ի ու Ա-ի միջև հարա-

բերությունում վերջին երկուսը (X ՍՊԸ-ն ու Ա-ն) դիտվում են որպես տնտեսական մեկ միավոր, ուստի և տնտեսական տեսանկյունից նախնական նշման ձեռքբերումը բոլորովին էլ չպետք է որակվի որպես երկրորդ ձեռքբերում, այն առաջին ձեռքբերում է:

Քանի որ բոլոր դատողությունները հանգում են նույն արդյունքին, դրանք պարզապես անհրաժեշտ է ներկայացնել: Անհրաժեշտ չէ (համապատասխան հիմնավորմամբ) ընտրել այս կամ այն լուծումը⁸:

գ) Սեփականության իրավունքի ձեռքբերումը:

Սեփականության իրավունքի ձեռքբերմանը վերաբերում է 1.գ) կետում ասվածը:

⁸ Պրոֆ. Ռ. Քնիպերի կարծիքով, գերադասելի է առաջին լուծումը, որը ելնում է այն բանից, որ X ՍՊԸ-ն իրավաբանորեն ինքնուրույն է որպես իրավունքի ինքնուրույն սուբյեկտ, ինչից հետևում է այն, որ Ա-ն նախնական նշումը ձեռք է բերել X ՍՊԸ-ից իսկապես բարեխղճորեն, ուստի և իրավունք ունի այն իր հերթին փոխանցելու ուրիշին:

Խնդիր 3

1. Արդյո՞ք Դ-ն իրավունք ունի պահանջելու սերվիտուտի վերացում:

Ա-ն ու Բ-ն պայմանավորվել էին հողամաս 2-ում սերվիտուտ սահմանելու մասին և համապատասխան գրանցման վերաբերյալ դիմում ներկայացրել կադաստր: Սխալմամբ գրանցումը կատարվել է հողամաս 3-ի նկատմամբ, և ճանապարհն էլ կառուցվել է հողամաս 3-ի տարածքում:

Կամավոր սերվիտուտն առաջանում է նոտարական կարգով վավերացված գրավոր համաձայնությամբ (<< քաղաքացիական օրենսգրքի 211 հոդված) և պետական գրանցմամբ (Քաղաքացիական օրենսգրքի 213 հոդված): Համաձայնությունը և գրանցումն իրար չեն համապատասխանում: Դ-ա հետևանք է այն բանի, որ գրանցումը կադաստրում սխալ է կատարվել:

<< քաղաքացիական օրենսգրքի 215 հոդվածն ուղղակիորեն սահմանում է, որ սերվիտուտով ծանրաբեռնված հողամասի նկատմամբ իրավունքն այլ անձի փոխանցվելիս սերվիտուտը պահպանվում է: Սակայն առկա գործում չի սահմանվել և չի գրանցվել իրավաչափ սերվիտուտ: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ստուգել՝

1. ինչպիսի՞ իրավական դրության հետ գործ ունենք,
2. արդյո՞ք հողամաս 1-ի սեփականատերերի փոփոխությամբ

իրավիճակը փոխվել է:

Ի տարբերություն Քաղաքացիական օրենսգրքի 215 հոդվածի՝ Քաղաքացիական օրենսգրքում ուղղակիորեն սահմանված չէ՝ արդյո՞ք սերվիտուտը պահպանվում է իշխող հողամասի սեփականատիրոջ փոփոխության դեպքում: Քաղաքացիական օրենսգրքի 210 և 215 հոդվածները տառացի նշանակությամբ մեկնաբանման դեպքում (Քաղաքացիական օրենսգրքի 8 հոդված) կարելի է եզրակացնել, որ սերվիտուտը իշխող հողամասի տեսանկյունից կապված է դրա սեփականատիրոջ անձի հետ: Նա է կնքում համաձայնությունը (210 հոդված), իսկ 215 հոդվածը վերաբերում է միայն ծառայող հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցմանը:

Մյուս կողմից՝ Քաղաքացիական օրենսգրքի 210 հոդվածում խոսվում է «սեփականատերերի» և ոչ թե մեկ սեփականատիրոջ մասին: Այսպես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 210 հոդվածի առաջին մասը սահմանում է՝ հողամասի սեփականատերերը կամ օգտագործողներն իրավունք ունեն հարևան հողամասի սեփականատիրոջից, իսկ անհրաժեշտության դեպքում նաև այլ հողամասի սեփականատիրոջից պահանջել իրենց տրամադրել այդ հողամասի սահմանափակ օգտագործման իրավունք (սերվիտուտ):

Նման անհստակության դեպքում օրենքի մեկնաբանությունը, ըստ Քաղաքացիական օրենսգրքի 8 հոդվածի 2-րդ կետի, պետք է կատարվի Քաղաքացիական օրենսգրքի 3 հոդվածի 1-ին կետում շարադրված սկզբունքների հիման վրա, որոնցով սահմանվում են սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության ու քաղաքացիական իրավունքների իրականացման պաշտպանության սկզբունքները:

Այսպիսով, խնդրի լուծումը պետք է բխի սերվիտուտի իմաստից և բնույթից: Այս դատողությունների ելակետը Քաղաքացիական օրենսգրքի 210 հոդվածն է: Այնտեղ սահմանված է, որ իշխող հողամասի սեփականատերերը կարող են սերվիտուտ պահանջել ծանրաբեռնվող հողամասի նկատմամբ: Այդ ծանրաբեռնման առիթը ոչ թե սեփականատիրոջ որևէ անմիջական իրավունքն է, այլ այն, որ իշխող հողամասը չի կարող օգտագործվել առանց հարևանի անշարժ գույքն օգտագործման իրավունքով ծանրաբեռնելու: Ծանրաբեռնված հողամասի նկատմամբ իրավունքը պետք է ծառայի ոչ թե սեփականատիրոջ անձին, այլ իշխող հողամասի օգտագործմանը: Նմանատիպ դիրքորոշում է հայտնել նաև Սահմանադրական դատարանը 2010թ. հունվարի 29-ի թիվ ՍԴՌ-29 գործով կայացրած որոշման մեջ:

Երբ Քաղաքացիական օրենսգրքի 210 հոդվածով սահմանվում է, որ «սեփականատերերը» իրավունք ունեն պահանջելու, որ իրենց տրամադրվի հարևան հողամասի սահմանափակ օգտագործման իրավունք, ապա դա մեկնաբանվում է այնպես, որ այդ իրավունքը փոխանցվում է համապատասխան սեփականատիրոջը, այսինքն,

որ այս իրավունքն իրականում կապված է իշխող հողամասի սեփականության իրավունքի հետ և ոչ թե սեփականատիրոջ անձի հետ. այլ կերպ սերվիտուտի իրավունքն ուղղված է սեփականության իրավունքի սպասարկմանը: Նշվածին համապատասխան պետական գրանցմամբ, ըստ Քաղաքացիական օրենսգրքի 213 հոդվածի, առաջանում է իրային իրավունք՝ *ius in rem*, և ոչ թե սեփականատիրոջ սպեցիֆիկ իրավունք: Այն կապված է երկու հողամասերի և ոչ թե սեփականատերերի հետ: Ուստի և բոլորի շահերը հաշվի առնված կլինեն, եթե Քաղաքացիական օրենսգրքի 210 հոդվածը մեկնաբանվի այնպես, որ սերվիտուտը ծառայում է իշխող հողամասին և ոչ թե միայն այն սեփականատիրոջը, ով պայմանավորվել է սերվիտուտի մասին: Այստեղից հետևում է, որ իշխող հողամասի սեփականատիրոջ փոփոխության դեպքում ևս սերվիտուտը պահպանվում է:

Այսպիսով, եթե ենթադրենք, որ սերվիտուտը պահպանվել է, ապա Գ-ն, ձեռք բերելով սեփականության իրավունք հողամաս 1-ի նկատմամբ, ձեռք է բերել նաև սերվիտուտը:

Այդուհանդերձ, նյութաիրավական առումով սերվիտուտ ծանրաբեռնված հողամաս 3-ի նկատմամբ չի առաջացել, այնպես որ հիմնավորված է թվում գրանցումը վերացնելու Դ-ի պահանջի իրավունքը:

Բայց նման ձևով գործը լուծելուց առաջ պետք է դեռ ստուգել, արդյո՞ք Դ-ն կարող է լինել սերվիտուտի բարեխիղճ ձեռքբերող:

Գ-ն իշխող հողամասը ձեռք է բերել նախնական սեփականատեր Ա-ից: Քաղաքացիական օրենսգրքի 134 հոդվածի համաձայն՝ հողամասն անշարժ գույք է, որին պատկանում են բոլոր այն առարկաները, որոնք ամուր կապված են հողամասին: Բայց սերվիտուտը սահմանված էր ոչ թե այս հողամասի համար, այլ գրանցվել է հարևան հողամասի նկատմամբ: Այսպիսով, այն չի դասվում 134 հոդվածում նշված առարկաների թվին: Սակայն 138 հոդվածը սահմանում է, որ նաև այն առարկաները, որոնք գույքի մաս չեն կազմում, բայց ընդհանուր նշանակությամբ կապված են դրա հետ, համարվում են միասնական գույքի մաս և հետևում են գլխավոր գույքի ճակատագրին:

Քաղաքացիական օրենսգրքի 135 հոդվածի 2-րդ մասում սերվի-

տուտն ուղղակիորեն սահմանված է որպես գույքային իրավունք: Դրա միակ նշանակությունը գլխավոր գույքին, այսինքն՝ իշխող հողամասին ծառայելն է: Դրանով սերվիտուտը բավարարում է Քաղաքացիական օրենսգրքի 138 հոդվածի նախապայմանները և պետք է որակվի որպես հողամաս 1-ի պատկանելիք: Ուստի հետևում է դրա ճակատագրին: Այսպիսով, այն ինքնաբերաբար նույնպես եղել է հողամաս 1-ի վերաբերյալ առքուվաճառքի պայմանագրի առարկա:

Քաղաքացիական օրենսգրքի 275 հոդվածը սահմանում է, որ որոշակի նախապայմանների առկայության դեպքում ձեռք բերողը որոշակի գույք ձեռք է բերում նաև այն դեպքում, երբ օտարողն օտարելու իրավունք չի ունեցել: Մեր օրինակում հարցը օտարման իրավունքը չէ նեղ իմաստով: Այստեղ այն իրավիճակն է, երբ օտարողն ուզում է փոխանցել մի իրավունք, որն իրականում ընդհանրապես գոյություն չունի: Եվ իրոք, անձն իրավունք չունի փոխանցելու որևէ գույքի նկատմամբ սեփականության իրավունք, որի սեփականատերն ինքը չէ:

Սակայն հարց է, թե արդյոք 275 հոդվածը տարածվում է նաև այդպիսի իրավիճակի վրա: Դրա համար, ըստ Քաղաքացիական օրենսգրքի 8 հոդվածի 2-րդ կետի՝ կապված Քաղաքացիական օրենսգրքի 3 հոդվածի հետ, նորից անհրաժեշտ է, որ առկա լինի 275 հոդվածում սահմանված նպատակը: Այդ հոդվածը պաշտպանում է բարեխիղճ ձեռքբերողին: Դրա նպատակն է ավելի դյուրին դարձնել գործարար շրջանառությունն այն կողմերի համար, որոնք հավատում են, որ պայմանագրի հակառակ կողմը համապատասխան իրավունքն ունի և նրանց հավատն արդարացված է, քանի որ արտաքին հանգամանքները՝ իրավունքի առերևութականությունը, խոսում են այդ իրավունքի գոյության օգտին: Շահերը գնահատելիս հաշվի է առնվում, որ երրորդ անձինք բարեխիղճության պաշտպանության հետևանքով վնաս են կրում, այսպես է, օրինակ, իսկական սեփականատիրոջ համար, որի սեփականությանը վնաս է հասցվում: Պատճառն այն է, որ, իրոք, իրավունք ունեցողը կարող էր չթույլատրել նման իրավիճակի առաջացում:

Մեր դեպքում Ա-ն հողամաս 1-ի սեփականատերն էր, որի օգտին

էլ գրանցվել է սերվիտուտը: Ո՛չ Բ-ն՝ որպես հողամաս 2-ի ու հողամաս 3-ի սկզբնական սեփականատեր, ո՛չ էլ հողամաս 3-ը ձեռք բերող Դ-ն չեն փորձել վերացնել պետական գրանցումը: Գրանցամատյանին հայացք գցելով՝ Գ-ն համոզվեց, որ սերվիտուտ գոյություն ունի: Նա հավատաց դրա գոյությանը, և այդ հավատն արդարացված էր, քանի որ հիմնվում էր գրանցման արտաքին հանգամանքների վրա:

Ուստի, եթե պաշտպանվում է թվացյալ սերվիտուտը ձեռք բերողի բարեխիղճ վստահությունն առ այն, որ սերվիտուտն իրոք գոյություն ունի, ապա դա համապատասխանում է Քաղաքացիական օրենսգրքի 275 հոդվածի նպատակին:

Այսպիսով, արդյունքում նա, որպես հողամաս 1-ի պատկանելիք, ձեռք է բերել սերվիտուտ, որն իրականում գոյություն չի ունեցել: Ճիշտ է՝ Բ-ն չէր կարող փոխանցել այդ սերվիտուտը, քանի որ այն գոյություն չուներ: Սակայն Գ-ն այն բարեխիղճորեն ձեռք է բերել օտարման իրավունք չունեցողից: Գործարար շրջանառությունը թեթևացնելու և ձեռքբերողի արդարացված վստահությունը պաշտպանելու համար օրենքը և դրա մեկնաբանությունն արդյունքում թույլատրում են, որ անձը ձեռք բերի մի իրավունք, որն օտարողը չունի և որը, թեև կադաստրում գրանցված է, բայց իրականում գոյություն չունի:

Ձեռք բերելով հողամաս 1-ը, որի պատկանելիքն էր թվացյալ սերվիտուտը, Գ-ն դարձել է մի հողամասի սեփականատեր, որին կցվել է հողամաս 3-ի նկատմամբ սահմանված սերվիտուտը: Ուրեմն կադաստրում գրանցված սերվիտուտն իրականում առաջացել է հողամաս 1-ի ձեռքբերմամբ: Դրանով նաև իրավաչափ է դարձել սերվիտուտի գրանցումը:

Այսպիսով, Դ-ն չունի սերվիտուտը վերացնելու և գրանցումն ուղղելու պահանջի իրավունք:

2. Իրավունք ունի Գ-ն պահանջելու վերականգնել նախնական լայնությունը:

ա) Արդյո՞ք Գ-ն ունի իրային պահանջի իրավունքներ Դ-ի նկատմամբ:

Գ-ի պահանջի իրավունքը պարզելու համար անհրաժեշտ է ենթադրել, որ հողամասի ձեռքբերմամբ սերվիտուտն առաջացել է:

Սերվիտուտի մասին դրույթներում նման պահանջի իրավունքի համար հիմքեր սահմանված չեն: Բայց այն, թերևս, կարող է բխել Քաղաքացիական օրենսգրքի 277 հոդվածի ընդհանուր դրույթից: Այդ դրույթի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի պահանջելու վերացնել իր իրավունքների խախտումները, թեկուզև այդ խախտումները զուգորդված չեն եղել տիրապետումից զրկելու հետ (*actio negatoria*):

Անկասկած, նեղացնելով ճանապարհը, Դ-ն վնաս է հասցրել սերվիտուտին: Սակայն հասկանալի չէ՝ արդյո՞ք պետք է կիրառվի Քաղաքացիական օրենսգրքի 277 հոդվածը նաև սերվիտուտի նկատմամբ:

«Քաղաքացիական օրենսգրքի 135 հոդվածի համաձայն՝ սերվիտուտն ու սեփականության իրավունքն իրենց առաջացման նախապայմանների տեսանկյունից ուղղակիորեն հավասարեցվել են միմյանց: Երկուսն էլ իրային իրավունք են: Քաղաքացիական իրավունքի սկզբունք է քաղաքացիական իրավունքների անխափան իրականացման պաշտպանությունը: Այսպիսով, «Քաղաքացիական օրենսգրքի 277 հոդվածը պետք է մեկնաբանվի այնպես, որ այդպիսի պաշտպանությունը հնարավոր դառնա: Այս իմաստով սեփականատիրոջ հասկացությունը 277 հոդվածում պետք է լայն մեկնաբանվի: Ավելին՝ ճանապարհը 1 մետր նեղացնելով, սահմանափակվել է նաև իշխող հողամասն իր նպատակային նշանակությամբ օգտագործելու հնարավորությունը, և Գ-ն կարող է Դ-ից պահանջել, որ նա վերականգնի ճանապարհի նախկին լայնությունը՝ երեք մետրը:

բ) Արդյո՞ք Գ-ն Դ-ի հանդեպ պայմանագրից բխող պահանջի իրավունքներ ունի:

Երեք մետրանոց ճանապարհի վերականգնման պահանջի Գ-ի իրավունքը, թերևս, կարող է բխել Քաղաքացիական օրենսգրքի 347 հոդվածից:

Դրա նախապայմանն այն է, որ Դ-ն պարտավորված լինի Գ-ի նկատմամբ ճանապարհը պահպանելու պայմանավորված լայ-

նությանը: Այդ պայմանավորվածությունը, ինչպես նաև վարձի մասին պայմանավորվածությունը Ա-ի ու Բ-ի՝ սկզբնական սեփականատերերի միջև կնքվել է ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 211 հոդվածի: Նրանք, ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448 հոդվածի, համաձայնության են եկել ու պահպանել նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 211 հոդվածով պահանջվող նոտարական վավերացման ձևը: Այս դեպքում պայմանավորվածության վավերականության և գործողության համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448 և դրան հաջորդող հոդվածներով սահմանված նախապայմաններն առկա են:

Հարց է՝ Ա-ի ու Բ-ի միջև այդ պայմանավորվածություններով սահմանվել են արդյոք Գ-ի ու Դ-ի իրավունքներն ու պարտականությունները: Դրանք գրանցվել են Քաղաքացիական օրենսգրքի 213 հոդվածի համաձայն: Միայն գրանցմամբ է, որ կարող էր առաջանալ սերվիտուտ՝ պայմանավորվածության մեջ մասնավորեցված բովանդակությամբ: Դրանից բացի, գրանցումն ունի այն հետևանքը, որ նախնական պարտավորական պայմանավորվածությունը, որը, ինչպես և յուրաքանչյուր պայմանագիր, գործում է միայն պայմանագրի կողմերի միջև, ստանում է իրային իրավունքին հատուկ բնույթ: Իրավունքները և պարտականությունները պետական գրանցմամբ կապվում են հողամասերի հետ և գործում այս կամ այն հողամասի սեփականատիրոջ համար կամ դեմ: Դրանք դառնում են հողամասերի էական մաս, որը դրանց ձեռքբերմամբ փոխանցվում է ձեռքբերողին: Այդքանով Ա-ի ու Բ-ի միջև կնքված պայմանավորվածությունները գործում են նաև Գ-ի ու Դ-ի միջև:

Այդուհանդերձ, գրանցումը չի կատարվել ի վնաս պայմանագրում նշված հողամասերի: Ինչպես արդեն ասվել է, Գ-ի կողմից հողամաս 1-ի ձեռքբերումը հանգեցրել է այն բանին, որ Գ-ն, քանի որ բարեխղճորեն հավատացել է, որ հողամաս 3-ի նկատմամբ հաստատված սերվիտուտը գոյություն ունի, դարձել է նաև այդ սերվիտուտի իրավունքի տերը, թվացյալ սերվիտուտը վերածվել է իրականում գոյություն ունեցող սերվիտուտի: Այսինքն՝ սերվիտուտն առաջացել է, ինչպես նաև ի հայտ է եկել սերվիտուտի հետ կապված իրային պայմանավորվածությունը դրա առանձնահատկությունների ու վարձի վերաբերյալ:

Մյուս կողմից՝ պետք է հաշվի առնել նաև այն, որ վարձը և մնացած այն պայմանները, որոնք պետական գրանցում չեն ստանում, չեն կարող փոխանցվել Գ-ին և Դ-ին: Համենայն դեպս, ինչ-որ առումով անհասկանալի է այն իրավական հիմքը, որով ապահովվում է վարձավճարի և այլ պարտավորական իրավունքների փոխանցումը: Եթե համաձայնության կետերը (հողամասի հասցե, չափ, օգտագործման իրավունք), որոնք գրանցման են ենթարկվել և իրային իրավունքի անմիջական բաղադրատարր են, ապա վարձավճարի չափը վճարման ժամկետները և մնացած պայմանները կողմերի պարտավորական և ոչ թե իրային պահանջները բավարարող պայմաններ են: Այլ կերպ՝ եթե ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 211 հոդվածով նախատեսված համաձայնության իրային իրավունքի ոլորտում գտնվող կետերը հետևում են գույքին, ապա նույնը չենք կարող ասել պարտավորական իրավունքի ոլորտում գտնվող կետերի մասին: Այսպես, եթե սերվիտուտի տրամադրումն անմիջականորեն կապված է իշխող հողամասի հետ, ապա սերվիտուտի համար վարձավճարի իրավունքը կապված է իշխող հողամասի և սպասարկող հողամասի սեփականատերերի հետ՝ պայմանավորված այն բանով, օրինակ, թե իշխող հողամասի սեփականատերն ինչ նյութական դրության մեջ է գտնվում, ամսվա որ օրերին է պատրաստ վճարումը կատարել և այլն: Կարծում ենք՝ այս մասով խնդրի լուծումը հստակ չի լինում, և տվյալ իրավիճակի համար կիրառելի կարող են լինել նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի պայմանագրային հարաբերությունները կարգավորող նորմերը, օրինակ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 439, 440 և այլ հոդվածներ:

Խնդիր 4

1. Պայմանագրից բխող պահանջի իրավունքներ

A-ն, թերևս, կկարողանար E-ից պահանջել G-ի ու E-ի միջև կնքված պայմանագրից բխող գնման գնի վճարումը, եթե այդ պահանջի իրավունքը G-ի ընդունած մատակարարման պայմանների հիման վրա անցած լիներ իրեն: Դրա համար պետք է առկա լինեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 470 ու 501, ինչպես նաև 397 ու դրան հաջորդող հոդվածներով նախատեսված նախապայմանները:

Կասկած չկա, որ G-ի ու E-ի միջև կնքվել է առքուվաճառքի վավեր պայմանագիր: Բացի դրանից, G-ն, համաձայն պայմանագրի, մատակարարել է ծիրանը, իսկ E-ն էլ վճարել է պայմանագրով նախատեսված գնման գինը:

Հարց է ծագում՝ արդյո՞ք գնման գնի վճարումն ազատել է E-ին A-ի հանդեպ ունեցած պարտքից: Սա կարող է խնդրահարույց լինել այն պատճառով, որ A-ն ու G-ն պայմանավորվել էին ծիրանի հետ կապված հետագա գործարքներից առաջացող G-ի պահանջների զիջման մասին:

Այն, որ այդ պայմանավորվածությունը սահմանված է եղել A-ի կողմից առաջարկված մատակարարման պայմաններում, չի նվազեցնում դրա վավերությունը՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 444 հոդվածի: G-ն դրանք ընդունել էր: Բացի դրանից, պահանջների նախնական զիջումների վերաբերյալ պայմանավորվածությունները գործարար շրջանառությունում ընդունված բան են:

Պահանջների զիջման նախապայմանները շարադրված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 397 ու դրան հաջորդող հոդվածներում: Ճիշտ է՝ այնտեղ ուղղակիորեն չի խոսվում ապագա կամ գոյություն ունեցող պահանջների մասին, բայց այդ դրույթները միայն գոյություն ունեցող պահանջների վրա տարածելու համար որևէ հիմք չկա: Կողմերն իրենց պայմանագրային ազատության շրջանակում իրավասու են սահմանել իրենց պայմանագրի առարկան, քանի դեռ այդ առարկան ընդհանրապես գոյություն ունենալու աստիճան որոշակի է: Որևէ ապագա պահանջ, որը պայմանավորվածության

պահին արդեն հնարավոր է սահմանել, և կողմերն էլ այդպես են կարծում, բավարարում է այդ նախապայմանը:

Առկա գործում A-ն ու G-ն պայմանավորվել էին, որ ծիրանը մինչև ամբողջ գնի վճարումը կմնա A-ի սեփականությունը: Սեփականության իրավունքի այսպիսի վերապահումը (*սեփականության իրավունքի պահպանումը*) թույլատրելի է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 507 հոդվածի համաձայն: 507 հոդվածից նաև բխում է, որ կողմերը կարող են պայմանավորվել այն մասին, որ այդ վերապահամբ գնողը իրավունք ունի իր հերթին վերավաճառելու ապրանքը: Հետևաբար՝ վավեր է նաև A-ի ու G-ի միջև ձեռք բերված պայմանավորվածությունն այն մասին, որ G-ն պետք է կարողանա վերավաճառել ծիրանը:

Ծիրանի նկատմամբ սեփականության իրավունքը պետք է փոխարինվեր այն պահանջներով, որոնք կառաջանային այն քանակի ծիրանի վերավաճառքից, որը A-ն մատակարարել է G-ին: Նման երկարացված սեփականության իրավունքի վերապահման մեջ ապագա պահանջները կենտրոնական դեր են խաղում պայմանագրի կողմերի գործարքում ռիսկերը բաշխելու հարցում: Դրանք այնքան հստակ են սահմանված ու նկարագրված, որ դրանց բովանդակության և ծավալի ճշգրիտ սահմանումը դրանց ծագման պահին առանց այլևայլության հնարավոր է:

Հետևաբար՝ հնարավոր էր երկարացված սեփականության իրավունքի վերապահման շրջանակում վավեր ձևով պայմանավորվել E-ի հանդեպ G-ի պահանջների նախնական զիջման մասին:

E-ն ու G-ն պայմանավորվել էին այն պահանջների փոխանցման արգելքի մասին, որոնք կբխեին նրանց գործարար հարաբերություններից: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 403 հոդվածից հետևում է, որ պայմանագրով կարելի է կնքել այդպիսի պայմանավորվածություն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 399 ու 401 հոդվածները սահմանում են, որ պահանջներն անցնում են պարտատիրոջն այն ծավալով ու այն վիճակում, որով գոյություն ունեն: Այստեղից հետևում է, որ այն պահանջը, որին բնութագրական է զիջելի չլինելը, հենց գոյություն չունի որպես զիջելի, ուստի և չի էլ կարող իրավաչափորեն

փոխանցվել ուրիշի: Պահանջի փոխանցման վերաբերյալ պայմանավորվածության նախապայմանը պահանջի փոխանցելիությունն է, պայմանավորվածությամբ այդպիսի փոխանցելիություն չի կարող սահմանվել:

Այն անձին, որը փոխանցել է ապագա պահանջը, համապատասխան պայմանավորվածությունը չի կարող խանգարել ապագա պահանջի պարտապանի հետ պայմանավորվելու դրա ճշգրիտ բովանդակության վերաբերյալ: Այդ բովանդակության մեջ է մտնում նաև զիջելիությունը: Եթե անձը դա անում է՝ խախտելով պարտատիրոջ առջև իր ստանձնած պարտավորությունները, նա պարտավոր է որոշ պարագաներում հատուցել նրան հասցված վնասը: Դրանով որևէ ձևով չի փոխվում անզիջելիության վերաբերյալ պայմանավորվածության վավերությունը:

Հետևաբար՝ A-ն ձեռք չի բերել E-ի հետ կնքված ծիրանի մասին առքուվաճառքի պայմանագրից բխող G-ի պահանջի իրավունքը, և գնման գնի փոխանցված պահանջի հիման վրա պահանջի իրավունք գոյություն չունի:

Բայց եթե անգամ G-ի ու E-ի միջև կնքված չլիներ զիջումն արգելող վավեր պայմանավորվածություն և գնման գնի G-ի պահանջը E-ի հանդեպ փոխանցված լիներ A-ին, A-ն չէր ունենա վճարումն իրեն կատարելու պահանջի իրավունք: Բանն այն է, որ E-ն տեղեկացված չի եղել պահանջի զիջման մասին և գնման գինը վճարել է G-ին: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 397 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այդ վճարումը համարվում է պատշաճ կատարում նաև նոր պարտատիրոջ առջև:

2. Սեփականության իրավունքից բխող պահանջների իրավունք

A-ն գուցե կարող է իրավունք ունենալ պահանջելու այն հասույթը, որը վերավաճառքից ունեցել է E-ն: Նման պահանջի իրավունքը, թերևս, կարող է բխել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274 ու 276 հոդվածներից: Դրա նախապայմանն այն է, որ A-ի սեփականության իրավունքն անցած չլինի E-ին:

2.1. Սեփականության իրավունքի ձեռքբերումը դրա իրավունքն ունեցողի կողմից:

Ե-ին ծիրանը մատակարարել է ոչ թե A-ն, այլ՝ G-ն: Դա անելիս G-ն համապատասխան ապրանքի սեփականատերը չէր, որովհետև A-ն, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 507 հոդվածի համաձայն, պահպանել էր իր սեփականության իրավունքը, քանի դեռ վճարումն ամբողջությամբ չէր կատարվել: A-ն ու G-ն պայմանավորվել էին, որ G-ն իրավունք ունի ծիրանը վերավաճառել սովորական գործարքով: Ընդ որում՝ սեփականության իրավունքի վերապահումը չպետք է փոխանցվեր երկրորդ ձեռքբերողներին, A-ին պետք է փոխանցվեին G-ի պահանջները վերավաճառքով ձեռքբերողների հանդեպ:

Այսպիսով, սեփականատեր A-ն լիազորել էր G-ին ապրանքն օտարել և սեփականության իրավունքը երրորդ անձանց փոխանցել: Սակայն նրանք պայմանավորվել էին, որ դա պետք է կատարվեր սովորական գործարքի միջոցով: Հարց է ծագում՝ արդյո՞ք G-ի գործողությունները համապատասխանել են այդ պայմանավորվածությանը:

Գործարքի նպատակն ուղղակիորեն ուղղված է եղել այն բանին, որ, մի կողմից՝ A-ն ապահովված լինի սեփականության իրավունքի վերապահմամբ, մյուս կողմից էլ՝ ծիրանը տնօրինելու G-ի ազատությունը պահպանվի այն պայմանով, որ վաճառքներից առաջացած պահանջները փոխարինեն սեփականության իրավունքին: A-ն համաձայնել է հրաժարվել իր սեփականության իրավունքից այն պատճառով և այնքանով, որ G-ին կատարվելիք վճարումների միջոցով ձեռք էր բերելու նոր երաշխիքներ: Այսինքն՝ «սովորական գործարար շրջանառությունում» արտահայտությունը չի նշանակում այլ բան, քան մի իրադրություն, որի համաձայն՝ վերավաճառքից առաջացող պահանջները վավեր եղանակով փոխանցվել են A-ին: Միայն այս եղանակով է, որ նա կարող էր երաշխիքներ ստանալ: Այստեղից հետևում է, որ G-ն լիազորված է եղել միայն վերավաճառել ծիրանը ու փոխանցել դրա նկատմամբ սեփականության իրավունքը, եթե միաժամանակ իրականացվեր այդ գործարքներից առաջացող պահանջների նախնական զիջումը՝ ըստ այդ մասին կայացված

համաձայնության: A-ն լիազորել էր G-ին գանձել երրորդ անձանց կատարված վաճառքներից ծագող պահանջները: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 350 հոդվածից բխում է, որ գանձման նման լիազորությունը վավեր է, և լիազորվածին կատարված վճարումը համարվում է պարտատիրոջը կատարված վճարում: Հետևաբար՝ ինչպես զիջման արգելքով, այնպես էլ առանց դրա G-ն պիտի իրավունք ունենար E-ից ստանալու գնման գինը: Ջիջման արգելքի մասին վավեր պայմանավորվածության դեպքում (իսկ դա մեր դեպքում այդպես է) G-ն դա կաներ որպես պարտատեր, իսկ զիջման նման արգելքի բացակայության դեպքում նա դա կաներ որպես առաջին վաճառող A-ի կողմից լիազորված անձ: Այսպիսով, քանի որ G-ն երկու իրադրություններում էլ իրավունք ուներ ստանալու փողը, կարելի է բերել այն փաստարկը, որ վճարման փաստական գործընթացներում ոչինչ չի փոխվում, ուստի և զիջման արգելքով կատարված վերավաճառքը պետք է որակվի որպես «սովորական գործարար շրջանառությունում» կատարված:

Այդուհանդերձ, առաջին վաճառող A-ի ապահովության տեսանկյունից տարբերություն կա՝ կախված այն բանից՝ նրա պայմանագրի մյուս կողմը գնման գինն ստանում է սեփական անունից, թե՛ A-ի փոխարեն: Դա այդպես է հատկապես առկա իրադրությունում, երբ պայմանագրի մյուս կողմը սնանկանում է: Նման պարագայում առաջին վաճառողը միմիայն այն դեպքում ունի գանձված փողը ստանալու նախապատվություն, եթե այն գանձվել է իր համար ու չի պատկանում պայմանագրի մյուս կողմին: Բանն այն է, որ G-ն փողն ստացել է ոչ թե գանձման լիազորությունն իրագործելու միջոցով, այլ որպես գնման գին, որն իրեն է պատկանում:

Ըստ այդմ՝ կողմերի շահերին արդարացիորեն կհամապատասխանի այն որոշումը, ըստ որի՝ G-ն ծիրանը մատակարարել է E-ին ոչ, «սովորական գործարար շրջանառությունում», այսինքն՝ որ նա (G-ն) լիազորված չի եղել սեփականության իրավունքի պահպանմամբ ստացված ծիրանը վերավաճառել՝ պայմանավորվելով, որ զիջումն արգելվում է:

Այսպիսով, E-ն ծիրանի նկատմամբ սեփականության իրավունքը ստացել է իրավունքը փոխանցելու իրավունք չունեցող անձից:

2.2. Սեփականության իրավունքի ձեռք բերում իրավունքը փոխանցելու իրավունք չունեցողից:

Բայց A-ն կարող է իր սեփականության իրավունքը կորցրած լինել E-ի կողմից բարեխիղճ ձեռքբերման հետևանքով: Դա այդպես կլիներ, եթե առկա լինեին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275 հոդվածով սահմանված նախապայմանները:

G-ն ծիրանը վաճառել ու հանձնել է E-ին՝ առանց նրան հաղորդելու, որ ինքը ծիրանը ձեռք է բերել սեփականության իրավունքի վերապահմամբ, և քանի դեռ վճարումն ամբողջությամբ չի կատարվել, սեփականատերը ոչ թե ինքն է, այլ A-ն, այսինքն՝ ինքն իրավունք չուներ տնօրինելու ապրանքը որպես սեփականություն: Վերջինս նաև չի հաղորդել, որ իրավունք ուներ ծիրանը վերավաճառելու սովորական գործարար շրջանառությունում, այսինքն՝ ոչ գնման գնի պահանջների զիջման արգելքի պայմանով: Սրանով առկա է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275 հոդվածի կիրառման առաջին նախապայմանը:

E-ն, ըստ էության, նաև ձեռք է բերել ծիրանը ու գնման գինը պայմանագրի համաձայն վճարել G-ին մի կարճատև հետաձգումից հետո, որը պետք է գնահատել որպես G-ի վարկը՝ տրված E-ին: Հետևաբար՝ առկա է նաև ձեռքբերման հատուցելիության նախապայմանը, որը պահանջվում է բարեխիղճ ձեռքբերման համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275 հոդվածով:

Սակայն հարց է ծագում՝ արդո՞ք E-ին կարելի է համարել բարեխիղճ, ազնիվ ձեռքբերող: 275 հոդվածի համաձայն՝ այդպես կլիներ, եթե նա իմացած չլիներ ոչ միայն այն մասին, որ վաճառողը սեփականության իրավունք, ինչպես նաև ապրանքը տնօրինելու իրավունք չունի, այլև եթե չկարողանար այդ մասին որևէ բան իմանալ:

Անվիճելի է, որ G-ն E-ին չի տեղեկացրել ոչ A-ի սեփականության իրավունքի պահպանման և ոչ էլ ապրանքն օտարելու իր սեփական լիազորության սահմանափակումների մասին, որոնք նախատեսված էին պայմանագրով: Հետևաբար՝ E-ն դրանց մասին ոչինչ չի իմացել: Իսկ կարո՞ղ էր արդյոք իմանալ: Այս հարցին պատասխանելիս պետք չէ առաջնորդվել ինտենսիվ ուսումնասիրություններով, որոշ

պարագաներում նույնիսկ մասնավոր խուզարկու ներգրավելով, սեփականության իրական հարաբերությունները և տնօրինման լիազորությունները պարզելու վերացական հնարավորության հիման վրա: Նման պահանջով անհամաչափորեն կսահմանափակվեր ապրանքաշրջանառության անհրաժեշտ դյուրինությունը, որը հենց պետք է խթանվի բարեխիղճ ձեռքբերման միջոցով: Հակառակը՝ շուկայի մասնակիցը նորմալ հանգամանքներում պետք է կարողանա վստահել այն բանին, որ գործարքների նրա պոտենցիալ գործընկերները, ովքեր ապրանքի են տիրապետում և շուկայում վաճառքի առաջարկում, նաև իրավասու են օտարել ապրանքը:

Պարբերական եղանակով նման հետազոտություն կատարելու պարտականություն գոյություն չունի: Այն գործնականում անհնար ու անկիրառելի կդարձնեք բարեխիղճ ձեռքբերումը: Նման պարտականություն կարող է գոյություն ունենալ միայն այն դեպքում, եթե կան հանգամանքներ, որոնք գործարքի խելամիտ գործընկերոջ մեջ անխուսափելիորեն կասկած պետք է առաջացնեն բանակցությունների մյուս կողմի սեփականության իրավունքի և տնօրինման լիազորության նկատմամբ: Դա կարող է լինել, եթե մյուս կողմը պայմանագրի արտասովոր պայմաններ է առաջարկում, եթե թաքցնում է ապրանքի ծագումը կամ չի ցանկանում փաստաթղթեր ցույց տալ: Կարող է նաև լինել, եթե տնտեսության ինչ-որ մի ճյուղում լայնորեն տարածված է այնպիսի գործարարական պրակտիկա, որը պարբերաբար սահմանափակում է օտարողի օտարման լիազորությունն այնպես, որ անխուսափելիորեն կասկած է ծագում, թե այդ տնօրինման լիազորությունը կոնկրետ դեպքում ամբողջությամբ առկա չէ: Միայն այն դեպքում, եթե ձեռքբերողն անուշադրության է մատնում նման հանգամանքները և խեղդում է իր մեջ արթնացող կասկածները, արդարացված է նրա անբարեխիղճության մասին խոսելը:

Առկա գործում A-ն ու G-ն ծիրանի վերաբերյալ առքուվաճառքի պայմանագիր են կնքել, որում ոչ մի արտասովոր բան չի նկատվում: Այն, որ կարելի է պայմանավորվել գնի գնման պահանջի զիջման արգելքի մասին, նախատեսված է օրենքով և չի վկայում այն մասին, որ իբր G-ն որոշակի դժվարություններ ունի կամ նրա տնօրինման

լիազորությունը սահմանափակված է: Նման արգելքի մասին հաճախ է պայմանավորվածություն ձեռք բերվում պարտապանի պահանջով, որը դրանով ապահովում է իր պարտատիրոջ ինքնության անփոփոխությունը: Եթե նման պայմանավորվածություն ձեռք է բերվում, ապա դա գնորդին ու գնման գնի պարտապանին, այսինքն՝ E-ին, վաճառողի լիազորությունները ստուգելու որևէ առիթ չի տալիս:

Չի բացառվում, որ Հայաստանում տնտեսության որոշ ճյուղերում ապրանքներն այնքան հաճախ մատակարարվեն երկարացված սեփականության իրավունքի վերապահմամբ, որ վերավաճառքից յուրաքանչյուր երկրորդ գնողի մեջ անխուսափելիորեն կասկած առաջանա, որ նրան առաջարկվող ապրանքի դեպքում էլ այդ վերապահումը կա և, ըստ այդմ էլ, տնօրինման լիազորությունը սահմանափակված է: Եթե այդպես է, ապա E-ն պետք է աչքաթող չաներ այդ կասկածը և համապատասխան ուսումնասիրություն կատարեր, օրինակ, պահանջելով, որ իրեն ներկայացվեն A-ի ու G-ի միջև կնքված պայմանագրային փաստաթղթերը կամ ուղղակի դիմեր A-ին: Ստուգելու պարտականությունը չկատարելը կհանգեցնեք այն բանին, որ հնարավոր չէր լինի բնութագրել նրան որպես բարեխիղճ, քանի որ կարող էր իմացած լինել տնօրինելու լիազորության բացակայության մասին:

Քննարկվող գործում ոչ մի մատնանշում չկա այն մասին, որ Հայաստանում ծիրանի վաճառքում ընդհանրապես օգտագործվում է սեփականության իրավունքի պահպանման երկարացման ինստիտուտը: Այստեղ խոսքը գործարար հարաբերության փաստական հանգամանքների մասին է, որոնք անհրաժեշտ է պարզել: Համենայն դեպս, A-ն չի պնդում այդպիսի պրակտիկայի գոյության մասին: Ուստի պետք է ենթադրել, որ այդպիսին գոյություն չունի: Այդ դեպքում նաև վերանում է E-ի ուսումնասիրություն կատարելու պարտականությունը, ուստի նա իրավունք ուներ վստահելու G-ի ասածին, որի տիրապետության ներքո էր գտնվում ծիրանը, իսկ վերջինիս ներկայացրածից բխում էր, որ ինքը տնօրինելու լիազորություն ունի: Այս վստահությունն արդարացված էր, հետևաբար՝ E-ն պետք

է դիտվի որպես բարեխիղճ ձեռքբերող: Առավել ևս, որ A-ն ու G-ն երկարատև գործարարական կապեր են ունեցել, և E-ն կարող էր վստահել, որ A-ն ստուգել էր G-ի՝ գործարքի հետ կապված վարքագիծը և այն որակել որպես պատշաճ:

Այսպիսով, առկա են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275 հոդվածով նախատեսված նախապայմանները: E-ն բարեխիղճորեն ձեռք է բերել սեփականության իրավունք ծիրանի նկատմամբ ու վաճառել այն: Ուստի A-ն չի կարող պահանջել գնման գինը նորից վճարել կամ հանձնել այն գումարը, որը E-ն ստացել է վերավաճառքից:

Այս արդյունքը համապատասխանում է նաև ռիսկերի արդարացի բաշխմանը: A-ն երկարատև գործարար կապեր է ունեցել G-ի հետ: Հետևաբար՝ G-ի վճարունակության հետ կապված ռիսկը գտնվում էր ավելի շուտ հենց A-ի ռիսկի ոլորտում, քան E-ի: Համապատասխանաբար այնպիսի գործարար հարաբերությունների դեպքում, որոնց մասնակցում է մի քանի անձ, որոնք բոլորն էլ սկզբունքորեն ազնիվ են գործում, ճիշտ է պայմանագրային գործընկերներից մեկի վճարունակության ռիսկը դնել նրա վրա, ով ավելի սերտ գործարար հարաբերությունների մեջ է նրա հետ:

3. Պահանջի իրավունք անբարեխիղճ ձեռքբերման դեպքում

Անհրաժեշտ է անդրադառնալ նաև այն հարցին, թե ինչ կլիներ, եթե Հայաստանում հաստատված լիներ երկարացված սեփականության վերապահման մասին պայմանավորվելու պրակտիկան և դրանով իսկ E-ն պարտականություն ունենար ստուգելու G-ի օտարման լիազորություն ունենալը: Նման դեպքում, եթե E-ն դա արած չլինի, բարեխիղճ էլ չի լինի և ծիրանը ձեռք բերած չի լինի:

Այս տարբերակում A-ն իր սեփականության իրավունքը կկորցնի հոգուտ E-ի միայն այն ժամանակ, երբ E-ն ծիրանն արդեն վերավաճառած լինի իր գնորդներին: Այն հարցում, որ նրանք բարեխիղճ են, և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275 հոդվածով սահմանված մյուս նախապայմաններն առկա են E-ի հետ հարաբերությունում, կասկած չկա:

Այսպիսով, E-ն սեփականության իրավունքի անբարեխիղճ ձեռքբերող կլինի և A-ն էլ իր սեփականության իրավունքը կորցրած կլինի

միայն այն ժամանակ, երբ ծիրանն արդեն վերավաճառած լինի E-ի գնորդներին: Մինչև այդ վերավաճառքը E-ն, որպես ոչ իրավաչափ տիրապետող, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274 հոդվածի համաձայն, պարտավոր կլինի ծիրանը վերադարձնել A-ին: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17 հոդվածի համաձայն՝ E-ն պարտավորված կլինի հատուցել A-ի վնասները, եթե նրա հակաիրավական գործողությունների պատճառով խախտվել է իր սեփականությունը վերադարձնելու A-ի իրավունքը:

Այս հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է մանրամասն անդրադառնալ A-ի ու G-ի, ինչպես նաև G-ի ու E-ի միջև կնքված պայմանագրերի ձևակերպմանը: A-ն լիազորել էր G-ին ծիրանը վերավաճառել սովորական գործարար շրջանառությունում և գանձել գնման գնի պահանջները: Միակ պատճառը, թե ինչու օտարումը E-ին չի որակվել որպես սովորական գործարար շրջանառությունում կատարված, այն է, որ E-ն ու G-ն պայմանավորվել են, որ գնման գնի պահանջը պետք է լինի անզիջելի: Այլապես E-ն սեփականությունը ձեռք բերած կլիներ տնօրինման իրավունք ունեցող G-ի վաճառքի միջոցով և նա՝ E-ն, ազատված կլիներ իր գնման գնի պարտքից A-ի հանդեպ, քանի որ ինքը վճարել է G-ին, որը լիազորված էր ստանալու այդ վճարումը: Այս դեպքում A-ն կկարողանար պահանջ ներկայացնել իր պայմանագրային գործընկերոջը՝ G-ին, և ոչ թե E-ին: Ուստի G-ի սնանկությունը գտնվում էր A-ի ռիսկերի ոլորտում:

Առկա գործում E-ն գնման գինը վճարել է G-ին, որովհետև տեղյակ չի եղել նախնական զիջման մասին: Այդ վճարմամբ E-ն մարել է իր պարտքը G-ի առջև ճիշտ այնպես, ինչպես և մարած կլիներ իր պարտքը A-ի առջև՝ վճարում կատարելով գանձմանը լիազորված G-ին, եթե գոյություն չունենար պայմանավորվածություն գնման գնի պահանջի զիջման արգելքի վերաբերյալ ու իրագործված լիներ այդ պահանջի նախնական զիջումը A-ին: Չէ՞ որ E-ն միայն այն պատճառով օտարման իրավունք ունեցողից ձեռք բերելու միջոցով սեփականատեր չի դարձել և այն պատճառով է դարձել ոչ իրավաչափ տիրապետող, որ G-ի հետ պայմանավորվել էր զիջման արգելվելու շուրջ: Եթե E-ն իրավաչափ գործած լիներ, այսինքն՝ եթե զիջման

արգելքի վերաբերյալ պայմանավորվածություն գոյություն չունենար, A-ն կկարողանար պահանջ ներկայացնել միայն իրենից ապրանքն ստացողին՝ G-ին: Եթե ամեն ինչ կատարված լիներ A-ի ու G-ի միջև կնքված պայմանագրի համաձայն, A-ն չէր կարողանա պահանջ ներկայացնել E-ին:

Քննարկվող գործի հանգամանքներում ևս նա չի կարող պահանջ ներկայացնել E-ին, որովհետև սրա ոչ իրավաչափ գործելակերպը, այն է՝ ծիրանի ընդունումը և վերավաճառքը, պատճառ չի դարձել A-ի վստախ համար: Հակառակը՝ այն ձևը, որն ընտրել է A-ն, այն է՝ երկարացված սեփականության իրավունքի պահպանումը նախնական զիջման վերաբերյալ պայմանավորվածությամբ և վերավաճառքից առաջացող պահանջների գանձման լիազորությամբ, ամեն դեպքում պարունակում է նույն ռիսկը՝ վերավաճառքի գնորդը, որը գնման գնի պարտապանն է, կարող է առաջին վաճառքի գնորդին վճարելով, որը այս պահանջը զիջողն է, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 397 հոդվածի 3-րդ մասի համաձայն ազատվել իր պարտքից, իսկ առաջին վաճառողը, որին փոխանցվում է պահանջը, պետք է պահանջ ներկայացնի առաջին վաճառքի գնորդին: Նա չի կարող պահանջ ներկայացնել պարտապանին: Առաջին վաճառքի գնորդի սնանկության ռիսկը, այսպիսով, կրում է առաջին վաճառողը, որը պահպանել էր սեփականության իրավունքը, բայց թույլատրել էր վերավաճառքը և պայմանագրի իր գործընկերոջը լիազորել էր գանձելու գումարը:

Արդյունքը երկու դեպքում էլ նույնն է: Այն դեպքում, երբ չկա զիջման արգելքի վերաբերյալ պայմանավորվածություն, վերավաճառքի գնորդը, այսինքն՝ E-ն, սեփականություն է ձեռք բերում այն օտարելու իրավունք ունեցողից, նա վճարում է ազատող ազդեցությամբ նրան, ով գանձման իրավունք ունի, և նա իրավամբ տնօրինում է ապրանքը:

Այն դեպքում, երբ կա զիջման արգելքի վերաբերյալ պայմանավորվածություն, վերավաճառքի գնորդը, այսինքն՝ նորից E-ն, ճիշտ է, սեփականություն ձեռք չի բերում, բայց վճարում է առաջին գնորդին, այսինքն՝ G-ին: A-ին հասցված վստախ պատճառը ոչ թե E-ի գործողություններն են, այլ G-ի սնանկությունը:

4. Անհիմն հարստացումից բխող պահանջի իրավունք

A-ն գուցե և կարող էր E-ին պահանջ ներկայացնել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092 հոդվածի հիման վրա, եթե վերջինս ծիրանը ձեռք է բերել նրա հաշվին, և դրա համար իրավական հիմք գոյություն չունի:

Դրա առաջին նախապայմանն այն է, որ E-ն հարստացած լինի: Նա ստացել է ծիրանը և գնման գինը վճարել է G-ին: Դրանով նա ազատվել է վաճառքից բխող իր պարտքից, բայց որևէ գույքային արժեք չի շահել: Հետևաբար՝ հարստացում տեղի չի ունեցել:

E-ն ծիրանը չի ստացել նաև A-ի հաշվին: G-ին մատակարարված ծիրանի համար վճարելու A-ի պահանջը պետք է բավարարվի G-ին վերավաճառքի գնի վճարմամբ: Այդպես էլ եղել է: Դրանով G-ն գուցեև հարստացել է, բայց E-ն չի հարստացել:

Հետևաբար՝ A-ն չունի E-ի հանդեպ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092 հոդվածով նախատեսված պահանջի իրավունք:

5. Ընդհանուր արդյունքը

Ընդհանուր արդյունքն այն է, որ A-ն E-ի հանդեպ չունի պահանջի իրավունք: Պայմանագրային այնպիսի կոնստրուկցիայի հիման վրա, երբ կա երկարացված սեփականության իրավունքի վերապահում, և E-ն ու G-ն առանց այդ մասին իմանալու առքուվաճառքի պայմանագիր են կնքել պահանջի զիջման արգելքով, A-ն պահանջի իրավունք կունենա միայն G-ի հանդեպ, բայց չի կարող հասնել այդ իրավունքի իրականացմանը G-ի սնանկության պատճառով: Այսպիսով, գույքից զրկվելու ռիսկն ընկնում է A-ի և ոչ թե E-ի վրա: Սա տեղին է նաև մի քանի կողմերի վրա ռիսկերը բաշխելու տեսանկյունից:

Խնդիր 5

1. Վավեր երաշխավորության պայմանագրի առկայությունը

ՇՄԱ-ի պահանջի իրավունքը հիմնավորելու համար առաջին նախապայմանն այն է, որ ՇՄ-ի և ԱԲ-ի միջև կնքված լինի երաշխավորության պայմանագիր: ՇՄԱ-ն իր ամուսին ՇՄ-ի ժառանգն է, ինչից բխող իրավունքները վերջինս իրացրել է քաղաքացիական օրենսգրքի 1225 հոդվածով սահմանված կարգով: Ըստ Քաղաքացիական օրենսգրքի 1184 հոդվածի՝ ՇՄ-ի գույքն անփոփոխ վիճակով որպես ամբողջություն անցել է ՇՄԱ-ին: Այսպիսով, ՇՄԱ-ն ԱԲ-ից կկարողանար պահանջել վճարում, եթե ՇՄ-ն ունենար այդպիսի պահանջի իրավունք: Դրա համար առաջին նախապայմանը, ինչպես արդեն նշվել է, այն է, որ ՇՄ-ի և ԱԲ-ի միջև կնքված լինի երաշխավորության պայմանագիր:

Երաշխավորության պայմանագիր կնքելը, Քաղաքացիական օրենսգրքի 448 հոդվածի 3-րդ մասի համաձայն, ենթադրում է, որ կողմերից մեկը առաջարկ է անում, որն ընդունում է մյուս կողմը: Քաղաքացիական օրենսգրքի 376 հոդվածի համաձայն՝ այդ երկու կամարտահայտություններն էլ պետք է դրսևորվեն գրավոր: Ըստ Քաղաքացիական օրենսգրքի 376 հոդվածի՝ երաշխավորության պայմանագրի գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է պայմանագրի անվավերության:

Անհրաժեշտ է ստուգել՝ արդյո՞ք պետք է կողմերից մեկի վարքագիծը գնահատել որպես առաջարկ, իսկ մյուսինը՝ որպես առաջարկի ընդունում:

ԱԲ-ի ստորագրությունը պայմանագրի տակ թերևս կարող է դիտվել որպես առաջարկ: Բայց ճիշտ է նաև պնդումն առ այն, որ ստորագրությունը գրավոր ձևի պահանջի մի մասի կատարում է, բայց այնպես չէ, որ դրանով նաև առկա են վավեր կամարտահայտության չափանիշները, ինչպես դա պահանջվում է Քաղաքացիական օրենսգրքի 290 հոդվածի 2-րդ մասով: Բանն այն է, որ ԱԲ-ն ստորագրել էր փաստաթուղթը, բայց այն չէր հանձնել ՇՄ-ին: Վերջինս պարզապես վերցրել էր այն: Հետևաբար՝ թերևս բացակայում է մյուս կողմին կամքն արտահայտելու չափանիշը:

Այն, թե առկա է արդյոք ԱԲ-ի կամարտահայտությունը, պետք է պարզվի հանգամանքների դիտարկմամբ: Դրա համար անհրաժեշտ է հիշել, որ ԱԲ-ն հայտնել էր ՇՁ-ին ՇՄ-ի հետ երաշխավորության պայմանագիր կնքելու իր պատրաստակամությունը, և դրանից հետո ՇՄ-ն եկել էր նրա մոտ, որպեսզի միասին ձևակերպեն համապատասխան պայմանագրի տեքստը: ԱԲ-ն, սակայն, տեքստը ստորագրելուց հետո այն դեռ չէր հանձնել ՇՄ-ին: Սուսկ ստորագրության գոյության փաստն ինքնին դեռևս կամարտահայտություն չէ երրորդ անձի հանդեպ որևէ պարտավորություն ստանձնելու ուղղությամբ: Այդպիսին լինելու համար ստորագրված տեքստը պետք է նաև հանձնվեր ՇՄ-ին: Այն, որ ՇՄ-ն պարզապես վերցրել է այդ տեքստը, իրավիճակը չի փոխում: Ի դեպ, ԱԲ-ի զայրույթից կարելի է եզրակացնել, որ ինքն այդ ստորագրության առկայությունը չի դիտել որպես իր գործողության կատարման համար բավարար հիմք: Մյուս կողմից՝ նա ոչինչ չի ձեռնարկել դրա դեմ: Հակառակը՝ նա թույլ է տվել, որ ՇՁ-ն իրեն հանգստացնի և մի քանի տարի շարունակ հանդուրժել է այս իրավիճակը: Նման պարագայում խելամիտ երրորդ անձը, ինչպիսին է ՇՄ-ն, պետք է ենթադրեր, որ ԱԲ-ն ցանկացել է արտահայտել իր կամքը վավեր եղանակով: Եթե նա տարիներ անց վկայակոչելիս լիներ կամարտահայտության բացակայությունը, դա չէր ունենա էական նշանակություն՝ որպես իր մեջ առկա հակասական վարքագիծ (*venire contra factum proprium*):

Հարց է՝արդյո՞ք ՇՄ-ն ԱԲ-ի առաջարկն ընդունել է այնպես, ինչպես դա պահանջվում է Քաղաքացիական օրենսգրքի 448 հոդվածով:

Երաշխավորության պայմանագիրը միակողմանի է, այսինքն՝ պարտատիրոջը տալիս է միմիայն իրավունքներ: ՇՄ-ն էր նախաձեռնել բանակցությունները՝ մասնակցելով նաև տեքստի ձևակերպմանը: Դրանից հետո նա իր հետ տարել էր և մշակել փաստաթուղթը: Այս հանգամանքները թույլ են տալիս եզրակացնել, որ ՇՄ-ի վարքագիծը պետք է գնահատվի որպես պայմանագիր կնքելու առաջարկի ընդունում:

Սակայն հարց է՝ արդյոք ընդունումն էլ է կատարվել սահման-

ված գրավոր ձևով: ՇՄ-ն, համենայն դեպս, փաստաթուղթը չի ստորագրել ԱԲ-ի հետ միաժամանակ և նրա ներկայությամբ: Ինչպես հետևում է Քաղաքացիական օրենսգրքի 450 հոդվածի 3-րդ մասից, վավեր ստորագրության ու դրանով իսկ գրավոր ձևի չափանիշի կատարման համար չի պահանջվում, որ պայմանագրի տեքստը կողմերը ստորագրեն միաժամանակ և երկու կողմն էլ ներկա լինի ստորագրմանը: Առկա գործում ՇՄ-ն ԱԲ-ին նամակ է գրել և, բացի դրանից, ԱԲ-ի ստորագրած պայմանագրի տեքստի վրա գրավոր նշում է արել: Ընդհանուր հաշվով, սրանով պահպանված է գրավոր ձևի պահանջը:

Այսպիսով, ՇՄ-ի և ԱԲ-ի միջև վավեր եղանակով կնքվել է երաշխավորության պայմանագիր, և դրանում սահմանված իրավունքներն ու պարտականություններն անցել են ՇՄԱ-ին այն ձևով, որով դրանք գոյություն են ունեցել ՇՄ-ի և ԱԲ-ի միջև:

2. Արդյոք պայմանագիրն անվավեր է մոլորության և խաբեության պատճառով

ԱԲ-ն ասում է, որ մոլորության մեջ է եղել ՇՁ-ի իրական գույքային դրության վերաբերյալ, երբ վերջինս երաշխավորության պայմանագրի կնքման առաջարկ է արել: Մասնավորապես՝ վերջինս նշում է, որ ՇՁ-ն խաբել է իրեն իր գույքային դրության վերաբերյալ և արդյունքում չի կատարել ատամնաբուժարանը շահավետ պայմաններով կառուցելու իր խոստումը:

ա) ԱԲ-ի մոլորությունը:

Քաղաքացիական օրենսգրքի 312 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մոլորությունն էական նշանակություն ունի միայն այն դեպքում, երբ վերաբերում է գործարքի բնույթին կամ դրա առարկային: Առկա գործում ԱԲ-ն ասում է, որ մոլորության մեջ է եղել ՇՁ-ի գույքային դրության վերաբերյալ: Ճիշտ է՝ պետք է ենթադրել, որ նա երաշխավորության համաձայնություն տված չէր լինի, եթե տեղյակ լիներ իրական վիճակի մասին: Այս իրադրությունը Քաղաքացիական օրենսգրքի 312 հոդվածով նախատեսված չէ:

Բացի դրանից, երաշխավորությունը հենց հետապնդում է պարտատիրոջն իր պարտապանի վատ գույքային դրությունից պաշտպանելու նպատակ՝ շնորհիվ այն բանի, որ երաշխավորը, որպես կանոն, եթե այլ բան նախատեսված չէ երաշխավորության պայմանագրով, համապարտ պատասխանատվություն է ստանձնում պարտատիրոջ հանդեպ պարտապանի վճարունակության ապահովման համար: Հետևաբար՝ պայմանագրի նպատակին և դրանով իսկ պարտատիրոջ պլանավորված պաշտպանությանը կհակասեր այն, եթե երաշխավորին թույլատրվեր հիմնավորել իր կնքած երաշխավորության պայմանագրի անվավերությունը՝ պարզապես մեջբերելով իր մոլորության գործոնի առկայությունն այն անձի գույքային դրության վերաբերյալ, որի վճարունակությունը երաշխավորել է:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր կայացրած մի շարք նախադեպային որոշումներում անդրադարձել է էական մոլորության վերլուծությանը՝ համարելով, որ էական նշանակություն ունեցող մոլորությունն առկա է, երբ կնքված գործարքը չի արտահայտում կողմերի իրական կամքը, չի կարող հանգեցնել այն իրավական հետևանքներին, որոնք նրանք նկատի են ունեցել գործարքի կնքման պահին: Էական նշանակություն ունի գործարքի բնույթի, մասնավորապես՝ գործարքի էության, դրա հետևանքների, կողմերի հարաբերությունների բովանդակության վերաբերյալ մոլորությունը: Գործարքի առարկայի հատկանիշների վերաբերյալ մոլորությունը նշանակում է, որ կողմերը կամ նրանցից մեկը նկատի է ունեցել ոչ այն առարկան, որին վերաբերում է կնքված գործարքը, այլ իր հատկանիշներով տարբերվող մեկ այլ առարկա (տե՛ս թիվ ԵՔԴ/0724/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.09.2009 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ մոլորությունը գործարք կնքած կողմի կամքի շեղումն է (կամքի խեղաթյուրումը) կամ շեղման հետևանքն է, որի ազդեցությունը որոշիչ է գործարքի կնքման և (կամ) դրա կնքման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների վրա: Այն, որպես կանոն, հիմնված է սխալ ենթադրության (պատկերացման) վրա: Մոլորության ազդեցության տակ կնքված գործարքում կողմի կամքը համապատասխանում է նրա կամա-

հայտնությանը, սակայն այն ձևավորվում է գործարքի կնքման համար նշանակություն ունեցող հանգամանքների սխալ պատկերացման հետևանքով, որոնք կարող են պայմանավորված լինել տարբեր հանգամանքներով (օրինակ՝ անուշադրությունը, կրթության ոչ բավարար մակարդակը, գործարքի առարկայի կամ գործարքի այլ պայմանների մասին անհրաժեշտ տեղեկության բացակայությունը կամ դրա ոչ բավարար կամ թերի լինելը): Դրա հետ մեկտեղ՝ մոլորության ազդեցության տակ կնքված գործարքը կարող է անվավեր ճանաչվել միայն այն դեպքում, երբ մոլորությունն էական է: Մոլորության էական կամ ոչ էական բնույթը դատարանը յուրաքանչյուր դեպքում պարզում է՝ ելնելով գործի կոնկրետ հանգամանքներից և այն իրողությունից, թե որքանով է մոլորությունը նշանակալի, զգալի գործարքի տվյալ մասնակցի համար: Ընդ որում՝ էական նշանակություն ունեցող մոլորությունը պետք է առկա լինի գործարքի կնքման պահին, այլ ոչ թե ծագի գործարքը (պայմանագիրը) կնքելուց հետո որոշ ժամանակ անց: Վճռաբեկ դատարանը միաժամանակ նշել է, որ օրենսդիրը որպես գործարքն անվավեր ճանաչելու հիմք դիտել է գործարքի բնույթի կամ դրա առարկայի վերաբերյալ էական նշանակություն ունեցող մոլորությունը: Մինչդեռ գործարքի շարժառիթների վերաբերյալ մոլորությունն էական նշանակություն ունենալ չի կարող (տե՛ս թիվ ԵԿԴ/1013/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը):

բ) ԱԲ-ի խաբեությունը ՇՁ-ի կողմից:

Քաղաքացիական օրենսգրքի 313 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմերից մեկը կարող է գործարքն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնել, եթե իրեն խաբել են:

ՇՁ-ն, անկասկած, խաբել է ԱԲ-ին: Այդուհանդերձ, երաշխավորության պայմանագրի կողմ է ոչ թե ՇՁ-ն, այլ ՇՄ-ն, իսկ ՇՄ-ն երաշխավորության պայմանագրի նախապատմությանը տեղյակ չի եղել:

Հարց է՝ արդյո՞ք ՇՁ-ի վարքագիծը պետք է վերագրվի ՇՄ-ին: Դրա համար ՇՁ-ն պետք է հանդես եկած լիներ որպես ՇՄ-ի ներկայացուցիչ, իսկ ՇՄ-ն էլ նրա հետ պետք է չարամտորեն համագոր-

ծակցած լիներ: Այսպիսի ենթադրություն անել չենք կարող: ՇՁ-ն ՇՄ-ի պայմանագրային կոնտրագենտն է եղել և փորձել է հասնել այն բանին, որ վերջինիս և ԱԲ-ի միջև կնքվի երաշխավորության պայմանագիր, քանի որ դրանից էր կախված պայմանագրի գնի վճարման պահանջի տարաժամկետումը: Ճիշտ է՝ ՇՁ-ն միայն կապել է երաշխավորության պայմանագրի երկու կողմերին, բայց ԱԲ-ի հետ պայմանագրի վերաբերյալ բանակցություններ վարել է ոչ թե ինքը, այլ՝ ՇՄ-ն:

Այդ բանակցությունների հիմքը եղել է ԱԲ-ի մոլորեցումը ՇՁ-ի կողմից, և կարելի է պատկերացնել, որ այդ մոլորությունը պետք է վերագրվի ՇՄ-ին, որովհետև ՇՄ-ն ՇՁ-ի հետ գտնվում էր գործարար հարաբերության մեջ և շահել է այդ մոլորությունից: Սակայն այսպիսի մեկնաբանությունը հաշվի չի առնում երաշխավորության պայմանագրի միակողմանի պարտավորեցնող բնույթը: Պարտատիրոջը չի հետաքրքրում իր պարտապանի և երաշխավորի միջև եղած հարաբերությունը: Այդ իսկ պատճառով նա երաշխավորի առջև պարտապանի անձի կամ պարտավորական հարաբերության բնույթի մասին պարզաբանումներ տալու պարտականություն չունի: Բացի դրանից, պարտապանն էլ իր շահերն ունի կապված երաշխավորության հետ: Բանն այն է, որ ՇՁ-ին չէր տրամադրվի գնի վճարման տարաժամկետում, եթե նա երաշխավոր ներգրաված չլիներ:

Այս պատճառներով այն, որ ՇՁ-ն խաբել է ԱԲ-ին, չի կարող վերագրվել ՇՄ-ին, այնպես որ անվավերություն Քաղաքացիական օրենսգրքի 313 հոդվածի իմաստով լինել չի կարող:

գ) ԱԲ-ի համար շահավետ գնով շինարարություն անելու՝ ՇՁ-ի խոստման դրժումը:

Հաջորդիվ անհրաժեշտ է ստուգել՝ արդյո՞ք այն, որ ՇՁ-ն ԱԲ-ին խոստացել էր նրա ատամնաբուժարանը շահավետ գնով կառուցել, եթե վերջինս ստանձներ իր պայմանագրային պարտավորությունների կատարման երաշխավորությունը, բայց չի կատարել իր խոստումը, էական նշանակություն ունի երաշխավորության պայմանագիրը վավեր ճանաչելու համար:

Նախ՝ այդ խոստումն է երաշխավորության պայմանագրի կնքման շարժառիթ եղել ԱԲ-ի համար: Իսկ մոլորությունը այս կամ այն պայմանագրի շարժառիթի վերաբերյալ, Քաղաքացիական օրենսգրքի 312 հոդվածի համաձայն, էական նշանակություն չունի:

Այնուհետև՝ ԱԲ-ն, թերևս, կարող էր վկայակոչել այն փաստը, որ շինարարություն չկատարելը էապես փոխել է այն հանգամանքները, որոնց հիման վրա ինքը կնքել էր երաշխավորության տվյալ պայմանագիրը, այն, որ ինքը երբեք չէր համաձայնվի ստանձնելու երաշխավորությունը, եթե կանխատեսած լիներ, որ ՇՁ-ն իր ատամնաբուժարանը չի կառուցի, այնպես որ նրա երաշխավորության պայմանագիրը, Քաղաքացիական օրենսգրքի 467 հոդվածի համաձայն, պետք է լուծվի:

Սակայն նորից պետք է ասել, որ հարաբերությունը երաշխավորի և պարտապանի միջև, և այն պատճառները, որոնք դրդել են երաշխավորին ստանձնելու երաշխավորության ռիսկը, չպետք է հետաքրքրեն պարտատիրոջը: Այդ հարաբերությունը գտնվում է միմիայն երաշխավորի ռիսկի ոլորտում, ուստի և որևէ նշանակություն չունի երաշխավորության պայմանագրի վավերության գնահատման համար:

Հետևաբար՝ բացառվում է պայմանագրի լուծումը այն հանգամանքների փոփոխության պատճառով, որոնց արմատները երաշխավորի ու պարտապանի միջև եղած հարաբերության մեջ են:

Այսպիսով, ընդհանուր առմամբ ստացվում է, որ երաշխավորության պայմանագիրը վավեր կերպով կնքված էր ՇՄ-ի և ԱԲ-ի միջև ու չի կարող համարվել անվավեր:

դ) Անվավերության պահանջ ներկայացնելու համար նախատեսված հայցային վաղեմության վերաբերյալ:

Վերոշարադրյալ դատողությունների հետ մեկտեղ կարելի է նաև հղում կատարել վիճահարույց գործարքների անվավեր ճանաչման հայցերի համար նախատեսված հայցային վաղեմության ժամկետին: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317 հոդվածի 2-րդ մասը վիճահարույց գործարքների անվավեր ճանաչման հայցերի համար

նախատեսում է մեկամյա հայցային վաղեմության ժամկետ, սկսած այն պահից, երբ հայցվորն իմացել էր կամ պարտավոր էր իմանալ գործարքն անվավեր ճանաչելու համար հիմք ծառայող հանգամանքների մասին:

Երաշխավորության պայմանագիրը կնքվել է 2011թ. հունիսին, իսկ մոլորության և խաբեության մասին ԱԲ-ն հայտնել է միայն 2014թ. դեկտեմբերին: Փաստերից պարզ չէ՝ երբ է վերջինս իմացել, որ ՇՁ-ն չի պատրաստվում կառուցել իր համար ատամնաբուժարան ցածր գնով:

Բայց ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317 հոդվածը հայցային վաղեմության ժամկետի սկիզբը կապում է նաև այն պահի հետ, երբ անձը պարտավոր էր իմանալ անվավերության հիմք հանդիսացող հանգամանքների մասին: Բնականոն գործարար հարաբերություններում, եթե անձը ստանձնում է երաշխավորություն, պարտապանից ակնկալելով որոշակի գործողությունների կատարում կամ որոշակի վարքագծի դրսևորում, ապա երաշխավորություն տալուց հետո միանգամից հետամուտ է լինում այդ գործողության կատարումը պահանջելուն: Ուստի երաշխավորության պայմանագրի կնքումից հետո շատ կարճ ժամանակ անց ԱԲ-ն պարտավոր էր հետամուտ լինել ՇՁ-ի կողմից խոստացված գործողության կատարումը պահանջելու հարցին, հետևաբար՝ այդ պահից սկսած, պարտավոր էր իմանալ գործարքն անվավեր ճանաչելու համար ենթադրաբար հիմք ծառայող հանգամանքների մասին: Առավել ևս, որ 2012թ. փետրվարին կռունկը շուտ էր եկել, ինչից արդեն ԱԲ-ն ակնհայտորեն պետք է հասկանար, որ որևէ շինարարություն չի լինելու:

3. Շինարարական կռունկի թերությունների վկայակոչումը ԱԲ-ի կողմից

Քաղաքացիական օրենսգրքի 377 հոդվածի համաձայն՝ երաշխավորը և պարտապանը, որպես կանոն, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով, պարտատիրոջ հանդեպ համապարտ պատասխանատվություն են կրում, եթե պարտապանը չի կատարում իր պարտավորությունը: Մեր օրինակում ՇՄԱ-ն ապարդյուն փոր-

ծել է պարտքը ստանալ ՇՁ-ից: Վերջինը տեղափոխվել է Մոսկվա և հասանելի չէ: Այսինքն՝ հենց սկզբից արդյունք չէր ունենա նրա դեմ Հայաստանում հայց ներկայացնելը: Բացի դրանից, ԱԲ-ն երաշխավորության պայմանագրի կնքմամբ համաձայնվել էր պարտատիրոջ հանդեպ ՇՁ-ի պարտավորությունների համար համապարտ պատասխանատվություն կրել:

Քաղաքացիական օրենսգրքի 362 հոդվածի համաձայն՝ ՇՄ-ն կարող էր, իսկ հետագայում նաև ՇՄԱ-ն կարող էր ՇՁ-ից պահանջել ամբողջությամբ կատարել իր կողմից ստանձնած պայմանագրային պարտավորությունը:

Քաղաքացիական օրենսգրքի 377 հոդվածի համաձայն՝ ԱԲ-ն ՇՁ-ին հավասարապես պարտավոր է կատարել ՇՄ-ի հանդեպ ստանձնած պայմանագրային պարտավորությունները: Դրանից հետևում է, որ ԱԲ-ն ՇՁ-ի պարտատիրոջը պիտի կարողանա ներկայացնել այն նույն առարկությունները, որոնք գոյություն ունեն հիմնական պարտավորության առնչությամբ: Պարտատերը պիտի կարողանա երաշխավորից պահանջել ոչ պակաս, բայց նաև ոչ ավել չափով, քան կկարողանար պահանջել հիմնական պարտապանից:

Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ստուգել, կարո՞ղ է արդյոք ԱԲ-ն ՇՄԱ-ի պահանջին հակադրել այն, որ շինարարական կռուները թերի է եղել, և ինքը, Քաղաքացիական օրենսգրքի 491 հոդվածի համաձայն, ՇՁ-ի անունից հրաժարվում է պայմանագրից:

Կասկած չկա, որ թերությունն առկա է եղել:

Քաղաքացիական օրենսգրքի 493 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ՇՁ-ն կարող է ապրանքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել պայմանով, որ վաճառված ապրանքի թերությունները հայտնաբերված լինեն ապրանքը գնորդին հանձնելուց հետո ողջամիտ ժամկետում՝ ոչ պակաս, քան երկու տարվա ընթացքում: Կռուները գնորդին հանձնվել է 2011թ., ուստի եթե մինչև 2013թ. հայտնաբերվի թերություն, գնորդը կարող է պահանջ ներկայացնել: Թերությունը հայտնաբերվել է 2012թ., ուստի պահպանված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 493 հոդվածի 2-րդ մասով նախատեսված պահանջը:

4. Վաղեմության ժամկետի հետ կապված առարկությունը

ԱԲ-ն պնդում է, որ նրան ներկայացված պահանջի իրավունքի ժամկետը լրացել է: Երաշխավորությունը պարտավորություն է, որը ծագում է երաշխավորության պայմանագրով և, ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 382 հոդվածի 4-րդ կետի, երաշխավորության պայմանագրում նշված ժամկետի ավարտով դադարում է: Նշված կետը տալիս է երաշխավորության ժամկետի դադարման երեք կարգավորում՝ ա) այն դեպքում, երբ երաշխավորության պայմանագրով նշված է ժամկետ, այդ ժամկետի ավարտով երաշխավորության ժամկետը դադարում է, բ) եթե ժամկետը բացակայում է, երաշխավորությունը դադարում է, եթե պարտատերը, երաշխավորությամբ ապահովված պարտավորության կատարման ժամկետը լրանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, երաշխավորի դեմ հայց չի հարուցել, գ) այն դեպքերում, երբ հիմնական պարտավորության կատարման ժամկետը նշված չէ և չի կարող որոշվել կամ որոշվել է պահանջի պահով, երաշխավորությունը դադարում է, եթե պարտատերը երաշխավորության պայմանագիր կնքելու օրվանից երկու տարվա ընթացքում երաշխավորի դեմ հայց չի հարուցել:

Տվյալ դեպքում գործ ունենք նշված կարգավորումներից երկրորդի հետ, քանի որ երաշխավորության պայմանագրով նշված էր, որ պայմանագրի գնի վճարումը՝ հիմնական պարտավորությունը, պետք է կատարվի մինչև 2011թ. հոկտեմբերի 10-ը: Ուստի երաշխավորությունը կդադարեր, եթե ՇՄ-ն մինչև 2012թ. հոկտեմբերի 11-ը հայց չներկայացներ ԱԲ-ի դեմ:

Նշված ժամկետում պահանջ չի ներկայացվել, ուստի երաշխավորությունը դադարել է:

Այստեղ ՇՄԱ-ն չի կարող հղում կատարել հայցային վաղեմության ժամկետների վերականգման վրա, քանի որ ՇՄ-ն մահացել է 2013թ. ապրիլի 19-ին, այսինքն՝ ժամկետի ավարտից հետո: Իսկ հայցային վաղեմության ժամկետի ընդհատում, կասեցում, վերականգնում կարող է տեղի ունենալ միայն այն դեպքում, երբ համապատասխան հանգամանքները տեղի են ունեցել հայցային վաղեմության ընթացքում:

5. Արդյունքը

ՇՄԱ-ն չի կարող որպես ՇՄ-ի ժառանգ ԱԲ-ից պահանջել 50.000.000 դրամի վճարում, քանի որ երաշխավորությունը դադարել է: Միաժամանակ, ԱԲ-ն կարող է հղում կատարել ՇՄ-ի կողմից վաճառված թերություններին այնպես, ինչպես կառարկեր ՇՁ-ն:

Խնդիր 6

Այս խնդրի լուծումը տալու համար անհրաժեշտ է վերլուծել՝ արդյո՞ք մի կողմից՝ Կ-ի և մյուս կողմից՝ Գ-ի, Բ-ի և Ք-ի միջև առկա է առքուվաճառքի պայմանագիր: Այդ դեպքում Գ-ն, Բ-ն և Ք-ն կարող են պահանջել նրանց ու Ա-ի միջև պայմանավորված գնի վճարում, ինչպես նաև կարող են պահանջել վերցնել դեռևս չմատակարարված առարկաներն ու վճարել դրանց համար: Այդ պահանջի իրավունքի հիմք կարող են լինել Քաղաքացիական օրենսգրքի 470, 500 ու 501 հոդվածները:

Այն, որ այստեղ առկա են առքուվաճառքի պայմանագրից բխող իրավահարաբերություններ, ակնհայտ է և երկար քննարկման կարիք չունի: Արվեստի օբյեկտները պետք է մատակարարվեն որոշակի հատուցման, այն է՝ պայմանագրի գնի վճարման դիմաց:

Հարց է՝ արդյո՞ք Կ-ի հետ կնքվել են վավեր պայմանագրեր: Համապատասխան պայմանագրի կնքման նախադրյալը, ըստ Քաղաքացիական օրենսգրքի 448 հոդվածի, այն է, որ մի կողմից՝ Գ-ն, Բ-ն ու Ք-ն և մյուս կողմից՝ Կ-ն օՖերտայի և ակցեպտի վերաբերյալ իրավակարգավորումների արդյունքում դրսևորած ազատ կամարտահայտությամբ կնքեն առքուվաճառքի պայմանագիր:

Քանի որ Կ-ն ինքը չի արտահայտել իր կամքը, հարց է ծագում՝ արդյո՞ք Ա-ի կողմից վերոգրյալ կամարտահայտության դրսևորումը, որն արվել է Կ-ի անունից, և դրա հետևանքով առաջացած պայմանագրային հարաբերությունները պարտադիր են Կ-ի համար: Համապատասխան պարտադիրության առկայությունը կարելի էր պնդել, եթե Ա-ն վավեր լիազորությունների հիման վրա որպես ներկայացուցիչ գործած լիներ Կ-ի անունից: Այդ դեպքում նրա կամարտահայտության արդյունքում, ըստ Քաղաքացիական օրենսգրքի 318 հոդվածի, Կ-ն ուղղակիորեն կարող էր օժտվել համապատասխան իրավունքներով և ստանձնել այդ իրավունքներին համաչափ պարտավորություններ:

Կասկած չկա, որ Ա-ն գործել է ոչ թե իր անունից և իր հաշվին, այլ Կ-ի անունից: Դա բխում է ինչպես լիազորագրից, այնպես էլ այն ձևա-

թերթերից, որոնցում Կ-ն նշված է որպես կողմ: Այն պայմանագրերի վերաբերյալ, որոնք Ա-ն իրեն հանձնարարված շրջանում կնքել է մինչև Կ-ի նախաձեռնությամբ իր համապատասխան լիազորությունների դադարելը, անկասկած կարելի է որակել որպես վավեր գործարքներ: Հարց է, սակայն, արդյո՞ք նրա պայմանավորվածությունները Գ-ի, Բ-ի և Բ-ի հետ իրավունքներ և պարտավորություններ են առաջացնում Կ-ի համար: Բոլոր նշված անձանց հետ կնքված պայմանագրերը պետք է քննարկվեն առանձին-առանձին:

1. Պայմանագրերը Գ-ի հետ⁹

Պրոֆ. Դոկտոր Ռուֆ Քնիփերի կարծիք

ա) Առաջին 10 ծաղկամանները:

Երբ Ա-ն Կ-ի անունից Գ-ի հետ առքուվաճառքի պայմանագրեր էր կնքում 10 ծաղկամանի վերաբերյալ, վերջինիս գրավոր լիազորությունն արդեն դադարել էր, իսկ լիազորագիրը Կ-ն հետ էր վերցրել: Այսպիսով, ներկայացուցչություն իրականացնելու վերաբերյալ լիազորությունը, ըստ Քաղաքացիական օրենսգրքի 321 հոդվածի, այլևս չէր գործում:

Սակայն կարող է այնպես լինել, որ ներկայացուցչություն իրականացնելու լիազորությունն առաջացել է՝ հիմք ընդունելով Քաղաքացիական օրենսգրքի 318 հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը: Անձի նման լիազորություններն առաջանում են ոչ թե գրավոր եղանակով տրված լիազորագրի հիման վրա, այլ ներկայացուցչի կողմից ներկայացվողի կազմակերպությունում ունեցած դերակատարման (զբաղեցրած դիրքի) հաշվին: Օրենքում նշված օրինակների հիմքում կարծես թե դրված է այն մոտեցումը, որ ներկայացուցիչը կազմակերպության աշխատակից է, ուստի երրորդ անձինք պետք է

⁹ Հեղինակային խմբի անդամների միջև առկա էին տարաձայնություններ՝ Գ-ի հետ կնքված պայմանագրի հետ կապված: Այդ իսկ պատճառով այստեղ ներկայացվում են երկու կարծիքներն էլ:

կարողանան վստահել վերջինիս մոտ պատշաճ լիազորության առկայությանը:

Մեր կարծիքով, նման մեկնաբանությունը չափազանց նեղ է: Սրա հիմքում պետք է լինի այն, որ գործարար շրջանառությունում գործընկերները պետք է կարողանան վստահել իրենց կոնտրագենտի մոտ պատշաճ լիազորության առկայությանը՝ առանց համապատասխան լիազորագիրն իրար ցույց տալու պարտավորության: Համապատասխան լիազորություններն ամրագրող լիազորագրի առկայության ստուգման պարտականությունը ավելորդ կերպով կուռճացնի գործարքի ծախսերը և կդժվարացնի գործարար շրջանառությունը, ուստի ճիշտ կլիներ անհրաժեշտ լիազորությունների առկայության հիմքում դնել ոչ թե ներկայացուցչի դիրքը կազմակերպության ներսում, այլ նրա՝ արտաքին աշխարհին ուղղված լիազորությունները: Քննարկվող գործում Ա-ին հանձնարարվել էր տևական ժամանակի ընթացքում գնել արվեստի առարկաներ: Սա իրավիճակ է, որը համապատասխանում է Քաղաքացիական օրենսգրքի 318 հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությանը, որից բխում է ներկայացուցչություն իրականացնելու լիազորությունը: Այսինքն՝ լիազորագրի ֆիզիկական գոյությունը կարևոր չէ: Այդուհանդերձ, Կ-ն ոչ միայն հետ է վերցրել լիազորագիրը, այլ նաև դադարեցրել է կապը Ա-ի հետ ու, ընդհանուր առմամբ, հետ կանչել ներկայացուցչություն իրականացնելու լիազորությունը: Այդպիսի հետկանչումը, ըստ Քաղաքացիական օրենսգրքի 318 հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության, դադարեցնում է նաև ներկայացուցչություն իրականացնելու լիազորությունը: Եթե Ա-ն հանդիսանար Կ-ի աշխատակից, քննարկվող հետևանքը կառաջանար Ա-ի հետ աշխատանքային հարաբերությունների դադարեցման արդյունքում: Քանի որ քննվող կոնկրետ գործով ներկայացված փաստական հանգամանքների ուսումնասիրությունից ակնհայտ է, որ Ա-ի և Կ-ի միջև առկա չեն աշխատանքային հարաբերություններ, ուստի բերված օրինակում աշխատանքային հարաբերությունների դադարեցումը հավասարազոր է գործնական հարաբերությունների դադարեցմանը, ինչը և սույն դեպքում տեղի է ունեցել: Այսպիսով, քննարկվող հարց-առաջադրանքում առկա չէ ներկայացուցչություն

իրականացնելու լիազորություն Քաղաքացիական օրենսգրքի 318 հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության իմաստով:

Սակայն վերոգրյալ մտահանգումներով մենք առաջադրված հարցին դեռևս վերջնական պատասխան չենք տվել: Անհրաժեշտ է ստուգել՝ արդյո՞ք Քաղաքացիական օրենսգրքի 325 հոդվածով սահմանված նորմից չպետք է բխի մեկ այլ արդյունք: Քաղաքացիական օրենսգրքի 325 հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ լիազորագրի վերացման մասին պետք է տեղեկացվեն ներկայացուցիչը, ինչպես նաև երրորդ անձինք, որոնց հետ ներկայացուցիչը պայմանագրեր է կնքել ներկայացվողի անունից: Գ-ն Ա-ին Կ-ի կողմից տրված հանձնարարության շրջանակներում պարբերաբար ժողովրդական արվեստի գործեր մատակարարողներից էր: Այսինքն՝ նա այդպիսի երրորդ անձ է:

Քաղաքացիական օրենսգրքի 325 հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ներկայացվողի անունից նախկին ներկայացուցչի ու երրորդ անձանց, այսինքն, օրինակ՝ Գ-ի միջև ծագած պայմանագրային հարաբերությունները վավեր են, եթե երրորդ անձը չի իմացել և չպետք է իմանար ներկայացուցչի համապատասխան լիազորությունների բացակայության մասին:

Նման իրադրություն առկա է առաջին 10 ծաղկամանների վերաբերյալ կնքված պայմանագրերի դեպքում: Ա-ն շարունակել է օգտագործել առքուվաճառքի պայմանագրի հին ձևաթերթերը: Գ-ն առիթ չի ունեցել կասկածելու վերջինիս մոտ ներկայացուցչություն իրականացնելու լիազորության գոյությանը: Նա պարտավոր չէր իմանալ համապատասխան լիազորությունների վերացման մասին: Այսպիսով, մինչ այդ սահմանված 10 ծաղկամանի մասով կնքված առքուվաճառքի պայմանագրերը, որոնց հիման վրա Գ-ն համապատասխան պայմանագրերի առարկան մատակարարել է, իսկ Կ-ն ընդունել, կնքվել են գործարքի վավերությանն առաջադրվող պահանջների պահպանմամբ, թեև Ա-ի կողմից ներկայացուցչություն իրականացնելու լիազորությունը դադարեցված էր: Գ-ն իրավունք ունի պահանջել իրեն վճարել համապատասխան ծաղկամանների մասով սահմանված պայմանագրի գինն ամբողջությամբ:

բ) Մյուս 5 ծաղկամանները:

Կ-ն հրաժարվել է վերցնել մյուս 5 ծաղկամանը: Արդյո՞ք վերջինս դրա իրավունքն ուներ: Մեր կարծիքով՝ ոչ: Գ-ի առնչությամբ իրավիճակը ոչ մի ձևով չի փոխվել: Ա-ի մոտ ներկայացուցչության իրականացման լիազորության դադարեցման մասին լուրը տարածվել էր բացառապես Կ-ի կազմակերպության ներսում: Գ-ն տեղյակ չէր Ա-ի մոտ ներկայացուցչություն իրականացնելու լիազորության վերացման մասին, երբ վերջինս իր հետ առքուվաճառքի պայմանագրեր էր կնքում Կ-ի անունից: Այսպիսով, Գ-ն իրավունք ունի Կ-ից պահանջելու, որ նա ընդունի մնացած 5 ծաղկամանն ու վճարի դրանց համար:

Նման դիրքորոշման համար կա ևս մեկ պատճառ: Այն հատկապես կարևոր է, եթե Գ-ն արդեն լսել էր Ա-ի ներկայացուցչություն իրականացնելու լիազորության դադարեցման մասին լուրերը: Երբ Կ-ն ընդունել է նախորդ 10 ծաղկամանը, թեև իրավահարաբերությունները Ա-ի հետ դադարեցվել էին, իսկ վերջինիս տրված լիազորագիրն արդեն վերացված էր, նա հաստատել է իրավունքի առկայության երևութականությունը. Կ-ն մատակարար Գ-ին հավաստիացրել էր, որ պատրաստ է շարունակել վավեր համարել առքուվաճառքի այն պայմանագրերը, որոնք Ա-ն, չնայած ներկայացուցչություն իրականացնելու լիազորության վերացմանը, կնքել էր իր անունից: Իրավունքի առկայության վերաբերյալ նման համոզմունքի առաջացման պատճառը Կ-ի՝ առաջին 10 ծաղկամանը ընդունելն է: Իրավունքի առկայության վերաբերյալ համոզմունքն ուժեղացել է շնորհիվ այն բանի, որ Կ-ն ոչինչ չի ձեռնարկել կանխելու Ա-ի կողմից առքուվաճառքի պայմանագրերի ձևաթերթերի օգտագործումը, որոնցում ինքը նշված էր որպես գնորդ: Այսինքն՝ Կ-ն առանց բավարար հոգաձության թույլ է տվել, որ Ա-ն գործի իր անունից: Իրավական շրջանառությունում իրավաչափ շահերի հավասարակշռումն էական դեր է խաղում: Առկա գործում Գ-ն իրավաչափ շահագրգռվածություն ունի, որ իր մատակարարած արտադրանքն ընդունվի: Նրա ակնկալիքներն առ այն, որ Կ-ն կշարունակի դրանք ընդունել, չնայած երկար ժամանակի ընթացքում ներկայացուցիչ հանդիսացած անձի համապատասխան լիազորությունների վերացմանը, արդարացված են այն բանով,

որ Կ-ն քննարկվող լիազորությունները դադարեցնելուց հետո ևս հանդուրժել է Ա-ի ծավալած գործունեությունը, որի իրականացման նպատակով կիրառվել են իր պայմանագրի ձևաթերթերը: Քանի դեռ Կ-ն նրան չէր հայտնել, որ այլևս նոր պայմանագրերն ու դրանց արդյունքները չի ընդունելու, Գ-ն՝ որպես պայմանագրի երկարամյա ազնիվ կողմ, կարող էր համոզված լինել, որ իրավիճակը չի փոխվի:

Այսինքն՝ նաև այն դեպքում, եթե, ենթադրենք, որ Գ-ն այնուամենայնիվ արդեն լսել էր ներկայացուցչություն իրականացնելու լիազորությունների վերացման մասին, նա, միևնույն է, իրավունք ունի պահանջելու, որ մնացյալ 5 ծաղկամանի մատակարարման արդյունքն ընդունվի, իսկ պայմանագրերի գինը վճարվի:

Արսեն Թավադյանի կարծիք

Երբ Ա-ն Կ-ի անունից Գ-ի հետ առքուվաճառքի պայմանագրեր էր կնքում 15 ծաղկամանի վերաբերյալ, գրավոր լիազորությունն արդեն դադարել էր, իսկ լիազորագիրը Կ-ն հետ էր վերցրել: Այսպիսով, ներկայացուցչություն իրականացնելու լիազորություն՝ Քաղաքացիական օրենսգրքի 321 հոդվածի իմաստով, այլևս գոյություն չուներ:

Սակայն որոշ դեպքերում լիազորություն չունեցող անձի կողմից որոշակի գործողություն կատարելն իրավունքներ և պարտականություններ է ստեղծում ներկայացվողի համար: Մասնավորապես, ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 319 հոդվածի՝ *«Այլ անձի անունից գործելու լիազորության բացակայությամբ կամ նման լիազորությունների սահմանազանցմամբ գործարքը կնքված է համարվում այն կնքած անձի անունից և ի շահ նրա, եթե մյուս անձը (ներկայացվողը) հետագայում ուղղակի հավանություն չի տալիս տվյալ գործարքին: Հետագայում ներկայացվողի կողմից գործարքին հավանություն տալը տվյալ գործարքով նրա համար քաղաքացիական իրավունքներ ու պարտականություններ է ստեղծում, փոփոխում և դադարեցնում այն կնքելու պահից»:*

Կ-ի՝ որպես իրավաբանական անձի կամքն արտահայտողի սուբյեկտ, ընդհանուր կանոնի համաձայն, հանդիսանում է նրա տնօ-

րենը: Այլ անձինք կարող են գործել իրավաբանական անձի անունից միայն լիազորագրի հիման վրա կամ եթե լիազորության առկայությունը կարող է ակնհայտորեն բխել նաև այն իրավիճակից, որում գործում է ներկայացուցիչը, օրինակ՝ մանրածախ առևտրում՝ վաճառողը, գանձապահը և այլն (« քաղաքացիական օրենսգրքի 318 հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերություն»):

Սույն կետերի վերլուծությունից ակնհայտորեն բխում է, որ եթե անձը գործել է առանց լիազորության, սակայն հետագայում ներկայացվողը, մեր դեպքում՝ իրավաբանական անձը, հավանություն է տալիս այդ գործողություններին, ապա համարվում է, որ համապատասխան գործողության արդյունքում առաջացած իրավունքը և պարտականությունը ծագել են այդ իրավաբանական անձի համար: Իրավաբանական անձի անունից որոշակի գործողությունների կատարմանն ու դրանց արդյունքներին հավանություն կարող է տալ ինչպես տնօրենը, այնպես էլ լիազորագրով հանդես եկող անձը և այն անձը, ում լիազորությունն ակնհայտորեն բխում է տվյալ իրավիճակից:

Մեր իրավիճակում Գ-ի հետ պայմանագիրը կնքելիս թեկուզ Ա-ն եղել է առանց լիազորագրի հանդես եկող անձ և, ըստ ընդհանուր կանոնի, այդ պայմանագիրը պետք է կնքված համարվի Ա-ի հետ, սակայն հետագայում Կ-ի աշխատակիցը, մասնավորապես՝ գնումների բաժնի պետը, ընդունում է Ա-ից աշխատանքները, այդ թվում՝ ընդունելով նաև 15 ծաղկամանի առքուվաճառքի պայմանագիրը:

Այս վիճակում պետք է պարզաբանել՝ արդյո՞ք այն իրավիճակից, որում գործում է Կ-ի գնումների բաժնի պետը, բխում է, որ վերջինս ունի լիազորություն: Կարծում եմ՝ դա ակնհայտ է, քանի որ համանման հանգամանքներում իրավաբանական անձանց պարագայում հենց գնումների բաժնի պետն է այն պաշտոնատար անձը, որն իրականացնում է ապրանքների հանձնման-ընդունման գործառույթները:

Ուստի կարելի է փաստել, որ թեկուզ Ա-ն չի ունեցել Կ-ի անունից գործելու լիազորություն, բայց քանի որ Կ-ի պաշտոնատար անձն ընդունել է համապատասխան կատարումը, ուստի առքուվաճառքի պայմանագրից ծագող իրավունքներն ու պարտականությունները

ծագել են հենց Կ-ի համար:

Նմանատիպ փաստերի վերաբերյալ գործ քննել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանը: Թիվ 3-1412(ՏԴ) քաղաքացիական գործով 10 հոկտեմբերի 2007թ. կայացված որոշմամբ վճռաբեկ դատարանը նշել է. «Սույն գործի փաստերի համաձայն՝ մասնավորեցման պայմանագրով որպես վաճառող հանդես է եկել ՀՀ սեփականաշնորհման նախարարությունը (հետագայում՝ Վարչությունը), որը, որպես մասնավորեցում իրականացնող պետական կառավարման լիազորված մարմին, հանդես է եկել ՀՀ կառավարության անունից: Հետևաբար՝ պայմանագրի կողմ է հանդիսացել Հայաստանի Հանրապետությունը, որն ուղղակիորեն չի հրաժարվել այդ պայմանագրից: Դեռ ավելին, այդ պայմանագրի հիման վրա ընդունելով օբյեկտի հաշվարկված գնի մասնակի վճարումները, ուղղակի հավանություն է տվել այդ գործարքին»:

Հետևաբար՝ Կ-ն չի կարող հրաժարվել Գ-ի մատակարարած ևս 5 ծաղկամանն ընդունելուց և դրանց համար վճարելուց:

2. Պայմանագրերը Բ-ի հետ

Ա-ն Կ-ի անունից Բ-ի հետ կնքել է առքուվաճառքի պայմանագրեր արվեստի գործերի վերաբերյալ, թեև Բ-ն դուրս է գտնվում այն շրջանից, որը հատկացվել էր Ա-ին: Հարց է ծագում՝ արդյո՞ք Բ-ն, չնայած այդ փաստին, պայմանագրային հարաբերությունների ուժով կապված է Կ-ի հետ և իրավունք ունի վերջինից պահանջելու ընդունել կտաժները և վճարել դրանց համար:

Լիազորագրերը կարող են սահմանափակվել բովանդակության, ժամանակի, առարկայի, տարածքի առնչությամբ: Լիազորագիր տալը կամ գործարար շրջանառությունում անձին որևէ դիրք տրամադրելն իրավահարաբերության ձևակերպման մասին մասնավոր ինքնավարությամբ բնորոշվող միակողմանի հայտարարություն է, որի ձևակերպման հարցում լիազորողը ազատ է: Ըստ այդմ՝ Կ-ն իրավունք է ունեցել Ա-ի լիազորությունը և գործունեության ոլորտը սահմանափակելու մեկ շրջանով: Ուստի Կ-ի անունից գործարքներ իրականացնելն Ա-ի կողմից քննարկվող շրջանի մասով ներկայա-

ցուցչության լիազորությամբ օժտված չէր:

Մյուս կողմից՝ Կ-ն տարիներ շարունակ հավանություն է տվել առքուվաճառքի այն պայմանագրերին, որոնք Ա-ն կնքել է իր անունից Բ-ի հետ: Նա մշտապես վերցրել է կտավները և վճարել դրանց համար, թեև պարզ էր, որ Բ-ն այն շրջանից չէ, որը հատկացվել է Ա-ին: Այսինքն՝ նույնիսկ այն դեպքում, եթե Ա-ն կնքում է պայմանագիր իր լիազորություններից դուրս, սակայն Կ-ն հավանություն է տալիս դրանց ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 319 հոդվածի 1-ին կետի հիման վրա, իրավունքներ և պարտականություններ ծագում են հենց Կ-ի համար:

Սակայն տվյալ դեպքում, բացի այն բանից, որ Ա-ն կնքել է պայմանագիր Բ-ի հետ իր տարածքից դուրս, նաև համապատասխան պայմանագրերը կնքել է լիազորության բացակայության պայմաններում: Առկա չէ որևէ փաստ, որ Կ-ն հետագայում հավանություն է տվել այդ գործարքին: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 319 հոդվածի 1-ին կետի համաձայն, գործարքը կհամարվի կնքված Բ-ի և Ա-ի միջև:

3. Պայմանագրերը Բ-ի հետ

Ա-ն Բ-ի հետ Կ-ի անունից առքուվաճառքի պայմանագիր է կնքել այնպիսի առարկաների վերաբերյալ, որոնք ակնհայտորեն չեն համապատասխանում Կ-ի պահանջներին և որոնք պետք է խաբեությամբ տրվեին նրան:

Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313 հոդվածի՝ *«խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո, մեկ կողմի ներկայացուցչի մյուս կողմի հետ չարամիտ համաձայնությամբ կնքված գործարքը, ինչպես նաև այն գործարքը, որն անձն ստիպված է եղել կնքելու ծանր հանգամանքների բերումով՝ իր համար ծայրահեղ ոչ ձեռնպուր պայմաններով, որից օգտվել է մյուս կողմը (ստրկացուցիչ գործարք), րուժողի հայցով դատարանը կարող է ճանաչել անվավեր»:*

Տվյալ դեպքում Կ-ի ներկայացուցիչ Ա-ն չարամիտ համաձայնության է եկել Բ-ի հետ՝ որոշելով կրկնօրինակ ապրանքները ներ-

կայացնել որպես բնօրինակ: Ուստի Ա-ի անունից Ք-ի կնքած գործարքները կարող են ճանաչվել անվավեր վերոնշյալ հոդվածով սահմանված իրավակարգավորումների հիման վրա, և Ք-ն չի կարող պահանջել կատարել դրանք:

Խնդիր 7

1. V-ից դաշնամուրի հանձնումը պահանջելու A-ի իրավունքը

V-ից դաշնամուրի հանձնումը պահանջելու A-ի իրավունքը գուցե կարող է բխել Քաղաքացիական օրենսգրքի 470 ու 501 հոդվածներից: Դրա նախապայմանը նրանց միջև առքուվաճառքի պայմանագրի գոյությունն է:

Քաղաքացիական օրենսգրքի 448 հոդվածի համաձայն՝ պայմանագիրը կնքված է, եթե կողմերի միջև համաձայնություն է ձեռք բերվել պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ:

Երբեմն, սակայն, պայմանագրերը կնքվում են ոչ թե մեկ անձի կողմից նախապես որոշված այլ անձի օֆերտա ուղարկելու և վերջինիս կողմից ակցեպտ ստանալու միջոցով, այլև աճուրդի ընթացքում: Պայմանագրի կնքման ձևերից է նաև Քաղաքացիական օրենսգրքի 463 հոդվածով նախատեսված սակարկությունը: Տվյալ դեպքում գործ ունենք սակարկության տարատեսակներից աճուրդի հետ, որում հաղթող է ճանաչվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը: Ճիշտ է՝ 463 հոդվածն առանձնահատուկ նշում չի պարունակում այն մասին, որ համապատասխան իրավակարգավորումը տարածվում է նաև էլեկտրոնային աճուրդների վրա, սակայն սակարկությունների օրենսդրական կարգավորումը հիմք է տալիս ենթադրելու, որ այն կարող է տարածվել էլեկտրոնային աճուրդների վրա:

Մասնավորապես, Քաղաքացիական օրենսգրքի 463 հոդվածը նշում է, որ սակարկությունների կազմակերպիչ կարող է լինել գույքի սեփականատերը, իրավունքների տիրապետողը, աշխատանքներ կամ ծառայություններ առաջարկողը, ինչպես նաև այն անձը, որը գործում է սեփականատիրոջ կամ իրավատիրոջ հետ կնքված գրավոր պայմանագրի հիման վրա և հանդես է գալիս նրանց կամ իր անունից: «5-ը հստակ նշում է, որ «AuktioNET»-ը յուրաքանչյուր դեպքում հանդես է գալիս որպես մյուս մասնակցի համար հայտարարություն ստանալու լիազորված ներկայացուցիչ: Էլեկտրոնային եղա-

նակով կնքված պայմանագիրը գրավոր պայմանագրի կնքման ձևերից մեկն է, իսկ կոնկրետ այս պայմանագրով «AuktioNET»-ը, որպես ներկայացուցիչ, հանդես է գալիս մասնակցի անունից: Հետևաբար՝ քննարկվող իրավահարաբերությունները որպես սակարկություն դիտարկելու համար բոլոր նախապայմաններն առկա են:

Այսպիսով, կարելի է պնդել, որ Քաղաքացիական օրենսգրքի 448 հոդվածի իմաստով առկա է կնքված պայմանագիր:

1.1. V-ի կողմից օֆերտայի վերաբերյալ

Քաղաքացիական օրենսգրքի 451 հոդվածի համաձայն՝ օֆերտայի առկայությունը ենթադրում է, որ այն հասցեագրվում է մեկ կամ մի քանի կոնկրետ անձանց, կաշկանդում է օֆերտա անող անձին և պարունակում է պայմանագրի էական պայմանները:

1.1.1. Կոնկրետ մարդկանց շրջանին հասցեագրված օֆերտա

Հարց է ծագում՝ համացանցում տեղադրելը պետք է որակվի որպես հասցեագրում կոնկրետ անձանց, թե՛ որպես սոսկ տեղադրողին չպարտավորեցնող հրավեր՝ ուղղված անձանց անորոշ շրջանակի՝ գնի առաջարկներ անելու վերաբերյալ: Եվ իրոք, V-ին տեղադրելու պահին պարզ չէ, թե ով դրան կարձագանքի:

Մյուս կողմից՝ նա, ընդունելով Գործարքի կնքման ընդհանուր պայմանները («§5), «AuktioNET»-ի առաջ դրական ձևով հայտարարել է, որ տեղադրումը պետք է հասկանալ որպես օֆերտա: Այդուհանդերձ, Գործարքի կնքման ընդհանուր պայմանները սկզբունքորեն գործում են միայն պայմանագրի կողմերի, այսինքն՝ V-ի ու «AuktioNET»-ի միջև և ոչ անմիջականորեն նաև հավանական գին առաջարկողների նկատմամբ, մեր դեպքում՝ «stud.iur2002»-ի նկատմամբ: Սակայն չնոռանանք, որ գին առաջարկողները նույնպես որպես մասնակից ընդունում են Գործարքի կնքման ընդհանուր պայմանները: Դա թույլ է տալիս հիմնավորված կերպով ներկայացնել այն կարծիքը, որ գին առաջարկողները և գնելու շահագրգռվածություն ունեցողներն արտահայտում են առքուվաճառքի պայմանագրում որպես կողմ ներառվելու միահամուռ մտադրություն:

Բացի դրանից, կարելի է բերել այն փաստարկը, որ համացանցում հայտարարություն տեղադրելը որպես օֆերտա որակելու սկզբունքը, ուսումնասիրվող գործի օբյեկտիվ հանգամանքներից ելնելով, թվում է՝ տեղին է: Այն համապատասխանում է համացանցում վաճառքի միջոցառումներին մասնակցող անձանց շահագրգռվածությանը, որ ի սկզբանե առաջանա որոշակի համաչափ կաշկանդվածություն և ստեղծվի իրավունքի հստակություն, քանի որ հակառակ դեպքում հարաբերությունները չափազանց համալիր բնույթ կունենան և անորոշ կմնան: Հենց այս գաղափարն է արտացոլված Գործարքի կնքման ընդհանուր պայմաններում: Բոլոր կողմերը՝ ինչպես հարթակը շահագործողները, այնպես էլ անդամները, ընդունում են այդ կառուցվածքը: Հետևաբար, կիրառելով Քաղաքացիական օրենսգրքի 447 հոդվածը, օֆերտայի՝ կայքի ակտիվացման մեջ դրսևորված V-ի հայտարարությունը պետք է մեկնաբանվի «§5-ի լույսի ներքո:

Ուստի պետք է ենթադրել, որ V-ն ցանկացել է, որ իր հայտարարությունը մեկնաբանվի որպես մյուս անդամներին արվող՝ իրեն պարտավորեցնող օֆերտա և կամեցել է դրանով ինքն իրեն կաշկանդել:

Այսպիսի մեկնաբանությունը չի հակասում Քաղաքացիական օրենսգրքի 444 հոդվածին, քանի որ վերջինս ընդունել էր «§5-ի գաղափարը, որը բխում է իր ճիշտ հասկացված շահից: Այստեղ չկա նաև մի քանի անձանց հասցեագրված օֆերտաների դեպքում սովորաբար առկա այն վտանգը, որ V-ն վերջում իր դիմաց կունենա պայմանագրի մի քանի կողմեր, քանի որ պայմանագիրը կնքվելու է միայն ամենաբարձր գին առաջարկածի հետ:

1.1.2. Պայմանագրի էական պայմանները

Օֆերտայի առկայության հաջորդ նախապայմանն այն է, որ այն պետք է պարունակի պայմանագրի բոլոր էական պայմանները:

Սա թերևս կարող է հարցական լինել այն պատճառով, որ կայքի ակտիվացման պահին դեռ պարզ չէ, թե ով է լինելու պայմանագրի մյուս կողմը: Թեպետ այդ մյուս կողմն արդեն որոշելի է, որովհետև վաճառքի միջոցառման ամբողջ կառուցվածքը հիմնված է այն բանի

վրա, որ պայմանագրի կողմը լինելու է ամենաբարձր գին առաջարկողը: Քանի որ վաճառքի ամբողջ միջոցառումն ուղղված է իրար դեռևս անձանոթ կողմերին միավորելուն, ակտիվացումը պայմանագրի վերջնական կողմի որոշելիության տեսանկյունից պետք է դիտվի որպես վավեր օֆերտա:

Բայց կարող է հարց առաջանալ՝ արդյո՞ք այս որակումը անիրավաչափ չէ, քանի որ ապրանք առաջարկողը նշում է միայն, այսպես կոչված, մեկնարկային գինը: Գնման վերջնական գնի բացակայությունը կարող է մեկնաբանվել այնպես, որ օֆերտան ոչ ամբողջական է: Բայց եկեք չմոռանանք, որ V-ն ակտիվացման միջոցով հայտարարում է, որ աճուրդի ավարտի պահին առկա առաջարկված ամենաբարձր գինը հասկանում է որպես գնման գին: Սա բավարար որոշակիություն է:

Այսպիսով, օֆերտայի կայքի ակտիվացման արդյունքում պայմանագրի էական պայմանները բավարար որոշակիությամբ առկա են, այնպես որ գործ ունենք վավեր, այսինքն՝ ուղարկողին կաշկանդող օֆերտայի հետ:

1.1.3. Օֆերտան ստանալը

Քաղաքացիական օրենսգրքի 451 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օֆերտան կաշկանդում է այն պահից, երբ հասցեատերը ստանում է այն: Օֆերտան ստացված է, եթե այն այնքան խորն է ներթափանցել հասցեատիրոջ ոլորտը, որ սովորական հանգամանքների ներքո պետք է ենթադրել, որ հասցեատերը տեղեկացված է դրա առկայության մասին: Մեր դեպքում համացանցային համապատասխան հարթակի անդամներն էլեկտրոնային եղանակով լիազորել են հարթակը շահագործողին ստանալ ապրանք առաջարկողների ծանուցումները: Դրանով Քաղաքացիական օրենսգրքի 321 հոդվածով պահանջվող գրավոր ձևը Քաղաքացիական օրենսգրքի 296 հոդվածի իմաստով պահպանված է: Օֆերտան «AuktioNET»-ի օֆերտաների կայքում տեղադրվելու շնորհիվ գրանցված բոլոր օգտատերերի անունից ընդունվել է, այսինքն՝ ստացվել է:

1.1.4. V-ի օֆերտայի իրավաչափ հետկանչը

V-ն, գուցե աճուրդը վաղաժամ ընդհատելով, հետ է կանչել իր օֆերտան: Սկզբունքորեն օֆերտայի հետկանչը, Քաղաքացիական օրենսգրքի 451 հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն, հնարավոր է, այսինքն՝ օֆերտան համարվում է չստացված, եթե հասցեատերը հետկանչի մասին ծանուցումը ստացել է օֆերտան ստանալուց առաջ կամ դրա հետ միաժամանակ:

Աճուրդի ընդհատման մասին, որը կարող է հասկացվել որպես հետկանչի ծանուցում, հայտնվել է «AuktioNET»-ին, որը, ըստ Գործարքի կնքման ընդհանուր պայմանների, «stud.iur2002»-ի կողմից լիազորված է եղել որպես ներկայացուցիչ ստանալու գին առաջարկողների հայտարարությունները, դաշնամուրն օֆերտայի կայքում տեղադրելուց ինը օր անց, այնպես որ հետկանչն այլևս ժամանակին չի հայտարարվել:

Պատկերն այլ կարող էր լինել, եթե V-ն իր օֆերտան անելիս իրեն վերապահեր հետկանչի իրավունք: Նման վերապահումը թույլատրելի և իրավաչափ կլիներ Քաղաքացիական օրենսգրքի 452 հոդվածի համաձայն: Գործարքի կնքման ընդհանուր պայմանների «§6-ում սահմանված է, որ ապրանք առաջարկողը որոշակի նախապայմանների առկայության դեպքում իրավունք ունի հետ կանչելու իր օֆերտան, ինչի դեպքում օֆերտա հայտարարողի և գին առաջարկողի միջև պայմանագիր չի առաջանում: Համացանցի հարթակի յուրաքանչյուր անդամ և վաճառքի միջոցառման յուրաքանչյուր մասնակից տեղեկացված է լինում Գործարքի կնքման ընդհանուր պայմանների մասին, ուստի օֆերտաները կարող է միայն այնպես հասկանալ, որ դրանց նկատմամբ կա հետկանչի վերապահում:

Բայց հարց է ծագում՝ արդյո՞ք V-ն քննարկվող կոնկրետ դեպքում իրավունք ուներ, ընդհատելով աճուրդը, հետ կանչել իր օֆերտան: Ըստ Գործարքի կնքման ընդհանուր պայմանների «§6-ի՝ նա նման իրավունք կարող է ունենալ, եթե ապրանքն առանց այն առաջարկողի մեղավորության այլևս չի վաճառվում կամ եթե վաճառողն իրավունք է ունեցել անվավեր դարձնել ծանուցումը, քանի որ այն վիճարկելի է եղել:

Հարց է՝ արդյո՞ք դաշնամուրը, հարևան Z-ին առանց միջնորդի վաճառվելով, այլևս չի կարող լինել առքուվաճառքի պայմանագրի առարկա: Կարծում ենք՝ նման ենթադրություն անելը ճիշտ չէ: Առքուվաճառքի պայմանագրի վավերությունը չի խաթարվում, եթե վաճառողը պարտավորվել է առարկան հանձնել ուրիշ անձի: Նույնիսկ, եթե սեփականության իրավունքն արդեն փոխանցված լիներ Z-ին, պայմանագրի վավերությունը դրանով շոշափված չէր լինի: Սա պարտավորական իրավունքի ոլորտի գործարք է, որի վավերության նախապայմանները սահմանված են Քաղաքացիական օրենսգրքի 448 ու դրան հաջորդող հոդվածներում և 470 ու դրան հաջորդող հոդվածներում: Համապատասխան իրավակարգավորումներից որևէ մեկում նշված չէ, որ առքուվաճառքի պայմանագիրը վավեր է միայն այն դեպքում, երբ վաճառողը առքուվաճառքի առարկայի սեփականատերն է: Հակառակը՝ Քաղաքացիական օրենսգրքում նախատեսված է, որ նույնիսկ դեռևս գոյություն չունեցով իրերը կամ իրավունքները կարող են լինել առքուվաճառքի պայմանագրերի առարկա: Եթե վաճառողը վաճառում է մի առարկա, որն ինքն արդեն վաճառել է մեկ այլ անձի կամ որի սեփականատերն ինքը չէ, ապա պայմանագիրը չկատարելու իրավական հետևանքը ոչ թե պայմանագրի անվավերությունն է, այլ վաճառողի պատասխանատվությունը՝ համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 408 ու դրան հաջորդող հոդվածների: Հետևաբար՝ դաշնամուրը նախկինի պես գնման ենթակա է: Բացի դրանից, V-ն գործել է մեղավորությամբ, երբ դաշնամուրը վաճառել է երկրորդ անգամ:

Այսպիսով, հետևանքի առաջին նախապայմանը, Գործարքի կնքման ընդհանուր պայմանների «§6-ի համաձայն, այն է՝ առքուվաճառքի առարկայի առաջացած անհասանելիությունն առանց այն առաջարկողի մեղավորության, առկա չէ:

Հետևանքի մյուս հնարավորությունն առկա է լինում այն ժամանակ, երբ ապրանքն առաջարկողն իրավունք է ստանում մոլորության պատճառով անվավեր դարձնել իր ծանուցումը: Բայց նման մոլորություն այստեղ չկա: Մասնավորապես, չի կարելի որպես մոլորություն որակել այն, որ V-ն ավելի բարձր գին ստանալու ակնկալիք

է ունեցել: Նա դաշնամուրը վաճառքի է դրել կամավոր կերպով և քաջատեղյակ լինելով վաճառքի միջոցառման պայմաններին: Ցածր գինը նման աճուրդի նորմալ ռիսկերի թվին է պատկանում: Այսինքն՝ այն, որ նրա ակնկալիքը չի արդարացել, չպետք է գնահատվի որպես մոլորություն Քաղաքացիական օրենսգրքի 312 հոդվածի իմաստով:

Հետևաբար՝ V-ի օֆերտան վավեր է եղել ու վավեր եղանակով հետ չի կանչվել:

1.2. A-ի կողմից օֆերտայի ընդունումը

Հնորիիվ այն բանի, որ A-ն գին է առաջարկել, առկա է Գործարքի կնքման ընդհանուր պայմանների «§5-ի փաստակազմը: Գնի առաջարկը նաև ստացվել է:

Այդուհանդերձ, հարց է ծագում՝ A-ի ու V-ի միջև պայմանագիր առաջացել է: Սկզբունքորեն օֆերտան գործում է այն օգտատիրոջ համար, որն առաջարկում է ամենաբարձր գինը: V-ի տեսանկյունից այդ օգտատերը «stud.iur2002»-ն էր: Հետևաբար՝ օֆերտան հասցեագրված է եղել համապատասխան օգտատիրոջը, այսինքն՝ B-ին:

A-ն օգտագործել է B-ի գաղտնաբառով պաշտպանված «AuktioNET» հաշվիվը և իր ակցեպտը հայտնել է՝ օգտագործելով A-ի անդամի անունը: Այսինքն՝ նա օգտագործել է ուրիշի անունն իր համար պայմանագիր կնքելու նպատակով: Այստեղ գործ ունենք ուրիշի անվան տակ հանդես գալու և գործելու հետ:

Գուցե կարելի է բերել այն փաստարկը, որ V-ի համար կարող է միևնույնը լինել, թե ով է թաքնված «stud.iur2002» անվան տակ, և թե առաջացել է արդյոք իր և այդ անունն օգտագործող անձի միջև պայմանագիր: Բայց այդպիսի փաստարկման դեպքում անտեսվում են մասնակիցների և հատկապես V-ի շահերը: Վերջինս, ինչպես և B-ն, անդամ է մի առցանց հարթակի, որի հիմքում ընկած է այն, որ ոչ իրական անունների հետևում թաքնված են առանձնահատուկ հատկություններով ու գույքային դրույթամբ անձինք, ովքեր կարող են անհատականացվել: Նրանք մտադիր են ռիսկի դիմել համացանցում վաճառքի միջոցառման այդ անձանց և ոչ թե բոլոր հնարավոր այլ անձանց հետ: Ասել է թե՛ V-ի օֆերտան հասցեագրված էր բոլոր

անդամներին, դրանց թվին պատկանում է նաև B-ն, բայց այն հասցեագրված չէր A-ին: Հետևաբար՝ A-ն չէր կարող օֆերտան ընդունել իր համար:

Այսպիսով, A-ի կողմից V-ի օֆերտայի ընդունումն անվավեր է: Նրա ու V-ի միջև առքուվաճառքի պայմանագիր կնքված չի եղել, և նա չի կարող պահանջել, որ դաշնամուրն իրեն հանձնվի:

2. V-ի հանդեպ՝ դաշնամուրն իրեն հանձնելու A-ի պահանջի իրավունքը

2.1. Ակցեպտի հայտարարությունը A-ի կողմից

Անհրաժեշտ է ստուգել՝ արդյո՞ք B-ն լիազորել է A-ին իր փոխարեն գործելու «stud.iur2002» անվան տակ համացանցում վաճառքի միջոցառումների ժամանակ: Նման լիազորություն գուցե կարելի է տեսնել այն բանում, որ A-ն հարթակ այցելելու իր տվյալները ընդհանուր բնակարանում փակցրել է համակարգչի վրա: Բայց նման վարքագծից չի կարելի եզրակացնել լիազորություն տալու մտադրության մասին, հատկապես որ A-ն միայն ինքն է համակարգիչը օգտագործում: Ի դեպ, պահպանված չէ նաև լիազորությունների տրամադրման գրավորության չափանիշը, որը սահմանված է Քաղաքացիական օրենսգրքի 321 հոդվածում: Ընդհանուր բնակարանը և անդամի անվան հասանելիությունը A-ի համար չի ստեղծում այնպիսի փաստակազմ, որը համեմատելի կլիներ Քաղաքացիական օրենսգրքի 318 հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունում նկարագրվածի հետ:

Հետևաբար՝ A-ն ակցեպտի մասին հայտարարելիս չի ունեցել ներկայացուցչական լիազորություն B-ի անունից առքուվաճառքի պայմանագիր կնքելու համար:

Բայց հարց է ծագում՝ կարո՞ղ էր B-ն թույլատրել A-ի կողմից «stud.iur2002»-ի անունից ակցեպտի մասին հայտարարություն անել: Դրա համար նախ անհրաժեշտ է, որ նա, համենայն դեպս, գործած լինի B-ի անունից, երբ գործում էր նրա անվան տակ: Նա իրավասու չէր այդպես գործել: Բայց սա առանց ներկայացուցչական լիազորու-

յան գործելու տիպիկ հատկանիշ է: Եթե հարցին նայենք V-ի տեսանկյունից, ապա նա կարող էր ենթադրած լինել, որ գործողությունները կատարվել են «stud.iur2002»-ի ու դրա հետևում թաքնված անձի անունից: Ուստի, կողմերի շահերից ելնելով, արդարացված է այն ենթադրությունը, որ առցանց հարթակում որևէ անդամի անունն օգտագործելու գործողությունները, առանց դրա իրավունքն ունենալու, կատարվում են իրական իրավատիրոջ, այսինքն՝ B-ի, անունից:

Քաղաքացիական օրենսգրքի 319 հոդվածի համաձայն՝ B-ն կարող էր հետին թվով հավանություն տալ A-ի կողմից ակցեպտի մասին «stud.iur2002»-ի անունից արված հայտարարությանը: Ճիշտ է՝ նա դա ուղղակիորեն չի արել: Բայց այն, որ մտադրություն ունեցել է, երևում է այն բանից, որ, նախ՝ ցանկանում էր ամեն ինչ անել, որ A-ն կարողանա ձեռք բերել դաշնամուրը, և երկրորդ՝ A-ի հետ գնացել է V-ի մոտ՝ դաշնամուրը պահանջելու համար:

Այսպիսով, B-ն հետին թվով թույլատրել է A-ի կողմից ակցեպտի մասին արված հայտարարությունը, այնպես որ B-ի ու V-ի միջև առուվաճառքի պայմանագիր առաջացել է:

2.2. Ոչ ճիշտ հարաբերակցությունը դաշնամուրի արժեքի ու աճուրդում օֆերտան ընդունելու առաջարկված գնի միջև

V-ն պնդում է, որ պայմանագիրն անվավեր է նաև այն պատճառով, որ A-ի կողմից առաջարկված գնի ու դաշնամուրի արժեքի միջև կա չափազանց սխալ հարաբերակցություն:

Հայաստանի Հանրապետության Քաղ. օր.-ն իր 440 հոդվածում նախատեսում է, որ կողմերն ազատ են պայմանագրի գնի մասին համաձայնության գալու հարցում: Օրենքը չի նախատեսում գործարքի անվավերության հետևանք զուտ այն պատճառով, որ ապրանքի իրական գնի և դրա դիմաց վճարման ենթակա գնի մեջ առկա է տարբերություն: Գործարքն անվավեր ճանաչելու համար, ծայրահեղ ոչ ձեռնտու պայմանների հետ մեկտեղ, ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313 հոդվածի, պետք է առկա լինի նաև փաստ, որ անձը ստիպված է եղել կնքել այդ գործարքը ծանր հանգամանքների

բերումով, իսկ մյուս կողմն օգտվել է դրանից: Խնդրում որևէ փաստ չկա, որ V-ն կնքել է գործարքը ծանր հանգամանքների բերումով: Հետևաբար՝ վերջինիս այս փաստարկն ընդունելի չի կարող լինել: Չկա նաև փաստ, որ A-ն կամ B-ն իմացել են նման ծանր հանգամանքների մասին կամ օգտվել են դրանցից:

Բացի այդ, V-ն դիմել է առցանց աճուրդի մեխանիզմին և կամավոր շատ ցածր մեկնարկային գին սահմանել: Ուստի տեղին է, որ ինքն էլ կրի այդ որոշման ռիսկը:

Այս պատճառներով B-ի ու V-ի միջև առաջացել է դաշնամուրի վերաբերյալ առքուվաճառքի պայմանագիր, և B-ն կարող է V-ից պահանջել դաշնամուրի հանձնումը՝ միաժամանակ վճարելով գնման գինը:

3. V-ից դաշնամուրը հանձնելու՝ Z-ի պահանջի իրավունքը

Z-ն գուցե կարող է V-ից պահանջել իրեն հանձնել դաշնամուրը, եթե նրանց միջև կնքվել է առքուվաճառքի վավեր պայմանագիր:

Երկուսն էլ եկել են համաձայնության այն բանի շուրջ, որ V-ն 8.000.000 ՀՀ դրամի վճարման դիմաց դաշնամուրի նկատմամբ սեփականության իրավունքը կփոխանցի Z-ին: Սրանով առկա են Քաղաքացիական օրենսգրքի 470 հոդվածով նախատեսված նախապայմանները: Ինչպես արդեն ասել ենք, այդ առքուվաճառքի պայմանագրի վավերությունը չի շոշափվում այն բանի պատճառով, որ V-ն դաշնամուրը վաճառել է նաև B-ին:

Հետևաբար՝ Z-ն իրավունք ունի V-ից պահանջելու դաշնամուրի հանձնումը՝ միաժամանակ վճարելով գնման գինը:

4. B-ից գնման գինը վճարելու V-ի պահանջի իրավունքը

V-ի ու B-ի միջև գոյություն ունի առքուվաճառքի վավեր պայմանագիր: Դրանով V-ն իրավունք ունի պահանջելու B-ից վճարել 1.000.000 ՀՀ դրամ՝ միաժամանակ դաշնամուրը հանձնելով B-ին:

5. V-ի պահանջի իրավունքը Z-ի նկատմամբ

V-ի ու Z-ի միջև գոյություն ունի վավեր առքուվաճառքի պայմանագիր: Դրանով V-ն իրավունք ունի պահանջելու Z-ից վճարել

8.000.000 ՀՀ դրամ՝ միաժամանակ դաշնամուրը հանձնելով Z-ին:

6. Հետևանքները

Քանի որ գոյություն ունի միայն մեկ դաշնամուր, հարց է ծագում՝ ո՞ւմ հանդեպ է V-ն պարտավոր կատարել իր՝ դաշնամուրը հանձնելու պարտավորությունը: Այս հարցի լուծման համար պետք է հղում կատարել Քաղաքացիական օրենսգրքի 414 հոդվածին: Այստեղ գործ ունենք անհատապես որոշվող գույքի հետ, որի պարագայում Քաղաքացիական օրենսգիրքն առանձնահատուկ կարգավորում է նախատեսում: Մասնավորապես, եթե պարտապանն անհատապես որոշվող գույքը չի հանձնում պարտատիրոջ սեփականությանը, վերջինս իրավունք ունի պահանջել, որ այդ գույքը հանձնվի իրեն:

Սակայն եթե գույքը վաճառվել է մի քանի անձի և դեռ որևէ մեկին չի հանձնվել, նախապատվության իրավունք ունի նա, ում օգտին ավելի շուտ է ծագել պարտավորությունը: Մեր դեպքում պետք է փաստել, որ Z-ի նկատմամբ պարտավորությունն ավելի վաղ է ծագել, քանի որ Z-ի ու V-ի համաձայնությունը կայացվել է ավելի վաղ, քան ավարտվել է աճուրդը: B-ի հանդեպ պարտավորությունը կծագեր, եթե աճուրդը փաստացի ավարտվեր, և նա հաղթող ճանաչվեր:

Սակայն այս դեպքում էլ B-ն իրավունք ունի V-ի դեմ վնասները, այդ թվում՝ բաց թողնված օգուտը փոխհատուցելու պահանջ ներկայացնել:

Խնդիր 8

Համաձայն Քաղ. օր.-ի 274 հոդվածի՝ Ա-ն կարող էր հետ պահանջել նկարը, եթե դեռևս լիներ դրա սեփականատերը, իսկ Բ-ն լիներ ոչ իրավաչափ տիրապետող:

Ա-ն տիրապետումը հանձնել է Բ-ին առքուվաճառքի պայմանագրի հիման վրա (Քաղաքացիական օրենսգրքի 470 հոդված), իսկ Բ-ն էլ կատարել է իր պարտականությունները: Այսպիսով, Բ-ն, Քաղաքացիական օրենսգրքի 176 հոդվածի համաձայն, դարձել է ձեռք բերված կտավի սեփականատեր: Քաղաքացիական օրենսգրքի 176 հոդվածով պահանջվում է, որ ձեռք բերվող գույքի փոխանցումը տեղի ունենա պայմանագրի հիման վրա: Փոխանցումն, անկասկած, տեղի է ունեցել: Պայմանագիր ևս առկա է: Թեև օրենքում դա ուղղակիորեն ասված չէ, բայց այդ պայմանագիրը պետք է վավեր լինի: Այստեղ անհրաժեշտ է հակիրճ ստուգել առաջարկի և առաջարկի ընդունման առկայությունը՝ պարզելու՝ օրենքով սահմանված իրավակարգավորումները պահպանվել են:

Ներկայացված երկու կողմերն էլ սխալմամբ ենթադրել են, որ կտավը պատճեն է: Անհրաժեշտ է ստուգել՝ արդյո՞ք այդ ենթադրությունը, որի թյուրությունը պարզվել է հետագայում, կարող է ազդել առքուվաճառքի պայմանագրի վավերության վրա:

Վավերությունը ժխտելու հնարավորություն կարելի է փնտրել Քաղաքացիական օրենսգրքի 467 հոդվածում: Նշյալ հոդվածը թույլատրում է կողմերի միջև կնքված պայմանագիրը փոփոխել կամ լուծել հանգամանքների էական փոփոխության դեպքում: Հնարավոր ենք համարում պնդել, որ բնօրինակի և պատճենի միջև տարբերության հանգամանքն էական է: Երկու կողմերն էլ, պայմանագիրը կնքելիս, ենթադրել են, որ գործ ունեն պատճենի հետ: Չնայած դրան՝ քաղաքացիական օրենսգրքի 467 հոդվածը քննարկվող կոնկրետ դեպքում կիրառելի չէ, քանի որ դրա կարգավորման համաձայն՝ համապատասխան հանգամանքները պետք է փոփոխված լինեն պայմանագիրը կնքելուց հետո: Մինչդեռ այստեղ իրավիճակն այլ է: Կտավը բնօրինակ է եղել ի սկզբանե՝ նախքան պայմանագիր կնքելը: Այս հանգամանքը չի փոխվել: Փոխվել է մի-

այն դրա վերաբերյալ պայմանագրի կողմերի իմացությունը, որպիսի փոփոխությունը, մեր կարծիքով, «հանգամանքների փոփոխություն» հասկացության մեջ ընդգրկված չէ:

Պայմանագրի վիճարկման մեկ այլ հնարավորություն գուցե կարող է լինել Քաղաքացիական օրենսգրքի 312 հոդվածով նախատեսված հիմքը: Ա-ն սխալվել է, երբ ենթադրել է, որ կտավը պատճեն է, բայց այդ փաստը չի փոխվում նրանից, որ սխալվել է նաև Բ-ն: Այն հանգամանքը, որ պայմանագրի առարկան բնօրինակի փոխարեն կրկնօրինակն է, պայմանագրի առարկայի էական հատկություն է, քանի որ վճռորոշ նշանակություն ունի նկարի արժեքի, այսինքն՝ պայմանագրի գնի որոշման համար:

Ուստի Ա-ն կարող է վիճարկել կնքված պայմանագիրը: Քաղաքացիական օրենսգրքի 317 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատական կարգով վիճարկումը պետք է կատարվի մեկ տարվա ընթացքում՝ այն օրվանից սկսած, երբ Ա-ն իմացել էր կամ պարտավոր էր իմանալ գործարքն անվավեր ճանաչելու համար հիմք ծառայող հանգամանքների, այն է՝ իր մոլորության մասին:

Պայմանագրի անվավեր ճանաչման համար նա, Քաղաքացիական օրենսգրքի 303 հոդվածի համաձայն, պարտավոր է դիմել դատարան, որպեսզի վերջինս ճանաչի պայմանագրի անվավերությունը: Եթե դատարանը գործարքը ճանաչի անվավեր, ապա, Քաղաքացիական օրենսգրքի 304 հոդվածի համաձայն, այն անվավեր կդիտվի կնքման պահից: Նույն հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ գործարքի անվավերության դեպքում կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը, իսկ ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում (ներառյալ՝ երբ ստացածն արտահայտվում է գույքից օգտվելու, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության ձևով) հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ նախատեսված չեն օրենքով:

Գործարքը կնքման պահից անվավեր ճանաչելու դեպքում կարող ենք փաստել, որ Բ-ն սեփականատեր չի դարձել, սեփականատեր մնացել է Ա-ն:

Խնդրի լուծման ժամանակ քննարկվող այլ հիմքեր:

Քաղաքացիական օրենսգրքի 274 հոդվածից բխող՝ անձի սեփականությունը հետ պահանջելու իրավունքի ներկայացման համար պայման է, որ գտնվի Բ-ի ապօրինի տիրապետման ակտ: Գուցե Բ-ն կարող է վկայակոչել առքուվաճառքի պայմանագրի առկայությունը՝ որպես գույքը տիրապետելու իրավական հիմք, սակայն վերոգրյալ դեպքում վերջինս դա անել չի կարող, քանի որ պայմանագիրը համարվում է անվավեր կնքման պահից: Ուստի Բ-ն չի կարող գույքը հետ պահանջելու իրավունքին հակադրել իր օրինական կարգով տիրապետման իրավունքը:

Արդյունքում Ա-ն կարող է Քաղաքացիական օրենսգրքի 274 հոդվածի հիման վրա հետ պահանջել կտավը: Բ-ն էլ իր հերթին կարող է պահանջել, որ նրան վերադարձվի վճարված գումարը:

Դատավարական առումով Ա-ին, բացի դրանից, պետք է խորհուրդ տալ, որ իր պայմանագրի անվավերության ճանաչման պահանջի մասին հայցը կապի նկարը հետ պահանջելու պահանջի հետ:

Ա-ն և Բ-ն պայմանագրի կնքման պահին բարեխիղճ մոլորության մեջ են եղել: Տեսականորեն Բ-ն ևս կարող է պայմանագիրը վիճարկել, սակայն նա դա, անշուշտ, չի անի: Բ-ն, թերևս, կարող է Քաղաքացիական օրենսգրքի 312 հոդվածի 2-րդ մասի հիման վրա Ա-ից ստանալ այն վնասի հատուցումը, որը պատճառվել է իրեն պայմանագրի վիճարկման հետևանքով: Խոսքն այն ծախսերի մասին է, որոնք առաջացել են պայմանագրի վերաբերյալ բանակցությունների, կտավը տանելու և նոր շրջանակի մեջ դնելու հետևանքով: Քաղաքացիական օրենսգրքի 312 հոդվածի 2-րդ մասով միայն պահանջվում է, որ գործարքը ճանաչված լինի անվավեր: Քննարկվող դեպքում հավանական է դատարանի կողմից համապատասխան փաստի հաստատման վերաբերյալ դատական ակտ կայացնելը: Մյուս հանգամանքները, որոնք հանգեցրել են պայմանագրի վիճարկմանը, օրինակ՝ վիճարկողի բարեխիղճությունը կամ անբարեխիղճությունը, կարևոր չեն:

Քաղաքացիական օրենսգրքի 274 հոդվածից բխող վինդիկացիայի իրավունքին զուգահեռ, Ա-ն կարող է նկարը հետ պահանջել

նաև Քաղաքացիական օրենսգրքի 1092 հոդվածի հիման վրա:

Քաղաքացիական օրենսգրքի 1092 հոդվածից բխող պահանջի իրավունքի նախապայմանն այն է, որ Բ-ն կտավը Ա-ից ստացած լինի առանց իրավական հիմքի և դրա շնորհիվ հարստացած լինի Ա-ի հաշվին:

Քաղաքացիական օրենսգրքի 1093 հոդվածը հստակեցնում է, որ անհիմն հարստացումից բխող պահանջի իրավունքը տարածվում է նաև անվավեր գործարքով կատարվածը վերադարձնելու պահանջների վրա:

Այստեղ գործ ունենք հենց այսպիսի իրադրության հետ: Վիճարկումից հետո առքուվաճառքի պայմանագիրը ի սկզբանե համարվում է անվավեր, ուստի Բ-ն պարտավոր է վերադարձնել կտավը Ա-ին, իսկ Ա-ն՝ պայմանագրի գինը Բ-ին:

Խնդիր 9

ԱՄ-ն իրավունք ունի ԼՍ-ից պահանջելու իրեն փոխանցել ականջակալների նկատմամբ սեփականության իրավունքը՝ Քաղաքացիական օրենսգրքի 470/472 հոդվածների հիման վրա: Դրա նախապայմանն այն է, որ նրանց միջև պետք է կնքված լիներ առքուվաճառքի վավեր պայմանագիր, որն անվավեր չի դարձել:

Քաղաքացիական օրենսգրքի 448 հոդվածի համաձայն՝ պայմանագիրը կնքված համարելու համար անհրաժեշտ է, որ առաջարկն արված և ընդունված լինի:

1. ԼՍ-ի կողմից արված առաջարկը

Որպես ԼՍ-ի կողմից արված առաջարկ գուցե կարելի է դիտել ականջակալները ցուցափեղկում ցուցադրելը: Քաղաքացիական օրենսգրքի 451 հոդվածի համաձայն՝ առաջարկը կարող է ուղղված լինել մեկ կամ մի քանի որոշակի անձանց: Միաժամանակ պետք է որոշակիորեն արտահայտված լինի առաջարկողի կամքը՝ իր վարքագծով պարտավորված լինելու վերաբերյալ: Քաղաքացիական օրենսգրքի 510 հոդվածը սահմանում է, որ ապրանքի ցուցադրումը ցուցափեղկում պետք է որակվի որպես հրապարակային օֆերտա: Հենց այս դեպքի հետ էլ այստեղ գործ ունենք: Սրա որակումն այն է, որ ԼՍ-ն ուզում է ականջակալները վաճառել 35.000 ՀՀ դրամով:

Այսպիսով, ականջակալների ցուցադրումը պետք է հասկանալ որպես ԼՍ-ի առաջարկ յուրաքանչյուր հաճախորդի՝ ականջակալները 35.000 ՀՀ դրամով վաճառելու մասին:

2. ԱՄ-ի կողմից արված առաջարկը

ԱՄ-ն հստակ հասկացրել է, որ ուզում է ականջակալները գնել: Բացի դրանից, նա նաև իր կողմից ցանկալի գին է նշել 25.000 ՀՀ դրամը, ուստի հարկ է պարզել՝ արդյո՞ք այդ հայտարարությունը Քաղաքացիական օրենսգրքի 451 հոդվածի իմաստով պետք է որակվի որպես ակցեպտ: Քաղաքացիական օրենսգրքի 454 հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը պահանջում է, որ ակցեպտը լինի լրիվ

և անվերապահ: Բայց ԱՄ-ն ոչ թե պարզապես ընդունել է օֆերտան, այլ հայտարարել է, որ ականջակալներն ուզում է գնել ուրիշ գնով: Այսինքն՝ նա չի ընդունել պայմանագրի էական պայմաններից մեկը, ուստի նրա ակցեպտն անվերապահ չէ: Հետևաբար՝ քաղաքացիական օրենսգրքի 459 հոդվածի 1-ին մասի իմաստով սույն իրավահարաբերություններում ակցեպտ առկա չէ: Այնուամենայնիվ, ԱՄ-ն հստակ արտահայտել է իր ցանկությունը՝ ականջակալները գնել 25.000 ՀՀ դրամով: Քաղաքացիական օրենսգրքի 459 հոդվածի 2-րդ պարբերության իմաստով այնպիսի համաձայնությունը, որը պարունակում է պայմանագրի էական պայմանները, այն է՝ գնման առարկայի անվանումը և գնման գնի նշումը, պետք է որակել որպես նոր ակցեպտ ԱՄ-ի կողմից: Այդ հայտարարությունը ԼՍ-ին ուղղվել է բանավոր, ուստի առկա է նաև Քաղաքացիական օրենսգրքի 448 հոդվածի 2-րդ մասով պահանջվող առաջարկի ստացումը: Այսինքն՝ ԱՄ-ն ականջակալները գնելու առաջարկ (օֆերտա) է արել:

Այդուհանդերձ, ԱՄ-ն ընդամենը 13 տարեկան է, ուստի Քաղաքացիական օրենսգրքի 29 հոդվածի համաձայն, նրա գործունակությունը սահմանափակված է: Քաղաքացիական օրենսգրքի 309 հոդվածի համաձայն՝ փոքրահասակների կնքած գործարքներն առոչինչ են, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք ուղղված են փոքրահասակներին անհատույց օգուտ տալուն, մանր կենցաղային գործարքներ են կամ օրինական ներկայացուցչի կողմից ազատորեն տնօրինելու համար իրենց տրամադրված միջոցները տնօրինելու գործարքներ են (Քաղաքացիական օրենսգրքի 29 հոդված), կամ օրինական ներկայացուցիչը թույլատրել է գործարքն այն պատճառով, որ այն բխում է փոքրահասակի շահերից:

Քննարկվող գործում ԱՄ-ն ականջակալների առքուվաճառքի գործարք կնքելու առաջարկ է արել ու դրանով պարտավորվել է վճարել որոշակի գնման գին, որը կազմել է նրա հավաքած գումարը: Նման գործարքը դուրս է գալիս մանր կենցաղային գործարքների շրջանակից: Բացի դրանից, նա պարտավորվել է վճարել գնման գինը, ուստի միանշանակ չէ այն հանգամանքը, որ վերջինս միայն օգուտ է ստանալու:

Այդուհանդերձ, ԱՄ-ն ցանկացել է ականջակալները ձեռք բերել այն գումարով, որը նրա օրինական ներկայացուցչի կողմից ազատ տնօրինման համար տրամադրվել է նրան որպես գրպանի գումար: Այն հանգամանքը, որ նա գումարը հավաքել է, ինչի արդյունքում այն գերազանցում է որպես գրպանի ծախսի փող միանվագ վճարվող գումարի չափը, իրենից վնաս չի ներկայացնում: Օրենքի նպատակն է պաշտպանել անչափահասներին այնպիսի գործարքներից, որոնց էությունը հասկանալը նրանց ուժերից վեր է: Այն փաստը, որ նա խնայում է գրպանի գումարը, հետագայում համեմատաբար խոշոր գնում կատարելու նպատակով, վկայում է այն մասին, որ նա ունակ է հասկանալու գործարքի էությունը: Այսպիսով, խնայված գրպանի ծախսի գումարով կատարված համեմատաբար խոշոր գնումները դասվում են Քաղաքացիական օրենսգրքի 29 հոդվածի 2-րդ մասի 3-կետում նախատեսված բացառությունների շարքին:

Բացի դրանից, ՎՄ-ն որպես օրինական ներկայացուցիչ թույլատրել է ականջակալների գնումը՝ համարելով, որ այն բխում է ԱՄ-ի շահերից: Նա համաձայն է եղել գրպանի ծախսի գումարն այդպես օգտագործելուն:

Հետևաբար՝ ԱՄ-ի՝ առաջարկի վերաբերյալ կամարտահայտությունը վավեր է:

3. Ընդունումը ԼՍ-ի կողմից

ա) ԼՍ-ի վարքագիծը:

Հարց է ծագում՝ արդյո՞ք ԼՍ-ն ընդունել է առաջարկն ըստ Քաղաքացիական օրենսգրքի 454 հոդվածի: Կարծում ենք, որ հնարավոր կլիներ պնդել ԼՍ-ի կողմից համապատասխան առաջարկի ընդունումը, եթե նա առանց վերապահումների համաձայն լիներ ԱՄ-ի առաջարկած պայմանագրի պայմաններին: Ճիշտ է՝ նա գումարը վերցրել է, բայց միաժամանակ հայտարարել է, որ դեռ ուզում է մտածել: Այդքան հստակ արտահայտված միտքը չի կարող մեկնաբանվել որպես ընդունում:

բ) ՆԱ-ի վարքագիծը:

ՆԱ-ի վարքագիծը գուցե կարելի է ուղղակիորեն վերագրել ԼԱ-ին, եթե վերջինս գործել է որպես ՆԱ-ի ներկայացուցիչ:

Նախ՝ պետք է քննել այն հարցը՝ ՆԱ-ն, որպես 15-ամյա անչափահաս, ընդհանրապես կարող է օրենքով սահմանված կարգով ունենալ ներկայացուցչի լիազորություն: Քաղաքացիական օրենսգրքի 30 հոդվածի համաձայն՝ 15-ամյա անչափահասը սահմանափակ գործունակություն ունի: Թվում է, թե Քաղաքացիական օրենսգրքի 324 հոդվածի 1-ին մասի 7-րդ կետից հետևում է, որ սահմանափակ գործունակ անձանց տրված ներկայացուցչի լիազորությունն անվավեր է:

Այսուհանդերձ, Քաղաքացիական օրենսգրքի 30 ու 310 հոդվածներից բխում է, որ 15-ամյա անձինք արդեն կարող են ունակ լինել կնքելու գործարքներ: Նրանք կարող են մտնել վարձատրությամբ աշխատանքային հարաբերության մեջ և ունակ են ազատորեն տնօրինելու իրենց վարձատրությունը: Բացի դրանից, նրանց կնքված գործարքները կարող են ամբողջությամբ թույլատրվել նրանց օրինական ներկայացուցիչների կողմից:

Առկա գործում ԼԱ-ն իր որդուն աշխատանքի է ընդունել խանութում, ուստի նրան օժտել է համապատասխան լիազորություններով: Դրանով նա ցույց է տվել, որ անչափահաս որդին իրավունք ունի ինքնուրույնաբար կնքել խանութում առաջացող գործարքները, այն էլ ոչ միայն սեփական անունից, այլ նաև ԼԱ-ի անունից՝ որպես նրա ներկայացուցիչ: Այս պարագայում անչափահասությունը ներկայացուցչական լիազորությունն անվավեր դարձնելու հիմք չէ: Սա բխում է որդուն լիազորելու մասին ուղղակիորեն և հրապարակայնորեն արված հայտարարությունից, ինչպես նաև այն փաստից, որ ՆԱ-ն աշխատում է ԼԱ-ի խանութում որպես վաճառող (Քաղաքացիական օրենսգրքի 318 հոդված):

Երբ ՆԱ-ն ԳՄ-ին ասել է, որ ԱՄ-ն կարող է ձեռք բերել ականջակալները 25000 ՀՀ դրամով, նա հստակորեն գործել է ԼԱ-ի անունից, ուստի նույն կերպով առանց որևէ վերապահման ընդունել է ականջակալները 25000 ՀՀ դրամով գնելու ԱՄ-ի օֆերտան: Ընդ

որում՝ սա կատարվել է նաև ԱՄ-ի նշած ժամկետում, որը լրացած կլիներ միայն 2015թ. փետրվարի 6-ի երեկոյան: Հետևաբար՝ առաջարկը վավեր էր:

Այդուհանդերձ, հարց է առաջանում՝ արդյո՞ք ՆՍ-ն 2015թ. փետրվարի 6-ին որպես ներկայացուցիչ գործելու իրավունք ուներ: Ներկայացուցչական իրավասությունը հիմնված էր ինչպես լիազորության, այնպես էլ ԼՍ-ի խանութում ՆՍ-ի դիրքի վրա:

Լիազորությունը սահմանվել էր գրավոր և հրապարակվել էր: ԼՍ-ն բանավոր վերացրել էր այդ լիազորությունը ՆՍ-ի հետ անձնական զրույցի ժամանակ: Հետևաբար՝ ՆՍ-ն տեղյակ էր, որ զրկված է համապատասխան լիազորությունից: Դրանով լիազորությունը, Քաղաքացիական օրենսգրքի 324 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն, դադարել էր: Մյուս կողմից՝ ԼՍ-ն լիազորությունը տվել էր հրապարակային հայտարարությամբ: Դրանով նա ստեղծել էր վստահության փաստակազմ: ԱՄ-ն կարող էր ոչինչ չհիմանալ այն մասին, որ ՆՍ-ի լիազորությունները դադարել են:

Քաղաքացիական օրենսգրքի 325 հոդվածի համաձայն՝ լիազորագրի դադարեցման հետևանքները չպետք է առաջանան, քանի դեռ լիազորվածն ինքը չի իմացել, որ լիազորագիրը վերացվել է: Հետևաբար՝ պետք է ստուգել՝ 325 հոդվածի այդպիսի նեղ մեկնաբանումը հաշվի առնո՞ւմ է արդյո՞ք տարբեր շահեր: Քաղաքացիական օրենսգրքի 325 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը պաշտպանում է նաև այն երրորդ անձի իրավունքներն ու օրինական շահերը, ով չի իմացել լիազորագրի դադարեցման մասին: Այս դրույթը միանշանակ չի ձևակերպված: Այն իմաստ ունի միայն այն դեպքում, եթե պաշտպանվում են այն երրորդ անձանց շահերը, ովքեր արդարացիորեն վստահել են լիազորագրի գոյությանն ու երբ այդ վստահությունը հիմնված է եղել լիազորողի վարքագծի վրա: Դա կարող է տեղի ունենալ սոսկ այն բանի շնորհիվ, որ հրապարակայնորեն հայտարարված լիազորման դեպքում երրորդ անձինք կարող են վստահել լիազորության գոյությանը, եթե այն հրապարակայնորեն չի վերացվել: 325 հոդվածի ցանկացած ուրիշ մեկնաբանություն անպատշաճ եղանակով կսահմանափակեր գործարար շրջանառության դյու-

րությունը: Քանի դեռ ԼՍ-ն հրապարակայնորեն չի վերացրել ՆՍ-ին տրված լիազորությունը, ինքը (ԼՍ) չի կարող բարեխղճորեն գործած ԱՄ-ի առջև վկայակոչել լիազորագրի վերացումը:

Ներկայացուցչական իրավասությունը, բացի դրանից, հիմնված է եղել նաև ԼՍ-ի խանութում ՆՍ-ի դիրքի վրա: Քաղաքացիական օրենսգրքի 318 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հաճախորդի վստահությունը ներկայացուցչական լիազորության գոյությանը պաշտպանված է նաև այն բանով, որ նա պետք է կարողանա վստահել, որ խանութի աշխատողները նույնպես իրավունք ունեն խանութի տիրոջ անունից իրավաչափորեն տնօրինելու ապրանքները: ԱՄ-ն գիտեր, որ իրեն ծանոթ ՆՍ-ն աշխատում է հոր խանութում: Հիմք չկա ենթադրելու, որ այդ աշխատանքային հարաբերությունն ավարտված է: Ըստ այդմ՝ ներկայացուցչական լիազորությունը, Քաղաքացիական օրենսգրքի 318 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն, ուժի մեջ է մնում:

Հարց է, թե ներկայացուցչական լիազորությունն ընդգրկում է արդյոք նաև այն հայտարարությունները, որոնք, ինչպես մեր դեպքում, արվում են խանութից դուրս: ԱՄ-ն, ինչպես և ԳՄ-ն, հաճախակի եղել էր ԼՍ-ի խանութում: Նա ծանոթ էր այնտեղի հարաբերություններին և գիտեր, որ ՆՍ-ն աշխատում է խանութում: Ներկայացուցչական լիազորության առաջացման համար կարևորը ՆՍ-ի այդ դիրքն է և ոչ թե այն վայրը, որտեղ այդ լիազորությունն իրականացվում է: Ներկայացուցչական լիազորության գոյության մասին ենթադրությունը հենվում է ոչ թե տարածքային իրադրության, այլ այն հարաբերության վրա, որը կա վաճառողի ու խանութի տիրոջ միջև: Ճիշտ է՝ այդ հարաբերությունը հիմնված է խանութում աշխատելու փաստի վրա, սակայն նա, ով ԱՄ-ի կամ էլ ԳՄ-ի նման տեղյակ է այդ դիրքից, կարող է վստահել այդ դիրքի գոյությանը նաև (խանութի) տարածքից դուրս: Ըստ այդմ՝ առաջարկի՝ քաղաքի կենտրոնում արտահայտված ընդունումը Քաղաքացիական օրենսգրքի 318 հոդվածի իմաստով պետք է դիտվի որպես վաճառողի կողմից իր ներկայացուցչական լիազորության շրջանակում տրված համաձայնություն:

Արդյունքում՝ ՆԱ-ն իր ներկայացուցչական լիազորության շրջանակում ԼԱ-ի անունից ընդունել է առքուվաճառքի պայմանագիր կնքելու ԱՄ-ի օֆերտան:

գ) ԱՄ-ի կողմից ակցեպտն ստանալը:

ՆԱ-ն հայտարարել է ԳՄ-ին և ոչ թե ԱՄ-ին, որ ընդունում է առաջարկը: Գործարքները վավեր են դառնում, երբ արտահայտվում են, այսինքն՝ երբ գործարքի մյուս կողմը ստանում է դրանք: Հարց է ծագում՝ արդյո՞ք այդպես էլ եղել է, երբ ՆԱ-ն իր հայտարարությունը արել է ԳՄ-ին, ով նույնիսկ մոռացել էր այդ մասին հայտնել ԱՄ-ին:

Ընդունումն անվերապահորեն ստացված կհամարվեր, եթե հնարավոր լիներ ԳՄ-ին որակել որպես ԱՄ-ի ներկայացուցիչ: Դրա համար ԳՄ-ն պետք է լիազորություն ունենար: Նրան լիազորություն չի տրվել: Նա՝ որպես տատ, նաև օրինական ներկայացուցիչ չէ, քանի որ քննարկվող դեպքում առկա է ծնողական իրավունքներով օժտված հայրը, ով էլ հենց ԱՄ-ի օրինական ներկայացուցիչն է: Հետևաբար, քանի որ ԳՄ-ն չունի ներկայացուցչի լիազորություն, նա չի կարող լինել որպես օֆերտայի ընդունումը ստացած:

Սակայն գուցե ԳՄ-ին կարելի է որակել որպես ստացման մասին հաղորդող, որը պարզապես ընդունում է կամարտահայտությունը և այն անփոփոխ վիճակում փոխանցում իրական հասցեատիրոջը: Այդ դեպքում ԱՄ-ին կարելի է որոշ չափով համեմատել գրավոր լուր ստացողի հետ, որը սուրհանդակը, առանց ինքնուրույն գործողություններ կատարելու, պարզապես հանձնում է հասցեատիրոջը: Միայն թե այս դեպքում գրավորությունը փոխարինվել է բանավորությամբ:

Թեև սա Քաղաքացիական օրենսգրքում ուղղակիորեն կարգավորված չէ, հիմք չկա կասկածելու կամարտահայտության այդպիսի փոխանցման թույլատրելիությանը, քանի որ, ի վերջո, կարևորն այն է, որ կամարտահայտություններն արվեն և տեղ հասնեն:

Բայց մեր դեպքում հարցական է, արդյո՞ք ՆԱ-ի հայտարարությունն իսկապես հասել է ԱՄ-ին: Այն, որ ԳՄ-ն այդ կամարտահայտությունը ստացել է, բավական չէ, որովհետև վերջինս չունի ներկայացուցչական

լիազորություն: Կամարտահայտությունն այն ժամանակ տեղ հասած կլիներ, երբ ԳՄ-ն լուրը փոխանցած լիներ ԱՄ-ին: Մինչդեռ նա այդ մասին մոռացել էր մինչև ԼՍ-ի հետ զրույցի պահը: Քանի որ կամարտահայտությունը միայն այն ժամանակ է հասնում հասցեատիրոջը, երբ նա նորմալ պարագայում կարող է այդ մասին տեղեկանալ, այստեղ ներկայացված դեպքում միայն այն ժամանակ կարելի է պնդել, որ ԱՄ-ն ստացել է իր առաջարկի ընդունումը, երբ ԳՄ-ն նրան ամեն ինչ պատմել է:

Լուրը տեղ հասնելու պահը դեռևս այն ժամկետի մեջ է, որը ԱՄ-ն սահմանել էր ԼՍ-ին իր գնելու օֆերտան անելիս: Նման ժամկետ սահմանելը, չնայած ԱՄ-ի անչափահասությանը, թույլատրելի է, որովհետև դա մի տարր է այն գործարքի շրջանակում, որը կնքելու իրավունք ուներ ԱՄ-ն:

Այդուհանդերձ, կարող է հարց ծագել՝ արդյո՞ք ԼՍ-ի հայտարարությունը պետք է գնահատվի որպես օֆերտայի այն ակցեպտի հետևանք, որը նույն օրը առավոտյան ԼՍ-ի անունից հայտարարել էր ՆՍ-ն: Քաղաքացիական օրենսգրքի 455 հոդվածի համաձայն՝ եթե ակցեպտի հետևանքը առաջարկողին հայտարարվում է ակցեպտից առաջ կամ դրա հետ միաժամանակ, ապա ակցեպտը համարվում է չստացված: Բայց կրկնենք, որ կամարտահայտությունն արվել է ոչ թե ԱՄ-ին, այլ ԳՄ-ին: Այսպիսով, ակցեպտի հետևանքն այն պահին այն ԱՄ-ին դեռ չէր հասել: Ակցեպտը հասնում է ԱՄ-ին միայն այն պահին, երբ ԳՄ-ն ամեն ինչ պատմում է նրան: Հետևաբար՝ կարելի էր ենթադրել, որ ԱՄ-ն նույն պահին իմանում է և Բ ակցեպտի, և Բ դրա հետևանքի մասին, այնպես որ ակցեպտը համարվում է հետևանքված: Բայց նման դիրքորոշումը հաշվի չէր առնի իրականում տեղի ունեցածը՝ ի վնաս առաջարկող ԱՄ-ի: Թեև ստացումը միաժամանակ է տեղի ունենում, անհրաժեշտ է հաշվի առնել, որ լուրն ստացած ԳՄ-ն ակցեպտի մասին ծանուցումը և հետևանքի ծանուցումն ստացել է տարբեր պահերի: Ըստ այդմ՝ պետք է համարվի, որ ակցեպտի հետևանքի մասին ծանուցումը ստացվել է միայն ակցեպտից հետո, այսինքն՝ ուշացած է:

Հետևաբար՝ ակցեպտը ծանուցվել է վավեր եղանակով և 25000 ՀՀ դրամով ականջակալների առքուվաճառքի պայմանագիրը կնք-

ված է վավեր եղանակով:

4. Առքուվաճառքի անվավերությունը մոլորության պատճառով:

Հարց է՝ արդյո՞ք ԼՍ-ն կարող է պնդել առքուվաճառքի անվավերությունը Քաղաքացիական օրենսգրքի 312 հոդվածով տրված կարգավորումների հիման վրա: Դա հնարավոր կլիներ, եթե առկա լիներ մոլորություն գործարքի բնույթի կամ դրա առարկայի այնպիսի հատկությունների մասին, որոնք զգալիորեն նվազեցնում են դրա նպատակային օգտագործման հնարավորությունները:

Սկզբում պետք է քննել այն հարցը՝ արդյո՞ք կարող է ԼՍ-ն ընդհանրապես վկայակոչել մոլորության առկայությունն այն պատճառով, որ մոլորվել է ոչ թե ինքը, այլ ՆՍ-ն:

ՆՍ-ն գործել է իր ներկայացուցչական լիազորության շրջանակում: Նրա բոլոր գործողությունները պետք է վերագրվեն ներկայացվողին, ընդ որում՝ ինչպես նրա իրավունքների, այնպես էլ նրա պարտականությունների սահմանման հարցում: Այս կանոնից բացառություն չեն կազմում նաև կամարտահայտության տարրերը: Մոլորությունը պատկանում է այն տարրերի թվին, որոնք ազդում են կամարտահայտության վրա: Ուստի, որպեսզի մոլորությունն էական նշանակություն ունենա, ներկայացուցիչը պետք է մոլորված լինի: Հետևաբար՝ ԼՍ-ն կարող է վկայակոչել ՆՍ-ի մոլորությունը:

Ապա նաև պետք է քննել այն հարցը, թե արդյո՞ք ՆՍ-ի ենթադրությունը, որ ԱՄ-ի ուզած ականջակալները հին մոդելի են, ուստի 25000 ՀՀ դրամը արդարացված գին է, Քաղաքացիական օրենսգրքի 312 հոդվածի իմաստով պետք է որակվի որպես մոլորություն:

Գործարքի բնույթի վերաբերյալ մոլորությունն ակնհայտորեն առկա չէ: ՆՍ-ն գիտեր, որ գործ ունի առքուվաճառքի պայմանագրի հետ:

Առկա չէ նաև մոլորություն առքուվաճառքի պայմանագրի վերաբերյալ: Բոլոր մասնակիցներին, այդ թվում՝ ՆՍ-ին, պարզ է եղել, որ պայմանագրի առարկան ցուցափեղկում ցուցադրված ականջակալներն էին:

Այդուհանդերձ, ՆՍ-ն ենթադրել էր, որ ցուցադրված ականջակալները հին մոդելի են: Հարց է ծագում, արդյո՞ք արտադրման ամսաթիվն ու սերիական արտադրություն ունեցող տեխնիկական արտադրանքի այս կամ այն փոփոխությունը այնպիսի հատկություններ են, որոնք զգալիորեն նվազեցնում են դրա նպատակային օգտագործման հնարավորությունը: Մի կողմից պետք է ենթադրել, որ հին մոդելը պակաս պիտանի չէ օգտագործման համար, քան նորը: Մյուս կողմից՝ հենց ականջակալների նման մոդայիկ ապրանքների դեպքում հին կամ նոր մոդել լինելն է էապես որոշում արտադրանքի արժեքը սպառողի համար: Սպառողը միշտ էլ գերադասում է նորագույնը: Վերավաճառքի գինը նույնպես էապես կախված է նոր կամ հին մոդել լինելուց: Այսպիսով, թեև գուցե նոր մոդելի ականջակալների տեխնիկական արժեքն ավելի բարձր չէ, քան ավելի հին մոդելինը, սակայն մոդելի նոր լինելը կարևոր դեր է խաղում շուկայում իրացման հնարավորության համար: ԼՍ-ն նոր մոդելը կարող է վաճառել ավելի բարձր գնով, քան հինը: Հետևաբար՝ սերիական արտադրություն ունեցող արտադրանքի նոր լինելը վաճառողի, ինչպես նաև գնորդի համար այնպիսի հատկություն է, որը էապես ազդում է դրա նպատակային օգտագործման վրա: Սա հետևում է նաև մասնակիցների ակնկալիքներից. ԱՄ-ն անպայման ուզում էր ունենալ նորագույն մոդելը, իսկ ԼՍ-ն էլ իրոք կարող էր նորագույն մոդելը վաճառել ավելի բարձր շուկայական գնով:

5. Արդյունքը:

Այսպիսով, ՆՍ-ի մոլորությունը ցուցափեղկում ցուցադրված ականջակալների նոր կամ հին լինելու վերաբերյալ էական նշանակություն է ունեցել առքուվաճառքի պայմանագրի կնքման համար, ուստի ԼՍ-ն կարող է վիճարկել պայմանագրի վավերությունը, ինչի հաստատման հետևանքով ԱՄ-ն չի կարողանա պահանջել, որ ականջակալները հանձնվեն իրեն 25000 ՀՀ դրամ գնով: Այն փաստը, որ մոդելի առումով մոլորության մեջ է գտնվել ոչ միայն ՆՍ-ն, այլ նաև ԱՄ-ն, քաղաքացիական օրենսգրքի 312 հոդվածի հաշվառմամբ, չի բացառում պայմանագրի վիճարկման հնարավորությունը:

Խնդիր 10

1. Գ-ից 10.000.000 ՀՀ դրամ վճարում պահանջելու բանկի իրավունքը

Բանկը կարող է Քաղաքացիական օրենսգրքի 898 հոդվածի հիման վրա իրավունք ունենալ պահանջելու Գ-ից 10.000.000 ՀՀ դրամ գումարի վճարումը, որը բխում է այն առքուվաճառքի պայմանագրից, որը Գ-ն կնքել է Ա-ի հետ:

Դրա համար նախ անհրաժեշտ է, որ բանկի ու Ա-ի միջև կնքված լինի ֆակտորինգի պայմանագիր՝ Քաղաքացիական օրենսգրքի 892 հոդվածի իմաստով: Նրանք պայմանավորվել են, որ բանկը Ա-ին դրամական միջոցներ կտրամադրի այն պահանջների զիջման դիմաց, որոնք նա ունի երրորդ անձանց ապրանքների մատակարարման մասին պայմանագրերից: Բացի դրանից, նրանք նաև պայմանավորվել են, որ բանկը կստանձնի պարտապանի հաշվապահությունը: Սրանով առկա են 892 հոդվածում նախատեսված չափանիշները:

Քաղաքացիական օրենսգրքի 892 հոդվածի 3-րդ մասով պահանջվող գրավոր ձևը պահպանվել է: Բացի դրանից, ֆինանսական գործակալը բանկ է, այնպես որ կատարված է նաև Քաղաքացիական օրենսգրքի 893 հոդվածի պահանջը:

Այն փաստը, որ շրջանակային պայմանագրի կնքման պահին այդ պահանջները դեռ գոյություն չունեին, պայմանագիրն անվավեր չի դարձնում: Քաղաքացիական օրենսգրքի 894 հոդվածի համաձայն՝ զիջման առարկա կարող են լինել նաև ապագա պահանջները, եթե շրջանակային պայմանագրի կնքման պահին դրանք բավականաչափ որոշակի են, որպեսզի հնարավոր լինի նույնականացնել դրանք ամենաուշը դրանց ծագման պահին: Ա-ն բանկի առջև պարտավորվել էր նրան զիջել բոլոր այն ներկա և ապագա պահանջները, որոնք առաջացել են կամ կառաջանան էլեկտրական սարքերի մատակարարման վերաբերյալ սպառողների ու իրավաբանական անձանց հետ նրա գործարքներից: Դրանով գործարքների և գործարար շրջանի օբյեկտները միանշանակ պարզ են եղել: Այնպիսի

մանրամասներ, ինչպես, ասենք, յուրաքանչյուր պահանջի չափը, սահմանվել են ոչ ուշ, քան համապատասխան պայմանագրերի կնքման պահին է, ու նույնականացվել այդ պահին: Այդ պահին առաջացել է նաև Ա-ի՝ յուրաքանչյուր պահանջի իրավունքը, որը հնարավոր էր առանց լրացուցիչ մասնավորեցման հանձնել բանկին: Այսպիսով, կատարված է նաև որոշակիության պահանջը, որը նախատեսված է Քաղաքացիական օրենսգրքի 894 հոդվածով:

Հետևաբար՝ բանկի ու Ա-ի միջև կնքված է եղել ֆակտորինգի վավեր պայմանագիր:

Հարց է ծագում՝ արդյո՞ք Ա-ի պահանջները Գ-ի հանդեպ վավեր եղանակով հանձնվել են բանկին: Ա-ն պարտավորվել էր էլեկտրական ապրանքների մասին մատակարարման պայմանագրերից ապագայում առաջացող բոլոր պահանջների իրավունքը հանձնել բանկին: Բանկը պարտավորվել էր ստանձնել այդ պահանջների իրավունքը, բայց իրավաբանական անձանց հանդեպ պահանջի իրավունքը ստանձնելու համար պայման էր դրել, որ ստուգի Գ-ի վճարունակությունը: Հետևաբար՝ բանկն իրեն վերապահել է պահանջների զիջման առաջարկը մերժելու իրավունք: Պայմանագրի կնքման ազատության շրջանակում հնարավոր է պայմանագիրը ձևակերպել նշված կերպով, այդպիսի պայմանագիրը վավեր է: Այսինքն, ինչպես երևում է, օրենքից որևէ սահմանափակում չի բխում:

Բանկը, դրական արդյունքով ավարտելով Գ-ի վճարունակության ստուգումը, ստանձնել էր պահանջը: Այսպիսով, բանկը զբաղեցրել էր Ա-ի տեղը:

Բայց ո՞չ բանկը և ո՞չ էլ Ա-ն Գ-ին չէին տեղեկացրել պահանջների իրավունքի զիջման մասին, սակայն Քաղաքացիական օրենսգրքի 397 հոդվածի 2-րդ մասով զիջման վավերականության համար պարտապանին տեղեկացնելու անհրաժեշտություն սահմանված չէ:

Հարց է ծագում՝ արդյո՞ք պահանջը դեռ առկա էր գույքի հանձնման պահին: Բանն այն է, որ Գ-ն, դեռ մինչև վճարունակության ստուգման ավարտն ու պահանջը բանկին զիջելը, հաշվանց էր արել Ա-ի հանդեպ վավեր պահանջով: Եթե այդ հաշվանցը վավեր եղած լիներ, Ա-ի պահանջը, Քաղաքացիական օրենսգրքի 426 հոդվածի

համաձայն, մարված կլինե՞ր դեռ նախքան այն պահը, երբ վերջինս կկարողանար պահանջը հանձնել բանկին:

Հարց է՝ արդյո՞ք դեռևս հնարավոր է եղել հաշվանցն Ա-ի հետ, թեև վերջինս իր պահանջը Գ-ի հանդեպ զիջել էր բանկին: Քաղաքացիական օրենսգրքի 428 հոդվածի համաձայն՝ պարտապանը, եթե նրա պարտատերը պահանջը զիջում է նոր պարտատիրոջ, կարող է առանց որևէ սահմանափակման նախկին պարտատիրոջ հանդեպ գոյություն ունեցող պահանջը հաշվանցել նաև նոր պարտատիրոջ հանդեպ: Այդուհանդերձ, Քաղաքացիական օրենսգրքի 900 հոդվածում այդ հնարավորությունը տարածվում է միայն այն դեպքերի վրա, որոնցում պարտապանին չեն հաղորդել պահանջի զիջման մասին:

Բ-ն նոր էր եկել Երևան ու Ա-ի նոր հաճախորդն էր: Եթե բոլոր հին հաճախորդները ծանուցվել էին ֆակտորինգի պայմանագրի գոյության մասին (այսպես կոչված՝ բաց ֆակտորինգ), ապա բանկն ու Ա-ն համապատասխան ծանուցում Գ-ին չէին ներկայացրել: Այսպիսով, Գ-ն իրավիճակին անտեղյակ էր այն պահին, երբ առաջացել էր նրա պահանջն Ա-ի հանդեպ: Այս դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 900 հոդվածը թույլատրում է հաշվանց նոր պահանջատիրոջ հանդեպ:

Այնուամենայնիվ, Գ-ն հաշվանցի մասին ծանուցել է ոչ թե բանկին, այլ Ա-ին: Քաղաքացիական օրենսգրքի 397 հոդվածի 3-րդ մասը նման դեպքի համար սահմանում է, որ պահանջի զիջման մասին չտեղեկացված պարտապանն իրավունք ունի վճարելու նախնական պարտատիրոջը՝ ազատվելով պարտավորությունից: Հաշվանցը պետք է որակվի որպես այնպիսի վճարում, որը հանգեցնում է պարտավորության մարմանը:

Այսպիսով, հաշվանցով Ա-ի պահանջը Գ-ի հանդեպ դադարել էր, ու բանկը չի կարող նրանից պահանջել 10.000.000 ՀՀ դրամի վճարում:

2. Ա-ից 10.000.000 ՀՀ դրամ՝ գումարած վարձավճարները պահանջելու բանկի իրավունքը¹⁰.

Պրոֆ. Ռուֆ Քնիփերի կարծիքը¹¹

2.1. 10.000.000 ՀՀ դրամի հանձնումը:

Բանկը գուցե կարող է Քաղաքացիական օրենսգրքի 1092 հոդվածի հիման վրա Ա-ին ներկայացնել 10.000.000 ՀՀ դրամ վերադարձնելու պահանջ, եթե Ա-ն Գ-ի կողմից ծանուցված հաշվանցի միջոցով բանկի հաշվին հարստացած լիներ այդ գումարով՝ առանց օրենքում կամ պայմանագրում սահմանված հիմքի:

Սկզբում անհրաժեշտ է ստուգել՝ արդյո՞ք Ա-ն ինչ-որ բան ստացել է: Գ-ն գումարը նրան չի վճարել, այլ սեփական պահանջը Ա-ի հանդեպ հաշվանցել է Ա-ի պահանջի հետ: Այդ հաշվանցը Ա-ին ազատել է նրա անվիճելի վճարման պարտավորությունից Գ-ի հանդեպ:

¹⁰ Այս պահանջի իրավունքի հիմք գտնելու համար ինչպես միշտ անհրաժեշտ է ճշգրտորեն սահմանել այդ պահանջի իրավունքը: Մեր գործում անհրաժեշտ է հետևյալ տարբերակումն անել. բանկը գուցե կարող է հետ պահանջել վճարված 8.000.000 դրամը: Նման պահանջի իրավունք թերևս կարող է առաջանալ այն պատճառով, որ Ա-ն չի կատարել իր պայմանագրային պարտականությունը (Քաղաքացիական օրենսգրքի 469 կամ 408 ու դրան հաջորդող հոդվածներ): Դժվարությունն այստեղ պայմանագրի խախտումը պարզելն է, քանի որ Ա-ն պարտավորվել էր զիջել գոյություն ունեցող պահանջները: Բայց նրա պահանջը Գ-ի հանդեպ այլևս գոյություն չունի այն պահին, երբ բանկն ավարտել էր վճարունակության ստուգումը, այնպես որ կասկածելի է նաև պարտավորության գոյությունը: Ավելի ծանրակշիռ է այն հանգամանքը, որ բանկը ուզում է հետ ստանալ ոչ թե իր կողմից վճարված գումարը, այլ այն գումարը, որը համապատասխանում է Գ-ի հանդեպ Ա-ի դադարած պահանջի չափին, ինչպես նաև հանձնված վարձատրությունը, այսինքն՝ վարձավճարները: Քաղաքացիական օրենսգրքի 469 կամ 408 ու դրան հաջորդող հոդվածներից բխող պահանջի իրավունքը պարտադիր չէ, որ հանգեցնի այդ արդյունքին: Թեև, որպես կանոն, խնդիրը լուծելիս սկզբում օրենքից բխող պահանջի իրավունքից առաջ ստուգվում են պայմանագրից բխողները (այս մասին սույն ձեռնարկի 1-ին մասում), առկա գործում նպատակահարմար է քննությունը սկսել պահանջի իրավունքի այն հիմքից, որն առկա է օրենքով սահմանված պարտավորական հարաբերությունում:

¹¹ Հեղինակային խմբի անդամների միջև առկա էին տարաձայնություններ Ա-ից 1.000.000 ՀՀ դրամ պահանջելու բանկի իրավունքի վերաբերյալ: Ուստի այստեղ երկու կարծիքն էլ ներկայացվում են:

Ազատունը գոյություն ունեցող պահանջից գույքային արժեք է Քաղաքացիական օրենսգրքի 1092 հոդվածի իմաստով: Նրա հանդեպ Գ-ի պահանջի դադարումը նրա հարստացումն է:

Քաղաքացիական օրենսգրքի 1092 հոդվածից բխող պահանջի իրավունքի համար մյուս նախապայմանն այն է, որ հարստացումը պետք է տեղի ունեցած լինի բանկի հաշվին: Ֆակտորինգի պայմանագրի համաձայն՝ Ա-ն պարտավորված էր հաճախորդների հետ պայմանագրերից բխող իր բոլոր պահանջները հանձնել բանկին: Նա այդ պարտավորությունը կատարել է նաև Գ-ի հանդեպ պահանջների առնչությամբ: Փաստացի զիջումը, ճիշտ է, դեռ չէր կատարվել, քանի որ վճարունակության ստուգումը հաշվանցի պահին դեռևս ավարտված չէր: Բայց այդ նախապայմանի վրա հասնելն այլևս կախված չէր Ա-ից: Կարելի է ասել, որ հաշվանցի պահին պահանջի իրավունքն արդեն բանկի գույքի կազմում էր և վճարունակության ստուգման ավարտի պահից համապատասխան իրավունքը կպատկաներ նրան:

Հաշվանցն ընդհատել է վերոգրյալ բնականոն գործընթացը: Այսինքն՝ դադարումը հաշվանցի արդյունքում հանգեցրել է բանկի գույքային իրավունքների ծավալի նվազման: Բանկի գույքային իրավունքների ծավալի նվազման դիմաց անմիջականորեն կա Ա-ի գույքային զանգվածի ավելացում: Ա-ի գույքային զանգվածի ավելացումը բանկի գույքային կորստի անմիջական հետևանքն է: Հետևաբար՝ Ա-ի հարստացումը կատարվել է բանկի հաշվին:

Հարց է նաև՝ արդյո՞ք Ա-ի հարստացման և դրա հետևանքով կատարված բանկի գույքի նվազեցման համար իրավական հիմք գոյություն ունի: Ճիշտ է, Գ-ի կողմից հաշվանցի ծանուցումը տեղի է ունեցել Քաղաքացիական օրենսգրքի 426 հոդվածի հիման վրա, հետևաբար՝ երկու պահանջների դադարումն իրավաչափ է, բայց այս իրավական հետևանքը չի պատասխանում այն հարցին, թե արդյո՞ք Ա-ի հարստացումը բանկի հաշվին ևս իրավական հիմք ունի: Սրա համար պետք է նշել, որ պահանջի իրավունքը հաշվանցի պահին, ճիշտ է, դեռ հանձնված չի եղել, բայց Ա-ն պայմանագրով պարտավորվել էր զիջել համապատասխան պահանջը և արդեն ձեռնարկել

էր այն ամենը, ինչ իրենից էր կախված, որպեսզի զիջումը նաև փաստացի տեղի ունենա: Նրա հարստացման համար, որն առաջացել է Գ-ի հանդեպ պարտավորությունից ազատվելու արդյունքում, չի եղել որևէ իրավական հիմք, որը նա կարողանար վկայակոչել բանկի առջև: Այսպիսով, նրա ու բանկի միջև հարաբերությունում հարստացումն իրավական հիմք չունի և արդարացված չէ:

Ա-ն չէր մասնակցել հաշվանցին և չէր էլ կարող խանգարել դրան: Հետևաբար՝ նրան չի կարելի մեղադրել, որ խախտել է իր պարտականությունը: Այդուհանդերձ, Քաղաքացիական օրենսգրքի 1092 հոդվածից բխող պահանջի իրավունքի գոյության համար նախապայման չէ ո՛չ պարտավորության խախտումը հարստացածի կողմից և ո՛չ էլ նրա մեղավորությամբ գործելը: Կարևոր է բացառապես այն հարստացումների հավասարակշռումը, որոնք անձը ստացել է այն անձի հաշվին, ում ունեցվածքը նվազել է:

Բանկը տեղյակ չի եղել ո՛չ հաշվանցի հետ կապված իրավիճակին և ո՛չ էլ փաստացի ծանուցված հաշվանցին: Հետևաբար՝ առկա չէ այնպիսի մի իրավիճակ, որը, ըստ Քաղաքացիական օրենսգրքի 1099 հոդվածի 4-րդ կետի, կարող էր վտանգել վերադարձնելու պահանջի նրա իրավունքը: Քաղաքացիական օրենսգրքի 1099 հոդվածով սահմանված դեպքերն ակնհայտորեն առկա չեն:

Այսպիսով, բանկը կարող է Ա-ից պահանջել, որ իրեն հանձնի 10.000.000 ՀՀ դրամ: Բայց դրանով ստուգումը դեռ ավարտված չէ: Բանն այն է, որ բանկը պայմանագրով պարտավորված է Ա-ին փոխանցել իրեն փոխանցված պահանջի ամբողջ գումարը, այսինքն՝ 10.000.000 ՀՀ դրամ: Բայց նա սկզբում, ինչպես և նախատեսված է պայմանագրում, վճարել է միայն 80%-ը, այսինքն՝ 8.000.000 ՀՀ դրամ: Քանի որ Ա-ն այժմ պարտավորված է վճարել նրան այն 10.000.000 ՀՀ դրամը, որն ինքն առանց որևէ իրավական հիմքի ստացել է Գ-ից, բանկն իր հերթին պարտավոր է Ա-ին փոխանցել դեռևս պակասող 2.000.000 ՀՀ դրամը: Խելամիտ կլինի, որ Ա-ն ու բանկը համաձայնության հասնեն առ այն, որ Ա-ն ի սկզբանե պարտավոր է բանկին վճարել միայն 8.000.000 ՀՀ դրամ: Եթե նրանց չհաջողվի հասնել այդպիսի համաձայնության, ապա ինչպես Ա-ն,

այնպես էլ բանկը կարող են, ըստ Քաղաքացիական օրենսգրքի 426 հոդվածի, միակողմանիորեն հայտարարել 2.000.000 ՀՀ դրամի չափով հաշվանցման մասին:

2.2. Վարձավճարների վճարումը:

Ա-ն պայմանագրով պարտավորվել էր բանկին զիջել Գ-ի հանդեպ 10.000.000 ՀՀ դրամի իր պահանջի իրավունքը և վճարել վարձավճարները: Բանկը պարտավորվել էր պահանջն ստանձնելիս Ա-ին վճարել համապատասխան գումարի 80%-ը, որպիսի պարտավորությունը վերջինս կատարել է: 10.000.000 ՀՀ դրամը հանձնելով բանկին՝ Ա-ն նույնպես կատարել է իր պարտավորությունն այնքանով, որքանով Գ-ի հանդեպ նախնական պահանջի իրավունքը անցնում է բանկի գույքի կազմ, թեև պահանջի իրավունքի հիմքը պայմանագրային չէ:

Ֆակտորինգի պայմանագիրը Քաղաքացիական օրենսգրքի 469 հոդվածի համաձայն լուծելու ոչ մի հիմք չկա: Դրանով իսկ պայմանագիրը, նաև բանկին վարձավճարներ վճարելու Ա-ի պայմանագրային պարտականությունը մնում են ուժի մեջ: Հետևաբար՝ բանկը կարող է Ա-ից պահանջել պայմանագրի կատարում:

Արսեն Թավադյանի կարծիքը

2.1. 10.000.000 ՀՀ դրամի հանձնումը:

Քաղաքացիական օրենսգրքի 895 հոդվածի հիման վրա Ա-ն պատասխանատվություն է կրում բանկի առջև պահանջի իրական լինելու համար: Զիջման առարկա դրամական պահանջը համարվում է իրական, եթե հաճախորդն օժտված է դրամական պահանջի փոխանցման իրավունքով, և այդ պահանջի զիջման պահին նրան հայտնի չեն այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով պարտապան իրավունք ունի չկատարելու պահանջը:

Քննարկվող գործում Գ-ն հայտարարել է Ա-ին, որ գինիների սառնարանի մատակարարման համար պահանջը հաշվանցում է մի պահանջով, որն ունեցել է նրա հանդեպ մեկ ուրիշ գործարքի հիման վրա:

Իրական լինելու նախապայմանն այն է, որ պահանջի զիջման պահին Ա-ին հայտնի չէին այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով Գ-ն իրավունք ունի չկատարելու պահանջը: Պարտավորության կատարումը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 424 հոդվածի հիման վրա պարտավորության դադարման հիմք է, որը ենթադրում է որոշակի պարտավորության բնեղենով կատարում: Որևէ այլ հիմքով պարտավորության դադարումը չի կարող դիտվել կատարում: Հաշվանցը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 426 հոդվածի հիման վրա պարտավորության դադարման այլ հիմք է և չի նույնանում կատարման հետ:

Ակնհայտ է, որ Ա-ն պարտավոր էր տեղյակ լինել, որ Գ-ն իրավունք ունի հաշվանց կատարել, որի ուժով իրավունք ունի բնեղենով չկատարել պարտավորությունը բանկի առջև: Այս տեսանկյունից պահանջը չի կարող իրական լինել, հետևաբար՝ Ա-ն պետք է պատասխանատվություն կրի բանկի առջև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 895 հոդվածի հիման վրա:

2.2. Վարձավճարների վճարումը:

Ա-ն պայմանագրով պարտավորվել էր բանկին զիջել Գ-ի հանդեպ 18.000.000 ՀՀ դրամի իր պահանջը, որից 10.000.000 ՀՀ դրամը, ինչպես վերևում հիմնավորվեց, իրական չէր, ինչպես նաև պարտավորվել էր վճարել վարձավճարները: Բանկը պարտավորվել էր՝ պահանջի իրավունքը ստանձնելիս Ա-ին վճարել 80%: Բանկը կատարել է իր պարտավորությունը:

Այս առումով միակ սուբյեկտը, որը կարող է վկայակոչել էական խախտման հիմքով պայմանագրի լուծման փաստը, բանկն է: Առանց այդպիսի լուծման փաստի վկայակոչման, պայմանագիրը ու դրանով նաև բանկին վարձավճարներ վճարելու Ա-ի պայմանագրային պարտականությունը մնում են ուժի մեջ: Հետևաբար՝ բանկը կարող է Ա-ից պահանջել պայմանագրի կատարում:

3. Ա-ից 6.400.000 ՀՀ դրամի վճարումը պահանջելու բանկի իրավունքը

3.1. Պահանջի իրավունք պայմանագրի հիման վրա:

Վճարունակությունը ստուգելուց և Գ-ի հանդեպ 8.000.000 ՀՀ դրամի Ա-ի պահանջի իրավունքը ստանձնելուց հետո առաջացած Գ-ի անվճարունակության պատճառով բանկն ի վիճակի չի եղել բռնագանձելու այդ պահանջը:

6.400.000 ՀՀ դրամի հետ վճարումը պահանջելու բանկի իրավունքը գուցե կարող է բխել Քաղաքացիական օրենսգրքի 895 հոդվածից: Այդուհանդերձ, բանկը պայմանագրով պարտավորվել է ստուգել պարտապանների վճարունակությունը և դրական արդյունքից հետո ստանձնել պահանջների իրավունքի բոլոր ռիսկերը, այսինքն՝ նաև պարտապանի անվճարունակության ռիսկը: Այս ռիսկը ստանձնելու համար բանկն ուղղակիորեն սահմանել է անվճարունակության ստուգման հատուկ վարձավճար: Այսինքն՝ մենք այստեղ գործ ունենք, այսպես կոչված, «իսկական ֆակտորինգի» հետ, որի առարկան պահանջները զիջելն է իրենց իրավական ու փաստական վիճակով, այն է՝ պահանջի իրական լինելը, ինչպես նաև պարտապանի վճարունակությունը:

Այս պայմանավորվածությունն ընդհանրապես համապատասխանում է Քաղաքացիական օրենսգրքի 892 հոդվածի նպատակին, ըստ որի՝ բանկի հաճախորդը ևս պետք է պատասխանատվություն կրի միայն պահանջի իրական լինելու համար:

Ոչ մի կասկած չկա, որ Ա-ն պահանջի իրավունք ունի Գ-ի հանդեպ: Գ-ի անվճարունակության ռիսկը պետք է կրեր բանկը:

Այսպիսով, բանկը պայմանագրից բխող իրավունք չունի Ա-ից պահանջելու իրեն հանձնել 6.400.000 ՀՀ դրամ:

3.2. Անհիմն հարստացման հիմքով պահանջի իրավունքը:

Բանկը չունի նաև պահանջի իրավունք անհիմն հարստացման հիմքով, քանի որ բանկը 6.400.000 ՀՀ դրամ վճարել է Ա-ին իր պայմանագրային պարտավորության հիման վրա, այսինքն՝ դրա համար իրավական հիմք է ունեցել:

4. Ա-ից 640.000 ՀՀ դրամի վճարում պահանջելու բանկի իրավունքը

Բանկը գուցե կարող է իրավունք ունենալ Ա-ից պահանջելու իրեն վերադարձնել այն 640.000 ՀՀ դրամը, որով վարկավորել է նրան, երբ Ա-ն Է-ի հանդեպ իր պահանջը զիջել է բանկին: Այս պահանջի իրավունքը, թերևս, կարող է բխել Քաղաքացիական օրենսգրքի 895 հոդվածից: Դրա նախապայմանն այն է, որ Ա-ն պատասխանատվություն կրի Է-ի վճարունակության համար:

Այդ հոդվածի տեքստի համաձայն՝ հաճախորդը միայն պարտավոր է պատասխանատվություն կրել զիջման ենթակա պահանջի իրավունքի իրական լինելու համար: Այդուհանդերձ, կողմերն իրենց պայմանագրային ազատության շրջանակում հնարավորություն ունեն ռիսկերը բաշխելու այլ կերպ, քան ուղղակիորեն նախատեսված է Քաղաքացիական օրենսգրքի 895 հոդվածի 1-ին մասով: Կողմերն այստեղ օգտվել են այդ հնարավորությունից: Ա-ն ուղղակիորեն ստանձնել է մասնավոր հաճախորդների/սպառողների անվճարունակության ռիսկը, դրանից ստանալով այն առավելությունը, որ պարտավոր չէ վճարել վճարունակության ստուգման վարձավճարները: Այսպիսով, նա պետք է պատասխանատվություն կրեր Է-ի վճարունակության համար: Այստեղ առկա է, այսպես կոչված, «անիսկական ֆակտորինգի» իրավիճակ, որն իր տնտեսական գործառույթի տեսանկյունից ավելի շուտ փոխառությանը բնորոշ գծեր ունի. բանկը գումար է տրամադրում և իրավունք ունի այն հետ պահանջելու, եթե չկարողանա գումարը բռնագանձել պարտապանից:

Հաշվի առնելով այս պայմանագրային իրավիճակը, որը թույլատրելի է Քաղաքացիական օրենսգրքի 895 հոդվածով, բանկը իրավունք ունի Ա-ից պահանջելու իրեն վերադարձնել 640.000 ՀՀ դրամը:

5. Ա-ից 1.600.000 ՀՀ դրամի վճարում պահանջելու՝ ԳՏ-ի իրավունքը

5.1. Քաղաքացիական օրենսգրքի 895 հոդվածի հիմքով պահանջի իրավունքը:

Անհրաժեշտ է ստուգել՝ արդյո՞ք ԳՏ-ն իրավունք ունի Ա-ից պահանջելու վերադարձնել այն 1.600.000 ՀՀ դրամը, որն ինքը վճարել է նրան, երբ Ա-ն իր պահանջը Ձ-ի հանդեպ զիջել է ԳՏ-ին: Այս պահանջի իրավունքը գուցե կարող է թխել Քաղաքացիական օրենսգրքի 895 հոդվածից:

Այդ պահանջի իրավունքի առկայության նախապայմանը այն է, որ Ա-ի ու ԳՏ-ի միջև կնքված լինի ֆակտորինգի վավեր պայմանագիր:

Երկու կողմերի փոխադարձ պարտականությունները համապատասխանում են Քաղաքացիական օրենսգրքի 892 հոդվածում նշված նախապայմաններին: Պայմանագիրը նաև կնքվել է գրավոր:

Սակայն ԳՏ-ն մասնավոր ֆիզիկական անձ չէր: Քաղաքացիական օրենսգրքի 893 հոդվածի համաձայն՝ ֆակտորինգի պայմանագրում որպես ֆինանսավորող ինստիտուտ կարող են հանդես գալ միայն բանկերն ու այլ առևտրային կազմակերպությունները: Ուստի պայմանագիրը ԳՏ-ի ու Ա-ի միջև չի կարող որակվել որպես ֆակտորինգի պայմանագիր: Հետևաբար՝ ԳՏ-ն չի կարող պահանջ ներկայացնել Քաղաքացիական օրենսգրքի 895 հոդվածի հիման վրա:

5.2. Պահանջի իրավունքի այլ հիմքեր:

Ա-ն իր պահանջը Ձ-ի հանդեպ զիջել է ԳՏ-ին: Ա-ն պարտավորվել էր զիջել, իսկ ԳՏ-ն էլ պարտավորվել էր ստանձնել համապատասխան պահանջի իրավունքն ու Ա-ին փոխանցել պահանջի արժեքի 80%-ը կազմող գումար: Բանակցությունները և կամարտահայտությունները՝ պահանջը զիջելու պարտավորության մասին և դրան հաջորդած փաստացի զիջումը կատարվել են կամավոր՝ մասնավոր ինքնավարության շրջանակում և ոչ թե զուտ ձևականորեն: Քաղաքացիական օրենսգրքի 303 հոդվածում թվարկված անվավերության հիմքերից ոչ մեկն այս պայմանավորվածության դեպքում առկա չէ:

Այդուհանդերձ, կողմերն իրենց գործարար կապին տվել էին «ֆակտորինգ» անվանումը: Որպես այդպիսին՝ այս գործարքը ֆակ-

տորինգ է, սակայն հարց է ծագում՝ արդյո՞ք դա ընդհանրապես անվավեր է դարձնում պահանջի իրավունքի զիջման պայմանավորվածությունը:

Անհրաժեշտ է ելնել այն սկզբունքներից, որոնք գործում են նաև հայկական իրավունքում և, որոնց համաձայն, պայմանագրի սխալ անվանումը չի հանգեցնում պայմանագրի անվավերությանը (*falsa demonstratio non nocet*), և պայմանագրերը մեկնաբանելիս պետք է ելնել այն ենթադրությունից, որ կողմերը ցանկանում են իրենց միահամուռ կամային գործողություններից որոշակի հետևանքներ բխեցնել (*favor contractus*):

Կիրառելով այս սկզբունքները՝ անհրաժեշտ է ստուգել՝ արդյո՞ք ԳՏ-ի ու Ա-ի միջև պայմանագիրը, չբավարարելով ֆակտորինգի պայմանագրի նախապայմանները, չի համապատասխանում Քաղաքացիական օրենսգրքի 397-405 հոդվածների նախապայմաններին:

Քաղաքացիական օրենսգրքի 397 ու 404 հոդվածները ենթադրում են, որ երկու կողմերը պայմանավորվում են կնքելու գրավոր գործարք, ըստ որի՝ կողմերից մեկի պահանջը երրորդ անձի հանդեպ պետք է փոխանցվի մյուս կողմին, և այդ պայմանավորվածությունը կատարվում է պահանջը փաստացի զիջելով: Պարտապանի համաձայնությունը դրա համար հարկավոր չէ:

Գրավոր գործարք առկա է, անգամ եթե դրան սխալ անվանում է տրվել, ճիշտ այդպես առկա է նաև Զ-ի հանդեպ Ա-ի պահանջի փաստացի զիջումը ԳՏ-ին:

Այսինքն՝ համոզիչ հիմքեր կան ասելու, որ տեղի է ունեցել պահանջի վավեր զիջում:

Սրանից հետո անհրաժեշտ է ստուգել՝ արդյո՞ք Ա-ն որպես նախնական պարտատեր պարտավորված է նոր պարտատեր ԳՏ-ին վերադարձնել վերջինիս վճարած 1.600.000 ՀՀ դրամն այն բանից հետո, երբ Զ-ն դարձել է անվճարունակ: Նման պահանջի իրավունքը զուցե կարող է բխել Քաղաքացիական օրենսգրքի 405 հոդվածից:

Քաղաքացիական օրենսգրքի 405 հոդվածը սահմանում է նախնական պարտատիրոջ, այսինքն՝ մեր դեպքում՝ Ա-ի պատասխա-

նատվությունը փոխանցված պահանջի վավերության, բայց ոչ պարտապանի կողմից փաստացի վճարման համար:

Առկա գործում պահանջի վավերությունը կասկած չի հարուցում: Հարցը միայն Զ-ի անվճարունակությունն է: Բայց դրա համար նախնական պարտատերը պատասխանատվություն չի կրում: Այլ հարց է, եթե նախնական պարտատերը պարտապանի համար երաշխավորություն ստանձներ, ինչը տեղի չի ունեցել: Այն փաստը, որ բանկի հետ պայմանագրի կետերը վճարունակության ստուգման մասին այս պայմանագրում չեն ներառվել, չի կարող մեկնաբանվել որպես այդպիսի երաշխավորություն:

Այսպիսով, ԳՏ-ն չի կարող Ա-ից պահանջել վերադարձնել 1.600.000 ՀՀ դրամը:

Խնդիր 11

1. A-ի կրած ծախսերը՝ ջրի պատճառած վնասի հետևանքով

A-ն նկատել է, որ իր սենյակի առաստաղից ջուր է կաթում: Նա ճիշտ ենթադրություն է արել, որ դրա պատճառը կարող է լինել միայն վերևի բնակարանը: Ջարդել է դրա դուռը, ինչի պատճառով վնասել է ինքն իրեն ու պատռել իր սվիտերը: Նա անմիջապես կտրել է ջրի հոսքը, ջրմուղագործ կանչել և, վճարելով նրան, կարգադրել է վերանորոգել ջրի խողովակը, ապա նորոգել է բնակարանի հատակը և իր սեփական բնակարանի առաստաղը: Դրանից հետո ներկել է տվել B-ի բնակարանի պատերը և վճարել դրա հետ կապված ծախսերը:

A-ն, փաստորեն, ցանկանում է ներկայացնել B-ին հետևյալ պահանջները՝

- հատուցել սվիտերի արժեքը,
- հատուցել իր բուժման ծախսերը,
- հատուցել ջրի խողովակի նորոգման ծախսերը,
- հատուցել իր սեփական բնակարանի առաստաղի՝ ջրից առաջացած վնասի վերացման ծախսերը,
- հատուցել B-ի բնակարանի պատերը ներկելու ծախսերը,
- վճարել B-ի բնակարանի հատակի նորոգման համար:

Քաղաքացիական օրենսգրքի 1052 ու 1053 հոդվածների վրա հիմնված պահանջի իրավունքի առաջին նախապայմանը՝ համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 1048 հոդվածի, պահպանված է, այն է՝ A-ն, առանց B-ից հանձնարարություն, ցուցում ստանալու կամ որևէ այլ եղանակով նրա կողմից պարտավորեցվելու, գործել է օբյեկտիվ շահերից ելնելով ու B-ի իրական կամ հավանական սուբյեկտիվ մտադրություններին համապատասխան՝ B-ին պատճառվելիք վնասը կանխելու, իր պարտավորությունները կատարելու կամ ընդհանրապես իր իրավաչափ շահերը պաշտպանելու համար:

A-ն ու B-ն բազմաբնակարան շենքում երկու առանձին բնակարանների սեփականատերեր են: Որպես այդպիսիք՝ նրանք իրավասու են իրենց բնակարաններն օգտագործել սեփական ցանկությանը համապատասխան: Նրանք, իհարկե, ունեն ընդհանուր պարտավոր-

րություններ ընդհանուր օգտագործման տարածքների պահպանման առնչությամբ և, հարևան լինելով, պարտավոր են հաշվի նստել մեկը մյուսի շահերի հետ, սակայն նման պարտավորությունների առկայության հետևանքով սեփականատերերի միջև հանձնարարության իրավահարաբերություններ կամ մեկի նկատմամբ մյուսի՝ ցուցումներ տալու իրավունք չի առաջանում: Իրավիճակը կարող էր այլ լինել, եթե A-ն լիներ տան կառավարիչ: Բայց այդպես չէ: Այսպիսով, առկա է Քաղաքացիական օրենսգրքի 1048 հոդվածի առաջին նախապայմանը, այն է՝ պայմանագրային կամ պայմանագրայինին մոտ հարաբերության բացակայությունը:

Հաջորդիվ A-ն պետք է գործած լինի B-ին պատճառվելիք վնասը կանխելու կամ իր պարտավորությունները կատարելու նպատակով: Ակնհայտորեն ջրի խողովակի թերությունը հանգեցնում է B-ի բնակարանի վնասմանը: Այսպիսով, առկա է գույքային վնաս: Բացի դրանից, իհարկե, B-ն իրավունք ունի իր բնակարանն օգտագործելու ինչպես կամենա, սակայն նա միաժամանակ պարտավոր է ուշադրություն դարձնել այն բանին, որ բնակարանի օգտագործումը կամ կառավարումը վնասներ չառաջացնի ուրիշ անձանց համար (Քաղաքացիական օրենսգրքի 1071՝ հոդված): Այսպիսով, ջրի հասցրած վնասի մեծացումը կանխելու A-ի միջամտությունն օգնում է նաև B-ին կատարելու իր պարտավորությունները:

Ընդ որում՝ այստեղ գործ ունենք օբյեկտիվ չափանիշների հետ: Հետևաբար՝ B-ի այն առարկությունը, որ նրան չեն հետաքրքրում ոչ բնակարանը և ոչ էլ դրա վիճակը, որևէ նշանակություն չունի վնասի և պարտավորության սահմանման համար: Ընդամին, առկա է նաև վնասը կանխելու և պարտավորությունների կատարման նախապայմանը:

Սրանով հանդերձ, A-ի գործողությունների շարժառիթը եղել է նաև իր սեփական բնակարանին պատճառվելիք վնասը կանխելը: Ուստի նա ոչ միայն զբաղվել է B-ի, այլև իր սեփական գործերով: Հարց է ծագում՝ արդյո՞ք երկակի նպատակաուղղվածություն ունեցող այդպիսի գործելակերպը համապատասխանում է Քաղաքացիական օրենսգրքի 1048 հոդվածի նախապայմաններին: Այս հար-

ցին պատասխանելու համար էական նշանակություն ունի այն, թե արդյոք գործողություններ կատարողը մտադիր չի եղել գործելու միայն սեփական շահերից ելնելով: Այն, որ նրա գործողություններն իրեն ևս օգուտ են բերում, որևէ ձևով չի փոխում այն իրավիճակը, որ դրանով օբյեկտիվորեն կանխվում է երրորդ անձին պատճառվելիք վնասը կամ դրանք ուղղված են նաև իր պարտավորությունները կատարելուն: Անկախ այն բանից՝ ի շահ ուրիշի գործողություններ կատարողը հետապնդում է սեփական շահ, թե՛ ոչ, եթե իր գործողություններն օբյեկտիվորեն օգուտ են բերում երրորդ անձի, ապա Քաղաքացիական օրենսգրքի 1048 հոդվածը նման իրավահարաբերությունների կարգավորման համար կիրառելի է: 1048 հոդվածի մեկ այլ նախապայմանն այն է, որ A-ի միջամտությունն ակնհայտորեն օբյեկտիվորեն առավելություն կամ օգուտ է տվել B-ին և այդ միջամտությունը համապատասխանում է նրա հավանական սուբյեկտիվ մտադրություններին: Այս երկու նախապայմանները պետք է առկա լինեն, ընդ որում՝ «հավանական» հասկացությամբ մատնանշվում է այն իրադրությունը, երբ իրական սուբյեկտիվ մտադրությունը շահագրգիռ անձի բացակայության պատճառով հնարավոր չէ պարզել: Բացակայության այդպիսի դեպքերում պետք է ենթադրել, որ անձի ակնհայտ օգուտից կամ շահից ու նրա իրական կամ հավանական մտադրություններից բխող գործողությունները համապատասխանում են այդ անձի մտադրությանը:

Առկա գործում A-ն իր վճռական գործողություններով կանխել է ավելի խոշոր վնասի առաջացումն ինչպես B-ի բնակարանում, այնպես էլ ամբողջ շենքում: Դրանով նա, մի կողմից, զգալի չափով պահպանել է բնակարանի արժեքը և, մյուս կողմից՝ թույլ չի տվել, որ մնացած բնակարանների սեփականատերերը B-ին ներկայացնեն վնասի հատուցման պահանջներ: Սա, անկասկած, շահավետ է B-ի համար:

Բայց հարց է ծագում՝ արդյո՞ք այդ արդյունքը համապատասխանում է նաև B-ի հավանական մտադրությանը: Առկա գործում B-ն բերում է հակափաստարկներ առ այն, որ իրեն չեն հետաքրքրում բնակարանի ճակատագիրն ու վիճակը, հետևաբար և՛ դրա գոյությունը և արժեքը պահպանելու մտադրություն չունի: Երրորդ անձանց

պահանջի իրավունքները նրան չեն հետաքրքրում, որովհետև ինքն առանց այդ էլ շուտով արտասահման է մեկնելու:

Քաղաքացիական օրենսգրքի 1048 հոդվածն ընդգծում է շահագրգիռ անձի մտադրության նշանակությունը, ինչը լիովին համապատասխանում է Քաղաքացիական օրենսգրքի 3 հոդվածում ամրագրված՝ կամքի ինքնավարության սկզբունքին: Այսպիսով, եթե որևէ մտադրություն իրոք արտահայտվել է ու հայտնի է, ապա դրան պետք է լրջությամբ վերաբերվել: Սկզբունքորեն նաև, անշուշտ, ճիշտ է, որ իրական մտադրությունները համարվեն առաջնահերթ: Անձն իրավունք ունի թույլ տալու վնասել իր գույքը և նման դեպքում որևէ կանխարգելիչ միջոցառում չձեռնարկելու: Նման դեպքում երրորդ անձը ևս չի կարող իրավունք ունենալ գործելու շահագրգիռ անձի անունից, թեև նրա գործողություններից ձեռնպահ մնալու հետևանքով շահագրգիռ անձին վնաս կպատճառվի:

Այդուհանդերձ, կամքի այդ առաջնահերթությունը սահմաններ ունի: Բանն այն է, որ եթե այն հանգեցնում է հավանականության, որ կարող է վնաս պատճառվել երրորդ անձանց կամ կարող է վտանգվել հասարակական կարգն ու կանոնը, ապա շահագրգիռ անձի սուբյեկտիվ նախասիրությունը պետք է մղվի հետին պլան: Նա չի կարող արգելել երրորդ անձի միջամտությունը, եթե այդ միջամտությամբ պաշտպանվելու են ոչ միայն իր, այլև այլ անձանց շահերը:

Նման իրադրություն այստեղ առկա է: Ե-ն մերժել է Ա-ի գործողությունները, թեև դրանք օբյեկտիվորեն պահպանել են բնակարանի արժեքը ու դրա շնորհիվ օգուտ են բերել նրա պարտատերերին, ինչպես նաև հնարավոր է եղել խուսափել մյուս բնակարանների սեփականատերերին վնաս պատճառելուց կամ նվազեցնել հնարավոր վնասները՝ դրանով իսկ կանխելով համապատասխան երրորդ անձանց կողմից Ե-ի հանդեպ վնասների հատուցման պահանջներ առաջադրելը, որոնք հատուցելու պարտավորություն ինքը կունենար: Իր սուբյեկտիվ անտարբերությունը միջամտության հանդեպ վերջինս հիմնավորել է այն բանով, որ առանց այն էլ ուզում է տեղափոխվել արտասահման և իր պարտատերերին բավարարելու մտադրություն չունի:

Հետևաբար՝ եթե անգամ հայտնի եղած լիներ, որ A-ի գործողությունները բխել են B-ի օբյեկտիվ շահից, բայց չեն համապատասխանել նրա սուբյեկտիվ մտադրություններին, նշված հոդվածի նախապայմաններն առկա կլինեին: B-ի հակաիրավական մտադրությունները հաշվի չեն առնվում:

Այսպիսով, Քաղաքացիական օրենսգրքի 1048 հոդվածի նախապայմաններն առկա են:

Քաղաքացիական օրենսգրքի 1052 հոդվածի համաձայն՝ սրանից բխում է այն, որ A-ն կարող է պահանջել, որ B-ն հատուցի իրեն այն անհրաժեշտ ծախսերը, որոնք ինքը կրել է իր գործողությունները կատարելիս: Դրա տակ պետք է հասկանալ բոլոր այն գույքային կորուստները, որոնք ստանձնել է A-ն՝ վնասները կանխելու համար: Քաղաքացիական օրենսգրքի 1052 հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության համաձայն՝ սա գործում է նաև այն դեպքում, երբ գործողությունները հաջողությամբ չեն պսակվել:

A-ի կատարած ծախսերը, որոնց հատուցումն ինքը պահանջում է, այս տեսանկյունից անհրաժեշտ է ստուգել առանձին-առանձին:

ա) Բուժման ծախսերն ու արժեքի հատուցումը:

Սկզբում A-ն ներկայացնում է դուռը ջարդելիս պատռված սվիտերի արժեքի և բուժման ծախսերի հատուցման պահանջ: Դուռը բացելն անխուսափելիորեն անհրաժեշտ է եղել: Բանալի չի եղել: Այսպիսով, ջարդելն ինչպես դիսկի հետ կապված, այնպես էլ համարժեք գործողություն է եղել: Նման իրավիճակում վնասվելն ու հագուստին վնաս պատճառվելը տիպիկ դիսկ են: Դրանից առաջացած ծախսերը ենթակա են հատուցման՝ որպես իրական վնաս:

բ) Զրի խողովակի նորոգման ծախսերը:

Ապա նաև A-ն պահանջում է, որ B-ն իրեն վերադարձնի այն գումարը, որն ինքը վճարել է ջրմուղի կողմից մատուցված ծառայության դիմաց: Անկասկած, այստեղ գործ ունենք A-ի կամավոր կատարած ծախսերի հետ: Սակայն սրան կարելի է առարկել, որ բավական կլիներ պարզապես դադարեցնել ջրամատակարարումը, ապա դրանից

հետո B-ի հետ կապվել ու սպասել նրա հետագա ցուցումներին: Սա բխում է Քաղաքացիական օրենսգրքի 1049 հոդվածից: Սակայն առկա գործում B-ին հնարավոր չի եղել գտնել, նա անհետացած է եղել՝ առանց որևէ լուր թողնելու: Հետևաբար՝ A-ն ստիպված է եղել ինքնուրույն որոշում կայացնել իր միջամտության անհրաժեշտ ծավալի մասին: Նա իրավունք ուներ ենթադրելու, որ պարզապես ջրամատակարարումը դադարեցնելն այդ իրավիճակում, երբ բոլորովին պարզ չէր, թե B-ն երբ կվերադառնա, չէր համապատասխանի իր շահերից բխող վնասի վերացման պահանջին: Այս իսկ պատճառով մասնագետի կողմից ջրի խողովակը նորոգելը պետք է որակվի որպես անհրաժեշտ ծախս: A-ն իրավունք ունի պահանջելու B-ից, որ վերջինս հատուցի իր այդ ծախսը ևս:

գ) A-ի սենյակի առաստաղի վերանորոգման ծախսերը:

A-ն ցանկանում է պահանջել B-ից նաև հատուցել իր այն ծախսերը, որոնք առաջացել են սեփական բնակարանի առաստաղին՝ ջրի պատճառած վնասի վերացման հետևանքով: A-ն այդ վնասը վերացրել է՝ սեփական շահերից ելնելով: Հարց է ծագում՝ արդյո՞ք այստեղ կիրառելի է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1048 հոդվածը: Այն ակնհայտորեն կիրառելի չէ, քանի որ A-ն գործել է ոչ թե B-ի, այլ իր շահերից ելնելով:

Այնուամենայնիվ, A-ն կարող է հղում կատարել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1071՝ հոդվածին, համաձայն որի՝ B-ն որպես բնակարանի սեփականատեր պարտավոր է հատուցել երրորդ անձանց այն վնասը, որը նրանց պատճառվել է անշարժ գույքի օգտագործման ընթացքում: A-ն, անկասկած, երրորդ անձ է: Հոսող ջրի սպասարկումն էլ, անկասկած, բնակարանի օգտագործման մասն է կազմում: Բնակարանի տերը պարտավոր է նաև հոգ տանել այն բանի համար, որ դրա ենթակառուցվածքները պահպանվեն այնպիսի վիճակում, որ բացառված լինի երրորդ անձանց վնաս պատճառելը: Եթե նա դա չի անում, ապա, որպես կանոն, չի կարող վկայակոչել նաև այն հանգամանքը, որ իբր վնասն առաջացել է անհաղթահարելի ուժի հետևանքով: Հետևաբար՝ B-ն A-ի առջև պարտավորություն ունի

վերացնելու ջրի՝ վերջինիս գույքին պատճառած վնասը:

Կարելի է նաև որոշակիորեն վերլուծել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 351 հոդվածը, համաձայն որի՝ երրորդ անձի կողմից պարտավորություն կատարելը կապվում է հատուկ նախապայմանների հետ: Ըստ դրանց՝ երրորդ անձինք միայն բացառիկ դեպքերում իրավունք ունեն բավարարելու երրորդ պարտապանի պարտատերերի պահանջները՝ այդ եղանակով պահանջն իրենք ստանձնելով: Այդ դրույթի իմաստը այն է, որ պարտապանը պաշտպանված լինի պարտատիրոջ փոփոխությունից՝ առանց իր համաձայնության և տեղեկացվածության:

Սակայն տվյալ դեպքում չի հիմնավորվում, որ A-ի կողմից իր բնակարանի առաստաղը վերանորոգելը B-ի համար որևէ շահ է առաջացնում: Առավել ևս, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 351 հոդվածը կիրառելի է այն դեպքերում, երբ պարտապանն իր կամքով է պարտավորության կատարումը դնում երրորդ անձի վրա: Այստեղ այդպիսի դեպք չկա: A-ն առանց B-ի համաձայնության է իրականացրել համապատասխան գործողությունը:

Ուստի այս ծախսի դեպքում կիրառելի է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1071¹ հոդվածը և ոչ թե 351 և 1048 հոդվածները:

դ) Բնակարանի պատերը ներկելու ծախսերը:

A-ն պահանջում է, որ B-ն իրեն հատուցի այն գումարը, որն ինքը վճարել է ներկարարին, որը A-ի պահանջով ներկել է B-ի բնակարանի պատերը: Գուցե և բնակարանի պատերի ներկելը գեղեցկացնում է բնակարանը, բայց այն անհրաժեշտ չէ B-ին պատճառվելիք վնասը կանխելու համար: Նա նաև պատերը ներկել տալու որևէ պարտավորություն չունի: Հարց է ծագում՝ արդյո՞ք պատերը ներկելն առնվազն համապատասխանում է B-ի իրավաչափ շահերին: Սա ևս հենց այնպես հնարավոր չէ ենթադրել, քանի որ բնակարանի գեղագիտական հարցերը տարբեր մարդիկ միանգամայն տարբեր կերպ են ընկալում, և չի կարելի ենթադրել, որ ներկած պատեր ունենալու օբյեկտիվ շահագրգռվածություն կա: Հետևաբար՝ ի շահ ուրիշի գործողություն կատարելու նախապայմանը, որը պահանջվում է 1048 հոդվածով, առկա չէ:

Ապա նաև հասկանալի չէ, թե պատերը ներկելն ինչպես պետք է ակնհայտ առավելություն կամ օգուտ տա: A-ն պետք է մտածած լիներ այն մասին, որ B-ն գուցե և բոլորովին այլ ճաշակ ունի, և ինքը, պատերը ներկել տալով, իր ճաշակն է պարտադրում նրան: Հետևաբար՝ առկա չէ ակնհայտ առավելության կամ օգուտի նախապայմանը:

Այսպիսով, քանի որ A-ի գործողությունները պատերը ներկել տալու առումով չեն կարող որակվել որպես ի շահ ուրիշի գործողությունների արդարացված կատարում, նա իրավունք չունի պահանջելու, որ իրեն հատուցվի ներկարարին վճարված գումարը:

ե) Հատակի նորոգման աշխատանքի վարձատրությունը:

Հաջորդիվ A-ն պահանջում է, որ B-ն վարձատրի իրեն վստահաբար հատակի նորոգման աշխատանքի համար, որն ինքը, որպես որմնադիր, կատարել է մասնագիտական մակարդակով: Սրանք նորից այնպիսի ծախսեր են, որոնք անհրաժեշտ են B-ի բնակարանի արժեքը պահպանելու համար: Սակայն հարց է ծագում՝ արդյո՞ք A-ն կարող է նաև պահանջել իր աշխատանքի համար վարձատրություն, թեև ի շահ ուրիշի գործողություններ կատարելը վարձատրվող գործերի թվին չի պատկանում: Մյուս կողմից՝ ոչ ոք չի կարող ակնկալել, որ այն մասնագիտական ծառայությունները, որոնք շուկայում սովորաբար մատուցվում են որոշակի վարձատրությամբ, նման իրավիճակում անհատույց ձևով կմատուցվեն: Այս միտքն իր արտահայտությունն է գտել Քաղաքացիական օրենսգրքի 1053 հոդվածում, որը հիմնավորում է վարձատրություն պահանջելու իրավունքը, եթե միջամտությունը հանգեցրել է շահագրգիռ անձի համար դրական արդյունքի: Այս չափանիշն անհրաժեշտ է մեկնաբանել օբյեկտիվորեն և ոչ թե թողնել այդ անձի հայեցողությանը: Առկա դեպքում նորոգման շնորհիվ վերականգնվել է բնակարանի արժեքը, ուստի միջամտությունը հաջողությամբ է պսակվել: Հետևաբար՝ A-ն կարող է պահանջել B-ից իր աշխատանքի համար վճարել շուկայում ընդունված վարձատրությունը:

2. Թաղման ծախսերը

Անհրաժեշտ է ստուգել՝ արդյո՞ք B-ն պարտավոր է հատուցել A-ին իր մոր թաղման ծախսերը:

Նման պահանջի իրավունքը, թերևս, կրկին կարող է բխել Քաղաքացիական օրենսգրքի 1052 հոդվածից և նորից դրա համար սկզբում պետք է առկա լինեն 1048 հոդվածով նախատեսված նախապայմանները:

Սկզբում պետք է քննել այն հարցը, թե արդյո՞ք A-ն գործել է B-ի անունից: Անկասկած այդպես է: A-ն մահացածի հետ որևէ կապ չի ունեցել: Հանգուցյալին արժանավայել թաղելու գուցե և գոյություն ունեցող ընդհանուր մարդասիրական պարտականությունը թաղումը չի դարձնում այդ պարտականությունը ստանձնողի գործը:

Հարց է ծագում՝ արդյո՞ք A-ն գործել է նաև ի շահ B-ի: Ակնհայտորեն թաղմամբ չի կանխվել B-ին պատճառվելիք որևէ վնաս: Այդուհանդերձ, B-ն պարտավոր էր թաղելու իր մորը: Այսպես, Քաղաքացիական օրենսգրքի 1242 հոդվածը սահմանում է, որ ժառանգները պարտավոր են առաջին հերթին հատուցել պատշաճ հուղարկավորության համար անհրաժեշտ ծախսերը: Սա պարտականություն է ընտանիքի ներսում, բայց նաև հասարակության առջև: Եթե զավակներն այդ պարտականությունը չեն կատարում, ապա երրորդ անձի կողմից դրա կատարումը, ի շահ ուրիշի կատարված, արդարացված գործողության բնույթ է կրում:

Ծայրահեղ դեպքում կարող է հարց ծագել՝ արդյո՞ք այդ թաղումը համապատասխանում է B-ի մտադրություններին: Նա, ինչպես բոլորին հայտնի է, խիստ գժտված է եղել մոր հետ և չի ցանկացել այլևս նրա հետ որևէ կապ ունենալ: Բայց մոր թաղումն այնպիսի պարտավորություն է, որից ոչ ոք չի կարող խուսափել: Այդ պարտավորությունը գոյություն ունի նաև այն դեպքերում, երբ մոր և զավակի միջև թշնամանք կա: Հակառակ տեսակետն անբարոյական է և չի կարող հաշվի առնվել:

Ընտևաբար՝ A-ն գործել է ի շահ B-ի, երբ պատվիրել է նրա մոր թաղումն ու վճարել դրա համար: Այդ ծախսերը B-ն պարտավոր է նրան հատուցել որպես անհրաժեշտ ծախսեր, առավել ևս, որ ժա-

ռանգության ընդունման պարագայում, ժառանգական զանգվածից պետք է առաջնահերթ մարվեն համապատասխան ծախսերը:

3. Հարկային պարտավորությունների վճարումը

Անհրաժեշտ է ստուգել՝ արդյո՞ք B-ն պարտավոր է հատուցել այն ծախսերը, որոնք իր հարևանը կատարել է վերջինիս հարկային պարտավորությունները վճարելով:

Այստեղ նորից, թերևս, այդպիսի պահանջի իրավունքը կարող է հետևել Քաղաքացիական օրենսգրքի 1052 հոդվածից, ու նորից դրա համար պետք է առկա լինեն 1048 հոդվածով նախատեսված նախապայմանները:

Ակնհայտ է, որ A-ն բացառապես ուրիշի գործն է կատարել, նա այդպիսի պարտավորություն չի ունեցել ո՛չ ըստ օրենքի և ո՛չ էլ պայմանագրով: Բայց հարց է ծագում՝ արդյո՞ք նա իրավունք ուներ կատարելու այդ գործողությունը: Մեկ այլ առնչությամբ վերևում ներկայացվել է այն տեսակետը, որ անձինք իրավունք չունեն հենց այնպես կատարելու երրորդ անձանց պարտավորությունները ու դրանով հայտնվելու պարտատիրոջ դիրքում: Ճիշտ է՝ այդ դեպքում գործ ունենք ի շահ ուրիշի կատարված գործողության հետ, սակայն, որպես կանոն, այստեղ բացակայում է մյուս նախապայմանը, այն է՝ վճարում կատարելն ակնհայտորեն շահագրգիռ անձի առավելության կամ օգուտի համար և դրա համապատասխանությունն այդ անձի իրական կամ հավանական մտադրությանը: Ուրիշի պարտավորությունը վճարելը սկզբունքորեն արդարացված է միայն այն դեպքում, երբ կա պարտապանի համաձայնությունը:

Հարց է ծագում՝ արդյո՞ք այդ սկզբունքը տարածվում է նաև ուրիշի հարկային պարտավորությունը վճարելու վրա: Չէ՞ որ այդ պարտավորությունը գոյություն ունի ոչ թե հորիզոնական իրավահարաբերությունում, որոնցում արդարացիորեն կարևոր են մասնակիցների մտադրությունները և կամքի ուղղվածությունը, այլ իշխանական հարաբերությունում: Կարևորը միայն այն չէ, որ հարկային պարտավորությունը կատարելով չի առաջանում նման պարտավորությունների կատարման ուշացումից բխող տոկոսներ և տույժեր վճարելու

պարտականություն և դրանով կանխվում է հարկեր վճարելու պարտականություն ունեցող անձին պատճառվելիք վնասը: Վճարումը, միևնույն ժամանակ, Քաղաքացիական օրենսգրքի 1048 հոդվածի համաձայն, կարող է որակվել որպես օբյեկտիվորեն ուրիշի շահից բխող:

Շահագրգիռ անձի այս շահից բացի, գոյություն ունի ընդհանուր շահագրգռվածություն առ այն, որ հարկային պարտավորությունները վճարվեն, որպեսզի պետությունը, համայնքը և հասարակությունը պահպանեն իրենց բնականոն գործունեության հնարավորությունը: Այստեղից հետևում է, որ հարկային պարտք ունեցողն իրավունք չունի մտածելու, թե արդյո՞ք պետք է ընդհանրապես մարի իր պարտավորությունները պետության հանդեպ: Վճարումից խուսափելու նրա իրական կամ հավանական մտադրությունները հանրային ու հասարակական առաջնահերթությունների իմաստով պետք է համարվեն ոչ էական: Քաղաքացիական օրենսգրքի 1048 հոդվածի լեզվով ասած՝ միշտ պետք է ելնել այն կանխավարկածից, որ հարկային պարտավորությունների վճարումը կատարվում է ի շահ շահագրգիռ անձի, և նրա համապատասխան մտադրության հավանականությունը դառնում է անհերքելի ենթադրություն:

Այսպիսով, առկա են Քաղաքացիական օրենսգրքի 1048 հոդվածով նախատեսված նախապայմանները: B-ն պարտավոր է A-ին հատուցել այն գումարը, որը վերջինս վճարել է՝ կատարելով B-ի հարկային պարտականությունը:

Խնդիր 12

Հ-ն պահանջում է Լ ՍՊԸ-ից հատուցել այն վնասը, որը հասցվել է նրան այն ժամանակ, երբ Ա-ն իր ավտոմեքենայով փակել էր Հ-ի մեքենայի ճանապարհը, ինչի հետևանքով ինքը չի կարողացել ժամանակին կատարել իր հաջորդ առաջադրանքը:

Անվիճելի է, որ դրա պատճառով նա գործարք կատարելու հնարավորությունից զրկվել է ու 500000 ՀՀ դրամի վնաս կրել:

Այդ վնասը հատուցելու պահանջի իրավունքը, թերևս, կարող է բխել Քաղաքացիական օրենսգրքի 1058 հոդվածից: Նման պահանջի իրավունք ունենալու նախապայմանն այն է, որ մեկ անձ պետք է վնաս հասցրած լինի մեկ այլ անձի կամ նրա գույքին և դա պետք է արած լինի հակաիրավական եղանակով և իր մեղքով: Հակաիրավականության և մեղավորության նախապայմանները մեր դեպքում պետք է առկա լինեն, քանի որ խնդրի համատեքստում չկա օրենքի որևէ նորմ, որով սահմանված կլինեն պատասխանատվություն նաև մեղքի բացակայության կամ իրավաչափ գործողությունների համար, ինչը որպես բացառություն նախատեսված է Քաղաքացիական օրենսգրքի 1058 հոդվածի 2-րդ ու 3-րդ մասերով:

Այդուհանդերձ, քննարկվող կոնկրետ իրավիճակում գործել է ոչ թե Լ ՍՊԸ-ն, այլ նրա աշխատակից Ա-ն: Քաղաքացիական օրենսգրքի 1062 հոդվածի համաձայն՝ իրավաբանական ու ֆիզիկական անձինք հատուցում են իրենց աշխատողի կողմից աշխատանքային պարտականությունները կատարելիս պատճառված վնասները:

Կասկած չկա, որ Ա-ն Լ ՍՊԸ-ի աշխատակից է և կատարել է իր աշխատանքային պարտականությունները: Այն փաստը, որ գործողությունն ուղղված չի եղել Հ-ի դեմ, այստեղ որևէ դեր չի խաղում: Կարևորն այստեղ միայն այն է, որ Ա-ն իր աշխատանքային պարտականությունները կատարելիս գործել է որպես Լ ՍՊԸ-ի աշխատակից և նրա գործողությունների հետևանքով երրորդ անձի վնաս է պատճառվել:

Քաղաքացիական օրենսգրքի 1062 հոդվածը նյութական պատասխանատվություն է սահմանում երրորդ անձի գործողություններ-

րի համար: Այդ դրույթում ոչինչ չի ասվում այն մասին, թե արդյո՞ք այդ երրորդ անձը՝ աշխատակիցը, պետք է գործած լինի հակահրավական կերպով և մեղավորությամբ, որպեսզի այդ պատասխանատվությունն առաջանա: Համապատասխան իրավակարգավորման տեքստից տպավորություն է ստեղծվում, որ մնաս պատճառած անձի աշխատակից լինելու հանգամանքը բավարար է նյութական պատասխանատվության պարտականության առաջացման համար, իսկ մնաս պատճառած վարքագծի հակահրավականությունը և մեղավորությունը կարևոր չեն:

Նման մեկնաբանությունը կհանգեցնեք այն բանին, որ մնաս պատճառած անձը պատասխանատվություն կկրեր ոչ միայն իր վարքագծում հակահրավականության ու մեղավորության բաղադրիչների առկայության դեպքում, ուստի իրավաբանական անձը, որի աշխատակիցն է մնաս պատճառողը, և որի անունից վերջինս գործել է, ստիպված կլինեք պատճառված մնասը հատուցել նաև այն դեպքում, երբ համապատասխան մնասը պատճառվել է իր աշխատակցի օրինական գործողությունների հետևանքով, և որպիսի վարքագծում բացակայել է մեղքը:

Հասարակությունում, որտեղ կա աշխատանքի բաժանում, նման մոտեցումը կլինեք ակնհայտորեն անմիտ և կնշանակեք, որ բացակայում է ռիսկերի արդարացի բաշխումը մնաս պատճառողի ու մնաս կրածի միջև, ինչի հետևանքով ոչ ոք և հատկապես իրավաբանական անձինք չէին ցանկանա աշխատակիցներ ունենալ: Աշխատանքի բաժանմամբ բնութագրվող այնպիսի հասարակությունում, ինչպիսին Հայաստանի Հանրապետությունն է, Քաղաքացիական օրենսգրքի 1062 հոդվածը նման կերպով մեկնաբանելու դեպքում մեծ չափով կտուժեք ձեռնարկատիրական գործունեությունը, որի պաշտպանությունն ուղղակիորեն սահմանված է Քաղաքացիական օրենսգրքի 2 և 3 հոդվածներով:

Ուստի, հիմք ընդունելով Քաղաքացիական օրենսգրքի 8 հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանված իրավակարգավորումները, Քաղաքացիական օրենսգրքի 1062 հոդվածը պետք է մեկնաբանել

Քաղաքացիական օրենսգրքի 2 ու 3 հոդվածների լույսի ներքո¹²: Դրա համար անհրաժեշտ է դիտարկել քաղաքացիական օրենսգրքի 1062 հոդվածի իմաստն ու ներքին տրամաբանությունը: Հիշյալ հոդվածը ճանաչում է աշխատանքի բաժանմամբ բնութագրվող հասարակության գոյությունը և աշխատակիցների հետ աշխատող անձանց նյութական պատասխանատվությունը տարածում է դրանց վրա: Աշխատողները, ըստ էության, գործում են որպես գործատուի երկարացված բազուկ, ուստի վերջիններս պետք է նույնպիսի պատասխանատվություն կրեն, ինչպիսին կրում է գործատուն: Եթե վերջինս պետք է պատասխանատվություն կրի միայն իր դելիկտային գործողությունների համար, որոնք նա կատարել է հակաիրավական եղանակով ու սեփական մեղքով, ապա այդ նախադրյալները պետք է առկա լինեն նաև նրա երկարացված բազուկի՝ աշխատակիցների պատասխանատվության համար: Քանի որ գործատուն ինքը չի գործում, կարևոր է դառնում նրա փոխարեն ու նրա հրահանգներով գործողի, այսինքն՝ վերջինիս աշխատակցի գործողությունների որակումը:

Այսպիսով, Քաղաքացիական օրենսգրքի 1062 հոդվածը պետք է հասկանալ այնպես, որ իրավաբանական ու ֆիզիկական անձինք պատասխանատվություն են կրում իրենց աշխատողների գործողությունների համար, եթե առկա են Քաղաքացիական օրենսգրքի 1058 հոդվածի նախադրյալները: Այստեղ գործ ունենք ուրիշի գործողությունների համար պատասխանատվության հետ, որի նախապայմանն այն է, որ գործողություններ կատարողն ինքը պետք է վնաս պատճառած լինի հակաիրավական եղանակով և սեփական մեղքով:

Հետևաբար՝ Հ-ն L ՍՊԸ-ի հանդեպ պահանջի իրավունք կունենա, եթե Ա-ն նրան կամ նրա գույքին վնաս է պատճառել հակաիրավական եղանակով և սեփական մեղքով: Կարևոր չէ L ՍՊԸ-ի գործողությունների որակումը, օրինակ՝ նշանակություն չունի այն, որ

¹² Պրոֆ. Ռ. Քնիպերի կարծիքով այս փաստարկներն օրենքի տեսանկյունից թույլ հենարան ունեն: Չնայած դրան, նա գտնում է, որ դրանք անպայման հարկավոր են՝ Քաղաքացիական օրենսգրքի իրոք շատ վատ ձևակերպված 1062 ու 8 հոդվածների խոչընդոտները գործնականում հաղթահարելու համար:

նա միշտ լավ վերահսկողություն է իրականացրել Ա-ի նկատմամբ, և հիմնավոր չէ պնդումն առ այն, որ վկայակոչված պատճառով նրան չի կարելի մեղադրել սխալ վարքագծի մեջ:

Հարց է ծագում՝ ավտոմեքենայի ելքի արգելափակումը վսաս է պատճառել Հ-ի անձին, թե՛ նրա գույքին: Ճիշտ է՝ ավտոմեքենան չի վնասվել և որոշ ժամանակ անց նորից գտնվել է Հ-ի տրամադրության տակ, սակայն անձին պատճառված վնաս կարելի է դիտել սեփական ծրագրերին համապատասխան տեղաշարժվելու Հ-ի հայեցողության սահմանափակումը: Չնայած այն հանգամանքին, որ սահմանափակված է եղել ոչ թե Հ-ի՝ անձամբ տեղաշարժվելու ունակությունը, և նա կարող էր մյուս գործարքի կատարմանը գնալ նաև այլ միջոցներով, օրինակ, տաքսի մեքենայի ծառայություններից օգտվելով, սակայն Ա-ի արարքի հետևանքով խախտվել է Հ-ի՝ որոշումներ կայացնելու ազատությունը, քանի որ նրան խոչընդոտել են իր ավտոմեքենան օգտագործելու սեփական ծրագրերին համապատասխան: Հետևաբար՝ առկա է միջամտություն Հ-ի անձնական իրավունքներին:

Վերոնշյալ միջամտությունը նաև հակաիրավական է: Ա-ն իրավունք չունի կանգնեցնելու իր ավտոմեքենան փողոցում՝ երկրորդ շարքում: Այսինքն՝ առկա չէ նաև Ա-ի գործողություններն արդարացնող որևէ հիմք: Որպես նման հիմք հնարավոր կլիներ դիտել, օրինակ, այն, որ վերջինս շտապ պետք է դեղամիջոցներ առաքեր: Արդարացված կլիներ մի քանի բույս, սակայն ոչ մեկ ժամից ավելի կայանումն ու բացակայությունը, որպիսի ժամանակահատվածում Ա-ն գտնվել է սրճարանում նախաճաշելու համար:

Ա-ն քննարկվող իրավիճակում գործել է նաև մեղավորությամբ: Նա գիտակցաբար առաքման ավտոմեքենան սխալ տեղ է կայանել: Անգամ եթե չի գիտակցել, որ դրանով խախտել է Հ-ի իրավունքները, մտքի մեծ լարում չի պահանջվում հասկանալու, որ իր վարքագիծը կարող է հանգեցնել համանման հետևանքի: Հետևաբար՝ նա Հ-ի իրավական բարիքի խախտման առնչությամբ ևս գործել է առնվազն անզգուշորեն:

Հնարավոր է նաև պնդել, որ Հ-ին վսաս է պատճառվել: Եթե նրա

ավտոմեքենայի ելքը արգելափակված չլիներ, այսինքն՝ եթե խախտված չլինեին նրա իրավունքները, նա կկարողանար հասնել իր հաջորդ գործարքի վայրը: Անվիճելի է, որ իր ծրագրերին համապատասխան գործելու անկարողության հետևանքով նա չի կարողացել կնքել մի գործարք, որն իրեն 500000 ՀՀ դրամի շահույթ բերած կլիներ: Այդ չստացված եկամուտը, ըստ Քաղաքացիական օրենսգրքի 17 հոդվածի, ենթակա է հատուցման՝ որպես բաց թողնված օգուտ:

Հաջորդիվ հարց է ծագում՝ արդյո՞ք վնասի հատուցման չափը չպետք է նվազեցվի՝ ելնելով Քաղաքացիական օրենսգրքի 1076 հոդվածից:

Նման նվազեցումը հնարավոր կլիներ այն դեպքում, եթե վնաս պատճառելու կամ այն մեծացնելու վրա ազդեր Հ-ի դրսևորած կրպիտ անզգուշությունը: Լ ՄՊԸ-ն Հ-ի պահանջին առարկում է, նշելով, որ վերջինս կարող էր օգտվել տաքսի մեքենայի ծառայություններից և ժամանակին հասնել իր հաջորդ գործարքի վայր:

Քաղաքացիական օրենսգրքի 1076 հոդվածը ինչ-որ իմաստով բացառում է վնաս պատճառած անձի պատասխանատվությունը, եթե վնասը պատճառվել է տուժողի դիտավորության հետևանքով: Նման սահմանումը կարելի է նաև սխալ հասկանալ՝ ենթադրելով, որ օրենսդիրը վնաս պատճառած անձանց որոշակի արտոնություններ է տալիս: Նորմն իրականում նպատակ է հետապնդում վնաս պատճառելու հետևանքով տուժած անձանց հասկացնել, որ վերջիններս իրենց ռեսուրսները պետք է տնօրինեն զգուշորեն և պատասխանատու լինեն սեփական վարքագծի համար: Տուժողը չպետք է օգտվի այն հանգամանքից, որ վնասի առաջացման կամ դրա չափի մեջ առկա է (նաև) իր մեղքը: Նման իրավիճակում կարելի է ասել, որ անձը, որին վնաս է պատճառվել, ինքն իր հանդեպ մեղավոր է: Այս տեսանկյունից էլ պետք է մեկնաբանվի համապատասխան իրավանորմը: Օրենսդրի կամքը հստակ արտահայտված է Քաղաքացիական օրենսգրքի 1076 հոդվածում: Դրանով վնաս պատճառած անձը ազատվում է վնասը պատճառելու հետևանքով առաջացող պատասխանատվությունից, եթե վնասը պատճառվել է տուժողի դիտավորությամբ, իսկ վնասի հատուցման չափը նվազեցնել հնարավոր է

միայն այն դեպքում, եթե տուժողը կոպիտ անզգուշությամբ խախտել է վնասը նվազեցնելու իր պարտականությունը:

Այս դատողություններն առկա գործի նկատմամբ կիրառելիս հարց է առաջանում՝ արդյո՞ք այն, որ Հ-ն տաքսի մեքենայի ծառայություններից չի օգտվել, կարող է գնահատվել որպես Ա-ի կողմից հակահրավակական եղանակով ու սեփական մեղքով պատճառված վնասը նվազեցնելու Հ-ի պարտավորության խախտում, ինչպես նաև՝ արդյո՞ք տաքսի մեքենայի ծառայություններից չօգտվելը կարելի է որակել որպես տուժողի կողմից դրսևորված կոպիտ անզգուշություն:

Ժամը 10:00-ին, տեսնելով, որ իր ավտոմեքենայի ելքը արգելափակված է, Հ-ն փորձել է առանց ուրիշի օգնության դուրս գալ արգելափակումից: Այս փնտրել է առաքման ավտոմեքենայի վարորդին, ինչից հետո՝ քարշակման ծառայություն, որը նույնպես չի կարողացել գտնել: Սրանք խելամիտ և իրադրությանը համապատասխանող գործողություններ են եղել: Յուրաքանչյուր բարեխիղճ ու խելացի մարդ, անշուշտ, այդպես վարված կլիներ: Երևի, նույնիսկ դժվար է պատկերացնել, որ, տեսնելով իր ավտոմեքենայի արգելափակված լինելը, մարդը անմիջապես կմտածի տաքսի ծառայություններից օգտվելու մասին՝ հաջորդ գործարքի վայր հասնելու համար, ու հետո էլ կփորձի տաքսու ծախսերը հետ ստանալ ավտոմեքենան սխալ տեղում կայանած անձից: Հ-ի ջանքերն անխուսափելիորեն նրանից ժամանակ են խլել: Դրա համար Հ-ին մեղադրել չի կարելի: Երբ նա ապարդյուն որոնումներից հետո հրաժարվել է դրանք շարունակելու մտքից և պարզապես սպասել է, անշուշտ, արդեն ուշ էր հաջորդ գործարքի վայրը հասնելու համար:

Եթե անգամ համարենք, որ Հ-ի վարքագիծը նույնպես վնասի առաջացման պատճառ է եղել, այն, բացի դրանից, պետք է կոպիտ անզգուշության հետևանք եղած լինի: Այսինքն՝ այդ վարքագիծը պետք է գնահատվի ոչ միայն որպես գործարար շրջանառությունում նրա զգուշավորության պարտականության խախտում, այլ որպես հատկապես թեթևամիտ վարվելակերպ: Պնդումն առ այն, որ բանականությամբ շատ թե քիչ օժտված յուրաքանչյուր մարդ պիտի որ

առանց մեծ մտավոր ջանքեր գործադրելու նման իրավիճակում հրաժարվել սեփական ավտոմեքենան ազատելու փորձերից և տաքսի կանչեր, անտեսում է կյանքի իրողությունը: Նույնիսկ, եթե Հ-ն որոշ ժամանակ անց հասկացած լիներ, որ իր ավտոմեքենայով այլևս չի կարողանա ժամանակին հասնել իր հաջորդ գործարքի վայրը, հնարավոր է նաև, որ մտքով անմիջապես անցած չլիներ տաքսի մեքենայի ծառայությունից օգտվելով լուծել խնդիրը:

Հ-ին չի կարելի մեղադրել այն բանի համար, որ գործել է կոպիտ անզգուշությամբ, այնպես որ L ՍՊԸ-ն պարտավոր է հատուցել 500000 ՀՀ դրամի փնասը, որը Հ-ին պատճառվել է Ա-ի հակաիրավական ու սեփական մեղքով կատարված գործողությունների հետևանքով:

Խնդիր 13

1. ՊՊ-ի պահանջների իրավունքը ԿՍ-ի նկատմամբ

ա) Պահանջ առաջադրելու հնարավորությունը Քաղաքացիական օրենսգրքի 1088 ու դրան հաջորդող հոդվածների հիման վրա:

Քաղաքացիական օրենսգրքի 1088 հոդվածի համաձայն՝ որևէ ապրանք արտադրողը պարտավոր է հատուցել այն վնասները, որոնք տուժողը կրել է ապրանքի «կառուցվածքային, բաղադրամասային կամ այլ թերությունների» հետևանքով: Արտադրողը նա է, ով արտադրանք է թողարկում սեփական ձեռնարկատիրական և կազմակերպչական պատասխանատվությամբ:

Շրջանառության մեջ դրվելու պահին կրակմարիչ սարքն ակնհայտորեն ունեցել է թերություն: Այն հանգամանքը, որ անոթն այդ պահին դեռ լցված չէր, և շոգեգոյացուցիչ միջոցը դեռ չէր արտահոսել, քննարկվող իրավիճակում ոչինչ չի փոխում: Թերությունը, այն է՝ սխալ փականը, արդեն առկա էր, ուղղակի այդ թերության հետևանքն էր հայտ է եկել ավելի ուշ: Սա, անշուշտ, Քաղաքացիական օրենսգրքի 485 հոդվածի իմաստով որակի թերություն է:

Չնայած դրան՝ հարց է ծագում՝ արդյո՞ք այստեղ գործ ունենք նաև ապրանքի թերության հետ Քաղաքացիական օրենսգրքի 1088 հոդվածի իմաստով: Կարելի է խնդրի լուծումը քննարկել այն տեսանկյունից, որ սա որակի տիպիկ թերություն է, որը պետք է կարգավորվի առքուվաճառքից ծագող իրավահարաբերությունները կարգավորող իրավունքի նորմերով: Կարելի է ասել, որ սա ոչ մի կապ չունի թերություններով արտադրանքի հետ՝ արտադրանքի համար դելիկտային պատասխանատվության իմաստով, քանի որ չաշխատող արտադրանքի դեպքում այն բոլորովին չի օգտագործվում և վնասի առաջացումն անկախ է արտադրանքի գործադրումից: Վնասն առաջացել է ոչ թե արտադրանքի օգտագործման, այլ արհեստանոցում բռնկված հրդեհի հետևանքով: Օրինակ՝ նա, ով գնում է երաժշտական կենտրոն, որը երաժշտություն չի վերարտադրում, ճիշտ է՝ կարող է որպես գնորդ պահանջ ներկայաց-

նել վաճառողին, բայց չի կարող վնասի հատուցման պահանջ ներկայացնել Քաղաքացիական օրենսգրքի 1088 հոդվածի հիման վրա: Առկա գործում կրակն առաջացել է կրակմարիչի վիճակից անկախ: Վնասը, իր հերթին, առաջացել է այն պատճառով, որ կրակը ժամանակին չի մարվել, քանի որ կրակմարիչը թերություն է ունեցել:

Այսպիսի մոտեցումն էական նշանակություն ունի կրակմարիչի դեպքում: Չէ՞ որ դրա չաշխատելուն առնչվող իրավահարաբերությունները չեն սպառվում օգտագործման համար դրա անպիտանիությամբ: Հակառակը՝ դրա բուն գործառույթը բարիքները կրակից առաջացող վնասներից պաշտպանելն է: ՊՊ-ն գնել էր այդ սարքը, որպեսզի հրդեհի առաջացման դեպքում կանխի կամ գոնե նվազեցնի վնասները, որոնք կարող էին պատճառվել իր առողջությանը, իր անշարժ և շարժական գույքին: Եթե նա տեղյակ լիներ կրակմարիչի թերության մասին, ապա կգներ ուրիշը: Արտադրողն առաջարկում է մի ապրանք, որը նախատեսված է կրակի դեմ պայքարելու համար: Այսպիսով, կրակմարիչի չաշխատելը ոչ միայն նվազեցնում է դրա որակն առքովավաճառքից ծագող իրավահարաբերությունները կարգավորող իրավանորմերի իմաստով, այլև դարձել է միաժամանակ ՊՊ-ի բարիքների վտանգման և վնասման նախապայման¹³: Հետևաբար՝ այստեղ առկա է ապրանքի թերություն Քաղաքացիական օրենսգրքի 1088 հոդվածի իմաստով:

Քաղաքացիական օրենսգրքի 1088 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնասի հատուցման պահանջի իրավունքի նախապայման է նաև այն, որ ՊՊ-ն կրակմարիչ սարքը ձեռք բերած լինի անձնական նպատակներով օգտագործելու և ոչ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար:

Հարց է ծագում՝ արդյո՞ք այն հանգամանքը, որ ՊՊ-ն համապատասխան կրակմարիչը տեղադրել է իր արհեստանոցում, որը գտնվում է նրա բնակելի տանը, դրա ձեռքբերումը որակում է որպես ձեռնարկատիրական գործունեության հետ կապված:

¹³ Dazu W. Rolland, Der praktische Fall –Bürgerliches Recht: Der „nichtlöschende“ Feuerlöscher, in: Juristische Schulung 1993, S. 568 ff; auch Sprau in Palandt, Kommentar zum BGB, 72. Auflage 2013, § 3 Produkthaftungsgesetz, Randnummer 1

Նախ հարկ է նշել, որ կրակմարիչն ինքնին չպետք է և չէր կարող օգտագործվել այլ ապրանքներ արտադրելու համար, այլ իրապես պետք է ծառայեր բացառապես անձնական օգտագործման համար: Հետևաբար՝ քննարկվող իրավիճակում մենք գործ չունենք այնպիսի արտադրանքի հետ, որը ներգրավված է որևէ ձեռնարկության արտադրական գործընթացում: Ցանկացած դեպքում դրա հիմնական գործառույթներից էր ՊՊ-ի արտադրական գործընթացը հրդեհիներից հնարավորինս պաշտպանելը: Այսպիսով, թեև մասամբ և լայն իմաստով, սակայն համապատասխան կրակմարիչն, այնուամենայնիվ, ներգրավված է արհեստանոցի կենսագործունեությանը:

Մյուս կողմից՝ ՊՊ-ն կրակմարիչը գնել է նաև իր բնակելի տունը, իր առողջությունը և իր մասնավոր գույքը հնարավոր հրդեհից առաջացող վնասներից պաշտպանելու համար: Այն, որ ՊՊ-ն քննարկվող սարքը տեղադրել է իր արհեստանոցում, անշուշտ պայմանավորված է այն բանով, որ ինքը շատ հաճախ է այնտեղ լինում և հիմք է ընդունել այն հանգամանքը, որ այն ավելի հարմար է տեղադրել արհեստանոցում, քան որևէ բնակելի տարածքում:

Այսպիսով, քննարկվող իրավիճակում գործ ունենք գույքի ձեռքբերման հետ, որը վերաբերել է ինչպես մասնավոր, այնպես էլ ձեռնարկատիրական ոլորտին և ինչպես մասնավոր, այնպես էլ առևտրային իրավական բարիքների պաշտպանությանը: Այդ ոլորտներն իրարից բաժանելը համապատասխանում է առկա իրավակարգավորումների բովանդակությանը: Մասնավոր կյանքի ոլորտում կրակմարիչի չաշխատելու հետևանքով առաջացած վնասները ենթակա են հատուցման: Դրանց թվին են դասվում ՊՊ-ի այրվածքները, նրա հագուստին պատճառված վնասվածքները, ինչպես նաև նրա հեծանվի կորուստը, որը նա օգտագործում էր մասնավոր նպատակներով: Դրանց թվին չեն պատկանում արհեստանոցին պատճառված վնասները, որովհետև դրանք վերաբերում են ՊՊ-ի ձեռնարկատիրական գործունեության ոլորտին: ՊՊ-ն կրակմարիչ սարքը մասամբ նաև ձեռք էր բերել համապատասխան ոլորտի կենսագործունեության միջավայրի պաշտպանության համար: Պարզելու համար՝ կրակմարիչը ձեռք է բերվել անձնական օգտագործման,

թե ձեռնարկատիրական գործունեության իրականացման նպատակներով, պետք է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, թե ինչ միջոցներով է այն ձեռք բերվել՝ անձնական, թե ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացված:

Հատուցման ենթակա վնասն առաջացել է կրակմարիչը շրջանառության մեջ դնելուց երկու տարի երեք ամիս անց: Քաղաքացիական օրենսգրքի 1090 հոդվածի համաձայն՝ ՊՊ-ն իր պահանջը կարող է ներկայացնել արտադրվելուց հետո տասը տարվա ընթացքում, քանի որ, Քաղաքացիական օրենսգրքի համաձայն, ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների թերությունների հետևանքով պատճառված վնասը ենթակա է հատուցման, եթե այն ծագել է ապրանքի (աշխատանքի, ծառայության) պիտանիության ժամկետի ընթացքում, իսկ եթե պիտանիության ժամկետ չի սահմանված՝ ապրանքը թողարկելու, աշխատանքը կատարելու կամ ծառայությունը մատուցելու օրվանից տասը տարվա ընթացքում: Այսպիսով, այդ պահանջի իրավունքն իր ուժը չի կորցրել, եթե կրակմարիչի վրա պիտանիության ժամկետ նշված չի եղել:

բ) Պահանջի իրավունքը Քաղաքացիական օրենսգրքի 1058 ու դրան հաջորդող հոդվածների հիման վրա:

Այն հանգամանքը, որ ՊՊ-ն Քաղաքացիական օրենսգրքի 1088 և դրան հաջորդող հոդվածների հիման վրա կարող է պահանջ ներկայացնել. չի բացառում 1058 ու դրան հաջորդող հոդվածների կիրառելիությունը: Քննարկվող գործով այդ հոդվածների ստուգումն առանձնապես կարևոր է հիմք ընդունելով այն հանգամանքը, որ պահանջի իրավունքը, Քաղաքացիական օրենսգրքի 1088 հոդվածի համաձայն, թեև առկա է, սակայն համապատասխան պահանջի իրավունքը չի ընդգրկում պատճառված ամբողջ վնասը՝ ձեռնարկատիրական նպատակներով գույքի օգտագործման մասով:

Քաղաքացիական օրենսգրքի 1058 հոդվածի համաձայն՝ վնաս պատճառողը պարտավոր է տուժողին հատուցել ամբողջ վնասը: Այդ պահանջի իրավունքը ենթադրում է, որ ԿԿ-ն ՊՊ-ին վնաս է հասցրել՝ տեղադրելով սխալ փական:

ԿՍ-ն ինքն է արտադրել այդ կրակմարիչը: Այն հանգամանքը, որ համապատասխան իրը շրջանառության մեջ է դրվել ոչ թե ԿՍ-ի, այլ ՀՊ-ի ֆիրմային անվանման տակ, որևէ ձևով չի փոխում ԿՍ-ի արտադրող լինելու հանգամանքը: Այս թերությունն առաջացել է արտադրման ընթացքում, և համապատասխան խախտումները թույլ են տվել ԿՍ-ի մեկ կամ մի քանի աշխատակիցներ: Քաղաքացիական օրենսգրքի 1062 հոդվածի համաձայն՝ ԿՍ-ն, որպես իրավաբանական անձ և կրակմարիչներ արտադրող ընկերություն, նյութական պատասխանատվություն է կրում իր աշխատակիցների գործողությունների համար: Եթե նրանք սխալ փականներ են օգտագործել, ապա գործել են նաև հակաիրավական կերպով և առնվազն անզգուշորեն:

Կարող է հարց ծագել՝ արդյո՞ք ԿՍ-ի գործարանում տեղ գտած արտադրական թերությունը ՊՊ-ին հասցված վնասի պատճառ է դարձել: Բանն այն է, որ ԿՍ-ն կրակմարիչներ մատակարարել էր սկզբում ՀՊ-ին, իսկ վերջինս էլ իր հերթին դրանք վաճառել էր սուպերմարկետ Օ-ին: Միջակայքում գործած այս անձինք չեն ընդհատել սխալ փականների տեղադրման և ՊՊ-ին վնաս պատճառելու միջև պատճառահետևանքային կապը: Հետևաբար՝ ԿՍ-ի վարքագիծը նույնպես պատճառ է հանդիսացել վնասի առաջացման համար:

Կասկած չկա, որ ԿՍ-ն նույնպես հակաիրավական եղանակով է գործել, երբ արտադրել է կրակմարիչ սարքեր սխալ փականներով: Համապատասխան գործողությունները հիմնավորող որևէ հանգամանք չկա:

Ի տարբերություն Քաղաքացիական օրենսգրքի 1088/1091 հոդվածներով կարգավորված դեպքերի՝ նյութական պատասխանատվության համար, ըստ Քաղաքացիական օրենսգրքի 1058 հոդվածի, անհրաժեշտ է, որ ԿՍ-ն գործած լինի մեղավորությամբ: Ինչպես արդեն նշել ենք, աշխատակիցները, որոնք սխալ փական են տեղադրել կրակմարիչ սարքում, գործել են առնվազն անզգուշությամբ: Քաղաքացիական օրենսգրքի 1062 հոդվածի համաձայն՝ ԿՍ-ն պետք է պատասխանատվություն կրի մեղավորությամբ կատարված իր գործողությունների համար: Պատասխանատվությու-

նից ազատվելու առերևույթ հիմքեր այս դեպքում առկա չեն:

Հետևաբար՝ ՊՊ-ն ԿՍ-ի հանդեպ պահանջի իրավունք ունի նաև Քաղաքացիական օրենսգրքի 1058 հոդվածի հիման վրա, որն առկա է 1088 հոդվածից բխող պահանջի իրավունքի կողքին:

Ի տարբերություն Քաղաքացիական օրենսգրքի 1088 հոդվածից բխող պահանջի իրավունքի՝ Քաղաքացիական օրենսգրքի 1058 հոդվածի հիման վրա ծագող պահանջի իրավունքը չի սահմանափակվում առողջությանը և մասնավոր գույքին հասցված վնասներով, այլ ընդգրկում է նաև արհեստանոցին հրդեհի պատճառած վնասները:

Երեք տարվա վաղեմության ընդհանուր ժամկետը (Քաղաքացիական օրենսգրքի 332 հոդված) դեռ չի լրացել:

2. ՊՊ-ի պահանջի իրավունքը ՀՊ-ի առջև

ա) Պահանջի իրավունքը՝ Քաղաքացիական օրենսգրքի 1088 ու դրան հաջորդող հոդվածների հիման վրա:

ՀՊ-ն կրակմարիչը չի արտադրել, այլ միայն վաճառել է այն՝ վրան տեղադրելով իր ֆիրմայի անվանումն ու տիպի վերաբերյալ նշումը: Կրակմարիչի վրա այդ լրացուցիչ հավելումները չեն կարող դիտվել որպես արտադրում:

Թվում է, թե, ըստ Քաղաքացիական օրենսգրքի 1088 հոդվածի, արտադրանքի համար նյութական պատասխանատվության հարցում կարևոր չէ արտադրող լինելու հանգամանքը: Նշված նորմը նախատեսում է, որ, արտադրողից բացի, նյութական պատասխանատվություն է կրում նաև վաճառողը, եթե անգամ բոլորովին գործ չունի արտադրության հետ և չի էլ կարող վերահսկել արտադրությունը: Քաղաքացիական օրենսգրքի 1089 հոդվածի համաձայն՝ վնաս կրած սպառողն իրավունք ունի պահանջ ներկայացնելու արտադրողի կամ վաճառողի դեմ՝ իր ընտրությամբ:

Եթե առանց որևէ գնահատման հետևենք այս տեքստին, ապա ՀՊ-ի նյութական պատասխանատվությունն առկա է, և ՀՊ-ն պարտավոր է ՊՊ-ի վնասը հատուցել նույն ծավալով, ինչ և ԿՍ-ն: Բայց

զարմանալին այն է, որ ԿՍ-ն ու ՀՊ-ն պատասխանատվություն չեն կրում որպես համապարտ պարտապաններ, այլ ՊՊ-ն պետք է որոշի, թե ում դեմ է պահանջ ներկայացնելու դատարան:

Մի փոքր շեղվելով խնդրի գործնական լուծումից՝ նշենք, որ այս արդյունքն այնքան տրամագծորեն է շեղվում արտադրանքի համար պատասխանատվությունը կարգավորող եվրոպական իրավունքի պատկերացումներից (իսկ այդ իրավունքը խթան է եղել հայկական Քաղաքացիական օրենսգրքի համար), որ հարց է ծագում՝ արդյոք անհրաժեշտ չէ՞ տեքստի սահմանափակ մեկնաբանության միջոցով սահմանափակել կիրառման ոլորտը: Սա հատկապես անհրաժեշտ է թվում այն պատճառով, որ բառացի մեկնաբանման արդյունքը կհանգեցնի այն բանին, որ թերություններ ունեցող ապրանքների արտադրողի առջև սպառողի ժամանակակից դելիկտային պահանջի իրավունքի հետևանքով առքուվաճառքը կարգավորող իրավունքի այն կառույցը, որը վերաբերում է նյութական պատասխանատվությանը, ամբողջովին շուռ կգա: Ի տարբերություն պայմանագրի մնացած բոլոր տիպերի՝ յուրաքանչյուր վաճառող, նաև առիթից առիթ ինչ-որ բան վաճառող մասնավոր անձ, ստիպված կլինեն, բացի այն հետևանքներից, որոնք առաջանում են թերություններ ունեցող արտադրանքների հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող հավասարակշռված դրոյթներից, մտավախություն ունենալ, որ 10 տարի շարունակ պետք է նյութական պատասխանատվություն կրի գնորդի այն վնասի համար, որն առաջանում է գնման առարկայի արտադրական թերությունից, թեև դա ինքը չի պատճառել, և դրանում իր մեղքը բացակայում է:

Ամեն դեպքում այս ակնհայտորեն անպատշաճ արդյունքից կարելի է խուսափել «վաճառող կամ արտադրող» հասկացությունները զգուշորեն մեկնաբանելով¹⁴: Ընդ որում՝ այստեղ նորից անհրաժեշտ է անդրադառնալ Քաղաքացիական օրենսգրքի 1088 հոդվածի կար-

¹⁴ Պրոֆ. Ռ. Քնիպերը կարծում է, որ անհրաժեշտ է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1088 հոդվածը փոփոխել, որպեսզի այն մոտեցվի Արտադրանքի համար նյութական պատասխանատվության վերաբերյալ ԵՄ դիրեկտիվին. նա առաջարկել է դա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերաբերյալ 2013 թվականի դեկտեմբերի իր փորձագիտական եզրակացության մեջ:

գավորումներին: Դրա իմաստը (և այստեղ մոտենում ենք սպառողներին պաշտպանող եվրոպական իրավունքին) արտադրողներին շրջանառության մեջ սպառողների համար անվտանգ արտադրանքներ դնել հորդորելն է: Համապատասխան հորդորը կենսագործվում է նաև, երբ արտադրողները պարտավորեցվում են հատուցել սպառողի այն վնասը, որը պատճառվել է արտադրանքի թերության հետևանքով: Ընդ որում՝ մեղավորությունն այստեղ որևէ դեր չպետք է խաղա: Միայն անհաղթահարելի ուժի առկայության դեպքում է, որ նյութական պատասխանատվությունը բացառվում է (Քաղաքացիական օրենսգրքի 1091 հոդված): Անհաղթահարելի ուժ առկա է, օրինակ, երբ այդ պահի դրությամբ արտադրանքի համապատասխան թերությունն անխուսափելի է եղել:

Նման դեպքերում պատասխանատվության ինստիտուտի ներդրման հիմնավորումն ակնհայտորեն այն է, որ արտադրողը կարող է ազդել արտադրանքի որակի վրա, և որ արդարացված է թերության բացասական հետևանքների ռիսկը նրան վերապահելը: Սրան համապատասխան՝ վաճառողի հասկացությունը Քաղաքացիական օրենսգրքի 1088 ու 1089 հոդվածներում պետք է այնքան նեղ մեկնաբանվի, որ դրա տակ հասկացվեն միայն այնպիսի վաճառողները, ովքեր որոշակի եղանակով կարող են ազդել արտադրանքի որակի վրա: Ավելի լայն մեկնաբանության դեպքում ամբողջովին կքանդվի գնորդի ու վաճառողի պայմանագրային իրավունքների և պարտականությունների համակարգը:

Եթե այս դատողությունները կիրառենք առկա գործի և ՀՊ-ի նյութական պատասխանատվության խնդրի նկատմամբ, ապա կարելի է ասել, որ ՀՊ-ն դուրս է եկել ԿՍ-ի կրակմարիչները պարզապես վաճառողի դերից: ՀՊ-ն, ճիշտ է, ինքը չի արտադրել համապատասխան արտադրանքը, սակայն դրանք շրջանառության մեջ է դրել իր ֆիրմայի անվան տակ և իր տիպի նշումով: Թեև ինքն արտադրողը չէ, բայց կրակմարիչների արտադրությունը գտնվում է նրա կազմակերպչական գործունեության ոլորտում: Այսինքն՝ նա չի գործում որպես զուտ վաճառող, այլ գործում է որպես իր արտադրության ոլորտում ծագում ունեցող արտադրանքի վաճառող: Այսինքն՝ նրա

նյութական պատասխանատվությունը չի հեռանում արտադրանքի համար պատասխանատվությունը կարգավորող իրավունքի նպատակներից:

Այսպիսով, Քաղաքացիական օրենսգրքի 1088 հոդվածի իմաստով ՀՊ-ին կարելի է որակել որպես վաճառող:

ՀՊ-ի նկատմամբ ՊՊ-ի պահանջի իրավունքի մնացած բոլոր նախապայմաններն առկա են ճիշտ այնպես, ինչպես և ԿՍ-ի հանդեպ պահանջի իրավունքի դեպքում:

Այսպիսով, ՊՊ-ն, Քաղաքացիական օրենսգրքի 1088 հոդվածի հիման վրա, պահանջի իրավունք ունի ՀՊ-ի հանդեպ նույն ծավալով, ինչ և ԿՍ-ի նկատմամբ:

բ) Պահանջի իրավունքը՝ Քաղաքացիական օրենսգրքի 1058 ու դրան հաջորդող հոդվածների հիման վրա:

Որպեսզի ՊՊ-ն ՀՊ-ի հանդեպ պահանջի իրավունք ունենա, անհրաժեշտ է, որ ՀՊ-ն հակաիրավական եղանակով և մեղավորությամբ վնաս հասցրած լինի ՊՊ-ին:

Անկասկած՝ ՀՊ-ի գործողությունների և վնասի առաջացման միջև կա պատճառահետևանքային կապ: Եթե ՀՊ-ն կրակմարիչը դրած չլիներ շրջանառության մեջ, ՊՊ-ն այն գնած չէր լինի և վնաս էլ կրած չէր լինի:

Թերություններով արտադրանքը շրջանառության մեջ դնելու համար որևէ արդարացման հիմք նույնպես առկա չէ:

Բայց հարց է ծագում՝ արդյո՞ք ՀՊ-ն մեղավորությամբ է գործել: Կրակմարիչն արտադրվել է ոչ նրա ձեռնարկությունում, և նա, Քաղաքացիական օրենսգրքի 1062 հոդվածի համաձայն, պատասխանատվություն չի կրում ԿՍ-ի աշխատակիցների թերի աշխատանքի համար:

Այդուհանդերձ, ՀՊ-ն շրջանառության մեջ է դրել մի արտադրանք, որը ծառայում է որոշակի ռիսկեր կանխելուն: Նա այդ արել է իր սեփական ֆիրմայի անվան տակ, օգտագործելով իր տիպի նշումը, ու ոչ թե որպես այդ արտադրանքի նկատմամբ բացարձակապես չեզոք դիրք ունեցող վաճառող: Այս պարագայում նա պետք է ուշադիր

լիներ, որպեսզի արտադրանքն ունենար անվտանգության այն մակարդակը, որը դրանից արդարացիորեն ակնկալելու իրավունք ունի գնորդը: Սպառման շրջայում հատուկ դիրք ունենալով՝ ՀՊ-ն պարտավոր էր ստուգել՝ արդյո՞ք կրակմարիչն ունի շրջանառության մեջ դրվելու համար անհրաժեշտ անվտանգության մակարդակ:

ՀՊ-ն իր այդ պարտավորությունը չի կատարել, այնպես որ գործել է նաև անզգուշորեն, սա մեղավորության չափանիշ է, որը բավարար է Քաղաքացիական օրենսգրքի 1058 հոդվածի հիման վրա պահանջի իրավունք սահմանելու համար:

ՀՊ-ն, այսպիսով, նյութական պատասխանատվություն է կրում ՊՊ-ի առջև նաև Քաղաքացիական օրենսգրքի 1058 հոդվածի հիման վրա, հետևաբար՝ պետք է հատուցի վնասն ամբողջ ծավալով:

Քաղաքացիական օրենսգրքի 1073 հոդվածի համաձայն՝ ՀՊ-ն ԿՍ-ի հետ համապարտ պատասխանատվություն է կրում: Քաղաքացիական օրենսգրքի 1073 հոդվածով սահմանված՝ համատեղ վնաս պատճառելը պետք է մեկնաբանվի այնպես, որ զուգահեռաբար գործելն արդեն բավական լինի համապատասխան որակման համար: Ներքին հանցակցություն չի պահանջվում: Սա առանց բավարար հիմքի կսահմանափակեր տուժողի՝ իր պահանջի իրավունքի իրականացման հնարավորությունները:

3. ՊՊ-ի պահանջի իրավունքը սուպերմարկետ Օ-ի հանդեպ

ա) Պահանջի իրավունքը՝ առքուվաճառքի պայմանագրի հիման վրա (Քաղաքացիական օրենսգրքի 491 հոդված):

ՊՊ-ն Օ-ի հետ առքուվաճառքի պայմանագիր է կնքել մի կրակմարիչ սարքի վերաբերյալ, որը, ինչպես ներկայացվել է վերևում, որակի թերություն ունի:

ՊՊ-ն, Քաղաքացիական օրենսգրքի 491 հոդվածի հիման վրա, իրավունք ունի պահանջելու նվազեցնել գնման գինը կամ վերացնել թերությունը, անկախ այն հանգամանքից, որ այդ պահանջները չեն համապատասխանում ՊՊ-ի հետապնդած նպատակին, այն է՝ վնասը հատուցելուն: Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 493

հողվածի 2-րդ մասի՝ վերջինիս՝ որպես գնորդի երաշխիքային իրավունքների ժամկետը լրացել է:

բ) Առքուվաճառքի պայմանագրի վիճարկում (Քաղաքացիական օրենսգրքի 312 հոդված):

ՊՊ-ն գնումը կատարելիս ելել է այն կանխավարկածից, որ կրակմարիչը համապատասխանում է պայմանագրում նախատեսված պայմաններին: Անկասկած, նրա սխալ պատկերացումը կրակմարիչի պիտանիության վերաբերյալ ըստ նշանակության օգտագործելու համար կարելի է քննարկել ապրանքի էական հատկանիշների վերաբերյալ մոլորության տեսանկյունից՝ Քաղաքացիական օրենսգրքի 312 հոդվածի 1-ին մասի իմաստով:

Պարտավորական հարաբերությունների մասին ընդհանուր դրույթները պետք է կիրառվեն հատուկ պայմանագրային պարտավորական հարաբերությունների նկատմամբ, եթե դրանց նկատմամբ առաջնահերթություն չունեն արդեն նախատեսված հատուկ նորմերը: Այդպիսի նորմերի թվին են պատկանում որակի թերության մասին հոդվածները: Սրանք պարունակում են կարգավորումներ, որոնք թերություններ ունեցող ապրանքի գնման հատուկ իրավիճակի համար ստեղծում են գնորդի ու վաճառողի միջև շահերի հավասարակշռություն: Այդ կարգավորումները գործնականում կկորցնեին իրենց ուժը, եթե գնորդը կարողանար միաժամանակ վկայակոչել իր մոլորությունը և վիճարկել պայմանագիրը, քանի որ մոլորություն առկա է յուրաքանչյուր անգամ: Հետևաբար՝ Քաղաքացիական օրենսգրքի 485 ու դրան հաջորդող հոդվածների դրույթներն առաջնայնություն ունեն վիճարկման վերաբերյալ դրույթների նկատմամբ, այնպես որ վիճարկումը մոլորության հիմքով բացառվում է:

գ) Պահանջի իրավունքը՝ Քաղաքացիական օրենսգրքի 1088 ու դրան հաջորդող հոդվածների հիման վրա:

Օ-ն կրակմարիչ վաճառողն է: Եթե Քաղաքացիական օրենսգրքի 1088 հոդվածի տեքստը տարածական մեկնաբանենք, ապա ՊՊ-ն իրավունք կունենա Օ-ից պահանջելու վնասի հատուցում ճիշտ նույն

ծնով, որով պահանջի իրավունք ունի ԿԱ-ի ու ՀՊ-ի հանդեպ: Նա կկարողանա որոշել, թե ում դեմ է ուզում պահանջ ներկայացնել:

Կրկին անցնելով տեսական քննարկմանը գերմանական իրավունքի տեսանկյունից՝ նշենք, որ այն, թե որքան անպատեհ է այս ըմբռնումը, հստակորեն երևում է Օ-ի դեպքում: Ի տարբերություն ՀՊ-ի՝ Օ-ն ոչ մի կապ չունի կրակմարիչ սարքի արտադրության հետ: Նա ընդամենը վաճառող է, որն, անշուշտ, վաճառում է նաև այլ մակնիշի կրակմարիչ սարքեր: Եթե նրա վրա բարդեինք նյութական պատասխանատվությունն արտադրանքի թերության համար, ապա նա ստիպված կլիներ հետևել յուրաքանչյուր կրակմարիչի արտադրության գործընթացին: Ինչը հակասում է նրա դերին:

Եվ ընդհանրապես, ամբողջովին առարկայազուրկ կդառնային վաճառողի պայմանագրային նյութական պատասխանատվության սահմանափակումները:

Ուստի ճիշտ է թվում վաճառողի հասկացության նեղ մեկնաբանումը՝ այն տարածելով սոսկ այն վաճառողների վրա, ովքեր (ՀՊ-ի նման) բովանդակային առումով կապված են արտադրանքի արտադրության գործընթացի հետ:

Եթե հետևելու լինենք 2-ի ա) կետի տակ ներկայացված փաստարկմանը, ապա ՊՊ-ն չի կարող որևէ կերպով պահանջել վնասի հատուցում Քաղաքացիական օրենսգրքի 1088 հոդվածի հիման վրա:

դ) Պահանջի իրավունքը՝ Քաղաքացիական օրենսգրքի 1058 ու դրան հաջորդող հոդվածների հիման վրա:

Ի տարբերություն ՀՊ-ի՝ Օ-ն զուտ վաճառող է: Ճիշտ է՝ նրա վարքագիծը նույնպես նպաստել է ՊՊ-ին վնաս պատճառելուն, քանի որ առանց թերություն ունեցող կրակմարիչ սարքի վաճառքի այդ վնասն առաջացած չէր լինի, ուստի Օ-ի պատասխանատվությունը ծագում է Քաղաքացիական օրենսգրքի 1088 հոդվածի հիմքով:

Սակայն կարելի է քննարկել այն տարբերակը, որ Օ-ն՝ որպես վաճառող, իրավական պարտականություն չունի ստուգելու երրորդ անձ արտադրողների բոլոր այն ապրանքները, որոնք վաճառում է:

Այսինքն՝ բացառվում է նաև նյութական պատասխանատվությունը Քաղաքացիական օրենսգրքի 1058 ու դրան հաջորդող հոդվածների հիման վրա:

Այսպիսով, ընդհանուր առմամբ ՊՊ-ն այլևս Օ-ի հանդեպ պահանջի իրավունք չունի, որովհետև գնման ու վնասի առաջացման միջև անցել է ավելի քան երկու տարի ժամանակ:

4. ՊՊ-ի պահանջի իրավունքը գործադիր տնօրեն ԳՏ-ի հանդեպ

ա) Պահանջի իրավունքներ՝ Քաղաքացիական օրենսգրքի 1088 հոդվածի հիման վրա:

Պահանջի իրավունքը գործադիր տնօրեն ԳՏ-ի նկատմամբ առկա կլիներ միայն այն դեպքում, եթե Քաղաքացիական օրենսգրքի 1088 հոդվածի իմաստով հնարավոր լիներ դիտել վերջինիս որպես արտադրող կամ որպես վաճառող: Իհարկե այն հանգամանքը, որ նա ղեկավարում է ՍՊԸ-ի գործերը, նրան չի դարձնում արտադրող կամ վաճառող: Նրա գործողությունների ազդեցությունն առաջանում է բացառապես հօգուտ իրավաբանական անձի կամ ի վնաս նրա:

բ) Պահանջի իրավունքը՝ Քաղաքացիական օրենսգրքի 1058 ու դրան հաջորդող հոդվածների հիման վրա:

Կրակմարիչի անվտանգությունն ստուգելու պարտականությունը կրում է իրավաբանական անձն ինքը և ոչ թե դրա աշխատակիցը, անգամ եթե վերջինը զբաղեցնում է ղեկավար պաշտոն: Այսպիսով, բացառված է նաև Քաղաքացիական օրենսգրքի 1058 հոդվածի հիման վրա պահանջի իրավունքի առկայությունը անձամբ ԳՏ-ի հանդեպ:

Խնդիր 14

1. ՋՖ-ի, ԳՄ-ի ու Ե2-ի պահանջի իրավունքները Ս2-ի հանդեպ

Սույն խնդրի լուծման համար նախ անհրաժեշտ է պարզել պատճառված վնասի հատուցման պայմանները: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև՝ Օրենսգիրք) 1058 հոդվածի բովանդակության և ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունից հետևում է, որ վնաս պատճառելու համար պատասխանատվության ընդհանուր հիմքերն են՝ վնասի առկայությունը, վնաս պատճառելու վարքագիծը և դրա հակահրավակական լինելը, պատճառական կապը հակահրավակական գործողության և վրա հասած վնասի միջև, վնաս պատճառողի մեղքը (*տես Նադարյա Հակոբյանն ընդդեմ Վարդան Հայրապետյանի՝ թիվ ՀՔԴ3/0016/02/08 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

Վնասի հատուցման իրավական հիմքերը

Ա. ՋՖ-ի պահանջի իրավունքները Ս2-ի հանդեպ

1. Իրավական բարիքի խաթարում

Խոսք կարող է լինել մարմնին կամ առողջությանը հասցված վնասվածքների մասին՝

ա) շոկի հետևանքով,

բ) քերծվածքի և որովայնի կծկումների հետևանքով,

գ) մեռած երեխայի պատճառով,

դ) հաշմված երեխայի պատճառով,

ե) քնի խանգարումների, Ե2-ի վիճակի համար մշտական մտահոգության, ինչպես նաև հղիության մնացած հատվածում մոր մարմնում մեռած երեխա Ե1-ի գտնվելու հոգեկան բեռը:

Թվարկված՝ իրավական բարիքի խաթարման հնարավոր տարբերակները հիմք են ՋՖ-ին պատճառված վնասի հատուցման համար այնքանով, որքանով դրանք վնաս են պատճառել վերջինիս

առողջությանը, քանի որ, ներքոգրյալ իրավական կարգավորումների համաձայն, ՀՀ-ում հատուցվում է անձի առողջությանը պատճառված վնասը, որը կարող է ներառել բացի ֆիզիկականից, նաև հոգեկան առողջությունը:

2. Վնաս հասցնելու գործողությունը

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասը հատուցվում է, եթե հատուցման պարտականություն ունեցող անձը չի ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով: Տվյալ դեպքում տուժողի դիտավորությունն առկա չէ, և Ս2-ը կարող է պնդել անհաղթահարելի ուժի ազդեցությունն այն պատճառով, որ ինքը չի կարողացել կառավարել մոտոցիկլետը «vis absoluta-ի (երբ բացարձակապես անհնար է ազատ կամքի կազմավորումը) պատճառով, քանի որ ՋՖ-ին բախվել է Ս1-ի իրեն բախվելու հետևանքով: Այնուամենայնիվ, այդ պնդումն իրավական հիմնավորում չունի, քանի որ նախ խնդրում նշված է, որ երկու մոտոցիկլավարներն էլ խախտել են ճանապարհային երթևեկության կանոնները, որի պատճառով էլ առաջացել է մոտոցիկլետների բախումն ու ենթադրյալ «vis absoluta»-ն, և, բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքը հատուկ կարգավորումներ է պարունակում վնասը համատեղ պատճառած անձանց կողմից, ինչպես նաև առավել վտանգի աղբյուրների փոխներգործությամբ պատճառված վնասի հատուցման համար: Մասնավորապես, Օրենսգրքի 1073 հոդվածի 1-ին մասի համաձայն, վնասը համատեղ պատճառած անձինք տուժողի առջև կրում են համապարտ պատասխանատվություն: Նույն օրենսգրքի 1072 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առավել վտանգի աղբյուրների սեփականատերերը, համապարտ պատասխանատվություն են կրում այդ աղբյուրների փոխներգործության (տրանսպորտային միջոցների բախում և այլն) հետևանքով երրորդ անձանց պատճառված վնասի համար: Վերոգրյալից հետևում է, որ տրանսպորտային միջոցների բախումը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իմաստով համարվում է առավել վտանգի աղբյուրների

փոխներգործություն, որի հետևանքով երրորդ անձանց պատճառված վնասի համար գործում է համապարտ պատասխանատվության սկզբունքը:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է նաև Օրենսգրքի 1072 հոդվածով նախատեսված՝ «գործունեությունը կապված է շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ» ձևակերպմանը և դիրքորոշում արտահայտել առ այն, որ օրենսդիրը նկատի չի ունեցել միայն տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձի մասնագիտական գործունեությունը: «Գործունեություն» եզրույթն օգտագործվել է սովորական իմաստով, և օրենսդիրը նկատի է ունեցել անձի ցանկացած գործունեություն՝ անկախ դրա մասնագիտական կամ ոչ մասնագիտական լինելու հանգամանքից, այլապես դա կհակասեր հոդվածի (առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի ինստիտուտի) էությանն ու տրամաբանությանը (*Կրեն Տիգրան Քոչարյանն ընդդեմ Աշոփ և Արթուր Քոսյանների՝ թիվ ԵԱԲԴ/0610/02/10 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 14-ի որոշումը*):

Վերոգրյալից հետևում է, որ տվյալ դեպքում Ս2-ի կողմից վնաս պատճառող գործողությունն առկա է:

2.1 Վնասվածք հասցնելու գործողության հակաիրավականությունը

Տվյալ դեպքում վնասը հասցվել է տրանսպորտային միջոցների բախման արդյունքում՝ Ս1-ի և Ս2-ի կողմից ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու պատճառով, հետևաբար՝ առկա է վնաս հասցնող արարքի հակաիրավականությունը:

3. Նյութական պատասխանատվություն առաջացնող պատճառահետևանքային կապը

Վնասի հատուցման համար պարտադիր պայման է իրավունքը խախտած անձի ոչ օրինաչափ գործողության և առաջացած վնասի միջև պատճառահետևանքային կապի առկայությունը: Ընդ որում՝ վնասը պետք է ոչ օրինաչափ վարքագծի ուղղակի, անմիջական հետևանքը

լինի, այսինքն՝ պետք է լինի ուղղակի, անմիջական պատճառական կապ: Այն դեպքում, երբ վնասն անհրաժեշտաբար թելադրված չէ ոչ օրինաչափ գործողությամբ (անգործությամբ), կամ գործողության (անգործության) և վնասի միջև կապն անուղղակի է, վնասի հատուցման համար անհրաժեշտ պատճառահետևանքային կապի պայմանն առկա չէ: Համանման դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային որոշումներում (*տես, օրինակ, «Բի Լայնե ՍՊԸ-ն ընդդեմ Արտակ Ջաքարյանի՝ թիվ ԵԿԴ/2128/02/13 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից 2015 թվականի ապրիլի 30-ի որոշումը, Նալայա Հակոբյանն ընդդեմ Վարդան Հայրապետյանի՝ թիվ ՀՔԴ3/0016/02/08 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2009 թվականի փետրվարի 13-ի որոշումը*):

ԶՖ-ի առողջությանը պատճառված վնասի հատուցման համար պատճառահետևանքային կապի առկայությունը խնդրահարույց չէ, քանի որ նրան պատճառված վնասը հակաիրավական արարքի անմիջական հետևանքն է և անհրաժեշտաբար թելադրված է վնաս հասցնող ոչ օրինաչափ գործողությամբ:

4. Մեղավորություն

Մեղքի առկայությունն այս դեպքում իրավական նշանակություն չունի, քանի որ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասը ենթակա չէ հատուցման միայն այն դեպքում, երբ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով: Այսինքն՝ առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի հատուցման համար գործում է առանց մեղքի պատասխանատվության սկզբունքը:

Ինչ վերաբերում է ոգելից խմիչք օգտագործելու հետևանքով Ս1-ի և Ս2-ի կողմից իրենց այնպիսի վիճակի հասցնելուն, երբ վերջիններս չէին կարող գիտակցել իրենց գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք, ապա Օրենսգրքի 1071 հոդվածի 2-րդ մասը նշում է, որ այդ դեպքում վնաս պատճառողը չի ազատվում պատասխանատվությունից:

5. Վնասը

Օրենսգրքի 17 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ), ինչպես նաև *ոչ նյութական վնասը*:

Օրենսգրքի 1078 հոդվածի 1-ին մասի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ քաղաքացուն հաշմություն կամ նրա առողջությանն այլ վնաս պատճառելու դեպքում հատուցման ենթակա են.

1. տուժողի կորցրած աշխատավարձը (եկամուտը), որը նա ստանում էր կամ կարող էր ստանալ,

2. առողջության քայքայման հետևանքով ծագած լրացուցիչ ծախսերը, որոնք հատուցվում են միայն հետևյալ երկու պայմանների բավարարման դեպքում.

- տուժողն ունի օգնության ու խնամքի նման տեսակների կարիք,

- չունի դրանք անվճար ստանալու իրավունք:

Հատուցման ենթակա վնասի ծավալը որոշելու հարցում կիրառման են ենթակա Օրենսգրքի 1078-1080 հոդվածները:

ՁՖ-ի դեպքում նման վնասի մեջ ներառվում են վերոգրյալ բոլոր կիրառելի ծախսերը, այդ թվում՝ կորցրած աշխատավարձն ու հարակից բուժօգնության հետ կապված ծախսերը: Այդ ծախսերի չափը որոշելիս կորցրած աշխատավարձի (եկամտի) հատուցման ենթակա չափը որոշվում է միջին աշխատավարձից (եկամտից) տոկոսներով, որը նա ստացել է մինչև հաշմությունը կամ առողջության այլ վնասվածքը կամ աշխատունակության կորուստը: Այդ տոկոսները որոշվում են տուժողի կողմից մասնագիտական աշխատունակության կորստի, իսկ մասնագիտական աշխատունակության բացակայության դեպքում՝ ընդհանուր աշխատունակության կորստի աստիճանին համապատասխան: Տուժողի կորցրած աշխատավարձի (եկամտի) կազմում ներառվում են նրա ինչպես հիմնական, այնպես էլ համա-

տեղությամբ կատարված աշխատանքի՝ եկամտային հարկով հարկվող աշխատանքային և քաղաքացիական իրավական պայմանագրերով վարձատրության բոլոր վճարները: Հաշվի չեն առնվում միանվագ բնույթի վճարները, մասնավորապես՝ չօգտագործված արձակուրդի փոխհատուցումը և արձակման նպաստը: Ժամանակավոր անաշխատունակության կամ հղիության և ծննդաբերության համար արձակուրդի ժամանակաշրջանի համար հաշվի է առնվում վճարված նպաստը: Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները, ինչպես նաև հեղինակային հոնորարը ներառվում են կորցրած աշխատավարձի կազմում, ընդ որում՝ ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտները ներառվում են հարկային տեսչության տվյալների հիման վրա:

6. Ոչ նյութական վնասի հատուցումը

Ինչպես վերոգրյալ 5-րդ մասում նշվել է, Օրենսգրքի 17 հոդվածի բովանդակության ուսումնասիրությունից բխում է, որ մի կողմից հատուցման ենթակա վնասների մեջ ներառված է նաև ոչ նյութական վնասը, մյուս կողմից՝ ոչ նյութական վնասը հատուցվում է միայն օրենքով նախատեսված դեպքերում:

ՀՀ քաղաքացիական օրենսդրության իմաստով ոչ նյութական վնասը ֆիզիկական կամ հոգեկան տառապանք է, որն առաջացել է անձին ի ծնե կամ օրենքի ուժով պատկանող նյութական կամ ոչ նյութական բարիքների դեմ ոտնձգող կամ նրա անձնական գույքային կամ ոչ գույքային իրավունքները խախտող որոշմամբ, գործողությամբ կամ անգործությամբ (Օրենսգրքի 162.1 հոդվածի 1-ին մաս):

Ինչ վերաբերում է ոչ նյութական վնասի հատուցման օրենքով նախատեսված դեպքերին, ապա անհրաժեշտ է նշել, որ ոչ նյութական վնասի հատուցման ինստիտուտը Հայաստանի Հանրապետությունում օրենսդրական ամրագրում է ստացել անձանց պետական-իշխանական լիազորություններով օժտված պաշտոնատար անձանցից պաշտպանելու նպատակով և չի տարածվում միջանձնային հարաբերություններում պատճառված բարոյական վնասի վրա,

բացառությամբ՝ պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառոված վնասի, որը դրսևորվում է վիրավորանքի և/կամ զրպարտության միջոցով, ինչն էլ քննարկվող դեպքի հետ առնչություն չունի (Օրենսգրքի 162.1 հոդված): Հետևաբար՝ տվյալ դեպքում քննարկվող ոչ նյութական վնասը ՀՀ օրենսդրությամբ հատուցման ենթակա չէ:

7. Իրավական հետևանքը

Կատարված վերլուծության արդյունքում հնարավոր է պնդել, որ

1. ԶՖ-ն իրավունք ունի պահանջելու իր առողջությանը պատճառոված վնասի ամբողջական հատուցում U2-ից, քանի որ տվյալ դեպքում գործում են պատճառոված վնասի համար համապարտ պատասխանատվության և առանց մեղքի պատասխանատվության սկզբունքները:

2. ԶՖ-ի կրած բարոյական վնասը, այն է՝ մեռած, հաշմված երեխաների համար մշտական մտահոգության, քնի խանգարումների և շոկի հետևանքով կրած հոգեկան տառապանքները, եթե դրանք չեն առաջացրել առողջությանը պատճառոված վնաս (վերոգրյալ 5-րդ մաս), ապա ՀՀ-ում գործող իրավակարգավորումների շրջանակներում հատուցման ենթակա չեն, ուստի այդ մասին ԶՖ-ն պահանջ չի կարող ներկայացնել:

Բ. ԳՄ-ի պահանջի իրավունքները U2-ի հանդեպ

1. Իրավական բարիքի խաթարում

ա) շոկ և ուշագնացություն,

բ) ոտքի հողախախտված կոճը՝ մարմնական վնասվածք:

2. Վնասվածք հասցնող գործողություն (տէն վերևում)

3. Վնաս

ԳՄ-ին պատճառոված վնասը, ինչպես երևում է վերևում արված վերլուծություններից, ենթակա է հատուցման, եթե այն կարող է հա-

մարվել ԳՄ-ի առողջությանը պատճառված վնաս և առաջացրել է հատուցման ենթակա հետևանքները (Օրենսգրքի 17 հոդվածի 2-րդ մաս, Օրենսգրքի 1078 հոդվածի 1-ին մաս):

Ուրբի հողախախտված կոճը առողջությանը պատճառված վնաս է, իսկ շոկը և ուշագնացությունն առողջությանը պատճառված վնաս կարող է համարվել բժշկական համապատասխան եզրակացությամբ, քանի որ հոգեկան առողջությունը ևս առողջության բաղկացուցիչ մասն է:

4. Նյութական պատասխանատվություն առաջացնող պատճառահետևանքային կապ

Ինչպես արդեն նշվել է վերևում, վնասը հատուցման ենթակա լինելու համար հարկավոր է վնասի և այն պատճառող արարքի միջև անմիջական, ուղղակի պատճառահետևանքային կապ, սակայն տվյալ դեպքում վթարի հետևանքով վնասն անմիջականորեն պատճառվել է ՋՖ-ին և նրա միջոցով՝ երեխաներին, ինչի մասին լուրը ԳՄ-ին ստիպել է հուզվել և շտապել դեպքի վայր, ինչի ընթացքում վերջինս ստացել է համապատասխան մարմնական վնասվածքը: Ասվածից հետևում է, որ Ս2-ի արարքը և ԳՄ-ի ստացած վնասվածքը միջնորդավորվել են Ս2-ի կատարած արարքի մասին լուրը ստանալով, դրանից հուզվելով, դեպքի վայր շտապելով և աստիճանները արագ անցնելով: Այսինքն՝ ԳՄ-ի ստացած վնասվածքն անհրաժեշտաբար թելադրված չէ ՋՖ-ին վրատրթի ենթարկելու գործողությամբ, հետևաբար՝ առկա չէ ուղղակի պատճառական կապ, և ԳՄ-ի՝ ոտքը հողախախտ լինելու հետևանքով նրա առողջությանը պատճառված վնասը ևս ենթակա չէ հատուցման:

Նույն կերպ ԳՄ-ի շոկն ու ուշագնաց լինելը, եթե անգամ համարվի առողջությանը պատճառված վնաս, ենթակա չէ հատուցման, քանի որ այս դեպքում ևս առկա է կնոջը վթարված տեսնելու հետևանքով հոգեկան ապրումներով միջնորդավորված վնաս, այն է՝ շոկ և ուշագնացություն: Այսինքն՝ արարքի՝ վթարի և երրորդ անձին՝ ԳՄ-ին պատճառված վնասի միջև առկա է հոգեկան եղանակով միջնորդավորված պատճառահետևանքային կապ, որը ենթակա չէ հատուց-

ման. թեև, հաշվի առնելով արտասահմանյան փորձը, կարծում ենք, որ նման դեպքերում կարելի է թույլատրել վնասի հատուցում նաև հոգեկան ապրումներով միջնորդավորված պատճառահետևանքային կապի առկայության պարագայում:

5. Մեղավորությունը (տե՛ս վերևում)

6. Ոչ նյութական վնասի հատուցումը (տե՛ս վերևում)

7. Իրավական հետևանքը

Վերոգրյալի հիման վրա պարզ է դառնում, որ ԳՄ-ի առողջությանը պատճառված վնասը ենթակա չէ հատուցման, քանի որ վնաս պատճառող արարքի և վնասի միջև առկա չէ ուղղակի, անմիջական պատճառական կապ:

Գ. Ե2-ի պահանջի իրավունքները Ս2-ի նկատմամբ

1. Ե2-ի պահանջի իրավունքի առկայությունը և իրավական բարիքի խաթարումը

ա) Ուղեղի ծանր վնասվածքները և ծանր հաշմությունը Ե2-ի մարմնին ու առողջությանը հասցված վնասվածքներ են:

բ) Ողջ կյանքի ընթացքում «ա) կետում նշված վնասվածքների առկայությունն ազդում է հատուցման ծավալի վրա:

Ե2-ի առնչությամբ ծագում է հետևյալ հարցը. արդյո՞ք նա կարող է Օրենսգրքի 1058 հոդվածի իմաստով համարվել «քաղաքացի, որի անձին վնաս է պատճառվել», քանի որ այդ հոդվածի համաձայն՝ հատուցման ենթակա է քաղաքացու անձին պատճառված վնասը, իսկ տվյալ դեպքում վնաս հասցրած իրադարձության պահին Ե2-ը դեռևս ծնված չէր, ուստի՝ իրավունակ չէր (Օրենսգրքի 20 հոդվածի իմաստով մինչ իր ծննդյան պահը Ե2-ը օժտված չի քաղաքացիական իրավունակությամբ, ուստի հասարակական հարաբերությունների մասնակից չի կարող լինել, այդ թվում նաև ներկայացուցչի կամ

օրինական ներկայացուցչի միջոցով): Այսինքն՝ Ե2-ը չէր կարող ՀՀ քաղաքացիական օրենսդրության իմաստով համարվել «երեխա» և լինել տուժող մինչև իր ծննդյան պահը:

Այն, որ Ե2-ը մինչև ծնվելը, ՀՀ օրենսդրության համաձայն, չէր կարող համարվել «երեխա» (տուժող), բխում է նաև «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքի և «Երեխաների իրավունքների մասին» 1989թ. նոյեմբերի 20-ի Նյու Յորքի կոնվենցիայի իմաստով «երեխա» եզրույթին տրված մեկնաբանությունից, որոնց համապատասխանաբար՝ 1-ին հոդվածների համաձայն՝ երեխա է համարվում 18 տարին չլրացած յուրաքանչյուր ոք (...): Կարծում ենք, որ, հիմք ընդունելով Օրենսգրքի 8 հոդվածի 1-ին պարբերությունը և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86 հոդվածի 1-ին մասով սահմանված կարգավորումն առ այն, որ իրավական ակտի կարգավորումները պետք է մեկնաբանվեն դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ, սահմանված «18 տարին չլրացած» արտահայտությունը պետք է հասկանալ 0-ից մինչ 18 տարին ընկած ժամանակահատվածը: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ պտուղը պետք է դիտվի հետազայում ծնված երեխայի հետ նույնական էակ, այլապես կխաթարվի իրավական պաշտպանություն ստանալու հնարավորությունն ընդհանրապես, ուստի՝ Ե2-ի իրավունակությունն ու, համապատասխանաբար, վերջինիս կողմից իր առողջությանը պատճառված վնասի հատուցում պահանջելու իրավունքը ծագել է ծննդյան պահից:

Վերոգրյալի հիման վրա Ե2-ին պատճառված վնասի հատուցման համար պետք է հաշվի առնվեն հետևյալ առանձնահատկությունները.

- պտուղը պետք է դիտվի որպես հետազայում ծնված երեխայի հետ նույնական էակ,
- Ե2-ին հասցվել է վնաս դեռևս չծնված ժամանակ, այսինքն՝ մինչև իրավունակություն ձեռք բերելու ուժով դրա համար հատուցում ստանալու իրավունքի ծագման պահը,
- Ե2-ին հասցված վնասն իր բնույթով տևող է, որի համար հատուցում ստանալու իրավունք նա ձեռք է բերում ծննդյան պահից:

Ինչ վերաբերում է մինչև ծնունդը Ե2-ին հասցված վնասին, ապա

ԵՁ-ը չի կարող պահանջել դրա հատուցում:

2. Նյութական պատասխանատվություն առաջացնող պատճառահետևանքային կապ (մանրամասն տես վերևում)

Քանի որ պտուղը համարվում է հետագայում ծնված երեխայի հետ նույնական էակ, և վնաս հասցնող գործողության ու պտղին պատճառված վնասի միջև առկա է ուղղակի պատճառահետևանքային կապ (ԵՁ-ի կրած վնասն անհրաժեշտաբար թելադրված է վնաս հասցնող գործողությամբ), ապա վնասի հատուցման այս պայմանը ևս բավարարված է:

3. Մեղավորություն (տես վերևում)

4. Վնաս

Ինչ վերաբերում է ԵՁ-ի համար հատուցման ենթակա վնասին և դրա ծավալներին, ապա համապատասխան իրավահարաբերությունները կարգավորվում են Օրենսգրքի 1080 հոդվածով: Մասնավորապես, վերջինիս դեպքում պատասխանատու անձը պարտավոր է հատուցել առողջությանը վնաս պատճառելուց ծագած ծախսերը: Վերջինիս տասնչորս տարեկան դառնալուց հետո, ինչպես նաև տասնչորս տարեկանից մինչև տասնութ տարեկան հասակի անչափահասի, որը չունի աշխատանք (եկամուտ), առողջությանը վնաս պատճառելու դեպքում, դրա համար պատասխանատու անձը պարտավոր է, բացի տուժողի առողջությանը վնաս պատճառելուց ծագած ծախսերից, հատուցել նաև նրա աշխատունակության կորստի կամ նվազեցման հետ կապված վնասը՝ ելնելով նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափից, իսկ քանի որ բժշկի եզրակացության համաձայն ԵՁ-ի աշխատունակության կորուստն անընդհատ և մշտական բնույթի է, առկա է հիմք պնդելու, որ հատուցման ժամանակահատվածը ներառելու է վերջինիս կյանքի ողջ ընթացքը: Այն դեպքում, եթե ԵՁ-ի աշխատունակությունը, այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում վերականգնվի և վերջինս հնարավորություն ունենա մտնելու աշխատանքային հարաբերությունների մեջ, ապա վերջինս աշխատանքային գործունեությունն սկսե-

լուց հետո իրավունք ունի, ելնելով իր ստացած աշխատավարձից, պահանջել վնասի հատուցման չափի մեծացում, սակայն իր զբաղեցրած պաշտոնի համար սահմանված վարձատրությունից կամ իր աշխատատեղի նույն որակավորման աշխատողի աշխատավարձից ոչ ավելի չափով:

Միաժամանակ հարկ ենք համարում անդրադառնալ նման հատուցման ժամկետներին, այսինքն՝ տևողությանը: Այս հարցը կարգավորվում է Օրենսգրքի 434 հոդվածով սահմանված կարգով, քանի որ պարտավորությունն անխզելիորեն կապված է պարտապանի անձի հետ: Մասնավորապես, նշված իրավակարգավորման համաձայն, պարտավորությունը դադարում է պարտապանի մահով, եթե կատարումը չի կարող տեղի ունենալ առանց պարտապանի անձնական մասնակցության, կամ պարտավորությունն այլ կերպ անխզելիորեն կապված է պարտապանի անձի հետ: Այսինքն՝ ԵԶ-ը քննարկվող հատուցման իրավունքով օժտված կլինի, քանի դեռ ողջ է պարտապանը:

6. Իրավական հետևանքը.

ԵԶ-ը կարող է ՍԶ-ից պահանջել հատուցել իր առողջությանը պատճառված վնասն ամբողջությամբ, քանի որ տվյալ դեպքում գործում են պատճառված վնասի համար համապարտ պատասխանատվության և առանց մեղքի պատասխանատվության սկզբունքները:

II. Տարբերակ 2

Արդյոք Ս1-ը պարտավոր է վճարել ամբողջ գումարը

Ա. Հայցային վաղեմությունն անձի կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցման գործերով

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ տրված կարգավորումները՝ հնարավոր է պնդել, որ Ս1-ի կողմից հիշատակ-

ված հայցային վաղեմությունը քննարկվող կոնկրետ դեպքում կիրառելի չէ: Նման հետևությունը մասնավորապես հիմնված է Օրենսգրքի 344 հոդվածի 3-րդ մասի վրա, որով սահմանվում է, որ հայցային վաղեմությունը չի տարածվում քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման պահանջի վրա:

Այնուամենայնիվ, նույն հոդվածով սահմանվում է, որ հատուցման պահանջը վնասի հատուցման իրավունքի ծագման պահից երեք տարի անց անցյալ ժամանակի համար բավարարվում է ոչ ավելի, քան հայցի ներկայացմանը նախորդած երեք տարիների համար: Այսինքն՝ կարելի է ենթադրել Ս1-ի հանդեպ Ե2-ի պահանջի ծավալը կարող է ներառել միայն 2006թ.-ից հետո ընկած ժամանակահատվածը: Սակայն այս պնդումը ճիշտ կլինի միայն այն դեպքում, եթե վնասի հատուցման իրավունքի ծագման պահը համարվի վնասը հասցնելու պահը, մինչդեռ վնասը հասցնելու պահից մինչև 2009 թվականը Ս1-ի ինքնությունը հայտնի չի եղել Ե2-ին և անհրաժեշտ է պարզել այդ հանգամանքի իրավական հետևանքը:

Այսինքն՝ տվյալ դեպքում կարևոր է որոշել, թե երբ է Ե2-ը օժտվել վնասի հատուցման իրավունքով Ս1-ի հանդեպ՝ Ս1-ի ինքնությունը հայտնի դառնալու, թե՛ վթարի պահին, երբ հայտնի էր միայն Ս2-ի ինքնությունը՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ տվյալ դեպքում Ս1-ը և Ս2-ը համապարտ պարտապաններ են, և Ե2-ը հնարավորություն ուներ Ս2-ին ներկայացնելու վնասը հատուցելու պահանջն ինչպես ամբողջությամբ, այնպես էլ մի մասով, սակայն այդպես չի արել:

Օրենսգրքի 362 հոդվածի համաձայն՝ համապարտ պատասխանատվության դեպքում պարտատերը կարող է պահանջել պարտավորության կատարում յուրաքանչյուր պարտապանից ինչպես պարտավորության մի մասով, այնպես էլ ամբողջ մասով, սակայն տվյալ դեպքում համապարտ պատասխանատվություն կրող անձանցից մեկի՝ Ս1-ի ինքնությունը հայտնի չի եղել, և Ե2-ը օբյեկտիվորեն զրկված է եղել նրան պահանջ ներկայացնելու հնարավորությունից: Ստացվում է, որ թեև Ե2-ը օրենքով սահմանված իրավունք ուներ պահանջ ներկայացնելու նաև Ս1-ին, սակայն նա օբյեկտիվորեն զրկված է

եղել այդ իրավունքն իրացնելու հնարավորությունից: Հետևաբար՝ հնարավոր չէ պնդել, որ Ս1-ին պահանջ ներկայացնելու Ե2-ի իրավունքը ծագել է այն պահից, երբ նա կարող էր պահանջ ներկայացնել Ս2-ին: Այլ կերպ ասած՝ Ե2-ի՝ Ս1-ի հանդեպ վնասի հատուցման իրավունքը ծագել է ոչ թե վթարի, այլ Ս1-ի ինքնությունը հայտնի դառնալու պահին, երբ Ե2-ը իրական հնարավորություն է ստացել իրացնելու իր այդ իրավունքը, իսկ այն, որ Ս2-ի ինքնությունն ի սկզբանե պարզ էր և նրան կարող էր պահանջ ներկայացվել, նշանակություն չունի:

Ավելին, Օրենսգրքի 363 հոդվածի համաձայն, համապարտ պարտավորության դեպքում պարտապանն իրավունք չունի պարտատիրոջ պահանջների դեմ ներկայացնել այնպիսի առարկություններ, որոնք հիմնված են մյուս պարտապանի և պարտատիրոջ այն հարաբերությունների վրա, որոնց տվյալ պարտապանը չի մասնակցում: Այսինքն՝ Ս1-ը Ե2-ի պահանջի դեմ չի կարող վկայակոչել այն առարկությունը, որը կարող է անել Ս2-ը Ե2-ի հանդեպ: Մասնավորապես, Ս2-ի այն առարկությունը, որ իրեն հայց չի ներկայացվել վթարից հետո, Ս1-ը չի կարող ներկայացնել Ե2-ին, քանի որ նա այդ հարաբերությանը մասնակից չէ:

Ինչ վերաբերում է համապարտ պատասխանատվություն կրող անձանց՝ Ս1-ի և Ս2-ի միմյանց հանդեպ ունեցած պահանջի իրավունքի նկատմամբ վաղեմության ժամկետներն անցած լինելուն կամ չլինելուն, ապա դա ազդեցություն չունի Ե2-ին պատճառված վնասի հատուցման հարցում:

Հետևաբար՝ Ս1-ը պարտավոր է հատուցել պատճառված ամբողջ վնասը:

III. Ե1-ին պատճառված վնասի հատուցման առանձնահատկությունները

Ավելորդ չենք համարում անդրադառնալ նաև Ե1-ին պատճառված վնասի մասով փոխհատուցման հարցին: Օրենսգրքի 1087 հոդվածի համաձայն՝ տուժողի մահվան առնչությամբ վնասի համար պատասխանատու անձինք պարտավոր են հատուցել հուղարկավորության հետ կապված անհրաժեշտ ծախսերն այն անձին, որն այդ

ծախսերը կատարել է:

Չնայած այն հանգամանքին, որ Ե1-ը եղել է մեռելածին, այնուամենայնիվ, ծնունդ տեղի է ունեցել, թեկուզ և քննարկվող դեպքում անձի ծննդյան և մահվան պահը համընկել է, կարծում ենք՝ հնարավոր է պնդել, որ վերջինս կարող է Օրենսգրքի 1087 հոդվածի իմաստով լինել տուժող և նրա հուղարկավորության ծախսերը կատարած անձը կարող է պահանջել այդ ծախսերի հատուցում: Ինչ վերաբերում է մինչև ծնունդը Ե1-ին հասցված վնասին, ապա այն կարող է համարվել բացառապես ՋՖ-ի առողջությանը պատճառված վնաս՝ համապատասխան բժշկական եզրակացության առկայության դեպքում:

Խնդիր 15

Տարբերակ 1¹⁵

1. Պայմանագրի հիման վրա ծագող պահանջի իրավունքներ

Հ-ն կարող է Ն-ից պահանջել պատշաճ վարձատրություն՝ հիմք ընդունելով Քաղաքացիական օրենսգրքի 1242 և 777 հոդվածները: Սակայն այս դեպքում անհրաժեշտ է, որ Վ-ի և Հ-ի միջև կնքված լի-նի ծառայությունների մատուցման պայմանագիր, և, ըստ այդմ՝ Հ-ն իրավունք ունենա Վ-ից այդպիսի վարձատրություն պահանջելու: Քաղաքացիական օրենսգրքի 1242 հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության համաձայն՝ Ն-ն պարտավորված է մարելու Վ-ի պարտ-քերը:

Այս առումով անհրաժեշտ է բացահայտել՝ արդյո՞ք Հ-ի ու Վ-ի մի-ջև կնքված եղել է ծառայությունների մատուցման պայմանագիր այն բովանդակությամբ, որ Վ-ն Հ-ին, բացի նրան կացարան, սնունդ և գրպանի ծախսերի համար գումար տրամադրելուց, պարտավորված է եղել վճարել նաև պատշաճ վարձատրություն:

Քաղաքացիական օրենսգրքի 448 հոդվածի համաձայն՝ նման պայմաններով պայմանագրի առկայությունն ապացուցելու համար անհրաժեշտ է, որ մի կողմի օֆերտան ակցեպտավորած լինի մյուս կողմը: Պայմանագիր կնքելու առաջարկը, ըստ Քաղաքացիական օրենսգրքի 451 հոդվածի, պետք է արտահայտի այն անողի պայ-մանագիր կնքելու կամքը և պարունակի պայմանագրի էական պայ-մանները: Քաղաքացիական օրենսգրքի 454 հոդվածի համաձայն՝ ակցեպտոր պետք է լինի լրիվ և անվերապահ:

Հ-ն մշտապես արտահայտվել է այն մասին, որ Վ-ից ավելին է սպասում, քան միայն իրեն տրամադրածը: Վ-ն քաջատեղյակ է եղել այդ ակնկալիքներին և համաձայն է եղել դրանց: Այս վարքագծի հի-

¹⁵ Խնդրի լուծման առաջին տարբերակում քննարկվում է հարցադրումը՝ արդյո՞ք ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի կնքման համար օֆերտա և դրան համապատասխան ակցեպտ առկա է, թե ոչ, իսկ երկրորդ տարբերակում՝ արդյո՞ք իրավաչափ է գույքը ժառանգելու խոստումը:

ման վրա թերևս կարելի է եզրակացնել, որ երկու կողմերն էլ պայմանագիր կնքելու մտադրություն ունեցել են: Վարձատրությունը, Քաղաքացիական օրենսգրքի 440 հոդվածի 3-րդ մասի համաձայն, թերևս կարող էր լինել այն գինը, որը սովորաբար վճարվում է սպասուհու աշխատանքի համար:

Հ-ի ու Վ-ի վարքագծի այսպիսի մեկնաբանությունը, ճիշտ է, ամբողջովին անընդունելի չէ, բայց կողմերի փոխադարձ կամքի (մտադրության) արտահայտությունն առկա չէ: Հ-ն չէր ցանկացել Վ-ի վրա դնել վարձատրության եղանակի վերաբերյալ վերջինին կաշկանդող որևէ պարտավորություն, այլ ընդամենն արտահայտել էր պատշաճ վարձատրություն ստանալու իր ակնկալիքը, ընդ որում՝ այդ վարձատրությունը կարող էր լինել գումարի վճարումը կամ ժառանգ նշանակելը: Վ-ն դա հասկացել և ընդունել էր: Նա Հ-ին սկզբում նույնիսկ ժառանգ էր նշանակել: Բայց եթե նման վարքագծում ցանկանանք տեսնել կնքված պայմանագիր, ապա դուրս կգանք պայմանագրի մեկնաբանման այն չափանիշների սահմաններից, որոնք ամրագրված են Քաղաքացիական օրենսգրքի 447 հոդվածում: Եթե անգամ մի կողմ թողնենք այն, որ չի պահպանվել նման տիպի պայմանագրերի առաջադրվող գրավոր ձևը, ցանկացած դեպքում սահմանված չէ ու որևէ ձևով չի երևում վարձատրություն տալու եղանակը: Ո՛չ Հ-ի ու Վ-ի միջև տեղի ունեցած գրույցների տեքստից և ո՛չ էլ գոյություն ունեցած իրավահարաբերությունների բնույթից հնարավոր չէ որոշակիությամբ դատողություններ անել ո՛չ Վ-ի պարտավորությունների ծավալի և ո՛չ էլ նույնիսկ Հ-ի պարտավորությունների ծավալի մասին:

Հետևաբար՝ ծառայությունների մատուցման պայմանագիր այն բովանդակությամբ, որի համաձայն՝ Վ-ն պարտավոր է պատշաճ վարձատրություն վճարել Հ-ին, կնքված չի եղել:

Ուստի Հ-ն չի ունեցել պայմանագրային պահանջի իրավունք Վ-ի հանդեպ, որը կարողանար ներկայացնել Ն-ին:

2. Անհիմն հարստացման հիմքով առաջացած պահանջի իրավունքներ

Հ-ն կարող է Ն-ից պահանջել պատշաճ վարձատրություն՝ հիմնվելով Քաղաքացիական օրենսգրքի 1242 և 1092 հոդվածների վրա, եթե Վ-ն, շնորհիվ այն բանի, որ տասնամյակներ շարունակ պահել է իր տնային տնտեսությունը Հ-ի հաշվին, որևէ բան ստացած լիներ առանց իրավական հիմքի:

Այն ծառայությունները, որոնք Հ-ն մատուցել է Վ-ին նրա տնային տնտեսությունում, գույքային արժեք ունեցող ծառայություններ են: Նույնիսկ, եթե Վ-ն առանց Հ-ի աշխատանքի ուրիշ սպասուհու աշխատեցրած չլիներ և իր տնային տնտեսությունն ինքնուրույն վարած լիներ, չի կարելի բերել այն փաստարկը, թե Վ-ն ոչ մի խնայողություն չի ունեցել: Ամեն դեպքում նա ընդունել է աշխատանքն ու դրանով իսկ ինչ-որ բան ստացել Քաղաքացիական օրենսգրքի 1092 հոդվածի իմաստով:

Այս ծառայությունները վարձատրվել են մասամբ բնեղենով (կացարան ու սնունդ) և մասամբ էլ գրպանի ծախսերի համար գումարով: Սակայն անվիճելի է, որ ծառայություններն ավելի մեծ արժեք են ունեցել և այդ արժեքը չի ծածկվել տրված վարձատրությամբ: Երկուսի համար էլ այս տարբերությունը միանգամայն պարզ է եղել, ինչն արտահայտություն է գտել այն բանում, որ երկուսն էլ այն կարծիքին են եղել, որ լրացուցիչ վարձատրությունը տեղին կլինի:

Վ-ն հարստացել է այն արժեքի հաշվին, որը պետք է հատուցված լիներ լրացուցիչ վարձատրությամբ: Այդ արժեքի հատուցման համար որևէ պայմանագրային պարտավորություն չի եղել: Այսպիսով, ծառայություններն առանց լրացուցիչ վարձատրության ընդունելու համար պայմանագրով կամ օրենքով սահմանված որևէ հիմք գոյություն չունի:

Այդ ծառայությունները Վ-ն ստացել է նաև Հ-ի հաշվին, որովհետև վերջինիս մատուցած ծառայության ու դրանով իսկ տեղի ունեցած աշխատուժի ծախսման դիմաց Վ-ի գույքային դրության մեջ տեղի է ունեցել բարելավում, այսինքն՝ վերջինիս կողմում տեղի է ունեցել հարստացում:

Հատկանշական է, որ Հ-ն առանց լրացուցիչ վարձատրության ծառայություններ մատուցելու պարտավորություն չի ունեցել: Գոյություն ունեցած պայմանագրային պայմանավորվածությունը չէր ծածկում ծառայությունների ամբողջ արժեքը: Նրա ծառայության նպատակը եղել է ոչ միայն անվճար կացարան ու սնունդ ստանալը, այլ, դրանից բացի, ժառանգությանը մասնակցելը կամ այլ վարձատրություն ստանալը: Այդ ակնկալիքը, որին Վ-ն համաձայն է եղել, դուրս էր գալիս Վ-ի ու Հ-ի միջև ձեռք բերված պայմանավորվածության բովանդակության շրջանակից: Մենք այստեղ գործ ունենք արտապայմանագրային նպատակ սահմանելու հետ:

Այդ նպատակը ձախողվել է նոր կտակ կազմելու և ուրիշ ձևով վարձատրություն չվճարելու հետևանքով: Հ-ի ունեցվածքը այս եղանակով նվազել է, քանի որ նա ծառայություններ է մատուցել, իսկ արդարացիորեն ակնկալված գույքային առավելությունը նրա համար չի առաջացել: Այսպիսով, Վ-ի հարստացումը նաև այս պատճառով կատարվել է Հ-ի հաշվին:

Սրանով առկա են պահանջի իրավունքի այն նախապայմանները, որոնք նախատեսված են Քաղաքացիական օրենսգրքի 1092 հոդվածով: Բնեղենով վերադարձնելը հարստացման բնույթի պատճառով (անձնական ծառայություններ տնային տնտեսությունում) հնարավոր չէ: Ուստի Հ-ն իրավունք ունի պահանջելու Վ-ին մատուցած ծառայությունների իրական արժեքի հատուցում:

Այս պահանջի իրավունքը չի ընկնում Քաղաքացիական օրենսգրքի 1099 հոդվածով նախատեսված բացառություններից որևէ մեկի տակ: Ակնկալված ժառանգ դառնալը կամ այլ վարձատրությունը ոչ թե աշխատավարձի պարբերական վճարումներ են, որոնց վաղեմության ժամկետը կարող է ավարտված լինել, այլ արտապայմանագրային հատկացում, որի տրամադրման ժամկետը վրա է հասել միայն հարաբերության ավարտից հետո: Այսպիսով, այստեղ գործ չունենք վաղեմության հետ Քաղաքացիական օրենսգրքի 1099 հոդվածի 2-րդ կետի իմաստով:

Հ-ն կարող էր ելնել նաև այն ենթադրությունից, որ Վ-ն կարդարացնի իր իրավաչափ ակնկալիքները: Հետևաբար՝ առկա չէ Քա-

ղաքացիական օրենսգրքի 1099 հոդվածի 4-րդ կետով նախատեսված իրադրությունը, երբ նա պետք է իմացած լիներ, որ Վ-ն վարձատրություն տրամադրելու պարտավորություն չունի:

Ակնհայտորեն առկա չեն վճարման պարտավորությունից արվող մյուս բացառությունները, որոնք նշված են Քաղաքացիական օրենսգրքի 1099 հոդվածի 1-ին ու 3-րդ կետերում:

Այսպիսով, Հ-ն եղել է Վ-ի պարտատերը պատշաճ վարձատրության չափով այն բանից հետո, ինչ Վ-ն վերացրել է նրան ժառանգ դարձնելու իր որոշումը: Իսկ թե ո՞րն է պատշաճ վարձատրությունը, կարելի է պարզել Քաղաքացիական օրենսգրքի 440 հոդվածի 3-րդ մասի իրավական գաղափարի մեկնաբանությունից: Սա ծառայությունների համար այն աշխատավարձն է, որը սովորաբար վճարվում է տնային տնտեսությունը վարելու համար: Այս աշխատավարձը և պետք է կապիտալիզացվի, ընդ որում՝ դրանից պետք է հանվի կացարանի, սննդի և գրպանի ծախսերի համար գումարի արժեքը:

Վ-ի այս պարտքը պարտավոր է մարել Վ-ի միակ ժառանգ Ն-ն:

Տարբերակ 2

1. Պայմանագրի հիման վրա ծագող պահանջի իրավունք

Հ-ն ու Վ-ն պայմանագրով պայմանավորվել են, որ Վ-ն կտակով Հ-ին ժառանգ կնշանակի (անվճար կացարան, սնունդ և գրպանի ծախսերի համար գումար տրամադրելուց բացի)՝ նրան տնային տնտեսությունում մատուցած ծառայությունների համար հատուցելու նպատակով: Հարց է ծագում՝ արդյո՞ք այդ պայմանավորվածությամբ Հ-ի համար սահմանվել է Վ-ից իրեն ժառանգ նշանակելու պահանջի իրավունք՝ որպես աշխատավարձի վճարման ձև Քաղաքացիական օրենսգրքի 777 հոդվածի իմաստով. պահանջի իրավունք, որի բավարարմանը Ն-ի կողմից Հ-ն կարող է հասնել Քաղաքացիական օրենսգրքի 1242 հոդվածի հիման վրա:

Կողմերը սկզբունքորեն ազատ են իրենց պայմանագրերի վճարների ձևերի ու բովանդակության մասին բանակցելու և դրանց մա-

սին որոշում կայացնելու հարցում: Անհրաժեշտ է ստուգել՝ արդյո՞ք ժառանգ նշանակելու խոստումը վարձատրության մասին պայմանավորվածության վավեր ձև է:

Քաղաքացիական օրենսգրքի 1193 հոդվածը սահմանում է կտակի ազատության սկզբունքը: Ապագա ժառանգատուն ազատ է իր գույքը կտակելու իրեն ցանկալի ցանկացած անձին: Այդ ազատությունը պաշտպանված է Սահմանադրությամբ և կարող է սահմանափակվել միայն ժառանգության պարտադիր բաժնի կանոններով, ինչպես դա միանշանակ սահմանված է Քաղաքացիական օրենսգրքի 1193 հոդվածի 3-րդ մասում: Այս ազատությունն ընդգրկում է կտակը փոփոխելու և ցանկացած ուրիշ ժառանգ նշանակելու ազատությունը:

Հարց է ծագում՝ արդյո՞ք ապագա ժառանգատուն նաև ազատ է պայմանագրով ստանձնելու կտակ կազմելու և պահպանելու պարտավորություն: Ճիշտ է այն կարծիքը, որ այդպիսի սահմանափակումը բացառվում է Քաղաքացիական օրենսգրքի 1202 հոդվածով: Այդ դրույթը պարտադիր սահմանում է, որ կտակարարին չի կարելի խոչընդոտել վերացնելու կամ փոփոխելու իր կտակը, ներառյալ այն դեպքում, եթե ինքն իրեն պարտավորեցրել է պայմանագրով: Նոր կտակը, բնականաբար, վերացնում է նախկին կտակը: Բայց եթե կտակարարն իր վերջին կամքը կարող է փոփոխել մինչև մահ, ապա նա պետք է նոր կտակով ազատվի ավելի հին պարտավորությունից, այս կամ այն ձևով կտակ կազմելու հնարավորություն ունենա: Քաղաքացիական օրենսգրքի 1195 հոդվածի 2-րդ մասը այդ սկզբունքին հատուկ դեպքի համար տալիս է առանձնահատուկ իրավական ձև, երբ չի թույլատրում կտակարարին իր կողմից նշանակված ժառանգներին պարտավորեցնել հրաժարվելու իրենց կտակի ազատությունից և պարտադրել նրանց իրենց ցանկությամբ տնօրինելու իրենց կտակված գույքը: Ժառանգը պետք է ազատ լինի ժառանգված գույքն իր հերթին կտակելու՝ համաձայն իր ցանկության:

Ուստի պայմանագիրը Հ-ի ու Վ-ի միջև, որով վերջինը պարտավորվել է Հ-ին ժառանգ նշանակել, չէր կարող խոչընդոտել Վ-ին հետ կանգնելու այդ պարտավորությունից և նոր կտակով միակ ժառանգ նշանակել Ն-ին:

Հետևաբար՝ Վ-ն չի ունեցել Հ-ին ժառանգ նշանակելու պայմանագրային պարտավորություն: Ըստ այդմ՝ Հ-ն չունի պահանջի իրավունք Ն-ի հանդեպ, քանի որ Վ-ի համար կտակի մասով պայմանագրային պարտավորություն գոյություն չունի:

2. Անհիմն հարստացման հիմքով առաջացող պահանջի իրավունք

Այս տարբերակում չի բացառվում պահանջի իրավունքն անհիմն հարստացման հիմքով: Այն փաստը, որ կտակով ժառանգ նշանակելու մասին պայմանավորվածությունը Վ-ի ու Հ-ի միջև անվավեր է եղել, որևէ ձևով չի փոխում այն հանգամանքը, որ Հ-ն երկու տասնամյակից ավելի ծառայություններ է մատուցել և դրա համար չի ստացել պատշաճ վարձատրություն: Այսպիսով, Հ-ն գուցե և կարող էր Ն-ից պահանջել Քաղաքացիական օրենսգրքի 1092 հոդվածից բխող պատշաճ վարձատրություն՝ Քաղաքացիական օրենսգրքի 1242 հոդվածի հիման վրա, եթե Վ-ն շնորհիվ այն բանի, որ տասնամյակներ շարունակ պահել է իր տնային տնտեսությունը Հ-ի հաշվին, որևէ բան ստացած լիներ առանց իրավական հիմքի:

Պահանջի իրավունքի՝ 1-ին տարբերակի 2-րդ կետի տակ բերված հիմնավորումը գործում է նաև այս դեպքում. Վ-ն հարստացել էր Հ-ի կողմից տնային տնտեսությունը վարելու շնորհիվ արված խնայողությունների հաշվին, Հ-ն ծառայություններ է մատուցել առանց պատշաճ վարձատրություն ստանալու, ուստի արդյունքում գույքային վնաս է կրել Վ-ի հարստացման չափով: Տնային տնտեսությունը վարելու նպատակը, այն է՝ ժառանգ նշանակվելը, չի իրականացել: Այն փաստը, որ նպատակի ձախողումը միանգամայն օրինական է եղել, չի փոխում այն հանգամանքը, որ չի կատարվել Հ-ի նույնքան իրավաչափ ակնկալիքը: Նպատակի իրագործման այս ձախողումը հանգեցրել է այն բանին, որ Վ-ն առանց իրավական հիմքի ինչ-որ բան է ստացել Հ-ից: Այդ ստացածը պետք է վերադարձվի: Քանի որ դա հնարավոր չէ անել բնեղենով, արժեքը պետք է հատուցվի:

Հիմա կարելի է գուցե պատկերացնել, որ Հ-ն ժառանգությունը ստանալու իրավունք ունի, որովհետև նրան ժառանգ նշանակելն

էր դիտվել Վ-ի ու Հ-ի կողմից որպես պատշաճ վարձատրություն, և նրանք այդպես էլ պայմանավորվել էին: Սակայն այս դատողությունը չի համապատասխանում հարստացման հավասարակշռման գաղափարին: Մենք գործ ունենք ոչ թե երկարացված պայմանագրային պահանջի իրավունքի, այլ այն հարստացման չեղարկման հետ, որի դիմաց տեղի է ունեցել ունեցվածքի նվազում: Այդ հարստացման չափը պետք է որոշվի օբյեկտիվ չափանիշների միջոցով ու ոչ թե կողմերի սուբյեկտիվ պատկերացումների հիման վրա: Այդ իսկ պատճառով նորից (ինչպես և 1-ին տարբերակում) հիմքում պետք է դրվի Հ-ի կապիտալիզացված աշխատավարձը, որը նա սովորական պայմաններում ստացած կլիներ երկու տասնամյակի ընթացքում:

Քաղաքացիական օրենսգրքի 1092 հոդվածից բխող պահանջի իրավունքի կողքին Հ-ն գուցե կարող է իր պահանջը հիմնավորել նաև Քաղաքացիական օրենսգրքի 1093 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով:

Վ-ն անհիմն կերպով հարստացել է, քանի որ Հ-ին ժառանգ նշանակելու պարտավորության անվավերության արդյունքում կարիք չուներ իր տնային տնտեսությունը վարելը հատուցելու՝ սպասուհուն ժառանգ նշանակելով: Հ-ն այդ պարտավորության անվավերության և դրա հետևանքով Ն-ին ժառանգ նշանակելու որոշման վավերության պատճառով զրկվել է այդ գույքային առավելությունից: Այդ իսկ պատճառով առկա են ինչպես Քաղաքացիական օրենսգրքի 1093 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, այնպես էլ Քաղաքացիական օրենսգրքի 1092 հոդվածով նախատեսված նախապայմանները:

Այսպիսով, Հ-ն իրավունք ուներ Վ-ից պահանջելու պատշաճ վարձատրության վճարում Քաղաքացիական օրենսգրքի 1092 հոդվածի ու 1093 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա, որը և Վ-ն պարտավոր է կատարել՝ համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 1242 հոդվածի:

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ԽՆԴՐԱԳԻՐՔ
(ԼՈՒԾՈՒՄՆԵՐՈՎ)**

ուսումնամեթոդական ձեռնարկ

Երաշխավորված է տպագրության ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից

Մասնագիտական խմբագիր՝

իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վահրամ Ավետիսյան

Համահեղինակներ՝

Ռուֆ Քնիպեր, *իրավ. գիտ. դոկտոր (Մայնի Ֆրանկֆուրտի համալսարան), Բրեմենի համալսարանի պաշտոնաթող պրոֆեսոր, Թբիլիսիի և Քիշնևի Պետական համալսարանների պատվավոր դոկտոր*

Վահրամ Ավետիսյան, *իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ*

Գրիգոր Բեքմեզյան *իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ*

Արսեն Թավադյան, *իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ*

Սիմոն Ֆարմանյան, *իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ*

**CIVIL LAW CASEBOOK
(WITH SOLUTIONS)**

methodological manual

Recommended for publication by the Scientific Council of the Law
Faculty of the Yerevan State University

Edited by Dr. Professor Vahram Avetisyan

Coauthors

Rolf Knieper, Dr. iuris (University of Frankfurt am Main), Professor
Emeritus (University of Bremen), Dr. honoris causa
(Tbilisi and Chisinau State Universities)

Vahram Avetisyan, Doctor of Law, Professor, Head of Civil Law Chair
of Faculty of Law, YSU

Grigor Beckmezyan, Ph.D, Associate Professor of Civil Law Chair of
Faculty of Law, YSU

Simon Farmanyan, Ph.D, Assistant of Civil Law Chair of Faculty of
Law, YSU

Arsen Tavadyan, Ph.D, Assistant of Civil Law Chair of Faculty of Law,
YSU

**СБОРНИК ЗАДАЧ ГРАЖДАНСКОГО ПРАВА
(С РЕШЕНИЯМИ)**

Учебно-методическое пособие

Рекомендован для публикации научным советом юридического факультета Ереванского государственного университета

Под редакцией доктора юр. наук, проф. **Ваграма Аветисяна**

Соавторы

Рольф Книпер, доктор юридических наук (Университет Франкфурта-на-Майне), почетный профессор (Бременский университет), доктор honoris causa (Тбилисский и Кишиневский государственные университеты)

Ваграм Аветисян, доктор юридических наук, профессор, заведующий кафедрой гражданского права юридического факультета ЕГУ

Григор Бекмезян, кандидат юридических наук, доцент кафедры гражданского права юридического факультета ЕГУ

Арсен Тавадян, кандидат юридических наук, ассистент кафедры гражданского права юридического факультета ЕГУ

Симон Фарманян, кандидат юридических наук, ассистент кафедры гражданского права юридического факультета ЕГУ

Նշումների համար

Նշումների համար

Նշումների համար

Նշումների համար

Տպաքանակ՝ 500:

Չափսը՝ 60x84 1/16: 15 տպ. մամուլ

Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ տպարանում